



HAIGAZIAN
UNIVERSITY PRESS



ԻՄ Ընտանիքիս Պատմությունը



ԻՄ
ԸՆՏԱՆԻՔԻՍ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պեյրուֆ 2016
Haigazian University Press

This Monument was erected in Memory of
the Centenary of the Martyrs of the Armenian Genocide
with the generous contribution of the

LEBANESE ARMENIAN COMMUNITY WOMEN'S GROUP

ADANA	CESAREE	KELLER	MARASH	SASOUN
AMANOS	DIKRANAGERD	KESAB	MOUSH	SEPASTIA
AYNTAB	EYBEZ	KHARPERT	OURFA	SIS
BAKHCHE	GURUN	KILIS	PALOU	TOMARZA
BEREGIK	HADJEN	LAPADJ	ROUMDIGIN	YOZGAT

The Concept

"Amnosou", the "Forget Me Not flower", the symbol of the Armenian Genocide Centenary 2015 is raised on an arcing stalk seemingly sagging by the weight of the hardships that the Armenian Nation endured. The five continent sprawling diasporas, an array of purple coloured petals bursts to life with the vivid yellow stamens in the shape of a miniature model of the Armenian Genocide memorial in "Dzovnaragut", Armenia. The five hairless steel leaves with the 1915 cross cut-outs mark the date and accentuate the death marches and with their leafy shapes delineate the mingling souls of the 1.5 million martyrs canonised as saints on the occasion of the Genocide centenary while curving in an abstract emulation of clasping hands wrap around the "Amnosou" stalk in a protective embrace of the souls of the martyrs becoming the guardian angels of the Armenian Nation, symbolizing its survival, remembrance and demand for justice.

A design by
Olympian Artist **Lena Kelekian**
&
Architect **Hagop Sultahian**

10th of October, 2015

Իմ Ընտանիքիս Պատմությունը

ՊԷՅՐՈՒԹ 2016

Haigazian University Press

Original Title:

Իմ Ընտանիքիս Պատմությունը

(My family history)

Խմբ. Դոկտ. Անդրանիկ Տազեսեան

Editor: Dr. Antranik Dakessian

First Edition 2016

© Copyright 2016

Beirut, Lebanon

All rights reserved.

No part of this publication may be reproduced, stored in or introduced into a retrieval system, or transmitted, in any form or by any means (electronic, mechanical, photocopying, recording, or otherwise), without the prior permission.

www.haigazian.edu.lb

ISBN 978 9953 585 19 2

Բովանդակություն

Մուտք		9
Սարգիս Արզար,	<i>Անցեալի Պատմություն</i>	13
Նարոտ Ադամեան,	<i>Սասունցի Յովհաննէսը</i>	15
Ֆլորա Ամպարճեան,	<i>Իմ Ընտանիքիս Պատմությունը</i>	19
Ալիս Այվազեան,	<i>Յուշեր</i>	21
Անի Այրանեան,	<i>Իմ Մեծմօրս Հօրը Եւ Ընտանիքին Մասին</i>	24
Սինթիա Անթոսեան,	<i>Մարաշ, Արանա, Պէյրուս ...</i>	27
Քրիսթէլ Աշճեան,	<i>Ընտանիքիս Պատմությունը</i>	30
Ալիսիա Ապուտեան,	<i>Նախնիներուս Դժուարությունները</i>	32
Եսայի Ատուրեան,	<i>Արիւնոյր Գիշերը</i>	34
Գրիգոր Արապաթլեան,	<i>Իմ Ընտանիքիս Պատմությունը</i>	37
Մեղեդի Արոյեան,	<i>Իմ Արմատը</i>	40
Նայիրի Արսլանեան,	<i>Գաղթականութեան Յուշերէն</i>	42
Յուշիկ Բաբունեան,	<i>Քեսապի Ընդհանուր Պատմություն</i>	44
Բալիկ Գաբրիէլեան,	<i>Առտուան Ժամը 5.30ին</i>	48
Նենսի Գալայճեան,	<i>Ընտանիքիս Պատմությունը</i>	50
Նանի Գալուստեան,	<i>Վան Եւ Մուսա Լեռ</i>	52
Լիլիթ Գայապալեան,	<i>Եղկաթի Ճանապարհին Վրայ</i>	54
Փերլա Գանթարճեան,	<i>Հօրենական Եւ Մօրենական Ընտանիքիս Հակիրճ Պատմությունը</i>	57
Միսաք	<i>Դժոխքի Ճանապարհին Վրայ</i>	59
Գանտահարեան,		
Աննա Մարիա	<i>Կը Յանկայի Ապրիլ Պատերուս</i>	61
Գապազեան,	<i>Ծննդավայրը՝ Չէյթուն</i>	
Նարինէ	<i>Քարա-Կաւուր</i>	63
Գարագաւուրեան,		
Շողեր	<i>Յիշողութիւն Եւ Յանձնառութիւն</i>	65
Գարամինասեան,		
Գէորգ Գէորգ,	<i>Մեծ Մայրս Եւ Մեծ Եղեռնը</i>	67
Անժելա Գունանեան,	<i>Նարինջի Պարտէզը</i>	70
Վարդուկ Գոյումճեան,	<i>12 Տարեկանին՝ Ընտանիք</i>	76
Սինթիա Դալիթեան,	<i>Տէր Զօրի Ճանապարհին</i>	78
Սեակ Եահնիեան,	<i>Թանկագին Նուէրը</i>	81
Յովսէփ Եուսէֆ,	<i>Ընտանիքիս Կեանքը Քեսապի Մէջ Եւ Արտագաղթը</i>	85
Նանօր Զաքարեան,	<i>Մութ Թուական</i>	87
Վանեսսա Էլ Հլու,	<i>Խունկ Ու Մոմ՝ Անոնց Յիշատակին</i>	89

Ուիլյուն Թամզարեան,	<i>Պապերու Օճախը</i>	91
Հայկ Թապագեան,	<i>Մուսա Լեռէն Այնճար</i>	94
Գարին Թերզեան,	<i>Մեր Հողերուն Յարգը</i>	97
Ստեփան Թեքլէլեան,	<i>Եօթերորդ Փամփուշտը</i>	99
Պետրոս Թիւթինճեան,	<i>Պապուի Չոհեր</i>	101
Ժիրայր Թոսունեան,	<i>Իմ Ճիւղերս</i>	103
Մարիա Թորոսեան,	<i>Ընդանիքիս Պատմութիւնը</i>	104
Մհեր Թորոսեան,	<i>Կեանքի Բոլոր Չարչարանքներէն Ետք</i>	106
Քրիստին Թորոսեան,	<i>Իմ Ընդանիքիս Պատմութիւնը</i>	109
Մոնիքա Թփփեան,	<i>Իմ Ընդանիքիս Պատմութիւնը</i>	112
Գարին Խաչերեան,	<i>Ընդանիքիս Մօտ Ոչ Մէկ Առարկայ Կայ Մեր Նախնիքներուն Երկրէն</i>	115
Թամար Կանիմեան,	<i>Յեղասպանութեան Ականապես՝ Կարապետի Վեհ Հայրենասիրութիւնը</i>	118
Salpy Ganimian,	<i>A Worthy Genocide Witness Story</i>	121
Սէրլի Կարապետեան,	<i>Այդ Օրերը</i>	124
Յարութ Կիլիզեան,	<i>Փախչիլ՝ Մայրը Գրկած</i>	126
Արծուի Կոստանեան,	<i>Ես Հպարտ Եմ</i>	128
Նարեկ Հաճէքեան,	<i>Յուշեր</i>	131
Արամ Հելվաճեան,	<i>Ես՝ Միհրանուշ Գոյումճեանի Թոռնիկը</i>	134
Արմիկ Հեքիմեան,	<i>Պիտի Շարունակէի Իմ Պապերու Գործը</i>	137
Ռիթա Ղալունճեան,	<i>Նարօտը Եւ Նարեկը</i>	140
Լիւսի Ղարիպեան,	<i>Աւերիս Մեծ Մեծհայրիկին Գաղթը Եոզկաթէն Լիբանան</i>	142
Մարի Ճուրեան,	<i>Քեսապի Յուշեր</i>	144
Ժուլիանա Մանուկեան,	<i>Ես Այսքան Գիտեմ Իր Մասին</i>	148
Նարինէ Մարգարեան,	<i>Բազմաչարչար Թրուանդան</i>	150
Փաթիլ Մելքոնեան,	<i>Մնաս Բարով Այգիս</i>	153
Հրակ Մեսրոպեան,	<i>Մեծ Մեծօրս Հայրը</i>	155
Լոռի Միթիլեան,	<i>Ահա Հայր</i>	158
Կարօ Միսաքեան,	<i>Ճակատագիր</i>	161
Սեան Մկրտիչեան,	<i>Հայու Բեկոր Մը</i>	163
Վարդ Վարս Մկրտիչեան,	<i>Սերոբ Մկրտիչեանի Եւ Ժողէ՛ք Թութիկեանի Շառաւիղները</i>	165
Նայիրի Յակոբեան,	<i>Տառապանք, Գաղթ Եւ Վերապրում...</i>	168
Անահիտ Գէորգ Նալպանտեան,	<i>Այս Նոր Տարուայ Ծառը... 2015...</i>	174
«Ուրֆացի» Նարեկ Նալպանտեան,	<i>Մօրս Մեծհայրը՝ Յովհաննէս Տօնոյեանը</i>	183

Մարալ Նորընծայեան,	<i>Մուշէն Տիգրանակերպ Եւ Քամըշլի</i>	187
Կարինէ Շատոյեան,	<i>Նախկին Հետքեր</i>	188
Կարօ Շատոյեան,	<i>Սպի</i>	190
Նարեկ Շարոյեան,	<i>Անմար Մոմը</i>	193
Կարին Շորճեան,	<i>Մօրս Մեծօրս Ընտանիքը</i>	197
Արաքս Չերչեան,	<i>Մեծօրս Մայրը՝ Արաքսի</i>	201
Յարութիւն	<i>Անարդար Թուրքը</i>	203
Չիլափոշեան,		
Ռոզալին Չիրիշեան,	<i>Վիշտը Փուշ է Սրտի... Կը Ծաղկի Ու Կը Բուրէ</i>	207
Գէորգ Չոպանեան,	<i>Մեծմայրիկին Կեանքը</i>	210
Ասատուր	<i>Ուրֆացի Պասմաճեան Ընտանիքի Գաղթը</i>	213
Պասմաճեան,	<i>Դէպի Լիբանան</i>	
Լիանա Պարսումեան,	<i>Տասնապետը</i>	216
Կարօս Պէլեան,	<i>Մեր Ճակատագիրը</i>	218
Սարին Պէրպէրեան,	<i>Պաղչէ-Հալէպ-Լիբանան</i>	220
Վերոնիքա Պոզոյեան,	<i>Բալուէն Լիբանան</i>	223
Ռիթա Պոյաճեան,	<i>Աբգար Գարատանայեանին Վերադարձը</i>	225
Էլի Սարաֆեան,	<i>Ընտանիքս Մարաշի Մէջ</i>	226
Անժելինա	<i>Անխիղճ... Պոռա՛</i>	229
Սարգիսեան,		
Ռիթա Սարգիսեան,	<i>Ի՞նչ է Մականունդ Եղբայր</i>	231
Սարգիս Սարգիսեան,	<i>Տաժանագին Ճամփան</i>	234
Սթեֆանի	<i>Պապենական Աւանդներ</i>	237
Սերայտարեան,		
Նարօս Սերուժեան,	<i>Երկու Որբերուն Ամուսնութիւնը</i>	239
Սեակ Սիմոնեան,	<i>Եղայ Կատարեալ Որբ</i>	244
Ժան-Փիլէո Սիւլեան,	<i>Ընտանիքիս Յաւալի Պատմութիւնը</i>	251
Մարիա Տաղլեան,	<i>Մեծօրս Անունը</i>	255
Նուարդ Տեմիրճեան,	<i>Ապրէ՛ք Երեխէք, Բայց Մեզ Պէս Չապրէ՛ք</i>	257
Արմէն Տէր	<i>Յիշողութիւն Եւ Յանձնառութիւն</i>	260
Պետրոսեան,		
Սելին Տէր	<i>Անիծեալ Օրը</i>	262
Փիլիպոսեան,		
Ռազմիկ Տէրունեան,	<i>Մեսիա</i>	264
Վարդինէ	<i>Ահա Հոս Հասանք</i>	267
Տոնապետեան,		
Արէն Տոներեան,	<i>Ես Կը Պատկանիմ Չորրորդ Սերունդի Հայերուն</i>	269
Սագօ Փիսկիլեան,	<i>Իմ Ընտանիքիս Պատմութիւնը</i>	272

Անժելա Քեչիշեան,	<i>Երանի՛</i>	273
Նարոտ Քեչէպաշեան,	<i>Սասունցի Խոյրեպանը</i>	275
Քիւրեղ Քէօշկէրեան,	<i>Գերդաստանս</i>	277
Շաղիկ Քիպարեան,	<i>Կուզէլի Դաժան Կեանքը Սիսի Պարպումէն Ետք</i>	280
Մինաս Օղլուքեան,	<i>Սեւ Էջ Մը</i>	282
Ռիթա Ֆերմանեան,	<i>Իմ Ընտանիքիս Պարմութիւնը</i>	284
Լիբանահայ Դպրոցներու Աշակերտութեան Յղուած Նամակ- Ուղեցոյցը		287
Գիրքը Անգլերէն		290
Գիրքը Արաբերէն		291
Հայկազեան Համալսարանի Հրատարակչատան Գրացանկ		293

Խմբագրական Կազմ՝ Հուրի Ադդարեան, Լիլա Բամպուքեան, Գարին Գանտահարեան, Վանա Դանիէլեան, Հրայր Եսայեան, Պետիկ Թորոսեան, Ռիթա Կիլտալեան, Նարեկ Հաննէեան, Քրիստին Մարաշլեան, Տիգրան Միհրանեան, Արմէն Պազգալեան, Ծաղիկ Սահակեան, Անժելա Տաղլեան, Ռուզան Տիշոյեան:

Պատ. Խմբագիր՝ Դոկտ. Անդրանիկ Տազէսեան:

ՄՈՒՏՔ

Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ուսմանց Ընկերակցութեան խումբ մը ուսանողներ, որոշեցին իրօրինակ ձեով մըն ալ ներդրում ունենալ Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի ձեռնարկներուն:

Երկար քննարկումներէ ետք, որոշուեցաւ շարադրութիւններու ձեռնարկ մը իրականցնել: Կարելի էր գիտնալ թէ լիբանահայ ժամանակակից դպրոցականը ի՞նչ գիտէ Յեղասպանութեան մասին, ի՞նչ գիտէ իր ընտանիքին անցեալին մասին, ինչպէ՛ս կը մտածէ, իրեն համար իր ընտանիքին եւ իր ազգին անցեալը անցա՞ծ, որքա՞ն անցած կը նկատէ...:

Կարելի էր նաեւ մղել լիբանահայ պատանի սերունդը որ պեղէ իր մօտիկ անցեալի արմատները, սերտէ իր ընտանեկան կեանքին վերիվայրումները եւ դասեր քաղէ անկէ ու անով վերածի:

Նախագծեցինք ծրագրին մանրամասնութիւնները, իրագործումին հանգրուանները: Ձեռնարկը մրցում պիտի չըլլար, մրցանակ պիտի չտրուէր, պիտի մասնակցէր 9էն մինչեւ 12րդ դասարանի որեւէ հայ աշակերտ-աշակերտուի: Լեզուական, բովանդակային, ծաւալի սահմանափակում պիտի չըլլար: Ընտրութիւնը պիտի հիմնուէր նիւթին հարազատութեան, մատչելիութեան, մատուցման, քան թէ՛ լեզուի որակին վրայ: Միտքերն ու մտածումները պիտի չխմբագրուէին, պիտի պահպանուէին կարելի հարազատութեամբ:

Ճշդուեցան ժամկէտերը: Լծուեցանք գործի. խմբակի անդամները այցելեցին լիբանահայ դպրոցները, բաժնուեցան այս առթիւ յատուկ պատրաստուած ուղեցոյցներ (տե՛ս՝ հատորին վերջաւորութեան), ցուցադրուեցաւ Հայկազեան Համալսարանի ուսանողական

ուժերով պատրաստուած «back to the roots» ֆիլմը: Մամուլով կատարուեցաւ յայտարարութիւն, ուսանողները ունեցան հարցազրոյցներ՝ Վանայ Ձայնէն ու Րատիօ Սեւանէն:

Անխտիր բոլոր դպրոցներուն տնօրէնութիւնը, հայերէնագիտական դասանիւթերու ուսուցիչները խանդավառութեամբ աջակցեցան:

Սկսան շարադրութիւնները «հոսիլ»: Հաւաքուեցաւ բաւական մեծաթիւ խումբ մը շարադրութիւններու: Ուսանողական խմբակը կատարեց բժախնդիր ընտրութիւն: Աշխատեցաւ նաեւ լեզուական ուղղումներուն վրայ: Հուսկ՝ գրաշարեց նիւթերը, դիմեց 'հեղինակներուն', որպէսզի նկարներ տրամադրեն եւ ահա՝ ՀԱՏՈՐԸ:

Հատորին պատումները կը նկարագրեն հայ ընտանիքին վերջին հարիւրամեակին գողգոթան ու յարութիւնը, կորովը՝ վերականգնելու, վերակառուցելու իր նոր կեանքը՝ իրեն պարտադրուած բռնագաղթէն ու Եղեռնէն ետք, վերամիաւորուելու, իր տասանորդուածութիւնը վերաբազմացնելու, իր ընդհատուած ստեղծագործական կեանքը վերսկսելու երթը:

Այս շարադրութիւններուն տուեալները կը գոյացնեն համատարած տառապանքի, տաժանքի, բաժանումի, կորուստի, մահուան, լքումի դրուագներ: Բայց նաեւ՝ պատկանելիութեան, ազատութեան, կորովի, յարատեւութեան, զօրակցութեան, սրտցաւութեան, նախանձախնդրութեան, երազի, վերատիրացումի ու յանձնառութեան գրաւականները տեսիլքին: Այստեղ կը գտնենք Մեծ Եղեռնին պատկերացումը՝ նորագոյն սերունդին մօտ, մերձեցումը այդ դէպքերուն:

Շարադրութիւնները կը վկայեն որ իւրաքանչիւր հայ ընտանիք ունի Հայոց Յեղասպանութեան իր պատումը: Իւրաքանչիւր ընտանիք տարբեր համեմատութեամբ,

գուրգուրանքով պահպանած է այդ պատումը, տէրն է անոր եւ անոր էութեան՝ Հայ Դատին ու պահանջատիրութեան:

Այստեղ՝ խորհրդաւոր տարածութիւնը՝ զոհին ու ծոռին միջեւ, կը ծաղկի հայ ժողովուրդի անմոռուկով: Այստեղ զոհին ու անոր չորրորդ սերունդին միջեւ եղած սփիւռքեան բացատը կը կանաչուի յիշողութեամբ, պահանջատիրութեամբ...:

Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ուսմանց Ընկերակցութեան խմբակը շնորհակալութիւն կը յայտնէ լիբանահայ վարժարաններուն՝ Ազգ. Եղիշէ Մանուկեան Քոլէճ, Սուրէն Խանամիրեան Ազգ. Քոլէճ, Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Երկրորդական Քոլէճ, Ազգ. Յռոաջ-Գալուստ Կիւպէնկեան Երկրորդական Վարժ., Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան, Հայ Աւետ. Փ. եւ Է. Թորոսեան Վարժ., Հայ Աւետ. Երկրորդական Վարժ. - Այնճար, Հայ Աւետ. Շամլեան Թաթիկեան Երկրորդական Վարժ. - Պուրճ Համուտ, Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն Վարժ., Հայ Աւետ. Քոլէճ, Սահակեան-Լ.-Մկրտիչեան Քոլէճ, Հայ Կաթ. Մեսրոպեան Բարձր. Վարժ., Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Ս. Խաչ-Հարպոյեան Բարձր. Վարժ., Հայ Կաթողիկէ Ս. Հռիփսիմեանց Բարձր. Վարժ., Վահան Թէքէեան Վարժ., ՀԲԸՄ Պօղոս Գ. Կարմիրեան Վարժ., ՀԲԸՄ Դարուհի-Յովակիմեան Երկրորդական Վարժ., Մխիթարեան Երկրորդական Երկսեռ Վարժ., Դպրեվանք Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, անոնց տնօրէններուն, հայերէնագիտութեան ուսուցիչներուն, առանց որոնց գործնական մասնակցութեան այս ծրագիրը պիտի չյաջողէր:

Յատուկ շնորհակալութիւն Հայկազեան Համալսարանի տնօրէնութեան որուն նեցուկը թափ եւ կշիռ տուաւ այս ձեռնարկին, իսկ նիւթական աջակցութիւնը կարելի դարձուց հատորին հրատարակութիւնը:

Դոկտ. Անդրանիկ Տագէսեան



ԱՆՑԵԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սարգիս Աբգար

Այս գրութեամբ կ'ուզեմ ներկայացնել իմ ընտանիքիս անցեալի պատմութիւնը: Շատ մեծ փափաք ունիմ այցելելու իմ նախնիներուս հողերը՝ 7 յուսամ՝ օր մը կը յաջողիմ իրականացնել փափաքս: Յիշեմ նաեւ, թէ նշած եմ կարգ մը կէտեր մօրս ընտանիքին մասին, սակայն ասելի շեշտը դրած եմ հօրս ընտանիքին պատմութեան վրայ, նկատի ունենալով որ վերջինս ասելի արկածախնդրական է:

Հօրս մեծհայրը (մօրը հայրը), ծնած է Ուրֆա 1885ին: Կարճ ժամանակ մը յաճախած է դպրոց, որմէ ետք սորված է երկաթագործութիւն իր հօրմէն, եւ 18 տարեկանին գացած է Իսթանպուլ՝ զինուորութեան: Եօթը տարիներ ետք, թողելով զինուորութիւնը շարունակած է իր արհեստը: 1911ին ամուսնացած է Լուսին անունով կնոջ մը, որ Պերեճիկէն էր:

Հօրս միւս մեծհայրը (հօրը հայրը), նոյնպէս ծնած է Ուրֆա, 1883ին: Ան գրել ու կարդալ սորված է մօրմէն, ապա սորված է իր հօր արհեստը՝ երկաթագործութիւն: 1910ին ամուսնացած է Տիրուհի անունով ուրֆացիի մը հետ:

1915ը՝ այս սեւ թուականը որ բոլոր հայերուս ծանօթ է, շատ դժուար տարի մըն էր իմ ընտանիքիս համար: Մեծհօրս ընտանիքը նաեւ անցած է Եփրատ գետէն, ապա հասած Սուրիա (Ճարապլուս) ու հոն հաստատուած:

Միւս մեծհօրս ընտանիքը քիչ մը ձիով, քիչ մըն ալ քալելով հասած է Արաբ Փունար ու հոն հաստատուած է: Մեծհօրս մայրը շատ փափաքած է իր տան զարդեղէններէն փոխադրել, սակայն այնքան խիստ էին թուրք զինուորները, որ ամենայն արագութեամբ ճամփայ ելած են: Մեծմօրս ընտանիքը առանձին գաղթած է, որովհետեւ իրենց հարազատները ուրիշ ճամփով ուղղակի Լիբանան եկած են:

Մեծօրս ընտանիքը խումբով էին, բոլոր քայրերն ու եղբայրները իրենց հետ էին եւ միասնաբար գաղթեցին:

1930ին, մեծհայրս՝ Սարգիս Աբգարեան կը ծնի Արար Փունարի մէջ, իսկ 1931ին մեծմայրս՝ Տիրուհի Տեմիրճեան կը ծնի Ճարապլուսի մէջ: Մեծօրս կեանքի պատմութիւնները շատ չեմ լսած, սակայն մեծմայրս կը պատմէ այդ մասին: Անոնք ամէն բան իրենք կը պատրաստէին՝ հաց, լոլիկի-պղպեղի ջուր, անուշեղէններ: Անոնք դրամ չէին գործածեր, այլ իրենց առած ապրանքին համեմատ փոխադարձը կու տային: Օրինակ, մէկ տոպրակ բրինձին՝ մէկ տոպրակ ոսպ:

Սարգիս, տան ելեկտրականութեան գործերով կը զբաղէր: Մեծօրս հայրը կը մեռնի հիւանդութենէ 1943ին: Մեծմայրս կը ստիպուի աշխատիլ որպէս դերձակուհի: 1955ին մեծհայրս եւ մեծմայրս կ'ամուսնանան եւ կը տեղափոխուին Հալէպ: Հոն մէջ անգործութիւնը շատ էր. մեծհայրս կը ստիպուի աշխատիլ բամպակի խանութ մը:

Անոնք 1960ին կու գան Պէյրութ, Լիբանան: Անոնց առաջին բնակած տունը Պուրճ Համուտ էր, ուր մնացին տասը տարի, ապա տեղափոխուեցան քանի մը թաղ անդին, եւ ցարդ հոն կը բնակինք 45 տարիներէ ի վեր:

Մեր ընտանիքէն միայն մեծօրս մականունը փոփոխութեան ենթարկուեցաւ եւ՝ քանի մը ծանօթներու: Մեծօրս մականունը Տեմիրճեան էր՝ փոխուեցաւ Յակոբի, իսկ իօրս մականունէն ԵԱՆը ջնջուեցաւ եւ դարձաւ Աբգար:

1967ին, հայրս՝ Յակոբ, կը ծնի Լիբանանի մէջ: Ան մինչեւ 6րդ դասարան կը յաճախէ Մեսրոպեան Վարժարան, որմէ ետք կը յաճախէ արաբական դպրոց մը մինչեւ 8րդ դասարան: Ապա կ'անցնի ոսկերչութեան ասպարէզ:

1980ին, մայրս՝ Մարլէն Պաղտասարեան կը ծնի Պէյթ Էլ Քուրույի մէջ, Լիբանան: Ան մինչեւ 11րդ դասարան կը յաճախէ Հոփիսիմեանց Վարժարան, ապա կ'ամուսնանայ 1997ին: 1998ին մեծհայրս մահացաւ: 2000ին, ես՝ Սարգիս Աբգար, ծնայ:



ՍԱՍՈՒՆՅԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԸ

Նարոտ Ադամեան

Մեծհայրս տեսած չեմ, բայց երբ մտաբերեմ անոր սասունցի ըլլալը, մտովի կրնամ վերականգնել սասունցիներուն բոլոր առանձնայատկությունները եւ բնատրոփեան բոլոր գիծերը: Ո՞վ իր մանկութեան չէ կարդացած Սասունցի Դաւիթի դրուագները, ո՞վ չէ հմայուած սասունցիներու քաջութեամբ:

Մօրենական կողմէ ընտանիքիս պատմութիւնը պրպտելով, տեղեկացայ, որ մեծհայրս՝ Յովհաննէս Կարապետեանը, ծնած է 1912ին, Սասնայ Ջոք գիւղը: Մեծ Եղեռնի օրերուն կորսնցնելով իր ծնողքը՝ ինք ու քոյրը կ'որբանան: Քոյրը՝ ականատես ըլլալով Եղեռնի օրերուն երիտասարդ աղջիկներու կրած չարչարանքներուն, բռնաբարութիւններուն՝ շուտով կը կանխատեսէ նաեւ իրեն սպառնացող վտանգը: Քաջ հայուհիի եւ յատկապէս սասունցի հայուհիի արժանապատուութիւնը թոյլ չի տար իրեն, որ ունենայ իր նմաններուն անգութ ճակատագիրը: Հազիւ կը յաջողի լուցկիի տուփ մը ձեռք ձգել՝ ինքզինք կը նետէ թփուտներով խիտ տարածք մը ու կրակ տալով թուփերուն՝ վերջ կու տայ իր մատղաշ կեանքին: Ան կը նախընտրէ այրիլ, քան յանձնուիլ բարբարոսներուն: Մեծօրս հօրեղբայրը լսելով դժբախտութիւնը, կը շալկէ մանուկ Յովհաննէսը ու իր ընտանիքի անդամներուն հետ ճամփայ կ'ելլէ դէպի Քուպին, ուր որոշ ժամանակ մը մնալէ ետք կը շարունակէ իր ճամփան դէպի Քամըշլի, ուր կը հաստատուի: Մեծօրս հօրեղբայրը կը հոգայ ու կը խնամէ փոքրիկ Յովհաննէսը, որ իր եղբօր կողմէ միակ մնացորդն էր:

Մեծհայրս աչքի կը զարնէ ոչ միայն իր աշխատասիրութեամբ, այլեւ՝ անկեղծութեամբ եւ

հաւատարմութեամբ: Ան վստահելի կը դառնայ ոչ միայն հայ շրջապատին, այլ նաեւ Քամըշլիի տեղացի արաբ վաճառականներուն: Այնքան հաւատարիմ եղած է, որ տեղացի արաբ վաճառական մը իր հողային արտադրութիւնները կամ որեւէ բերք կշռելու խիստ պատասխանատու գործը կը յանձնէ երիտասարդ Յովհաննէսին, որ բժախնդրութեամբ կը կատարէ զայն երկար տարիներ:

Մեծօրս անունը Վարդուիի է, ան կը սերի Մամիկոնեան գերդաստանէն: Ան բարեկեցիկ ընտանիքի զաւակ եղած է: Հայրը՝ Խաչօ Մամիկոնեանը, այնքան համակրելի անձնաւորութիւն մը եղած է, որ տեղացի քիւրտ աղաները նախանձով ու ատելութեամբ լեցուած են անոր հանդէպ: Կը պատմուի, որ այնքան վայելուչ եղած է, որ իրեն սիրահարած է քիւրտ աղային կինը, բայց սասունցիի առնական արժանապատուութիւնը թոյլ չէ տուած, որ գայթակղի: Ան միշտ ալ հաւատարիմ մնացած է իր կնոջ ու աղջիկներուն: Քիւրտ աշիրէթապետին աչքին փուշ էր Խաչօն: Նախանձը այն աստիճան կը գրգռուի, որ անոր դաշունահարելու անասնային որոշումը կ'առնեն ու կ'իրագործեն: Արիւնոտ հագուստները կը բերուի գիւղ՝ երբ Վարդուիիին մեծմայրը հաց կը թխէր: Իր առջեւ կը նետեն իր տղուն արիւնոտ հագուստները: Հարազատները մեղմելու համար ցաւը կը փորձեն համոզել, որ նոյն տարազը նաեւ կրնայ մէկ ուրիշինը ըլլալ, բայց մօր բնազդային զգացումը չէր ստեր: Քիւրտերը անգթօրէն սպաննած էին մեծօրս հայրը, որուն եղբայրը կ'աշխատի վրէժ լուծել՝ խնդիրը յանձնելով իր բարեկամ քիւրտ աշիրէթապետին, որ կը յաջողի 12 մարդ սպաննելով վրէժ լուծել:

Մեծօրս մայրը իր ամուսինին մահէն ետք կը դառնայ իր հօրենական տունը, իսկ մեծօրս հօրեղբայրը իր եղբօր կսկիծը սրտին՝ ժամանակը հասած կը համարէ գիւղէն հեռանալու: Կը հաւաքէ ընտանիքը ու ճամփայ կ'ելլէ դէպի

Տերիք: Հասնելէն ետք կ'աշխատի փրկել իր եղբօր աղջկան կեանքը նաեւ, ուստի ոսկի տալով վստահելի անձնաւորութեան մը, կը յաջողի մեծմայրս իր քով բերել, իսկ միւս քոյրը կը մնայ մօր հետ: Յետագային, մեծմօրս մայրը կը ներգաղթէ Հայաստան. երկար տարիներ ետք առիթ կ'ունենան հանդիպելու:

Մեծմօրս հօրեղբայրը ու կինը իրենց զաւակներուն հետ մեծ սիրով կը խնամեն նաեւ մեծմայրս՝ Վարդուհին, որ կը վկայէ, թէ բոլոր առիթներուն նախ իր պէտքերը աշխատած են հոգալ, ապա՝ միւսներունը: Ջարդէն ճողոպրած այս ընտանիքին մէջ ապահով ու սիրով՝ իր վարդ տարիքին կը հասնի Վարդուհի, երբ օր մը վաճառականին յանձնարարութեամբ բերք կշռելու նպատակով իրենց շրջանը կ'այցելէ մեծհայրս ու կը տեսնէ Վարդուհին: Բախտը կը միացնէ զիրենք ու կը կազմեն իրենց ընտանեկան տաքուկ բոյնը ունենալով ինը զաւակ, որոնցմէ երկուքը վաղաժամ կը հեռանան կեանքէն:

Մեծմայրս կը պատմէ, թէ կազմելէն ետք իրենց բոյնը գիշեր մը մեծհայրս կը հաւաքէ օսմանական անցագրերը ու զայրացած կ'այրէ զանոնք: Ան կը պատմէ նաեւ, որ մեծհայրս զինուորագրուած է անգլիական բանակին եւ ծառայած անգլիական նաւատորմին վրայ մինչեւ անգլիացիներուն հեռանալը երկրէն:

Մեծհայրս՝ Յովհաննէս Կարապետեանը, մեծ դեր ունեցած է իր օրերուն Քամըշլիի հայ գաղութի կազմակերպական գործերուն մէջ: Որպէս ազգային-հասարակական գործիչ յաճախ զրպարտուած, գործէն դուրս դրուած ու նաեւ բանտարկուած է: Բանտէն դուրս գալէն ետք ընկերոջ մը օգնութեամբ կը յաջողի բանալ իր անձնական սրճարանը: Երբ իր կեանքը մասամբ մը կը բարելաւուի, անյայտ մարդիկ, կը մտնեն սրճարան եւ կը յաջողին թունաւորել զինք: Մեծհայրս անդամալոյծ կ'ըլլայ ու մինչեւ

մահ կը մնայ անշարժ իր անկողին մէջ: Մեծօրս ընտանիքը կը տեղափոխուի Լիբանան, ուր կ'ապրի մինչեւ այսօր:

Քեռիներս եւ ճորաքոյրերս կը կրեն նաեւ տարագիր հայի ճակատագիրը ու իրենց ապրուստը ապահովելու համար կը ցրուին աշխարհով մէկ՝ Ֆրանսա, Ամերիկա, բայց բոլորը իրենց կարգին հայկական հարցի արդար լուծման իրենց բաժինը կը բերեն աշխատելով միութիւններու ու հայկական կազմակերպութիւններու մէջ:

Ափսո՛ս, որ խրոխտ Սասունի մեր պապենական տունէն ոչ մէկ մասունք մնացած է, բայց հպարտութեամբ կրնամ ըսել, ես ինքս ինձ արդէն սասունցի կը զգամ: Այսօր Սասունը կ'ապրի մեր տան մէջ, իւրաքանչիւրիս սրտին մէջ: Մայրս իր ձայնով Սասունը ոչ միայն կ'ապրեցնէ, այլեւ սիրել կու տայ բոլորին: Մեզի համար Սասնայ բարբառով երգելը իսկական վայելք է ու մեծ հպարտութիւն:

Հայոց Յեղասպանութեան 100րդ տարելիցին առթիւ, որպէս նոր սերունդի ներկայացուցիչ կը խոստանամ ազգային մեր բոլոր արժէքներուն տէր կանգնիլ, պահպանել մեր նախահայրերուն սովորութիւններն ու մանաւանդ հայ արինը անաղարտ պահել: Կը ցանկամ երթալ Սասուն, ծունկի գալ Սասնայ պապենական մեր հողին վրայ, մոմ ու խունկ վառել նախահայրերու սիրելի յիշատակին:



ԻՄ ԸՆՏԱՆԻՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ֆլորա Ամպարճեան

Իբրեւ բազմախորհուրդ օրհնութիւն, հին բայց անմոռանալի յիշողութիւն մըն է մեծօրս՝ Կարապետ Ամպարճեանի եւ մեր ընտանիքի արմատներու պատմութիւնը, որ կու գայ Յունաստանի Սելանիկ քաղաքէն:

Մեծօրս մեծհայրը՝ Միհրան Ամպարճեան, 1875 թուականին Պոլսոյ մէջ երկար տարիներ անտառաքննիչի պաշտօն վարած է: Ան ունէր երկու մանչ զաւակ՝ Տիրան եւ Արշակ: Արշակ բժիշկ էր: Ան ծնած է Տենիզլի 1891ին, որ այն ատեն Տենիզլիպոլսու կը կոչուէր, որովհետեւ յունական տիրապետութեան տակ էր: Արշակ նախնական ուսումը ստացած էր Սինոպի յունական վարժարանին մէջ, ապա յաճախած Սելանիկի ֆրէրներու դպրոցը՝ ուրկէ դարձած էր շրջանաւարտ: Գալով Լիբանան, Ֆրանսական Համալսարանէն կը վկայուի որպէս բժիշկ:

1918ին Ընդհանուր Պատերազմէն ետք, Տոքթ. Արշակ՝ իբրեւ բժիշկ Կիլիկիա գտնուած է: Կիլիկիոյ պարպումով ան կ'անցնի Սելանիկ, ուր կը հաստատուի եւ հարիւրաւոր հայ հիւանդներ կը բժշկէ: Կը մահանայ 1941ին:

Տիրան Ամպարճեան՝ իմ օրս մեծհայրը, ծնած է 1888ին Սելանիկ: Ան պաշտօնավարած է Մարզուանի անգլիական բանակին մէջ, որպէս թարգմանիչ: Իր պաշտօնին բերումով հաստատուած է Սուրիոյ Ճարապլուս, քաղաքը: Այսպիսով ան փրկուած է Մեծ Եղեռնէն եւ 1919ին ամուսնացած՝ Պերեճիկէն տեղահանուած Նուրիցա Ապտոյեանի հետ ու հաստատուած Հալէպ: Անոնք կ'ունենան երկու մանչ եւ մէկ աղջիկ: Հազիւ տասը տարի ետք՝ 1941 թուականին, զինուորական պարտաւորութեամբ, Տիրան Պերեճիկ ճամփորդած ատեն՝

գերմանական ռազմօդանավերու թիրախը կը դառնայ, իր ետին կը ձգելով այրի կինը եւ երեք զաւակներ՝ Միհրանը, Կարապետը (մեծհայրս) եւ Պէթթիսը: Անոնք կը շարունակեն ապրիլ Հալէպ, ու ստանալով հայեցի դաստիարակութիւն կը հիմնեն իրենց սեփական գործատեղերը ու կը դառնան Հալէպի լաւագոյն արհեստաւորներէն: Հայրս՝ Տիրան Ամպարճեան, Կարապետի զաւակը, որ ծնած է 1963ին, շարունակած է մեծօրս արհեստը՝ խառատ (թորնոճի): Բայց 2012ին սուրիական պատերազմին, որ դրածեալ թուրքի կողմէ ծրագրուած էր, կը թալանուի մեր աշխատավայրը եւ մեր 50 տարուայ աշխատանոցներու մոխրացած յիշատակը գրկած՝ նոր յոյսերով կը հաստատուինք Լիբանան:



ՅՈՒՇԵՐ

Ալիս Այվազեան

Մանկութեան յուշերուս մէջ բաւական տեղ գրաւած են մեծմօրս դիւցազներգութիւններն ու երազային վարդագոյն աշխարհի պատումները, ինչպէս՝ առասպելական խաչերը, երեւակայական հերոսները որ միշտ կը յաղթեն չարին, անմեղը ի յայտ կու գայ, բարին կը վարձատրուի...:

Մեծ ազդեցութիւն ձգած է վրաս մանաւանդ Սասունցի Դաւիթը իր սուրով, հրեղէն ձիով ու աննկարագրելի քաջութեամբ, չարին վրայ յարձակելու պատմութիւնը եւ ամէն անգամ յաղթական դուրս գալը... չմոռնանք Մոխրիկը ու Կարմիր Գլխարկիկը... որոնք իրենց բարի սրտին եւ հեզութեան շնորհիւ կը փրկուին...

Բայց երբ մօտիկ անցեալին, սովորական օր մը, մեր տան մէջ կը զրուցէինք, սովորական զրոյցէն նիւթը հասաւ Յեղասպանութեան 100 ամեակի ձեռնարկներուն: Յիշեցի թէ շարադրութեան մրցում մը կայ, որուն ընդմէջէն ամէն հայ պարտի ձեռով մը իր պարտքը վճարել անմեղ զոհերուն եւ խօսիլ այդ նիւթին շուրջ:

Յանկարծ, մեծմայրս պողոթկաց ու բարձր ձայնով զիս յանդիմանեց. «ի՞նչու այս նիւթին սկսար»: Տան բոլոր անդամներս զարմացած եւ քիչ մըն ալ հետաքրքրուած մեծմօրս երեսին կը նայէինք փորձելով հասկնալ պատահածը... բայց տեսանք իր դէմքին դեղնիլը ու աչքերուն արցունքով լեցուիլը: Ոչ մէկ բան հասկցանք: Անհամբեր կը սպասէինք, որ բացատրէ հարցը:

«Իմ մեծմայրս Մարաշ կ'ապրէր,- սկսաւ պատմել մեծմայրս,- Մարաշ պզտիկ գիւղաքաղաք մըն է, ուր հայերը կը զբաղէին երկրագործութեամբ, հողամշակութեամբ եւ

անասնապահութեամբ: Պարզ, աշխատասէր, կայտառ, կենսուրախ ու աշխուժ մարդիկ էին մինչեւ հասան աղէտալի օրերը եւ օսմանեան կառավարութեան հրահանգով, թուրք զինուորներու դաժան սուրերուն տակ տեղահան եղան եւ աքսորի ճամփան բռնեցին: Մեծմայրս երկու զաւակի տէր էր՝ 12-13 տարու Մարին եւ մանչ զաւակ մը, 2-3 տարու:

Մարին այնքան գեղեգիկ պարմանուիի մըն է եղեր որ ծնողքը գազան թուրք զինուորներու բռնաբարութենէն եւ առեւանգումէն փրկելու նպատակով աղջիկին երեսը ածուխով կը սեւցնեն եւ գլուխը կը գոցեն՝ գուցէ ձեռով մը կրնան պահպանել իրնց հոգեկտորը: Իսկ շատ պզտիկ մանչուկը, մայրը կոնակը կը դնէ ու կը կապէ, որ չըլլայ թէ իյնայ, որովհետեւ գրկել եւ քալել՝ այդ դաժան պայմաններուն տակ, շատ դժուար էր, գրեթէ անհնար:

Բաւական քալելէ ետք կը մօտենան Սուրիա: Մեծմայրս կ'ըսէ՝ «նայիմ, տղաս արթու՞ն, թէ՞ քնացած է. եթէ կրցայ ճարել բան մը՝ տամ որ ուտէ»: Բայց արդէն շատ ուշ էր... պզտիկին տկար մարմինը չդիմանալով այդքան չարչարանքի, իր հոգին աւանդեր էր: ...Խեղճ մայրը իր զաւակին անկենդան մարմինը թաղելու իսկ անկարող՝ կը ստիպուի այդ դաժան թուրքերուն պզտիկ զոհերէն մէկը հոն ձգել, ճամփու եզերքը եւ շարունակել աքսորի ճամփան:

Փոքրիկ նահատակին հայրը, շատոնց մաս կազմած էր աքսորի ճամփուն վրայ կորսուածներու ցանկին եւ ապա՝ խմբովին սպաննուածներու թիւին: Խեղճ, որք եւ այրի մայրը իր աղջկան հետ հասած է Տէր Զօր, անցած է իր աղէտալի ճամփան, ան հասած է Հալէպ եւ յետոյ Լիբանան՝ անցնելով զանազան վտանգներէ, ազատելով անհաշիւ փորձանքներէ իր կեանքը շարունակած է Նոր Մարաշի մէջ ասեղնագործութեամբ: Սերունդէ սերունդ մինչեւ մեզի հասած Մարաշի ասեղնագործութեան մշակոյթը կը գործէ»:

...Մեծմայրս այլեւս անկարող էր շարունակել ...նոյնպէս եւ մենք բոլորս: Ոչ մէկս կրցաւ բան ըսել՝ մեղմացնելու համար

իր զգացած ցաւերը, թերեւս՝ որովհետեւ մենք ալ իրեն հետ նոյն ցաւերը կը բաժնեկցէինք:

Իսկոյն յիշեցի մօրս դէմքի արտայայտութիւնը երբ ընտանիքով գացած էին Տէր Զօրի Նահատակաց Մատուռը, ապա Մարկատէ, ուր մայրս երբ փորձեց հողը ձեռքով փորել, գտաւ ոսկոր մը եւ բացատրեց թէ այս ամէնը պարզ փաստեր են, որ հայ ժողովուրդը երբ տեղահան եղաւ ու հասաւ մինչեւ հոս՝ ինչպիսի վիճակի մէջ էր եւ որքանով ճիշդ էր մէկուկէս միլիոն նահատակներուն կրած անգթութիւնը: Հոն մայրս շեշտեց Եփրատ գետի մասին որ կլլած է բաւական մեծ թիով հայեր: Այդ օրէն ես Եփրատ գետը կ'անուանեմ հոգէառ հրեշտակ, թէեւ երբեմն խեղդամահ եղողները կրնան ազատած ըլլալ ուրիշ վայրագութենէ:

Այս դէպքը, գիտեմ թէ այսպիսի պատմութիւններէն թերեւս ամէնէն փոքրը համարուի ասիկա: Սակայն կ'ուզեմ մեծմօրս աչքերուն արցունքները, իր պողթկումն ու անգութ եւ անմարդկային, վայրագ ու դաժան թուրքին ըրածները, Յեղասպանութեան եւ տեղահանութեան պատճառած ցաւը փոխանցել ներկայ սերունդին, որ լաւ իմանայ թէ թուրքը երբեք չի կրնար մարդ նկարագրուիլ, որչափ ալ փոխուած ձեւացնէ ինքզինք, կամ ձեւով մը զարգացած՝ ինծի համար կը մնայ այդ նոյն գազանն ու ռիսերիմ թշնամին:

Երբ մօտիկ անցեալին ոմբակոծեցին Տէր Զօրի Նահատակաց Մատուռը, անգամ մը եւս փաստեցին իրենց անգթութիւնը՝ երկրորդ անգամ մեռցնելով այդ մէկուկէս միլիոն նահատակները: Բայց երբ իմացանք, որ այլեւս անոնք պիտի սրբադասուին՝ քիչ մը հանդարտեցայ, որովհետեւ իսկապէս այդ զոհերը սուրբեր են:

Հիմա այլեւս իմ յուշերու մէջ իր մեծ եւ արժանի տեղը կը գրաւէ այս աղէտալի պատմութիւնը. կը սպասեմ, որ չարը ստանայ իր արդար պատիժը եւ բարիներն ու անմեղ նահատակները հանգիստ ննջեն:



ԻՄ ՄԵԾՄՕՐԱ ՀՕՐԸ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԱՍԻՆ

Անի Այրանեան

Մեծմօրս հայրը՝ Աւետիսը ծնած է 1905 թուականին, Թուրքիոյ Մարաշ քաղաքը: Մինչեւ այսօր իրենց բնակած տունը աւերակ է եւ ուեւէ մարդ չի բնակիր հոն: Թէեւ թուրքերը ջարդի վայրագութեամբ տէր դարձան մեր մեծհայրերուն հարուստ հողերուն, սակայն անոնք միայն կրցան հնձել ինչ որ ցանեցին՝ արիւն եւ արցունք:

Մեծմօրս հայրը կը պատմէր անցեալի արիւնոտ դէպքերուն մասին, յիշելով չարչարանքը յդի կիներուն: Ան կը պատմէր թէ ինչպէս թուրք անգութ զինուորները կը զրկէին անմեղ երեխաներուն կեանքը՝ բաժնելով զանոնք իրենց մօր արգանդէն, եւ թէ ինչպէս այդ կիներուն կուրծքի պտուկները կտրելով *թեսպիհ*՝ համրիչ, կը շինէին զբաղումի համար: Ան նաեւ կը պատմէր թէ անոնք ինչպէս ծիծաղելով կ'ըսէին անոնց. «ու՛ր է ձեր Աստուածը, ու՛ր է ձեր խաչը, անոնք թող գան ձեզի ազատելու»: Ոչ միայն կը ծիծաղէին քրիստոնէական մեր հաւատքին, այլեւ անոնց բռնի ուժով մահմետական կը դարձնէին:

Աւետիսը կը պատմէր թէ իր գորբանչը հագիւ երեք ամսուայ յդի էր երբ իր ամուսինին՝ Լեւոնին սուրի վրայ նստեցնելով կը սպաննեն: Այս պատճառով ալ, ծնող երեխան չճանչցաւ իր հայրը:

Այս ձեռով կը շարունակուէր իրենց ահաւոր կեանքը, գիշեր-ցերեկ ճամփաները գաղթելով: Թուրք ծիաւորները կը հալածէին մեծմօրս մեծհայրը՝ Սարգիսը եւ անոր երկու զաւակները՝ Աւետիս եւ Արթին, որոնք անօթի-սոված, ճամփաները թափառելով ուտելիք կ'երազէին: Այդ միջոցին, գետինը նետուած ձմերուկի կեղեւ մը տեսնելով, կը

մօտենային որ առնեն, բայց ձիաւորները անոնց դէմ ելլելով կ'արգիլէին որ ուտեն եւ կեղեւները իրենց ձիերուն կը կերցնէին ըսելով. «դուք ասի ուտելու նոյնիսկ արժանի չէք»: Աղտոտ, ցեխոտ ջուր կը խմէին: Հաց բաժնելու յայտարարութեան յոյսով կ'ապրէին:

Արթինը միամիտ էր, կ'ըսէր եղբօրը. «քալէ՛ երթանք հաց ուտելու, շատ անօթի ենք»: Իսկ մեծ եղբայրը՝ Աւետիսը կ'ըսէր. «անոնց նպատակը հաց կերցնել չէ, այլ ծուղակ մըն է»: Աւետիսը կ'ըսէր իր եղբօր. «սա բարձր ցանկապատէն մագլցելով, ցատկինք դէպի ձոր եւ փախչինք այս խճողումէն»: Անոնք յաջողեցան փախչիլ, իսկ մնացեալ բազմութիւնը որ հաց կերաւ թուրքերը սպառնալիքի տակ բանտարկեցին եւ զիրենք բեռնակառք լեցնելով Եփրատ գետը թափեցին ուր խեղդուցան եւ մեռան:

Աւետիսը եւ Արթինը շարունակեցին իրենց ճամփան եւ յոգնած՝ նստեցան անկիւն մը: Թուրք ընտանիք մը իրենց վատ վիճակը տեսնելով, գիշեր մը կը պահէ զանոնք իր տունը: Առաւօտուն, լոյսը ծագելուն պէս, եղբայրները իրենց ճամփան կը շարունակեն եւ ամէն անգամ որ կ'անօթենան, գետիններէն ձիերուն աղտերը հաւաքելով, կ'եփեն եւ կ'ուտեն: Այսպիսով, օրեր վերջ Դամասկոս կը հասնին:

Հոն՝ ֆրանսական բանակը կ'իշխէր: Անոնք գաղթականները երկու խումբի բաժնելով, մաս մը Սուրիա կը պահեն, մաս մըն ալ Լիբանան կը դրկեն: Աւետիսը եւ Արթինը այս ձեւով Լիբանան հասան եւ ֆրանսական զինուոր եղան:

Աւետիս՝ 18 տարեկանին, երբ արդէն զինուոր էր, ծանօթացաւ աղջկայ մը, որուն հետ կը պսակուի, ընտանիք կը կազմէ եւ եօթը զաւակ կ'ունենայ ու կը բնակին Սիս թաղը: Աւետիսը նիւթական շատ խեղճ պայմաններով եւ չքաւորութեամբ պահած էր իր ընտանիքը, գիշեր-ցերեկ աշխատելով կօշկակարութեամբ եւ գիւղերէն քաղաք փոխադրութեան գործ կատարելով: Երբ բոլոր զաւակները կը

մեծնան, ընտանիքը կը փոխադրուի Տորայի շրջանը եւ հոն կ'ապրի մինչեւ այսօր:

Ներկայիս, այդ տունը իմ մեծմօրս կը պատկանի ուր կը բնակի ան: Մականուննին եղած է Էքմէքճեան, որ կը դնէին միայն բնիկ մարաշցիները: Ընտանիքին բոլոր անդամները Լիբանան չեն. մաս մը մահացած է, մաս մըն ալ Միացեալ Նահանգներու մէջ կ'ապրի, նաեւ՝ Աւստրալիա, Քանադա եւ Շուէտ:

Աւետիսը Լիբանան մահացաւ, իսկ Արթինը՝ Ամերիկա, բայց անոնց *մուրազը* չիրականացաւ, որովհետեւ կ'ուզէին Լիբանան նոյն տեղը թաղուիլ, այն գերեզմանը ուր իրենք երկու ծառ տնկած էին:

Եթէ ես ապրէի իմ պապերուս ծննդավայրը, պիտի ուզէի ծառայել ազգիս իմ կարողութեանս համեմատ: Կ'ուզէի պահել ու պահպանել հայերէն լեզուն եւ մեր եկեղեցին: Ինչպէս նաեւ կ'ուզէի արար աշխարհի իմանայ հայ երիտասարդներուն եւ երիտասարդուհիներուն աշխատանքները, ցաւերը եւ երազները:

Չեմ կարծեր որ պիտի դիմանայի եւ հանդուրժէի այն բոլոր չարչարանքները, այն ցաւալի վիճակը որ իմ նախահայրերս եւ նախամայրերս ապրեցան: Կրնայ ըլլալ՝ զոհուէի հոն եւ այդ մէկուկէս միլիոն զոհերէն մէկն ալ ես դառնայի:



ՄԱՐԱՇ, ԱՏԱՆԱ, ՊԷՅՐՈՒԹ ...

Սինթիա Անթոսեան

Որքան դիրին ու սահուն կարելի է գրել ուրիշի մը պատմութիւնը, ուրիշի մը հետ պատահած դէպքի մը կամ դէպքերու մասին: Հիմա որ ձեռքս գրիչս առած կը մտածեմ գրել մեր ընտանիքի պատմութեան մասին, կը զգամ որ դժուար է: Գրիչս չի շարժիր թուղթիս վրայ: Բայց քանի որոշած եմ, ուրեմն պիտի փորձեմ:

Այս տարի Եղեռնի հարիւրամեակն է: Ամէն տարի Ապրիլ ամսուան ընթացքին, դպրոցին մէջ անպայման յիշատակի ձեռնարկներ կազմակերպած ենք, արտասանած ենք Եղեռնի զոհ մեր գրողներուն գործերը, Կոմիտաս նուագած ու երգած ենք, լսած ենք մեր ուսուցիչներուն ելոյթները, հեռատեսիլէն դիտած ենք լիբանանահայերուն երթը դէպի Պիքֆայայի Եղեռնի Յուշակոթող, ինչպէս նաեւ Հայրենիքի մէջ դէպի Ծիծեռնակաբերդի Յուշահամալիր բազմահազար հայորդիներու երթը եւ միլիոնաւոր ծաղիկներու մարդահասակ օղակը՝ անմար կրակին շուրջ: Ամէն տարի կազմակերպուող ձեռնարկները ապացոյց են, որ մեր ժողովուրդը չէ մոռցած եւ չի կրնար մոռնալ պատահածը: Աշխարհի տարբեր երկիրներու մէջ ապրող հայերը, նոյնիսկ անոնք, որոնք կը թուի թէ հեռացած են իրենց արմատներէն, Ապրիլ 24ի օրը կարծես կ'արթննան, ու բոլորին սիրտերը աւելի հայօրէն կը սկսին տրոփել...

Հայերս սփռուած ենք աշխարհի շատ ու շատ երկիրներու մէջ: Մեր հողին վրայ չենք: Պատճառը անշուշտ թուրքն է, բայց ոչ միայն թուրքը... Այս տարի, մեր հայոց պատմութեան դասերուն ընթացքին ես հասկցայ, որ Հայոց Յեղասպանութեան մէջ յանցանքի իրենց բաժինը ունին նաեւ եւրոպական երկիրները: Ես միշտ մտածած եմ, որ

Երոպացին քրիստոնեայ է, ուրեմն հայերուս բարեկամն է: Բայց հիմա կը հասկնամ, որ բարեկամ ըլլալու համար քրիստոնեայ ըլլալը բաւարար չէ: Ես հիմա գիտեմ, որ աշխարհի ժողովուրդներուն իրարու կապողը շահն է, միմիայն շահը: Անշուշտ այս մէկը տխրեցնող իրականութիւն մըն է, բայց աւելի լաւ է իրականութիւնը գիտնալ, քան հաւատալ ու ետքը յուսախաբ ըլլալ:

Մեր ընտանիքն ալ ջարդի օրերու իր պատմութիւնը ունի: Այդ մասին ես հարցուփորձ ըրի եւ հիմա քանի մը տողով պիտի գրեմ մօրենական մեծմօրս եւ մեծօրս պատմութիւնը:

Հայրս՝ Յարութիւն Անթոսեանը, մարաշցի է, իսկ մայրս՝ Նաթալի Չերչեանը, ատանացի:

Մօրենական մեծմօրս մեծհայրը՝ Գէորգ Կուլթրաշեան, կինը՝ Սարա եւ անոնց երկու տարեկան աղջիկը՝ Մարի, Ատանայի մէջ այգի ունէին եւ պարտէզով մեծ տուն մը: Թուրքերը զիրենք ծեծած, չարչարած են ու ի վերջոյ՝ գրաւած անոնց ամբողջ ունեցուածքը, ապա՝ զիրենք աքսորած: Այնքան շատ են նման դէպքերը, որ նորութիւն մը պիտի չաւելցնեմ:

Մօրենական մեծօրս հայրը՝ Ստեփան Չերչեանը, շոգեկառքի մէջ որպէս տոմսավաճառ աշխատած է, եւ այդ վախի ու սարսափի օրերուն յաջողած է իր շատ մը հայրենակիցները ազատել (փախցնել), որոնց շարքին էին Գէորգը, Սարան եւ փոքրիկն Մարին: Վերջիններս շոգեկառքով Ատանայէն հասած են Դամասկոս, ապա Պէյրութ՝ Քարանթինա: Անոնք հետերնին բերած են նաեւ իրենց տան եւ այգիին փաստաթուղթերը, սակայն յետագային կորսնցուցած են: Այսպէս՝ ամբողջ հայրենիք մը կորսնցուցած ենք:

Որքա՞ն դիւրին է անցած պատմութեան մը մասին գրելը: Բայց մարդիկ ինչպիսի՞ ցաւ ապրած են այդ օրերուն. ոչ ոք կրնայ հասկնալ: Հապա ի՞նչ ըսեն անոնք, որոնք իրենց հարազատները կորսնցուցած են տարագրութեան

ճամփաներուն վրայ, կամ իրենց աչքերով տեսած են իրենց սիրելիներուն մահը: Անոնց կեանքը, վստահ են, չարչարանք եղած է ու մղձաւանջ: Չեն ուզեր երեւակայութեամբ տեսնել այդ պատկերները: Մտածելն անգամ ցաւ կը պատճառէ ինծի:

Մէկ բան գիտեմ, որ՝ ցեղասպան թուրքը եւ անոր օգնած օտար պետութիւնները պէտք է ստանան իրենց պատիժը: Թէ ե՛րբ կը ստանան այդ պատիժը՝ հարիւր, հարիւրյիսուն, կամ աւելի տարիներ ետք՝ ատիկա բնաւ կարելոր չէ: Կարելորը այն է, որ աշխարհը պէտք է անդրադառնայ գործուած անմարդկային ոճիրին ու չարը պէտք է պատժուի, անպայման՝ պատժուի:



ԸՆՏԱՆԻՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Քրիսթել Աշճեան

Նկատի ունենալով, որ 2015 տարին մեր առաել քան մէկուկէս միլիոն նահատակներու, Հայկական Ցեղասպանութեան 100ամեակն է, զանազան նախաձեռնութիւններ տեղի կ'ունենան հանդիսաւոր կերպով աշխարհի ամբողջ տարածքին, հոն ուր նոյնիսկ մէկ հայ կը գտնուի:

Փափաքեցայ մօրենական ընտանիքիս նախնիներու պատմութիւնը վերոյիշել ու վերոյիշեցնել յատկապէս մեր երիտասարդ-երիտասարդուիհներուն, որոնցմէ մէկը անձամբ կը պատրաստուիմ ըլլալ:

Մօրենական ընտանիքս կը բնակէր Արեւմտեան Հայաստանի Մուշ քաղաքը: Մուշի յատկանիշերէն էր շրջանի հայախօս ըլլալը. հոն հայութիւնը կը փորձէր իր ինքնութիւնն ու պատկանելիութիւնը պահել ու պահպանել: Մեր ընտանիքի անդամները վեց հոգիով, նաւով գաղթեցին Լիբանան եւ հաստատուեցան Պուրճ Համուտի մէջ. դժբախտաբար անոնցմէ մէկը՝ մեծմօրս զարմիկը, զոհուեցաւ:

Ընտանիքիս անդամները կօշկակարութեամբ կը զբաղէին ու նշանաւոր էին ամէն տեսակ կօշիկներ նորոգելով: Անոնց ծննդավայրը շատ համեստ ու պարզ էր եւ անոնք կը փորձէին իրենց թշուառութեան մէջ միշտ Աստուծոյ փառք տալ, որ Աստուած իրենց կարողութիւնն ու ուժը տայ բոլոր դժուարութիւնները յաղթահարելու:

Ծնողքս երկաթագործ է. ընտանիքիս ազգանունը բարեբախտաբար փոփոխութեան չենթարկուեցաւ: Մեր ընտանեկան ներկայ վիճակին մէջ խառն ամուսնութիւն չենք ունեցած եւ յոյսով եմ որ չենք ալ ունենար, որովհետեւ կը կարծեմ որ խառն ամուսնութեամբ հայկականութիւնը կը

պարպուի մեր մէջէն ու մանաւանդ մեր նահատակներու շիրիմն ու ոսկորները հանգիստ չեն ըներ:

Մուշ քաղաքէն որպէս աւանդ այսօր պահպանուած է մէկ բան՝ մեծմօրս զարմիկին հրաշալի հրացանը. ամէն անգամ երբ որսորդութեան երթար, այդ հրացանը միշտ իր հետ էր, կարծէք իր կեանքի անբաժան ընկերն էր:

Ընտանիքս Լիբանան հասաւ 1915ի ջարդերէն ճողոպրած եւ հաստատուեցաւ 1930ականներուն, երբ Սիսէն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը փոխադրուէր Հալէպ եւ ապա Լիբանանի նարնջենիներու վայր՝ Անթիլիաս շրջանը: Այժմ մենք կը բնակինք Անթիլիասի շրջանէն դէպի վեր բարձունքի մը վրայ, որ կը կոչուի Ծաղկածոր (Մըզհէր):

Լիբանան հաստատուելէն ետք, որոշ ժամանակ մեծմօրս քով մնալէ ետք փոխադրուեցանք Անթիլիասի շրջանը: Ընտանիքիս անդամները այսօր գրեթէ Լիբանան կը գտնուին, իսկ գերդաստանիս շատ անդամներ կը գտնուին տարբեր երկիրներ՝ Ամերիկա, Քանատա, Հալէպ եւ այլ տեղեր, եւ վստահ՝ իրաքանչիւրը իր ներդրումը կ'ունենայ հայկական հարցերով, ազգային թէ եկեղեցական կեանքէն ներս, Հայ Դատի ճամփով եւ այլ զանազան ձեւերով:

Այսօր, եթէ ես իմ պապերուս ծննդավայրը ապրէի, պիտի ուզէի ուրիշներուն եւս բարի օրինակ ըլլալ այցելելու իրենց պապենական հողը, համբուրելու եւ դիտելու թշնամիին կողմէ կատարուած տեղահանութիւնը եւ ինչու չէ օր մը զանոնք վերանորոգելու յոյսով ապրելու եւ մեր նորօրեայ սերունդի զաւակներուն օգտակար դառնալու՝ վերադառնալու իրենց պապենական եւ Սուրբ Հողին վրայ մեր Հայրենիքի եռագոյնը անգամ մը եւս ծածանեցնելու:

Թող այս ընտանեկան պատմութիւնս ձօնուած ըլլայ մեր նահատակներու յիշատակին եւ թող անոնց թափած արիւնը պարապ տեղ չհոսի եւ մենք որպէս պատանիներ, մեր երթը շարունակենք դէպի յաղթանակ ու պահանջատիրական ոգիով յանուն մեր Հայրենիքի պաշտպանութեան:



ՆԱԽՆԻՆԵՐՈՒՍ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ալիսիա Գարլա Ապուտեան

Կրկիկոյ Այնթապ Նահանգի գիւղերէն է Ճիպինը, ուր ժամանակին կը բնակէր իմ հօրս մեծհայրը, որ այդ ժամանակի հայ աղաներէն եղած է: Ան իր հօրմէն հողեր ժառանգած է, բայց 17 տարեկանին ծախած է ամբողջ այդ հողերը որպէսզի վճարէ պարտքերը:

Ետքը կ'ամուսնանայ Երանիկին հետ, որ հօրս մեծմայրն է: Հօրս մեծհայր Յակոբը կը դառնայ գիւղի հայ աղաներէն մէկը: Անոնք կ'ունենան զոյգ զաւակներ՝ տղայ մը եւ աղջիկ մը, Լեւոն եւ Լեւոնիկ:

Մեծհայրս շատ չարաճճի էր, միւս փոքրերուն նման չէր:

Օր մը թուրք աղա մը կ'ըսէ հօրս մեծհօրը. «իմ տղաս աւելի զօրաւոր է քու տղայէդ»: Հօրս մեծհայրը կ'ըսէ. «ո՛չ, իմ տղաս աւելի զօրաւոր է քու տղայէդ»:

Կը համաձայնին որ երկու փոքրերը կռուին, եւ ով որ յաղթէ՝ գիւղին մէջ մեծ անուն առնէ: Մրցումը կ'ըլլայ թուրք աղային տան ախոռին մէջ: Երբ մեծհայրս տղան գետին կը գլորէ՝ թուրքին ուսը կը վնասուի անբուժելի կերպով: Հօրս մեծհայրը կը զգայ թէ վրէժխնդրութեան պիտի վերածուի այս մրցումը՝ ընտանեօք կը փախչի ուրիշ շրջան մը՝ Նիզիպ, թուրք աղայի մը հովանաւորութեան տակ:

Հոն հօրս մեծհայրը կը հիւանդանայ, որուն բուժման միակ դեղը մեղր է, իսկ այն ժամանակ մեղրը շատ սուղ էր եւ կը գտնուէր միայն թուրք մեծ աղային մօտ: Աղայէն մեղր կը խնդրեն, բայց ան չի տար: Մեծհայրս շատ կը զայրանայ եւ քարկոծելով, հայիոյելով կ'առնէ մեղրը, կը բերէ իր հօրը, որ կ'ուտէ եւ կը լաւանայ: Այս ինը տարեկան տղան կը դառնայ փորձանք թուրք ազահ աղային:

Օրըստօրէ վիճակը վատ կը դառնայ: Օսմանեան Կառավարութիւնը կը սկսի այդ գիւղին մէջ փնտռել այն անձները, որոնք իրենց տան մէջ հայեր պահած են: Հօրս մեծհայրը ընտանեօք, կառքով կը փախչի Հալէպ որ մօտ է Նիզիպին: Ճամփան շատ չարչարանքներ կը կրեն:

Կը հաստատուին Հէօլլիկ: Չքաւորութեան պատճառով, մեծհայրս դարոց չի կրնար երթալ եւ փոքր տարիքին կը սկսի մետաղեայ կաթսաներ շինել, ծախել եւ տունը հաց ու պանիր կը բերէ որ իրենց կեանքը շարունակեն: Երբ խելահաս երիտասարդ կը դառնայ՝ արհեստ կը սորվի եւ կը նորոգէ ինքնաշարժներ ու հանրակառքեր, դրամ կը շահի ու կ'օգնէ ընտանիքին:

Մեծմայրս ամուսնանալէն առաջ Այնթէպ կը բնակէր: Հայրը ճաշարան ունէր հոն: Գաղթին, անոնք կ'անցնին Այն Արապ, ուր ճաշարան կը բանան: Մեծմօրս հայրը անհանգիստ կ'ըլլայ եւ Հալէպ կ'երթան բուժուելու. հոն մեծմայրս՝ Ալիսը, կը ծանօթանայ մեծհօրս եւ կ'ամուսնանան, կը ծնին հայրս, հօրեղբայրս եւ երկու հօրաքոյրերս: Հայրս եւ հօրեղբայրս կը ժառանգեն մեծհօրս արհեստը:



ԱՐԻԻՆՈՏ ԳԻՇԵՐԸ

Եսայի Ասուրեան

Փոքր տարիքէս կը սիրէի պրպտել. հո՛ւս խառնել, հո՛ն տակնուվրայ ընել՝ միայն խառնելու սիրոյն, որովհետեւ չեմ հետաքրքրուած որեւէ բանով: Օր մը, հօրս կղպուած դարակին կղպանքը կրցայ բանալ երկու սուր երկաթներով եւ սկսայ խառնել, աջ-ձախ նետելով թուղթերը՝ առանց հետաքրքրուելու: Յանկարծ ձեռքս անցաւ թղթածրար մը որուն վրան գծուած էր Հայաստանի դրօշակը: Ես կոշտ ձեռով կը բանայի այդ ծրարը, երբ հեռուէն հայրիկս նշմարեց: Բարձր ձայնով պռռաց. «մի՛ ըներ»: Ձայնը ամբողջ տունը լսեց: Ծրարը ձեռքէս ինկաւ գետին: Հայրիկս եկաւ, ինձի երկու ապտակ զարկաւ եւ սաստիկ բարկացաւ. «այս դարակը ինչպէ՛ս բացիր, ուրտեղէն բանալին...»: Յետոյ հանդարտեցաւ եւ լայն ժպիտով մը ըսաւ ինձի. «Եկուր, նստիր ոտքիս վրայ որ պատմեմ այս թղթածրարին մասին: Մէջը կայ մեծհօրս տան ապահովագրութիւնը»:

Լուռ ու մունջ նստայ կողքը եւ սուսիկ փուսիկ մտիկ ըրի:

Մեծհօրը անունը Պետրոս էր: Պետրոսը տասը տարեկանին ականատես կը դառնայ մեր Հայկական Եղեռնին. իր ընտանիքը բաժնուած էր՝ հայրը մօրմէն: Հայրը՝ պատերազմի, իսկ մայրը՝ Պետրոսին հոգ տանելու: Գեղեցիկ երեկոյ մըն էր այդ օրը երբ Պետրոսը եւ իր ընկերը՝ Մանուկը ուրախ ժամեր անցուցին միասին Պետրոսին տունը մինչեւ ուշ գիշեր: Առտուան կանուխ ժամերուն անոնք տեղերնէն ցատկեցին դուրսէն եկող ահաւոր ձայներու վրայ. պռոչտուք, տակնուվրայութիւն ու կրակոցի ձայներ: Դուրս ցատկեցին, բայց ոչ մէկ բան կ'երեւէր: Տանիք բարձրացան որ տեսնեն դուրսի վիճակը: Գիւղը կ'եռար. ամէն կողմը կրակ կար:

Յանկարծ դրան ձայնը լսեցին, բայց՝ հանդարտ ձեռով չէր զարնուեր, այլ՝ ուռքի հարուածներով: Դուռը ջարդեցին, ներս մտան ու մայրիկը բռնեցին: Այդ միջոցին անոնք աստիճաններէն կ'իջնէին ու տեսան սուրերը՝ կը բարձրանան մօր մարմնին վրայ: Անոնք առանց խիղճի կը մորթէին Պետրոսին մայրը, առանց ուշադրութիւն դարձնելու իր ահաւոր ձայներուն: Փոքրերը վախով կը դիտէին այդ դէպքը, անշարժ ու լուռ, բայց ահաւոր դէմքով, կարմրած երեսով ու աչքերը լեցուն արցունքով: Երբ թուրք ջարդարարները տունէն դուրս եկան, անոնք հեալով արագ վազեցին դէպի մայրիկը: Մայրիկը համբուրեց... իր արցունքները կաթեցան մօր վէրքերուն վրայ: Մայրը թելադրեց. «տղաս, գնա դարակը բաց, ա՛ն ապահովագրութիւնը ու ոսկիներս եւ փախչիր տունէն, արագ»: Անոնք մայրիկին ըսածը մտիկ ընելով գացին, առին ապրանքերը ու փախան տունէն դուրս առանց ետեւ նայելու: Կրցան իրենց գիւղէն դուրս գալ, առանց որեւէ վնասի, իրենց ձեռքերուն ու վիզերուն վրայ դրին այդ ոսկիները որ չկորսուին ու թուղթը թխմեցին ներքնազգեստին մէջ: Անոնք չնկատեցին ինչպէս քիւրտ ձիաւոր մը հասաւ, բռնեց զիրենք ու տարաւ զինուորներուն կեդրոնը: Խմբապետը տեսնելով փոքրերը, կ'ըսէ քիւրտին. «գացիր եկար երկու հատ պզտիկ տղա՛յ բերիր, տար-տար բայց ոսկիները առ»:

Անոնք այդպիսով ազատեցան մեռնելէ ու շարունակեցին ճամփանին դէպի Սուրիա առանց ուտելու, միայն խմելով անապատներուն մէջ գտած ջուրը: Երկու օր անդադար քալելով Տէր Զօրի մէջ, Մանուկ կ'ըսէ Պետրոսին. «գիտե՛ս, Պետրոս, ի՞նչ եկեր է սիրտս. այդ աղոտ պիստակները»: Այս բառը ըսելով գետին կը փռուի Մանուկ, անշարժ, առանց որեւէ բառ մը եւս ըսելու:

Այսպէս, Պետրոսը առանձին կը մնայ: Ան կը թաղէ Մանուկը անապատին մէջ ու անոր վրայ աղօթելէ ետք կը շարունակէ իր քալելը մինչեւ որ կը տեսնէ մարդիկ որոնք

կառքով կը փախչէին: Չանոնք կը կեցնէ եւ օգնութիւն կ'ուզէ. անոնք իր աղտոտ ու արինալի վիճակը տեսնելով կը մեղքնան ու կ'առնեն զինք:

...Պէյրութ հաստատուեցան քեմիի տուներէն մէկուն մէջ, ուր Պետրոս կ'որդեգրուի անապատի այդ մարոց կողմէ, յետագային կ'ամուսնանայ ու զաւակներու տէր կը դառնայ՝ «մինչեւ որ դուն ալ իր ընտանիքին մաս կը կազմես», ըսաւ հայրս:

«Գիտցա՞ր տղաս, այս թուղթին յարգը այս է, ... ա՛յս է փաստը որ թուրքը քշեց մեզ դուրս մեր երկրէն»: Դարձայ հօրս, ու ձեռքս գլխուն վրայ դնելով ըսի. «Այս թուղթը պիտի առնեմ ու դատ պիտի բանամ ու քու մեծօրդ տունը պիտի վերադարձնեմ, խօսք կու տամ քեզի, հայրիկ ու Պետրոս եւ Մանուկ ...»:



ԻՄ ԸՆՏԱՆԻՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Գրիգոր Արապաթեան

1914ականներուն Քիլիսի մէջ կ'ապրէին մեծօրս մեծօր ընտանիքը: Տան իօր անունն էր Գէորգ, իսկ կնոջ՝ Կարինէ: Անոնք երեք զաւակներ ունէին, երկու աղջիկ եւ մէկ տղայ: Մեծ աղջկան անունն էր Սէրլի, փոքրին՝ Մեղրի, իսկ տղուն՝ Կարպիս: Սէրլին 16 տարեկան էր, Մեղրին՝ 7, իսկ Կարպիսը՝ 11: Գէորգ կը զբաղէր կօշկակարութեամբ եւ հազիւ կարող էր իր ընտանիքին պէտքերը հոգալ: Երբ 1914ին Համաշխարհային Առաջին Պատերազմը սկսաւ, գործերը տկարացան. ստիպուած Կարպիսն ալ սկսաւ աշխատելու, հակառակ որ տակաւին նախակրթարանը չէր աւարտած: Կարպիսին քոյրերն ալ դադրեցան ուսում ստանալէ, երբ տարագրութեան լուրերը տարածուեցան:

Անոնք լսած էին թէ ծոր մը կայ, որուն պռունկին մարդիկ կը մորթէին եւ ձորէն վար կը գլորէին:

Կարպիսի աշխատած գործը բեռնատարութիւն էր: Ան առաւօտ կանուխ, լուսաբացին տունէն կ'ելլէր եւ իրիկունը կու գար: Օր մը, երբ Կարպիս լսեց թէ իր վարպետին տան մօտակայքը ռմբակոծուեցաւ՝ փութաց օգնութեան հասնիլ վարպետին եւ անոր ընտանիքը բերաւ իր տունը բնակեցուց. Անոնք քանի մը ամիս մնալնէն ետք, գաղթեցին ուրիշ հեռու գիւղ մը:

Օր մը երբ Գէորգ գործի կ'երթար, ճամփան զինք կ'առեւանգեն գերման զինուորները եւ կը սպաննեն: Այս դէպքէն ետք մայրը կը ստիպուի աշխատիլ. կը կարէ եւ աշխատած ձեռագործները կը ծախէ: Այս ձեւով կ'ապրին: Մեղրին մօրը միշտ կը համոզէր որ գաղթեն: Կարինէն կը տեսնէ որ անկարելի է մնալը, որովհետեւ ռմբակոծումները մօտեցած էին իրենց տան, մանաւանդ Մեղրին ռմբակոծումին ձայնը լսելով կը սոսկար եւ կը սկսէր լալ: Ան կ'որոշէ գաղթել: Այն գիշերը որ պատրաստուած էին ճանապարհ ելլելու, թուրք զինուորներ տունը կը խուժեն, ամէն ինչ կը դալանեն, կ'առեւանգեն տնեցիները եւ տունը աւերակ ընելով կը հեռանան:

Բարեբախտաբար այս ոճիրին ժամանակ Կարպիսը տունը չէր, այլ գացած էր ճամփու համար պարէն բերելու: Երբ կը հասնի տուն ձեռքերը կը թուլնան եւ ապրանքները գետին կ'իյնան: Անմիջապէս կը վազէ այն տեղը ուր կը գտնուէր իրենց ժառանգութիւնը: Այնտեղ կը գտնէ միայն ոսկիէ խաչ մը: Հաստատ գիտնալով որ իր ծնողքը այդ ձորը տարեր են, կ'երթայ հոն, որպէսզի ազատէ իր ծնողքը, սակայն չի յաջողիր:

Կարպիս չորս օր թափառական վիճակի մէջ, գերեզմանոցին մէջ աճած վայրի պտուղներէն կ'ուտէ: Գերեզմանոցի դիակներուն մէջ կը գտնէ մահամերձ աղջիկ մը եւ կը փութայ օգնելու անոր: Իր ուսին դրած՝ կը հասնի գիւղ մը, ուր մարդ մը կ'օգնէ իրենց: Առաջին միքանի ամիսները տան ապրուստը կը հոգայ վարպետը, բայց ետքը երբ աղջիկը կը կազդուրուի Կարպիսն ալ կը սկսի աշխատելու: Այս անգամ ոչ բռնատարութիւն, այլ դերձակութիւն կ'ընէ Կարպիս: Յայտնի կ'ըլլայ որ այդ աղջիկը հայ է եւ անունն ալ՝ Ալիք: Կարպիս շատ կ'ուրախանայ եւ կը սիրահարին իրար: Երկար տարիներ սիրահարած կը մնան:

Կարպիս ամէն անգամ որ իր աշխատավարձը առնէր, կէսը կը պահէր գանձանակի մը մէջ, յատուկ նպատակով մը բայց չէր յայտնէր Ալիքին: Տարիներու ընթացքին այնտեղ հաւաքուած գումարով կ'որոշէ ամուսնութեան ծախսերը հոգալ: Ամէն ինչ կը պատրաստէ եւ ոսկիէ մատանի մը գնելով տուն կ'երթայ ու ամուսնութեան առաջարկը կը ներակայացնէ Ալիքին: Շաբաթ մը ետք եկեղեցւոյ զանգերը կը դողանջեն եւ ներս կը մտնեն անմեղ զոյգերը: Աղջիկը կը զարմանայ երբ ամէն ինչ պատրաստ կը տեսնէ. ուրախութեան արցունքի կաթիքներ կը հոսին իր անմեղ եւ սքանչելի աչքերէն: Ամուսնութենէն ամիս մը ետք կ'ուղղուին Տէր Զօր, ապա՝ Հալէպ: Կ'ունենան միակ զաւակ մը՝ իմ մեծհայրս, Ճորճ:

Մեծհայրս տասը տարեկանին հօրը ստիպումով կը ձգէ դպրոցը՝ հօրը օգնելու համար, որովհետեւ շատ խեղճ վիճակի մէջ կը գտնուէին: Կ'աշխատի իր մեծհօրմէն ժառանգած գործը (կօշկակարութիւն): Այդպիսով քիչ մը կը բարելաւուի իրենց ընտանիքին վիճակը: Օր մը, երբ մեծհայրս խանութը նստած, երազկոտ վիճակի մէջ կը գտնուէր, յանկարծ միքանի անձեր ներս կը մտնեն, որպէս թէ ներկերուն գիներով կ'ուզեն հետաքրքրուիլ:

Երբ վարպետը կու գայ, նկատելով ապրանքին բացակայութիւնը, դուրս կը վտարէ ճորճին գործէն եւ ամբողջ գիւղին կը տարածէ թէ ճորճը գող է: Այսպիսով ճորճը զուրկ կը մնայ գործէ: Ծնողքը կը սկսի նիւթականով տկարանալ, ուստի ստիպուած մայրը կը սկսի աշխատելու:

Ամիսներ կ'անցնին եւ տակաւին ճորճը չէր աշխատեր: Կարպիսը արկածի մը ենթարկուելով կը հիւանդանայ ու կը մեռնի: Աւելի եւս կ'աղքատանան եւ միակ ընտանիքը որ կը փրկէ իրենց այս տարապայման վիճակէն, ճորճին դպրոցական տարիներուն սիրած աղջկան ընտանիքն էր: ճորճը կը դնեն Նոր Գիւղի (Հալէպ) տպարան Արեւելքի մէջ, որպէս աշկերտ: Տարիներ ետք, ան կը դառնայ տէրը Արեւելք տպարանին: Հինգ տարի ետք, իր 18 տարեկան հասակին երկու ընտանիքները կ'որոշեն ամուսնացնել երկու սիրահարները: Աղջկան անունն էր Եւա: Վերջապէս կ'ամուսնանան եւ կը հաստատուին Նոր Գիւղի զէյթունցիներուն շէնքը: Կ'ունենան երեք մանչեր՝ Կարպիս (հօրեղբայրս), Ռաֆֆի (Տէր Մաշտոց, հայրս) եւ Վահէ (հօրեղբայրս): Հօրեղբայրներս Սուրիոյ տաժանելի եւ տագնապալից վիճակին պատճառով կը գաղթեն Հայաստան:

Մեր պապերէն մեզի ամանդուած ճաշը եղած է Իչը:

Եթէ ես ապրէի իմ պապերու ծննդավայրը, կ'ուզէի ըլլալ երիտասարդ մը որ արիւնը կը թափէ եւ կը կռուի իր թշնամիներուն դէմ, կը զոհուի յանուն իր հայրենիքին փրկութեան: Կը թելադրեմ իւրաքանչիւր հայ պատանիի, որ իր ամբողջ սիրտը դնէ եւ պայքարի յանուն մեր հայրենիքի ազատագրման:



ԻՄ ԱՐՄԱՏԸ

Մեղեդի Արոյեան

Երբ ապագան կը մտածենք, պէտք չէ մոռնանք մեր անցեալը: Անցեալը շարունակութիւնն է ապագային՝ լաւ թէ վատ ձեւով: Ահաւասիկ մէկ դար անցած է մեր Յեղասպանութենէն: Շատ լաւ գիտենք թէ մեր պապերն ու մամերը Յեղասպանութիւն տեսած են. մեր արմատներուն պատմութիւնը գիտնալը պայման է:

Նազարէթ Թնկրեան՝ մօրս մեծհայրը, ծնած է Ֆնտըճաք, Զէյթուն, 1900ին: Անոնք կոչուած էին Թնկրեան՝ իր հօրը պատճառով, որ միակն էր, որ ձի ունէր ու հիւանդ կը փոխադրէր բժիշկին քով: Բոլորը կը լսէին ձիուն ոտքերուն ձայնը՝ թնկր-թնկր:

Թնկրեանները մեծ գերդաստան էին: Նազարէթին ընտանիքը կը բաղկանար 6 եղբայրէ եւ մէկ քոյրէ: 15 տարեկանին Յեղասպանութիւնը կը սկսի ու ան կը մասնակցի կռիւներուն. զէնք կը վերցնէ ու տարիներու ընթացքին կը սպաննէ թուրքեր: Ան ուրախութեամբ կը համրէր իր սպաննած չարերուն թիւը, ցանկալով աւելին: Երբ երկրին վիճակը կը վատանայ ան կը կորսնցնէ իր ընտանիքը, եղբայրները՝ Գրիգոր, Յովսէփ, Մանուկ, Լեւոն... հայրը՝ Վարդիվառ, մայրը՝ Ալթուն: Նազար կը մնայ մէն մինակ այդ գէշ պարագաներուն մէջ:

Քանի որ ան սպաննեց բազմաթիւ թուրքեր բոլորին ուշադրութիւնը գրաւեց իր քաջութեամբ: Զանք թափեցին Նազարը սպաննելու, սակայն ան իր կեանքը փրկելու համար կը փախչի Սանճաք, ուր դարձեալ ջանք կը թափէ ժողովուրդին պաշտպանելու համար: Ան կը վարձէ փոքր տնակ մը ու այդ փոքր տնակին շնորհիւ կ'ամուսնանայ, որովհետեւ կը սիրահարի իր տանտիրոջ աղջկան՝

Ագապիին, որ 13 տարեկան էր, մինչ Նազար՝ 19 տարեկան: Սուրբ պսակը տեղի ունենալէ ետք, Նազար եւ Ագապի կը փոխադրուին Գրըգիսիան, ուր կ'ունենան իրենց երկու զաւակները՝ Մանուկը եւ Յովսէփը որ իմ մեծհայրս է: 1938ին Թնկրեան ընտանիքը կը հասնի Պէյրութ, ուր կ'ունենան աղջիկ զաւակ մը բայց 8 տարեկանին կը մահանայ հիւանդութեան պատճառով:

Նազարի գործը անյաջող եղած է Պէյրութի մէջ, կողոպտուելուն պատճառով: Անգործութիւնը ստիպեց Թնկրեան ընտանիքը անցնելու Սուրիա՝ Հալէպ: Անոնք կ'ունենան աղջիկ մը՝ Իսկուիի, եւ տղայ մը՝ Լեւոն: Հալէպի մէջ կը դառնայ Աղքատախնամին պատասխանատու որը 65 հոգի էր: Դժբախտաբար շատ չ'ապրիր ու կը մահանայ 59 տարեկանին 1959ին, անդամալուծութեան պատճառով:



ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԵՐԷՆ

Նայիրի Արսլանեան

Առաջին Համաշխարհայինի տարիները հայ ժողովուրդին համար եղան աղէտի, տանջանքի եւ կորուստի տարիներ. օսմանեան ոճրագործ պետութիւնը տեղահան ըրաւ հայ ժողովուրդը՝ անխղճօրէն ենթարկեց անմարդկային զանազան չարչարանքներու, աքսորի եւ ջարդի: Ան փորձեց բնաջնջել հայութիւնը, մեր դարաւոր շքեղ պատմութիւնն ու մշակոյթը՝ կործանելով մեր եկեղեցիները, սպաննելով մեր գրագէտներն ու ազգային գործիչները: Բայց հայ ժողովուրդի կամքն ու գոյատեւման պայքարը գերակշռեցին թուրքի բարբարոսութեան: Տարագիր հայ մայրերը Տէր Զօրի անապատին աւազին վրայ մեր սրբաշունչ Այբուբենը փոխանցեցին իրենց զաւակներուն, որոնք հայ ազգի անմեղ նահատակներուն աճիւններուն ընդմէջէն յարութիւն առնելով սփռուեցան աշխարհի չորս ծագերը, վերանորոգեցին իրենց փառաւոր անցեալն ու հարուստ մշակոյթը: Անոնք դաստիարակեցին հայ վրէժխնդիր, պահանջատէր սերունդներ, որոնք կ'երդնուն Հայ Դատը շարունակել մինչեւ վերատիրանանք մեր բռնագրաւուած հողերուն ու իրաւունքներուն:

Մեծ յուզումով կ'ունկնդրեմ հայրս, երբ կը պատմէ իր մեծմօր ընտանիքին տառապանքն ու վիշտը՝ գաղթականութեան ժամանակ: Հօրս մեծմօր ընտանիքը կը զբաղէր հողագործութեամբ եւ կը վայելէր հայրենի հողին բարիքները: 1915ին անգութ թուրքերը սեւ ամպի նման կը մթանգնեն հայրենիքի պայծառ, խաղաղ երկինքը: Մահ, ահ, սարսափ տեղացնելով ամէնուրեք՝ թուրք զինուորները կը ձերբակալեն անոր հայրն ու բոլոր հայ երիտասարդները.

շատեր գլխատուելով՝ գազաններու կեր կը դառնան, շատեր ալ կը տարուին պատերազմելու թրքական բանակի կողքին, մինչ կիները, մեծերն ու փոքրերը կը հանուին աքսորի, կը կրեն անտանելի չարչարանքներ. շատեր կը նահատակուին չդիմանալով թուրք ծիաւորներու սուրերուն եւ մտրակներու զարկին, սովին եւ հիւանդութեան, ոմանք կը նախընտրեն անձնասպան ըլլալ, քան թուրքի հպատակ դառնալ: Տէր Զօրի անապատը կը ներկուի հայոց անմեղ արեամբ:

Հօրս մեծմայրը՝ հագիւ մէկամեայ մանուկ, մօրը հետ կը դիմագրաւէ դժնդակ պայմանները, կը յաջողի հասնիլ Տէր Զօրի անապատ բոլորովին խեղճացած, սնանկացած, հիւծած: Բայց մեծագոյն փորձանքը կ'ըլլայ նահատակուիլը մօր, որ սուրի հարուած մը ստանալով կ'անցնի անթիւ անմեղ զոհերու շարքին: Թուրք զինուորները զինք կը ծախեն վրանաբնակ արաբ ընտանիքի: Հօրս որբացած մեծմայրը կը դառնայ արաբ ընտանիքին զաւակներէն մէկը. զինք շատ կը սիրէին, գուրգուրանքով կը վարուէին իր հետ:

Տարիներ ետք արաբ ընտանիքը հօրս մեծմօր կը յայտնէ իր հայ ինքնութիւնը, կը պատմէ թէ ինչպէս ինք հոն հասած էր: Ան չ'ուզեր ուրանալ իր հայ արմատները. կը տեղափոխուի Հալէպի որբանոցը, ուր կը սորվի հայերէն խօսիլ ու աղօթել, կը ծանօթանայ հայ գաղթականներու: Հայ ընտանիք մը, որ ջարդին կորսնցուցած էր իր բոլոր զաւակները կ'որդեգրէ զինք եւ ինք կ'ունենայ հայ ծնողք:

Երբ Մեծ Եղեռնի ցաւալի դրուագները լսեմ կամ նկարներ տեսնեմ՝ սիրտիս մէջ կը վերանորոգուին վրէժխնդրութեան, պայքարի եւ պահանջատիրութեան զգացումներ: Ահաւասիկ դար մը ամբողջ անցաւ թուրքին գործած Մեծ Եղեռնէն, սակայն մենք պիտի շարունակենք հետապնդել Հայ Դատը մինչեւ թուրքը ստանայ իր արդար պատիժը եւ մենք տիրանանք մեր բոլոր իրաւունքներուն:



ՔԵՍԱՊԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Յուշիկ Բարունեան

Քեսապ իմ պապենական գիւղն է, ուր իմ պապերս ծնած, մեծցած, լաւ սերունդներ հասցուցած են. ուրախութիւններով, ինչպէս նաեւ շարք մը դժուարութիւններով ապրեր են իրենց կեանքը:

Շատ հայեր չեն լսած Քեսապի մասին: Չեն գիտեր, որ Քեսապը հայկական բնակավայր է եւ բազմաթիւ հայեր կը բնակին այդ գեղեցիկ աւանին մէջ: Քեսապը Սուրիոյ մաս կը կազմէ. Թուրքիոյ սահմանին վրայ Միջերկրական Ծովի ափին, Կասիոս Լերան արեւմուտքը, հարաւ-արեւելեան եւ հարաւային սարի լանջին:

Քեսապի մէջ 1850էն մինչեւ 1900 ստեղծուեցան հոգեւոր համայնքներ՝ Հայ Աւետարանական, Հայ Առաքելական եւ Կաթողիկէ ու Լաթին համայնքները: 23 Ապրիլ 1909ին Քեսապը կ'ապրի ծանր վիճակ: Թուրքերը կը մտնեն Քեսապ, կը կողոպտեն, կը քանդեն. կը պատմուի որ քեսապցիները կը դիմադրեն, բայց ետքը ոմանք կը քաշուին լեռները՝ փախչելու եւ ազատելու նպատակով: Կ'ուղղուին Գալատտուրան շրջանին Կիննաք կոչուած լեռը, այդ լեռը կը ճեղքեն եւ միւս կողմը կ'անցնին, ուր կը գտնուէր Հալէպ քաղաքը, իսկ ուրիշներ՝ ֆրանսական նաւերով Գալատտուրանի ծովէն կ'ուղղուին Լաթաքիա: Բայց այս ցրուումը շատ երկար չի տւեր եւ մօտաւորապէս 9 շաբաթ ետք քեսապցիք կը վերադառնան իրենց ծննդավայրը: Անոնք փորձեցին որոշ չափով վերակառուցել եւ բնակիլ իրենց գիւղին մէջ, բայց դժբախտաբար այդ հանդարտութիւնը շատ երկար չտւեց. 1915ին քեսապցիները կրկին գաղթական ելան:

Սկիզբը անոնք կանգ առին Աւետարանական Եկեղեցւոյ մօտ, ետքը իրենց կովերով, այծերով, էջերով... հասան մինչեւ Հոմս եւ Համա: Այդտեղ գողցուեցան իրենց կենդանիները: Քեսապցիք անցան զանազան գիւղերէ ու քաղաքներէ: Կարգ մը ծերեր մահացան յոգնութեան պատճառով, իսկ մնացեալը կը պտտէին տունէ տուն՝ պատառ մը հաց գտնելու նպատակով, կը մուրային: Ժամերը, օրերը, ամիսները անցան եւ իրենց թափառումը շարունակուեցաւ:

Եգիպտոս, Երուսաղէմ գտնուած ժամանակ որպէս նշան իրենց ձեռքերուն վրայ դրոշմեցին նշան մը եւ այդ նշանին տակ գրեցին 1918 թուականը: Այդ թուականէն ետք ուղղուեցան Անտիոք եւ ետքը Քեսապ: Բայց իրենց բնօրրանին վիճակը շատ վատ էր. տուները քարուքանդ եղեր էին. այրած, կողոպտուած... ահռելի վիճակ, բայց երբեք ջրուահատեցան: Ձեռք ձեռքի դրին եւ ետ կառուցեցին, նորոգեցին տուները, դպրոցները, եկեղեցիները, բայց նոր շինութեան մէջ թողուցին կարգ մը այրած վայրեր՝ իբր յիշատակ-փաստ՝ եկող սերունդներուն, որպէսզի կարենան հասկնալ եւ երեւակայել պատահած դէպքը:

Քեսապ բաւական խաղաղ մնաց, բայց այս մէկը Թուրքիան չգոհացուց. ան միշտ փափաքը ունէր գրաւելու Քեսապը եւ դնելու իր իշխանութեան տակ: 1922ին Թուրքիա կրցաւ Քեսապը դնել իր իշխանութեան տակ, բայց քեսապցիները դէմ ելան: Կիլիկիոյ կաթողիկոսը, քաղաքական դէմքերը, ֆրանսական իշխանութիւնները ձեռք ձեռքի տուին, որպէսզի կարենան լուծել այս հարցը, կարտինալ Աղաճանեանը միջամտեց եւ ի վերջոյ կրցան ազատել Քեսապը եւ Սուրիոյ, Լաթաքիոյ նահանգին կցել: Դժբախտաբար Կասիոս Լեռը եւ Պալլում Ուխտատեղին մնացին Թուրքիոյ իշխանութեան տակ:

Հայրենադարձութեան սկիզբը՝ 1946ին, 2407 հոգի կը գաղթէ Հայաստան եւ Քեսապի բնակչութիւնը նուազեցաւ. 8000էն մօտաւորապէս 2000 հոգի մնաց միայն: Թիւր

չաճեցաւ դժբախտաբար: Թուրքիա զանազան ձեւերով փորձեց գրաւել Քեսապը:

Այս միջոցին արդէն սերունդները անցան եւ նոր երիտասարդները ուզեցին զարգացնել Քեսապը: 21րդ դարն էր, շինութիւնները բազմացան, լաւագոյն դպրոցները կառուցուեցան, միութիւններ կազմեցին, մշակութային կեդրոններ հիմնեցին լաւապէս կահաւորուած ու երաժշտական զանազան գործիքներով հարստացած (դաշնամուր, կիթար...), պարի, երգի դասընթացքներ հաստատեցին, բազմաթիւ ճաշարաններ՝ գիւղական եւ քաղաքի համեղ ճաշերով պատրաստուած: Ֆրանսայի նիւթական օգնութեամբ մէկտեղեցին Քեսապի հին աւանդական գործիքները որպէս մշակոյթ: Քեսապ հոչակաւոր է նաեւ իր բարբառով եւ զանազան սովորութիւններով: Ասոնք որպէս աւանդ պահուեցան մինչեւ օրս:

Այսպիսով Քեսապ եղաւ գիւղաքաղաք մը, զարգացաւ, ունեցանք բանաստեղծներ, գրողներ, զանազան արհեստներու գործիչներ...

Ժամանակի ընթացքին Քեսապ բազմացաւ ժողովուրդով. օտարներ եկան եւ հաստատուեցան Քեսապ՝ իսլամ եւ արաբ քրիստոնեայ, բայց անշուշտ հայերուն թիւը աւելի է: Քեսապ դարձաւ զբօսաշրջիկներու կեդրոն. օտար քաղաքներէ կու գան ծանօթանալու համար այս գիւղին եւ վայելելու համար գեղեցիկ աննման տեսարանները: Ի վերջոյ, առիթը ունեցանք խաղաղ ապրելու:

Տարիները անցան, խաղաղ հանգիստ տարիները՝ մինչեւ 18 Մարտ 2011 երբ Սուրիոյ մէջ քաղաքական պատճառներով խնդիրներ տեղի ունեցան: Այս խնդիրները շարունակուեցան եւ բազմացան մինչեւ որ մեծ պատերազմի վերածուեցան: Շրջան առ շրջան, քաղաք առ քաղաք սկսաւ պատերազմը տարածուիլ, նահատակներուն թիւն՝ ալ օրէ օր, տարիէ տարի աւելնալ:

Այս մէկը շարունակուեցաւ մինչեւ որ 21 Մարտ 2014ին Քեսապի կարգը եկաւ, որ ենթարկուի պատերազմի չար բախտին: Դժբախտաբար, նորէն Թուրքիան ձեռք ունէր այդ դէպքին մէջ, որովհետեւ զինեալները ուրիշ հեշտ ճամփայ կամ միջոց չունին Քեսապ մտնելու: Միակ ճամփան որ օգտագործեցին, Թուրքիոյ սահման տանողն էր, Կասիոս Լեռնէն: Թուրքիա առիթը տուաւ զինեալներու՝ այդ մէկը ընելու:

Զինեալները մտան եւ քեսապցիները կրկին գաղթական ելան, բայց այս անգամ հետիոտն չէ, կենդանիներով չէ, այլ՝ արդիական մեքենաներով, հնքնաշարժներով, մոթորսիքլէթներով... կրկին քեսապցիները ցիրուցան եղան: Ոմանք Լաթաքիա ուղղուեցան, ոմանք Հալէպ, ուրիշներ՝ Լիբանան, Հայաստան...: Ես ընտանիքիս հետ Լիբանան ուղղուեցայ: Հաստատուեցանք հոս: Այս է պատճառը գտնուելուս Պէյրութ:

Այո, փառք Աստուծոյ, որ միքանի ամիս վերջ կրցանք ազատագրել Քեսապը, բայց դժբախտաբար նախկին ապահովութիւնը չկայ հոն: Յոյսով ենք, որ ամէն ինչ ետ պիտի դառնայ առաջուան պէս եւ աւելի լաւ ալ պիտի ըլլայ ու մենք ետ պիտի դառնանք մեր ծննդավայրը:

Ահա այս էր իմ ընտանիքիս պատմութիւնը Քեսապի մէջ: Դժբախտաբար ինչ դժուարութիւններէ, որ անցեր ենք, Թուրքիան ձեռք ունի մէջը:

Փափաքս է, որ այս տարի, 2015 թուին, Թուրքիան ընդունի Հայոց Յեղասպանութիւնը եւ հայը առնէ, լուծէ իր դատը, ամէն հայ ուր ալ ըլլայ՝ խաղաղ եւ հանգիստ միտքով ապրի: Հայը միշտ զօրաւոր է եւ զօրաւոր ալ պիտի ըլլայ:

Հայուն արիւնը յիշատակելի է, անմոռանալի եւ հպարտալի:



ԱՌՏՈՒԱՆ ԺԱՄՐ 5.30ԻՆ

Բալիկ Գաբրիելեան

«Միայն տասնչորս տարեկան էի, երբ Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ տեղի ունեցան հայ ժողովուրդի ողբերգութիւնը, տառապանքները, տեղահանութիւններն ու ջարդերը», կը պատմէ Յասմիկ Տէր Գալուստեան-Գաբրիելեան:

Իմ հօրս մեծմայրն է Յասմիկը, որ պատանի տարիքին ականատես եղած է իր ժողովուրդի ցափն, իր աչքին լոյսին մէջ միշտ պահելով անցեալի պատկերները:

«Մեր գիւղի վարդապետը հայերէն կը սորվեցնէր մեզի. կը նստէինք գետին՝ ոչխարի բուրդով պատրաստուած բարձերուն, արտասանութիւններ կը սորվէինք, կը լսէինք պատմութիւններ: Վարդապետը յաճախ կը զգուշացնէր, որ եթէ օտար մը (թուրքին ականարկելով) ներս մտնէր՝ բնաւ հայերէն չխօսէինք: Մենք արդէն տունէն ու վարդապետէն լսած էինք թուրքերու կոտորածներուն մասին: Քանի մը անգամ թուրքը ներս մտնելով հարցումներ հարցուցած է վարդապետին ու մեզի, մենք չենք պատասխանած. վարդապետն ալ ցոյց տալով մանկական գծագրութիւններ՝ համոզած է, թէ մենք ծաղիկ, թիթեռնիկ եւ թռչուն գծելով զբաղած ենք: Անոնք ձգած ու գացած են: Վարդապետին հետ «Հայր Մեր» կ'ըսէինք ու կ'երթայինք տուն:

«Ապրիլ 2ի առտուան ժամը 5.30ին դուռը զարնուեցաւ. դեռ քնացած էինք: Մայրս կանուխէն արթնցած էր: Դրացի Կարօն էր, եկած էր լուր տալու, որ շուտով հեռանանք կամ պահուրտինք, որովհետեւ թուրքերը պիտի գային խուզարկութեան: Մայրս վախով անմիջապէս արթնցուց բոլորս: Քոյրերս՝ Հուրին, Եւան կը դողային վախէն: Կարելի չէր մնալ. ընտանիքով բռնեցինք գաղթի ճամփան:

Ահաւոր տեսարան էր. մեզի պէս ուրիշներ ալ կային. մէկը կու լայ, միւսը կորսնցուցած զաւակը կը փնտռէ, միւսը կը մերժէ երթալ...: Շուարած կը նայէի չորս կողմս, մինչ հայրս ու տասներօրը տարեկան եղբայրս կը ստիպէին արագ շարժիլ: Տեսայ փոքրիկ մը, որ բարձրաձայն կու լար, մօտեցայ ու հարցուցի պատճառը, թերեւս առանձին ըլլալն էր: Յանկարծ անդրադարձայ, որ ես ալ առանձին եմ: Սպասելու կամ ժամանակ կորսնցնելու առիթ չկար, բայց այդ վիճակիս մէջ, երբ կորսնցուցի հարազատներս, մէկ կողմէ տխրեցայ, միւս կողմէ քաջ զգացի, որ անպայման տեղ մը պիտի գտնեմ զիրենք:

«Հետս ունէի միայն հաց եւ հագուստիս կոճակին մէջ պահուած մեծմօրս ոսկիէ օղը: Չեմ գիտեր որքան քալեցինք, բայց մեր գիւղէն բաւական հեռացանք: Ուժ չունէի այլեւս. քնացայ փակ խանութի մը առջեւ: Ով որ գետին իյնար մէկը չէր վերցնէր զինք: Ուրիշներ թերեւս կարծեցին, որ ես ալ մահացողներու շարքին եմ, բայց ես կը քնանայի յոգնութեանս պատճառով:

Արթնցայ, ինքզինքս գտայ անկողինի մէջ. երազ կարծեցի, բայց շուրջս կային մարդիկ, որոնք անհասկնալի լեզուով կը խօսէին: Քիւրտեր էին: Քանի մը օր մնացի անկողինը, յետոյ սկսայ աշխատիլ տան գործերով, առանց մէկուն թելադրանքին: Օր մըն ալ մարդը ցոյց տուաւ դուռը. կարծեցի զիս կը վռնտէ. ծունկի եկայ ու աղաչեցի. հասկցաւ, ոտքի հանեց ու իրենց խանութը տարաւ: Փութին մէջ սկսայ աշխատիլ ուրախ տրամադրութեամբ: Օր մը, հաց վաճառած ատենս հանդիպեցայ հայու մը, ցած ձայնով ըսի. "դուն հա՛յ ես": "Այո,- ըսաւ ինքնավստահ ձեւով,- անունս՝ Պետրոս Գաբրիէլեան:

«Շաբաթ մը ամբողջ, ամէն օր Պետրոսը կու գար հաց գնելու: Օր մըն ալ ցած ձայնով ըսաւ. "հիմա հետս կու գաս, քեզի պիտի տանիմ մեր տունը եւ իմ հարսս պիտի ըլլաս":

«Ամուսնացայ Պետրոսին եւ ունեցանք եօթը զաւակ»:



ԸՆՏԱՆԻՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Նենսի Գալայճեան

Հայկական Յեղասպանութիւնը որ պատահեցաւ 1915ին, Թուրքիոյ Արեւելեան շրջաններուն մէջ, ուր մեծամասնութեամբ հայեր էին, հետեւանքն էր օսմանական պատրաստութեան:

Թուրքիա Համաշխարհային Առաջին Պատերազմի օրերուն գործեց այս բարբարոսութիւնը: Օսմանցի թուրքերը եւ իրենց դաշնակից Գերմանիան դաւադրեցին մեր դէմ: Անոնք գաղտնի ժողովներ ըրին եւ ձերբազատելու համար հայկական պահանջներէն, ջարդը գործադրեցին, դուրս քշեցին բոլոր հայութիւնը եւ պարպեցին բոլոր Արեւմտահայաստանը ու Կիլիկիան: Այս ժողովին ներկայ էին բոլոր թուրք մեծերը՝ Թալէաթ, Էնվէր, Ճեմալ:

Հայութիւնը իր վրէժը լուծեց մարտիկներու ձեռքով, բայց կը մնայ իրեն հողային հատուցում: Աշխարհի հայութիւնը կը յիշէ այս ոճիրը եւ բնաւ պիտի չմոռնայ: Պայքարը պիտի շարունակէ որպէս ժողովուրդ եւ պիտի պահանջէ իր իրաւունքները միջազգային գետնի վրայ:

Մենք մեր պատմութիւնը մտաբերելով կը յիշենք մեր այնթապցի մեծհայրը եւ սասունցի մեծմայրս:

Մեծհայրս՝ Յակոբ, կը ծառայէր թրքական բանակին մէջ, տարիներով կը խնամէր *պինպաշին*, հազարապետին օգնականն էր եւ հոգ կը տանէր անոր ձիուն:

Մեծհայրս օր մը կ'որոշէ ներկայ գտնուիլ զօրանոցը իր երիտասարդ ձիով որ հօրը կողմէ նուէր տրուած էր իրեն որպէս փայլուն զինուոր: Ան կ'երթայ մեծաւորին քովը ցցնելու համար իր ճերմակ ձին: Մեծաւորը իրեն կ'ըսէ հրահանգով. *«ուլան կեաւոր, օ պենիմ աթըմ, սենէ եարամագ. օ պանա*

վէր»: Այսինքն՝ «անաստուած, ատիկա իմ ձիս է, քեզի վայել չէ, ինձի տուր»:

Մեծհայրս կը զգայ այս նախանձը որ յառաջ կու գայ սրտի աղտոտութենէն, կը յանձնէ իր ձին մեծաւորին եւ կու գայ տուն: Անոր սրտին մէջ, մինչեւ իր ծերութիւնը մեծցած էր այս ցաւը եւ յիշելով կը պատմէր մեզի, ըսելով՝ «ամօ՛թ այս ցեղին, որ աչքը դրած էր ուրիշի ամէն ինչի վրայ, նոյնիսկ՝ ձիուն»:

Մեծհայրս ամուսնացած է Աննային հետ, տեղահանուած է Թուրքիայի Այնթապ քաղաքէն եւ հասած է Հալէպի Ազիզիէ շրջանը 1923ին: Ունեցած է 3 զաւակներ՝ Ներսէս, Լուսին, Մարի, որոնք 1930ականներուն տեղափոխուած են Հալէպի Մէյտան շրջանը մինչեւ 1961: Իր գործով՝ Յակոբ *գալայճի* էր, այսինքն պղինձէ պնակներ կը փայլեցնէր, անոր համար է որ մենք կը կոչուինք Գալայճեան եւ կը կրենք իր մականունը:



ՎԱՆ ԵՒ ՄՈՒՍԱ ԼԵՌ

Նանի Գալուստեան

Վան քաղաքը կը գտնուէր Վանայ Լիճի արեւելեան ափին: Ան հիմնուած է Վանի թագաւոր Սարդուրի Ա.ի կողմէ եւ կոչուած է Տուշպա: Վանը հարուստ էր երկու-երեք յարկանի քարաշէն տուներով, ընդարձակ փողոցներով եւ հիանալի բնութեամբ: Վան քաղաքը կը յատկանշուէր իր գեղեցիկ կատուներով, որոնց աչքին գոյնը կը տարբերէր մէկը միւսէն: Ս. Խաչ Եկեղեցին կը գտնուէր Վանայ Լիճի Աղթամար Կղզիին վրայ: «Դժբախտութիւն պիտի ըլլար առանց Վանը տեսնելու մեռնիլ»՝ ըսած է ամերիկացի միսիոնար մը:

Այս գեղատեսիլ վայրին մէջ կը բնակէին իմ նախնիներս՝ մօրս մեծմայրը, Անուշի ընտանիքը եւ մօրս մեծօր՝ Աւետիսի ընտանիքը: Աւետիսի հայրը քահանայ էր Շահբաղ գիւղին մէջ: Ան ունէր չորս որդիներ: Աւետիսը Վարազայ Վանքի Ժառանգաւորաց ուսումնարանի աշակերտ էր մինչեւ գաղթը: Անուշի ընտանիքը, Վանի հերոսամարտէն ետք վեց զաւակներով, համագիւղացիներուն հետ պարտադրաբար լքելով գիւղը, միւս վասպուրականցիներու հետ քալեց դէպի Արեւելեան Հայաստան: Այդ օրերուն Անուշը 5 տարեկան էր, իսկ Աւետիսը 15: Ժողովուրդին մէկ մասը՝ 3-4 հազար հոգի, կ'ուղղուի Պարսկաստան: Գետը անցած ատեն Անուշի մայրը իր զաւակներէն ամէնափոքրին կը կապէ իր եղնակին եւ կը մտնէ գետը: Ելած ատեն կը տեսնէ, որ երեխան չկայ: Այսպիսով գաղթի ճամփուն մէկ զաւակը կորսնցնելով կը հասնին Պարսկաստան: Աւետիսին փոքր եղբայրն ալ Արեւելեան Հայաստան չհասած, գաղթի ճամփուն կը մահանայ: Թուրքը կը հետապնդէր Պարսկաստան ուղղուած ժողովուրդը:

Պարսկաստանի մէջ, անոնք կը հանդիպին անգլիական զօրքին, որ օգնելով իրենց կը տանի Իրաքի Պաքուպա անապատը: Աւետիսը կը սկսի զբաղիլ ուսուցչութեամբ: Գաղթականները անապատի մէջ վրան մը յատկացուցած էին դպրոցին: Այս վրանէ դպրոցին տակ, Անուշ եւ Աւետիս, ուսուցիչ-աշակերտ հանգամանքի տակ ծանօթացան եւ աւելի ուշ ամուսնացան: Անոնք հաստատուեցան Իրանի Ապատան քաղաքը եւ բախտաւորուեցան չորս զաւակներով՝ Զարեհ, Թագուհի, Հովիկ եւ Յօղիկ: Անուշ եւ Աւետիս, մինչեւ իրենց կեանքին վերջը, պահեցին Վանի բարբառը, սովորութիւնները, երգերը, պարը եւ նոյնիսկ հայրենական թապուրը, որ կը շինուի հետեւեալ ձեւով.- կորկոտը նախապէս եփել մածունի մէջ, դգալ մը ալիւր եւ մէկ հաւկիթ զարնել, ապա աւելցնել կորկոտը, դնել օճախին վրայ եւ մինչեւ եռալը անընդհատ խառնել, ապա աւելցնել մանրուած գինձ եւ կարօս:

Մինչեւ այսօր այս համով ապուրը կը պատրաստուի մօրս կողմէ: Անուշի եւ Աւետիսի զաւակներէն՝ Հովիկը, 1967ին կ'ամուսնանայ Զապէլին հետ: Անոնք կը կազմեն ընտանիք եւ կը բախտաւորուին երկու զաւակներով՝ Արա եւ Արին: Արինը՝ մայրս, 1993ին ուսանելու համար կը հաստատուի Պէյրութ, ուր կը ծանօթանայ հօրս՝ Սերժին:

Հօրս արմատները Մուսա Լեռէն են: Անոնք 1998ին կ'ամուսնանան եւ կը բախտաւորուին երկու զաւակներով՝ Նանի (ես) եւ եղբայրս՝ Պետօ: Մուսա Լեռան եւ Վանի միախառն մթնոլորտին մէջ ձեւաւորուած ընտանիքս հպարտօրէն կը շարունակէ իր երթը, յոյս ունենալով որ օր մը մեր հայրենի հողին վրայ պիտի կարենանք հաստատուիլ, ինչպէս փաստօրէն քեռիս իր բնակութիւնը հաստատած է Արցախի մէջ:



ԵՈՋԿԱԹԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՎՐԱՅ

Լիլիթ Գայապալեան

Ընտանիքիս արմատներէն շատ տեղեկութիւն չունիմ, միայն պզտիկ հատուած մը հասած է ինծի: Ես կ'ուզեմ պատմել ողջ աշխարհին թէ ինչպէ՛ս ընտանիքիս արմատները փրկուած են՝ թուրքերուն կողմէ կազմակերպուած Յեղասպանութենէն:

Ինչ որ պատահած է Եոզկաթի շրջանին մէջ աղէտալի, սարսափելի դէպք մըն է: Ասկէ 100 տարի առաջ, 1915 թուականին Ապրիլ ամիսն էր, որ սոսկալի դարձաւ հայերուն համար:

Եոզկաթի մէջ, փոքրիկ տան մը մէջ կ'ապրէին երկու որբ եղբայրներ, Լեւոն ու Սարգիս Գայապալեան: Սարգիսը արդէն չափահաս՝ 18 տարեկան էր, իսկ Լեւոնը՝ 15: Այս երկու եղբայրները եւս ենթարկուեցան օսմանցի թուրքերուն անմարդկային բռնութեան, ինչպէս՝ ողջ հայութիւնը: Սարսափելի օր մըն էր, երբ անոնք գերի ինկան օսմանցի թուրքերուն ձեռքը: Երկար չարչարանքներէ ետք, Լեւոնը իր մանուկ հասակին տեսաւ թէ ինչպէս իր մեծ եղբայրը՝ Սարգիսը, մորթեցին եւ ականջը կտրելով անցուցին երկար պարանի մը վրայ, ուր տասնեակ ականջներ կախուած էին: Այդ անսիրտ թուրքը ծաղրելով հարցուց Լեւոնին եթէ կրնայ իր եղբոր ականջը գտնել:

Բայց թուրքերը Լեւոնը չսպաննեցին, այլ որպէս գործաւոր պահեցին իրենց քով, որպէսզի ոչխարներու հօտի մը պահապան ըլլայ եւ ամէն առտու արածէ: Լեւոնը ստիպողաբար ամէն առտու լուսաբացին ոչխարները դաշտ կը տանէր: Այս ծանր աշխատանքին փոխարէն Լեւոնը կ'արժանանայ չոր ու ցամաք պզտիկ հացի կտորի մը: Այսպէս

շարունակուեցաւ քանի մը շաբաթ: Բայց ան ամէն երեկոյ լալով կը քնանար, յիշելով իր եղբայրը եւ իրենց գիւղը:

Յաւալի լուսաբաց մըն էր, երբ Լեւոնը համարձակելով՝ ոչխարներէն մէկը ծախեց եւ դիմեց փախուստի: Երկար վազելէ ետք ան յոգնած շնչակտուր կը նստի գետին, եւ կը տեսնէ հեռուն փայլող խաչ մը, քիչ մը հոգեկան հանգստացումէ ետք եւ խոր շունչ քաշելով կը մօտենայ դէպի այդ խաչը: Կը պարզուի որ յոյն մարդ մըն էր, որ կ'ուզէր Լեւոնին հասկցնել թէ դիմացի եկեղեցիին մէջ կը հաւաքեն որբերը: Յոյն մարդը Լեւոնին կ'ուղեկցի եկեղեցի: Այդ եկեղեցիին մէջ հաւաքուելէ ետք, Լեւոնը եւ մնացած որբերը կը բռնեն Տէր Զօրի ճամփան: Զանազան չարչարանքներ կրելով՝ անօթի, ծարաւ, յոգնած եւ ուժասպառ, կը հասնին Հալէպի որբանոցը: Լեւոնը դարձեալ կը յիշէ իր լաւ օրերը իր մեծ եղբօրը հետ, կը յուզուի, կ'ուզէ վերադառնալ իր ծննդավայրը... անօգուտ, ճար չկայ: Երկու գիշեր անցընելէ ետք կը փոխադրուին Լիբանանի Թոշնոց Բոյնը: Դարձեալ շատ դժուար կ'ըլլայ հայ մանուկներուն համար:

Լեւոնը դժուար եւ տխուր մանկութիւն ունեցաւ Թոշնոց Բոյնին մէջ: Տարիները կ'անցնին բայց չի մոռնար թուրքերուն կատարած աղէտալի Տեղասպանութիւնը:

Տարիներ ետք Լեւոնը ընտանիք կը կազմէ, յուսալով որ այդ ընտանիքին ժառանգորդները նոյն ձեւով պիտի պահեն իրենց ազգն ու կրօնքը եւ երբեք պիտի չձուլուին օտար ազգերու մէջ: Մինչեւ այսօր Գայապալեան ընտանիքը կը գոյատեւէ ամուր հիմերու վրայ: Թուրքը իր երազածին չհասաւ, չկրցաւ մէկ հայ ձգել, որպէսզի իբրեւ նմուշ պահէր: Հիմա աշխարհի բոլոր անկիւնները կը գտնուին հայեր, կանգուն մնալով եւ չձուլուելով օտարութեան մէջ: Դժուար է հայութիւնը պահպանել Հայաստանէն դուրս, բայց պէտք է հայ ժողովուրդը միասին պայքարի օտար հարուածներուն դէմ:

Հայ ընտանիքները պահպանելու համար պետք է զերծ մնալ օտար ամուսնություններէն, որովհետեւ մեր նախահայրերը պայքարած են մինչեւ իրենց կեանքին վերջին վայրկեանը, որպէսզի հայութիւնը չկործանի: Յիշելու համար մեր մեծ այրերը կամ գրագէտները աւելի լաւ է ամէն մարդ իր զաւակներուն անունները հայկական անուններ դնէ փոխանակ՝ օտար: Սփիւռքահայերը իրենց զաւակները պարտին հայկական վարժարան յաճախեցնել, որպէսզի պզտիկները հայեցի կրթութիւն ստանան եւ ներշնչուին հայոց ոգիով: Այս բոլոր ձեւերով է որ հայ ազգը կրնայ իր հայութիւնը պահպանել:



ՀՕՐԵՆԱԿԱՆ ԵՒ ՄՕՐԵՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՍ ՀԱԿԻՐՃ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Փերլա Գանթարճեան

Հայոց Յեղասպանութեան 100ամեակի սէմին, աշխարհի չորս կողմը տարածուած հայ ժողովուրդը կը վերյիշէ ահաւոր սպանողը եւ կը նշէ զայն զանազան միջոցառումներով, որպէսզի չմոռնանք մեր նահատակներուն անմեղօրէն թափուած արիւնը:

Իմ մեծօրս ընտանիքը Ուրմիոյ Լիճի եզերքներէն փոխադրուած է Թուրքիոյ Քարաման շրջանը: Հոն հաստատուելով, մեծօրս հայրը ունեցաւ 3 զաւակներ իր առաջին կնոջմէն: Անոնց ամէնէն փոքրը եղած է մեծհայրս՝ Յարութիւն Գանթարճեան: Անոնք Քարամանի մէջ նշանաւոր կերպասավաճառներ էին, մանաւանդ *Քանթարա* շուկային մէջ: Քանթարայի մէջ իրենց նշանաւոր ըլլալուն պատճառով կոչուած էին Քանթարօղլու եւ ապա՝ Գանթարճեան:

1915ի Յեղասպանութեան տարիներուն եղած են ցիրուցան: Մեծհայրս եւ իր եղբայրները իրենց ծնողքին կողմէն յանձնուած են ամերիկացի միսիոնարներու, որպէսզի ազատին եւ փախչին վտանգէն: Անոնք, իբր որբեր, փոխադրուեցան Յունաստան՝ Փիրէա քաղաքը ուր մեծհայրս եղաւ կօշկակար: Յետագային, հայ կաթողիկէ միսիոնարներ մեծհայրս փոխադրած են Հալէպ ուր հանդիպած է իր ծնողքին:

Մեծմօրս ծնողքը Կեսարիայէն եղած են, գաղթին՝ եկած են Լիբանանի Սայտա քաղաքը եւ ապա՝ Պէյրութ, ուր մեծմայրս ծանօթացած է մեծօրս եւ սկսած են միասին գրել Գանթարճեան ընտանիքի պատմութեան շարունակութիւնը:

Գալով մօրս արմատներուն, անոր մայրը եղած է մարաշցի, իսկ հայրը՝ ուրֆացի: Անոնց ալ ծնողները Յեղասպանութենէն ազատած՝ փախած են Հալէպ, ուր ծանօթացած են իրարու: Անոնք եկած են Լիբանան, ամուսնացած են հոս եւ աշխարհ բերած են մայրս եւ իր եղբայրն ու քոյրերը: Կարելոր է յիշել որ հօրս մեծհայրը շատ սիրուած ըլլալուն՝ Քարամանի մէջ կրցած է օգնութիւն գտնել իր ազդեցիկ թուրք բարեկամներուն կողմէ, որոնք ազատած են զինք եւ իր կինը եւ բերած են Հալէպ, որպէսզի հանդիպին իրենց զաւակներուն հետ:

Այս բոլորը գիտնալէ ետք, հոգիս վերածնաւ ու նոր շունչով սկսաւ կեանք տալ մարմնիս, որովհետեւ գտաւ արիւնը որուն մէջ քանդակուած են արմատներուս մատնահետքերը, եւ այդ արիւնով նոր կեանք տուաւ ինքնութեանս:



ԴԺՈՒՏՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՎՐԱՅ

Միսաք Գանտահարեան

Ինչպէս համայն արեւմտահայութիւնը, Գանտահարեան գերդաստանի զաւակներն ալ անխտիր, ճաշակած են 1915ի ողբերգութիւնը: Եւփիմէ, Մարի եւ Եսթեր՝ երեք դուստրերն են մեր Գանտահարեան ընտանիքի նահապետին՝ Արթին Գանտահարեանի: Կ'ուզեմ պատմել իրենց տարագրութեան մասին, որովհետեւ այս երեք տիկնանց ողիսականը եղած է ամէնէն եղերականը:

Տեղեկութիւնս ապահոված եմ Նալպանտ Ովսաննային՝ իմ մեծօրս հորաքրոջ գրութիւններէն որոնք կը գտնուին *Ազդակի* եւ *Հայ Անթէպ* պարբերաթերթին մէջ, որուն վրայ աւելցուցած եմ մեծօրս պատմածներէն մասեր՝ դրուագ մը լոկ, 1915ի հայոց ամէնաողբերգական էջերէն:

Նալպանտ Ովսաննա կը պատմէր. «...Տասներկու տարեկան էի երբ 1915 սեւ փոթորիկը փչեց դէպի մեր կողմերը: Թուրքերը հասան Կիլիկիա եւ մտան Այնթապ: Ձերբակալեցին Այնթապի բոլոր հայ մեծամեծները եւ անհետացուցին: Ապա այնթապահայութեան մէկ մասը Համա, մաս մըն ալ Հոմս քեցին: Հայերը տկարացած էին. բացակայ էր պատասխանատու խաւը եւ այդ պատճառով ալ հնազանդ շարքերով կը հետեւէին ցուցմունքներուն: Անշուշտ դիմադրողներ կային, բայց խոր ցաւով կ'ուզեմ ըսել թէ դիմադրողներէն ոչ ոք ողջ դուրս ելաւ Այնթապէն:

Մեր բաժինն ալ եղաւ Սուրիոյ Հաւրանի անապատը: Մենք՝ մայրս՝ Եսթեր եւ մօրաքոյրերս իւրաքանչիւրը իրենց զաւակներով եւ թոռներով բազմութեան հետ հետիոտն սկսանք յառաջանալ: Շարքին թիւը օրէ օր կը պակսէր, ոմանք ծարաւէն, ոմանք յոգնութենէն կը մեռնէին. կային նաեւ ոմանք, որոնք չդիմանալով այդ վիճակին անձնասպան

կ'ըլլային: Փոքրերուն եւ կիներուն լացուկոծը, ծերերուն անէծքը աղմուկին մեծ մասը կը կազմէին: Ճարպիկ հայեր ալ կային, որոնք կը փորձէին փախչիլ, բայց կը հետապնդուէին ու կը սպաննուէին գազան թուրքին գնդակով: Ամէնէն աչքառունները թուրք ծիաւորներն էին՝ խարազանը բռնած, ատրճանակը մէջքերնին անընդհատ կը հարուածէին:

Անասանելի չարչարանքներով, զրկանքներով ահուդողով շաբաթներ քալելէ ետք, ի վերջոյ հասանք Սուրիոյ Տերաա քաղաքը, ապա Ռախուպ գիւղը, ուր մնացինք երեք ամիս:

Շնորհակալութիւն կը յայտնեմ Տերաայի Ռախուպ գիւղի գիւղացիներուն, որոնք շատ ազնիւ ընդունելութիւն մը ըրին մեզի եւ անշուշտ միւս բոլորին: Կը յիշեմ այն կնոջ դէմքը որ օրական մեզի հաց եւ ջուր կու տար:

Երեք ամիս ետք, մեզ քշեցին Յորդանանի Իրպիտ քաղաքի Հոսն գիւղը: Մեզ տարին գիւղին յունական եկեղեցին: Հոն եղաւ մեր ննջարանը, խոհանոցը, ճաշասենեակը. գաւիթին մէկ մասը հիւանդանոցն էր: Կային տասնեակներով հիւանդներ եւ կար միայն երկու բժիշկ: Երկու ղուրուշ աւելի վճարողը աւելի արագ կը բժշկուէր, զինք հիւանդանոցին լաւ բաժինը կը դնէին: Փառք Աստուծոյ... հիւանդ չունեցանք: Գաւիթը վերածուած էր նոր Կիլիկիայի մը, ուր կային ամէն շրջանէ մարդիկ: Հաճելին այն էր, որ օտարը դարձած էր բարեկամդ, բոլորս ալ կը նոյնանայինք մեր բառերով՝ **Հայ** եւ թուրքի բառերով՝ **Կեաւուր** անուններով:

Հոն մնացինք մօտաւորապէս քսան օր, ապա իւրաքանչիւր ընտանիքի տրամադրեցին սենեակ մը: Հազիւ մեզի տրամադրուած սենեակը մտանք, մեր վրայ խուժեցին խոշոր ոզնիներ, այս պատճառով ժողովուրդը թիֆիւսէ վարակուեցաւ եւ շատերը մահացան: Ժողովուրդը դարձեալ հաւաքուած էր եկեղեցիին գաւիթը, բայց այս անգամ տարբեր էր. հիւանդանոցը կը գրաւէր գաւիթին մեծ մասը: Անմասն չմնացինք նաեւ մենք. նոյն պատճառով հոն մահացան մայրս, Մարի մօրաքոյրս, իր դուստրը եւ անոր տղեկը»:



ԿԸ ՑԱՆԿԱՅԻ ԱՊՐԻԼ
ՊԱՊԵՐՈՒՄ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ՝
ՁԷՅԹՈՒՆ

Աննա Մարիա Գապագեան

Ընտանիքս ասկէ հարիւր տարի առաջ կը բնակէր Ձէյթուն: Ձէյթուն կը գտնուի Կիլիկիոյ մէջ՝ Մարաշի հիւսիսը, չորս կողմէն շրջապատուած բարձր լեռներով եւ պաշտպանուած նեղ կիրճերով, բարձրաւանդակի վրայ գիւղաքաղաք մըն էր ան: Բնութիւնը աղքատ ըլլալով բուսականութեամբ, ժողովուրդը խաշնարածութեամբ եւ հողամշակութեամբ կ'ապրէր: Լեռնցիները չարքաշ կեանք ունէին, իրենց սնունդը կորեկ հաց եւ կաթնեղէն էր: Միջակ հասակով թուխ դէմքով մարդիկ էին անոնք, քաջ ու կամքի տէր, պահպանած էին իրենց անկախութիւնը: Ձէյթուն կոչուած էր նաեւ Ուլնիա:

Մօրս մեծհայրը՝ Սեդրակ Բամբալեան կը զբաղէր երկաթագործութեամբ: Ան մասնակցած է Ձէյթունի կռիւներուն, եղած անուանի յեղափոխական: Ան գրասէր էր, անոր հայրը եղած էր հարուստ աղա մը: Երբ Ձէյթունը կ'ենթարկուէր ծանր տուրքերու եւ գաղթի ան իր ընտանիքով եղբայրներով ու քոյրերով - շուրջ 100 հոգի - կը ստիպուի փոխադրուիլ Հալէպ: Սեդրակ Նոր Գիւղի մէջ կ'աշխատի բեռնակիր:

Մօրս մեծմայրը՝ Շնորհիկ Գոյումճեան, այդ ժամանակ կը գտնուէր Լիբանան: Ան հաստատուած էր հարիւրաւոր որբ հայ մանուկներով Ճիպէյի Թոչնոց Բոյն որբանոցը: Շնորհիկի միակ յիշատակը իրեն մնացած մօր նկարն էր, զոր կը պահէր բարձին տակ: Տասներկու երկար տարիներ անցընելէ ետք, ան կը հանդիպի իր քրոջ՝ Եղիսաբէթին, որ հանդէսի պահուն հանդիսատեսներուն ցոյց կու տայ իր մօր

նկարը, երբ ուսուցչուհին կը պահանջէ իրենցմէ ներկայացնել իրենց նախասիրած պահերէն մին:

Շնորհիկ կը հանդիպի Սեդրակին՝ Հալէպի մէջ պտոյտի մը ընթացքին: Ան ամուսնանալով մօրս մեծօր հետ, կը փոխադրուի Լիբանան: Ներսէս ամուսնանալով մեծմօրս՝ Վերժինին, հետ ունեցաւ եօթը զաւակներ: Մայրս՝ Շողիկը հինգերորդ զաւակն է: Երկու մօրեղբայրներս՝ Գէորգ եւ Ռաֆֆի, հաստատուած են Կիպրոս, իրենց զաւակներով եւ ընտանիքով: Անոնք կուսակցական են ու կը զբաղին հայկական հարցերով: Մայրս ալ եղած է շարքային, սակայն զբաղած ըլլալով ընտանեկան հարցերով, ստիպուած հեռացեր է շարքերէն: Ներկայիս մենք կը բնակինք Մար Ռուբոզ շրջանը:

Ես եւ քոյրերս կը յաճախենք Հայ Աւետարանական Շամլեան-Թաթիկեան Երկրորդական Վարժարանը: Ընտանիքիս գրեթէ բոլոր անդամները գաղթած են օտար երկիրներ:

Այսօր ես՝ հայ պարմանուհի մը, կը ցանկայի ապրիլ պապերու ծննդավայրը՝ Զէյթուն, ուսանիլ հոն, մշակել հողը եւ պաշտպանել հայրենիքս թշնամիէն: Կը փափաքիմ այցելել Էջմիածին, տեսնել Արարատն ու Մասիսը: Կ'ուզեմ տեսնել Անիի աւերակները, եկեղեցիները եւ մասնաւորապէս կ'ուզեմ տեսնել անոր գլխաւոր դուռին վրայ քանդակուած յովազի նկարը, որ կը նշէ Անիի ուժն ու զօրութիւնը:



ՔԱՐԱ-ԿԱԻՈՒՐ

Նարինե Գարագաուրեան

«Շատ բան չեմ յիշեր, չեմ գիտեր»: Այս պատասխանը կը ստանայինք մեր մեծմորմէն եւ մեծհորմէն, հաւանաբար որովհետեւ իրենք ալ ականատես չէին եղած այդ ահաւոր ու անմարդկային աղէտին, որուն գոհ գացին աւելի քան մէկուկէս միլիոն հայեր: Անոնք ընդհանարապէս կը պատմէին իրենց առօրեայ դժուարութիւններուն մասին, եւ թէ՛ ինչպէս անոնք տնտեսական, ընկերային եւ նոյնիսկ ապահովական ճգնաժամային ամէնագէշ պայմաններուն մէջ կրցան գոյատեւել իբրեւ հայ: Մեծհայրս պատմեց, թէ իր հայրը՝ Մելքոնը, չորս տարեկան էր Յեղասպանութեան ընթացքին, երբ իր հայրը՝ Յարութիւն, զինք կոնակին շալկած քալեց Տէր Զօրի անապատներէն:

Մեծհորս ընտանիքը կ'ապրէր Սիսի մէջ, ուր կը գբաղէին բրինձի եւ բամպակի վաճառականութեամբ: Յարութիւն օր մը վիրաւորուած էր օսմանցի ոստիկանի մը դաշոյնէն, որովհետեւ ան արժանապատուութեան տէր մարդ էր: Ան բոլորին կողմէ ծանօթ էր որպէս Յարութ Աղա: 1915ին Յարութ Աղա եւ իր ընտանիքը Տէր Զօրի անապատներէն կը հասնին Պէյրութ, ուր կարճատեւ հիւանդութենէ ետք կը մահանայ: Մեր մեծհոր հայրը՝ Մելքոնը, որ Յարութ Աղային ուսին վրայ նստած կը հասնի Պէյրութ, կը նետուի հոգեւորական ասպարէզ: Ան մինչեւ իր կեանքին վերջը հաւատարիմ կը մնայ Սուրբ Սարգիս Եկեղեցւոյ, ուր տարիներ շարունակ կը գործէ իբրեւ ժամկոչ: Մելքոն կ'ունենայ չորս զաւակ, որոնցմէ մէկը կը մահանայ հիւանդութենէ: Ըստ մեծհորս, իր հորը ամսականը բաւարար չէր տունին պէտքերը գոհացնելու. անոնք կը հաւաքէին

լքուած խաւաքարտերը, զանոնք ձեւաւորելով իբրեւ տոպրակ կը ծախէին բոլոր խանութներուն: Մելքոնին կինը՝ Էյկուլը պատռտած հագուստներ կը կարէր՝ ամէնօրեայ հացը ապահովելու համար:

Մելքոնը, որ արեւին տակ մնացած էր տեղահանութեան ընթացքին, իր այրած մորթին պատճառով թուրքերը զինք կոչեցին *քարա-կաւոր*՝ սեւ անհաւատ, որովհետեւ թուրքերը բոլոր հայերը կը կոչէին անհաւատներ: Երբ Մելքոն Նոր Սիս հաստատուելէ ետք կը յաճախէ Սուրբ Սարգիս Եկեղեցւոյ դպրոցը, օր մը կը կանչուի տնօրէին քով: Տնօրէնը կը յայտարարէ թէ յետայսու Մելքոնը պիտի կոչուէր Արմէնեան, մեկնաբանելով թէ *քարա-կաւոր* զուտ թրքերէն է եւ վարկաբեկիչ, որովհետեւ հայերը անհաւատ չեն: Սակայն որովհետեւ անոնք կառավարութեան կողմէ ճանչցուած են իբր *քարա-կաւորեան*, Արմէնեան մականունը կը մնար երազ:

Թէեւ մեծհայրս եւ մեծմայրս ցաւալի դէպքեր չէին պատմեր, բայց իրենց արցունքոտ եւ կարմրոտ աչքերէն կը յստականար թէ անոնք չէին ուզեր խօսիլ անցեալի սովի մասին:



ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ

Շողեր Գարամինասեան

1915ին, թուրքը որոշեց հայ ազգը ոչնչացնել: Ան սկսաւ մտաւորականներէն, բանաստեղծներէն, բժիշկներէն եւ հասաւ պարզ ու անմեղունակ ժողովուրդին: Իրացուց մեր հողերը, քանդեց մեր եկեղեցիները, ապա անչափահաս մանուկները բռնութեամբ առեւանգեց, որպէսզի մեծնալէ ետք ծառայեն թուրք բանակին: Անոնք բռնաբարեցին կանանց, գողցան տուները եւ տէր դարձան մեր ժողովուրդի հարստութեան: Այս բոլորին հետեւանքը եղաւ հայ ժողովուրդին տեղահանութիւնը եւ աշխարհով մէկ ցրուիլը: Մեր ժողովուրդը անորոշութեան մատնուեցաւ եւ քուեցաւ Տէր Զօրի անապատը: Այս անապատը, եթէ հոգի ունենար, հայու անունով կ'արձանագրէր, թէ ինչքա՛ն ողբ ու արիւն թափուած է այնտեղ՝ անօթութենէ, ծարաւէ, յոգնութենէ եւ հիւանդութենէ: Այդ հողը աշնան տերեւի ճամփու պէս գրկած է մեռելներ, նաեւ՝ մեծմօրս ընտանիքը:

Մեծմօրս հայրիկը եօթը տարեկան էր, երբ անոնք աքսորի ճամփան բռնեցին: Բաւական քալելէ ետք մայրը կը մնայ ճամփան, որովհետեւ հիւանդ էր, այլեւս անկարող էր քալելու ու չէր դիմանար տառապանքին: Իսկ ինքը, քոյրն ու հայրը միասնաբար կը շարունակեն իրենց ճամփան: Օրեր ու օրեր քալելէ ետք կը յոգնին եւ չեն կրնար շարունակել: Ճամփուն վրայ կը հանդիպին արաբ ջաղացպանի մը: Հայրը կ'որոշէ զաւակը յանձնել ջաղացպանին, որպէսզի ողջ մնայ եւ օր մըն ալ վերադառնալով միանայ ընտանիքին:

Իսեղճ տղան իբրեւ հովիւ կ'աշխատի ջաղացպանին մօտ ու ոչխարներ կ'արածէ, սպասելով իր հօր ու քրոջ գալուատին:

Սակայն իր անհատնում սպասումը ապարդիւն կ'ըլլայ: Անոնք երբեք չեն վերադառնար...

Տարիներ ետք կ'որոշեն Յեղասպանութենէն վերապրած որբերը հաւաքել եւ Լիբանանի ու Սուրիոյ որբանոցները տեղաւորել: Այդ ատեն քոյրը կը սկսի եղբայրը փնտռել: Երկարատեւ փնտռութիւններէ ետք՝ որբանոցի մը մէջ կը գտնէ զինք: Որովհետեւ եղբայրը կապուտաչեայ էր եւ ցուցամատը կոտրած՝ դիւրին կ'ըլլայ զինք գտնելը: Ան Թռչնոց Բոյնէն կ'առնէ զինք ու կը վերադառնան Սուրիա: Քոյր ու եղբայր տաժանելի չարչարանքներէ ետք, Աստուծոյ կամքով կը միանան:

Մենք՝ նոր սերունդի ներկայացուցիչներս, գիտնալով մեր ժողովուրդին տառապանքը, պէտք է պահենք մեր մայրենի լեզուն, մշակոյթը, կրօնքը, պատմութիւնը ու պէտք է աշխատինք, որ մեր իրաւունքները չկորսուին: Պահանջե՛նք մեր պապենական հողերը ու վերադառնա՛նք Հայաստան, վայելե՛նք մեր հողերն ու բնութիւնը, կրթե՛նք նոր սերունդը եւ սորվեցնենք ըլլալ հայրենասէր, պահել հայութիւնը, ղրկել մեր զաւակները հայկական դպրոցներ, զգուշանալ օտար ամուսնութիւններէ: Եթէ այս սերունդը չառնէ հայոց իրաւունքները, ապա գալիք սերունդը պիտի իրականացնէ այդ: Հայոց Դատը չի՛ մեռնիր:



ՄԵԾ ՄԱՅՐՍ ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

Գէորգ Գէորգ

Մեծմօրս տարեդարձը մօտեցած էր: Բոլորս շուարած էինք, թէ ի՞նչ պիտի նուիրենք իրեն: Ամէն մէկը առաջարկ մը ունէր: Ես որոշեցի անձամբ նուէր մը տանիլ:

Գիշերը՝ մեծմօրս տարեդարձի կարկանդակը կտրելէ ետք, ժամը եկաւ նուէրները բանալու: Որոշած էի իմս վերջինը յանձնել: Բոլորին նուէրները բանալէ ետք, մեծմայրս ստացաւ իմս, որ վզնոց մըն էր, երկու նկարակախիչով: Ան՝ նուէրը տեսնելուն պէս անշունչ կեցաւ: Կարծես, թէ ուրիշ աշխարհ մը փոխադրուեցաւ, մեր աշխարհէն հեռու: Բոլորս մտահոգուեցանք իր չխօսելով: Յանկարծ սկսաւ մեղմ ձայնով լալ: Ես յանցաւոր զգացի եւ պնդեցի, որ մեծմայրս բացայայտէ իր լալու պատճառը:

Ան ցուցամատը պահարանին ուղղելով ինձմէ խնդրեց որ բանամ զայն եւ մէջը գտնուող տուփը իր մօտը բերեմ: Հին տուփ մըն էր, կարծես հազար տարուայ տուփ մը ըլլար: Բոլորս՝ մեծ ու փոքր, հաւաքուեցանք մեծմօրս շուրջ: Ան բացաւ տուփը: Հոն կային կտորներ, նկարներ եւ այլ արժէքաւոր իրեր: Տուփին մէջէն հանեց վզնոց մը, որ կը նմանէր նուիրած վզնոցիս: Բոլորս հետաքրքրուած էինք գիտնալու, թէ ուրկէ՛ ունէր այդ վզնոցը, եւ ինչու՛ այդքան յուզում պատճառեց իրեն:

Մեծմայրս ըսաւ, որ այդ վզնոցը իր քով մէկ դար մնացած յիշատակ մըն է եւ սկսաւ պատմել անոր պատմութիւնը. «Ես՝ իմ մանուկ հասակիս, ուրախութեամբ կը բնակէի ընտանիքիս հետ՝ Ուրֆայի մէջ: Հազիւ վեց տարեկան էի, երբ թուրք զինուորներ եկան մեր բնակարանը եւ առին հայրս: Մէկ շաբաթ վերջ ալ առին-տարին անդրանիկ եղբայրս: Կը յիշեմ թէ հօրս եւ եղբօրս բացակայութեան եկան եւ մայրս, զիս,

երկու քոյրերու ու երկու եղբայրներու տունէն դուրս հանելով՝ մտցուցին շարք մը հայերու մէջ, որոնք մեզ նման տեղահան եղած էին»:

Պահ մը կրկին հեռացաւ մեր աշխարհէն, յետոյ շարունակեց. «Կը յիշեմ, որ օրերով անդադար քալեցինք: Մեզ գրկեցին ամէն ինչէ, մինչեւ իսկ՝ ջուրէն: Միակ գործերնիս քալելն էր անապատի անդիմանալի տաք ու կիզիչ արեւուն տակ: Քալելէն մեր կօշիկները սկսան մաշիլ: Երիտասարդ տղայ մը գետին ինկաւ, թուրքերը զարնելով հանեցին ոտքի: Երբ տղան գանգատեցաւ քալելուն համար, տարին զինք ու ետ վերադարձուցին ոտքին գամուած ձիու նալ մը: Հազարաւոր մանուկներ 2-4 տարեկան - որոնցմէ էին նաեւ երկու եղբայրներս եւ մէկ քոյրս - առնուեցան ձիերու սմբակներուն տակ...: Այս բոլորէն ետք հայ կիները մերկացնել սկսան: Քոյրս, որ ինձմէ մեծ էր տարիքով, փորձեց դիմադրել թուրքերուն, այդ պատճառով ալ փորձեցին մեզ սպաննել: Մայրս եկաւ եւ նետուեցաւ թուրքին ոտքերուն առջեւ, աղաչելով որ վնաս չհասցնեն մեզի: Մեզ ձգելով սկսան քաշքշել մայրս: Մայրս գացած ժամանակ ինձի տուաւ այս վզնոցը, որ մինչեւ այսօր քովս կը մնայ:

Ես եւ քոյրս ալ բաժնուեցանք: Ես դրկուեցայ որբանոց, ուր կեանքը շատ դժուար էր. կարելի չէր գտնել սիրած ճաշդ, խաղերդ, բայց նոյնիսկ այդ վիճակին մէջ փառք կու տայի Աստուծոյ, եւ մանաւանդ փառք կու տայի այն անձանօթ մարդուն, որ իմ կեանքս փրկեց: Տարիները այսպէս անցան եւ հասայ խելահաս տարիքի: Չդիմանալով որբանոցի կեանքին փախայ անկէ եւ ունեցայ սեփական կեանքս: Քիչ կը յիշէի մանկութիւնս, բայց չէի մոռնար մօրս հեռացուած տեղը ու Տէր Զօրի անապատը, ուր օրերով քալեցինք անօթի ու ծարաւ: Աստուծոյ օգնութեամբ հասայ Տէր Զօր ու ամէն դէպք վերստին յիշել սկսայ: Կը յիշէի թուրքին բարբարոսութիւնները: Հոն, ծունկի գալով՝ աղօթեցի

մէկուկէս միլիոն նահատակուած հայերուն համար եւ խոստացայ աշխատիլ հայասէր սերունդներ մեծցնել:

Երկար տարիներ փնտոեցի քոյրս, բայց չգտայ: Հաւանաբար ինք ալ դարձած էր անմեղ նահատակ մը: Թափառելով հասայ Հալէպ, ուր խումբ մը հայերու սկսայ հայերէն գրել ու կարդալ սորվեցնել, զոր մայրս ինծի սորվեցուցած էր անապատի աւազներուն վրայ: Հասուն տարիք մը հասնելէ ետք որոշեցի ամուսնանալ եւ հայ ընտանիք մը կազմել: Ամուսնացայ մեծօրդ հետ: Որոշեցի ո՛չ միայն թոռներուս, այլ նաեւ ծոռներուս ալ փոխանցել հայութեան ոգին, եւ իրենց սորվեցնել թուրքին բնաւորութիւնը, գիտակից դարձնել թէ թուրքը թուրք է նոյնիսկ եթէ անցնի 100 տարի»:

Մեծմայրս ներկայի աշխարհը վերադառնալով ըսաւ թէ մենք նոր բաներ սորվեցանք: Ներողութիւն խնդրեցի՝ ցաւերը արթնցնելու համար, բայց ըսաւ թէ իմ տուած նուէրս արժէքաւոր էր: Ըսաւ որ իրեն համար միակ նուէրն է, որ մենք չմոռնանք մեր դատը թուրքերուն դէմ, կազմենք հայ ընտանիքներ, եւ մնանք հեռու օտարամոլութենէ:

Այդ գիշեր, մեծմօրս խօսքերէն ներշնչուած, երազիս մէջ տեսայ հայերուն չարչարանքը:

...Հայրս որոշեց Լիբանան հաստատուիլ գործի համար: Խնդրեցի մէկ անգամ այցելենք Տէր Զօր եւ մեծմօրս հետ բոլորս ապրեցանք այդ ցաւը: Հոն մեծմայրս խնդրեց, որ եթէ մահանայ զինք թաղենք այդ սուրբ հողին մէջ:



ՆԱՐԻՆՋԻ ՊԱՐՏԷՁԸ

Անժելա Գուճանեան

21 Յուլիս 1915: Մուսալեռ:

Մեծհայրս 12 տարեկան էր երբ թուրքերը խուժեցին իրենց տունը: «Կը մնաս՝ կը մեռնիս, կ'երթաս՝ կ'ապրիս: Ա՛ն ընտանիքդ

եւ գնա՛»:

Մեծօրս հայրը Փանոս Աղա կը կոչուէր: Անոնք ունէին նարինջի պարտէզ մը այնքան ընդարձակ, որ նոյնիսկ ֆրանսական *մարթին* գէնքին կապարը չէր հասներ մինչեւ անոր վերջաւորութիւնը:

Օր մը մեծհայրս իր հօր կը հետեւի դէպի նարինջի պարտէզը: Հայրը նարինջ մը քաղելով կ'ըսէ զակին. «նայէ՛ այս հարստութիւնը. պիտի ձգեմ ու երթամ: Վասն ինչի՞: Ապրելու՛...»: Եւ նարինջը դէպի երկինք նետելով միասնաբար ծունկի կու գան ու կու լան: Այդ արցունքները սովորական արցունքներ չէին, այլ՝ թունաւոր, որովհետեւ իւրաքանչիւր կաթիլը իրենց հոգիներէն բաժին մը կը խլէր: Կու լան, մինչեւ որ գիւղը ամբողջութեամբ կը պարպուի, եւ իրենք ալ հրաժեշտ տալով հայրենի հողին, ոտքի կ'ելլեն ու կը փախչին:

«Կ'երթաս՝ կ'ապրիս», - ըսին: Սակայն ո՛վ կը հաւատայ օձի խօսքերուն: Գիւղացիները եւ մեծօրս ընտանիքը կը փախչին ու կը բարձրանան Մուսա Լերան գագաթը: 5000 մուսալեռցիներ անօթի եւ անպաշտպան կ'ապաստանին հոն: Իրենց պաշտպանութեան միջոցները սահմանափակ էին: Տաք ջուր կը թափէին եւ քար կը նետէին թշնամիին վրայ, ինչպէս նաեւ անդադար պահակութիւն կը կատարէին:

13 Օգոստոս 1915. 23րդ օրը պաշարեալ վիճակին:

Մեծօրս մօրաքոյրը երկար մազ ունէր, որ կ'երկարէր ծունկէն վար: Ամէն առաւօտ կ'արթննար եւ վիզին վրայ հլուն

կը գտնէր: Գիշեր մը պահակ մը կ'անդրադառնայ, որ օձ մը կը սողայ մեծհօրս մօրաքրոջ մագին մէջ եւ հոն կը պառկի: Յաջորդ օրը մեծհօրս մայրը կը կտրէ քրոջը մագը, սակայն նոյն գիշեր օձը կը վերադառնայ ու կը խայթէ զայն, եւ այդպիսով մեծհօրս մօրաքոյրը կը մահանայ:

Երբ լսեցի այս պատմութիւնը հօրմէս, հետեւեալ պատկերը ուրուագծուեցաւ առջեւս: Աղջիկը մենք էինք՝ հայ ազգը: Մայրը՝ հայ ֆետային, մագը՝ հայրենիքը-Հայաստանը, մկրատը՝ հայուն զէնքը, իսկ օձը՝ թունաւոր թշնամին, որ դարեր շարունակ մտածած է մեր երկիրը քանդել, իսկ դիմադրելու պարագային ալ՝ թունաւորած է մեզ: Ահաւասիկ հայուհիի պատկերը՝ Մայր Հայաստանի աւերակներուն վրայ, անգամ ես կը գծագրուի առջեւս...

12 Սեպտեմբեր 1915:

53րդ օրը, երիտասարդ պահակ մը կը վազէ դէպի ժողովուրդը ու կը գոռայ. «պատերազմական նա՛ւ մը կը մօտենայ, բաւական հեռո՛ւ է: Չենք գիտեր ովքե՛ր են: Պահուըտեցէ՛ք»: Մեծհայրս անդրադառնալով իր հօր ու եղբօր մահուան կարելիութեան, մօրը ձեռքերէն բաժնուելով կը վազէ դէպի հայրը:

Ճերմակ դրօշակ մը կը բարձրացնեն եւ եղբայրը՝ անհետացած. «Տո՛ւտ...էրէ՛...հա՛յր... վերադարձի՛ր: Տո՛ւտ... կօ գո՛ւմ...»: Սակայն վազքը կեցուց: Տեսաւ իր եղբայրը՝ ֆրանսացի զինուորի մը թելերուն մէջ, եւ հայրը՝ փաթթուած այդ նոյն զինուորին: Վազելով եւ չհաւատալով՝ մեծհայրս ինքզինք կը գտնէ այդ նոյն զինուորին թելերուն մէջ: «Մեծհայր, կարօտցած եմ քեզի»:

Մեծհօրս մեծհայրը ֆրանսական զինուոր էր Համաշխարհային Առաջին Պատերազմի ընթացքին:

Կիշէն ֆրանսական պատերազմական նաւը եւ երեք անգլիական նաւեր կ'անցնէին Միջերկրականի արեւելեան եզերքներէն: Երբ կը տեսնեն, թէ ճերմակ դրօշակ մը երկինք

բարձրացած է՝ ֆրանսացի զինուորները, որոնց մէջն էր նաեւ մեծօրս մեծհայրը, նաւէն իջնելով կը սկսին մօտենալ դէպի ժողովուրդը:

Մեծօրս մեծհայրը կը տեսնէ երիտասարդ տղայ մը ու կը վազէ քովը: «Անդրանի՛կն է, իմ թոռունը»: Ան կը փորձէ արցունքները պահել: «Փենի՛ս... Փանո՛ս...անկարելի է»: Երբ իր զաւակին ձեռքերէն կ'արձակուի, կը տեսնէ փոքրիկ տղայ մը՝ ապշած վիճակով ու արցունքոտ աչքերով: Ան թելերուն մէջ կ'առնէ այդ փոքրիկ տղան ու կը բացագանչէ. «Էմ միժ հուրնի, կերուպցուծիմ քի»: Մեծօրս հպարտ նայուածքով մը նայելով կը պատասխանէ. «պատրա՛ստ ես զէնք կրելու: Յիշէ՛, թէ զինուոր մը միշտ անվախ եւ զօրաւոր է»:

Մեծօրս մեծհայրը եւ 250 մուսալեոցի գիւղացիներ, երիտասարդներ ու ծերեր կը մերժեն փախչիլ ու երթալ, եւ կ'որոշեն մնալ ու պայքարիլ:

Մեծօրս մեծհայրը զիրենք նաւահանգիստ դնելով եւ ցտեսութիւն ըսելով կ'ուղղուի պայքարի: Վերջին անգամ մըն ալ «Սարգա՛յս,- կը պոռայ մեծօրս մեծհայրը,- միշտ յիշէ՛, զօրաւոր եւ անվախ»: Իսկ մեծհայրս եւ իր ընտանիքը կը փախչին Եգիպտոս:

1939, Լիբանան:

Ֆրանսացիները բոլոր գաղթականները կը տեղաւորեն գիւղի մը մէջ, որ կը կոչուի Այնճար:

Իւրաքանչիւր ընտանիքի հինգ ֆրանք տալով՝ կը լքեն:

Յուրտ էր օդը: Բոլոր գաղթականները անօթի մնացած՝ կտոր մը հացի կարօտ էին: Օր մը մեծհայրս իր տունէն դուրս ելլելով կը մտածէր ճար մը գտնել այս անօթութեան, երբ յանկարծ ինքնաշարժ մը կը կանգնի առջեւը: Վարորդը կը հարցնէ.

- Ի՞նչ կ'ընես հո՛ս:
- Անօթի ենք, չեմ գիտեր ի՛նչ պիտի ընեմ:
- Կ'աշխատի՛ս: Հողագործի մը պէտքը ունիմ:

- Յօժար եմ, եթե ինձի փոխարէնը ուտելիք տաս:
- Օրականդ կը վճարեմ, եւ ուտելիք կը գնես:
- Այո՛, յօժար եմ:

Ինքնաշարժ ելլելով կը քշեն դէպի պարտէզ մը: Մեծհայրս չկրցաւ չերեւակայել իր նարինջի պարտէզը. «արդեօք ի՞նչ եղած էր այդ պարտէզին», կը մտմտար եւ կը փորձէր շատ չմտածել: Սակայն աչքերը կը սկսին արցունքով լեցուիլ:

- Այս բանջարեղէնները քաղէ՛, իսկ յետոյ քեզի կը սորվեցնեմ, թէ ինչպէ՛ս պիտի ջրես:

Մեծհայրս գլուխը կը շարժէ, առանց բառ մ'իսկ արտասանելու, որովհետեւ ինք գիտէր, թէ ինչպէ՛ս պիտի ջրէ, ցանէ ու մշակէ հողը: Վայրկեան մը կը ճամփորդէ անցեալ, կը յիշէ դառն ու քաղցր յիշատակները, հայրենի տունը, կարօտը... Եւ անդարման ցաւը...

Գիշեր կը հասնի. հողագործը գրպանէն կը հանէ 3 ոսկի եւ կը յանձնէ մեծօրս, որ կը մտածէր «պանիր եւ ջուր.... եւ տաք հաց»: Երբ տուն կը վերադառնայ, մայրը բարկացած կը հարցնէ. «էմ տղոյսնի, ու՛ր էիր: Անօթի ենք: Մեզ ինչու՞ մինակ ձգեցիր»:

- Գործ գտայ,- կը պատասխանէ մեծհայրս ու ցոյց տալով տոպրակները կ'ըսէ,- օրական 3 ոսկի կը բաւէ՛:

Այդ գիշեր պանիրով հաց կ'ուտեն ու կը կշտանան: Յաջորդ առաւօտ մեծհայրս նոյնպէս պանիրով հաց կ'ուտէ, ապա կ'երթայ գործի:

- Կ'ապրէի՛նք: Շատ ուրախ չէինք, բայց բաւարար էր,- մեծհայրս կ'ըսէր հօրս:

Օր մը, մեծհայրս գործէն վերադարձին, իր հայրը մտահոգ եւ տխրադէմ վիճակի մէջ կը գտնէ:

- Ի՞նչ պատահեցաւ:
- Ըսելիք ունիմ, նստէ՛:

Մեծհայրս՝ մտահոգ, կը նստի:

- Երբ հասանք Լիբանան, նոյնպէս հասան զինեալները մայր հայրենիքէն:

«Էմ մի՞ծ հուրնի», - մտածեց հայրս: Ան մտիկ չէր ըներ իր հորը, մինչ հայրը տակաւին կը շարունակէր խօսիլ: Ուրախ յիշատակներ կ'արթննան մէջը, եւ կը յիշէ այն օրը, երբ մեծհայրը զինք կ'ազատէ այդ լերան գագաթէն: «Իմ կտրիճն ի...»:

- ...Մահացաւ:

- Ի՞նչ,- ապշած կը հարցնէ մեծհայրս:

- Մեծհայրդ... մահացաւ...: Թշնամին սպաննեց զինք, երբ կը փորձէր հողը պաշտպանել...: Սակայն...:

Մեծհայրս՝ չդիմանալով, ձգեց տունը եւ սկսաւ վազել: Կարծեց, որ եթէ վազէր պիտի հասներ իր մեծհոր քով եւ զայն թելերուն մէջ պիտի առնէր: Ու այս անգամ պիտի մերժէր իր մեծհայրը Մուսա Լ եռ ձգել, եւ միասին պիտի երթային Եգիպտոս:....Եւ ապրէ՛ր: Գետին կ'իյնայ: ... Եւ ապրէ՛ր: Կը խեղդուի, գետին ինկած՝ կը սառի, չի կրնար շարժիլ:

Այս հիւանդագին վիճակն էր, որ մեծհայրս կ'ապրէր ամէն անգամ երբ տագնապի մատնուէր: Բայց հետաքրքրականը այն էր, որ այդ կաթուածի պահուն կը սկսէր Եգիպտոս երազել:

- Հա՛յր,- ձեռքին մէջ հողով լեցուն ապակիէ շիշ մը բռնած,- մեր պապենական հողին մէջ օր մը նորէ՛ն նարինջի ծառեր պիտի ցանենք, եւ համեղ ու մեծ նարինջներ պիտի ունենանք, ճիշդ էմ *տէյնի պէս*, - կ'ըսէ:

- Մեր տան պէս տեղ չկայ: Մեր պարտէզին պէս նարինջներ պիտի չունենանք: Այս հողը... ոչինչ է այլեւս,- կ'ըսէ մեծհորս հայրը ու ապակիէ շիշը ձեռքէն առնելով գետին կը նետէ:

Նարինջի պարտէզը երազելու կը սկսի... Կը տեսնէ, թէ իր մեծհայրը ինչպէս նարինջ կը քաղէ ու կը ջրէ պարտէզը. «Եթէ լաւ հոգ տանիս, լաւ նարինջներ կը ստանաս: Իսկ եթէ լաւ հոգ չտանիս, լաւ նարինջներ պիտի չստանաս: Նոյնն է մարդը: Եթէ լաւ վարուիս եւ համեստ ըլլաս, նոյնքան բարիք պիտի քաղես: Իսկ եթէ գէշ վարուիս եւ անվայել ըլլաս,

նոյնքան չարիք պիտի ստանաս: *Էմ թուրունը*, համե՛ստ եղիր, սիրե՛ մարդը եւ ներե՛ անոր...»:

Երազը կը շարունակուի. «...մի՛շտ յիշե՛, անվախ եւ զօրաւոր»:...

- Ամէն ինչ առին...,- ցած ձայնով կու լար՝ ծունկի եկած,- ամէն ինչ առին ինձմէ,- կը պոռար,- *էմ միժ հուր, էմ մօքուր, էմ տէյնի, էմ պախչէյնի*:

- Զօրաւոր...,- կը լսէ մեծօր ձայնը: Ինքզինք ոտքի կը գտնէ:

- Օր մը... պիտի վերադառնամ,- կ'ըսէ՝ ձեռքերը բռունցքի վերածելով:- Օր մը... պիտի վերադառնանք:

5000 մուսալեոցի գիւղացիներ պայքարեցան 20000 թուրքերու դէմ: Թշնամին ունեցաւ հազարաւոր մեռեալներ, իսկ մուսալեոցիները ունեցան միայն 18 նահատակներ:

Մեր երկրէն վռնտուեցա՞նք՝ այո՛: Զարդուեցա՞նք՝ այո՛: Բաւական մահ ունեցա՞նք՝ ո՛չ: Պարտուեցա՞նք՝ ո՛չ: Ոչնչացա՞նք՝ ո՛չ: Կա՞նք, ներկայ ենք միտով ու արինով, շունչով ու խօսքով, ձեռքով ու գործով...: Քի՛չ ենք, բայց կա՞նք, կը շնչենք...:

Հայերէ՛ն, հայութի՛ն, հայրենի՛ հող...

Այս շարադրութիւնը կը նուիրեմ մուսալեոցիներուն, մանաւանդ՝ մեծօրս, որ մահացաւ 68 տարեկանին եւ ես բախտը չունեցայ զինք տեսնելու եւ լաւապէս ճանչնալու:



12 ՏԱՐԵԿԱՆԻՆ՝ ԸՆՏԱՆԻՔ

Վարդուկ Գույումճեան

Զարուկ Մկրտիչեան

Զարուկ Մկրտիչեան (1908-1971), ծնած է Սասուն: Եօթ տարեկանին տեսած է ապրիլեան ջարդը: Ան իմ մօրս մեծմայրն է:

Ապրիլ 24

Առտու տան դուռը զարնուեցաւ, եւ մտան թուրք զինուորները, իրեն ուրիշ սենեակ տարած են իր մօրը հետ: Հայրը մորթելէն ետք զիրենք բերած են հօրը անշարժ մարմնին մօտ ու մորթած են մայրը: Իր ժամանակը հասած էր. զինք կը մերկացնեն, բայց քիւրտ մարդ մը կը փախցնէ զինք, որովհետեւ շատ գեղեցիկ էր, դեղնորակ մազերով, կապոյտ աչքերով: Անոնք գացին Թուրքիոյ գիւղերէն մէկը:

Ապրիլ 23

Զարուկին մօրեղբայրը՝ Յակոբը, եկան ու տարին թուրք ոստիկանները այն նպատակով որ զինուորութեան պիտի ծառայէր: Հասան ձորի մը մօտ. Յակոբը սկսած էր կասկածիլ թէ ինչ կը պատահէր իր շուրջը: Ան կը յաջողի հեռանալ իր խումբէն ու ետքը կ'անդրադառնայ որ իր ըրածը զինք ազատեց մահէն:

Փետրուար 1916

Բաւական ժամանակ անցնելէ ետք, Զարուկին մօրեղբայրը կը գտնէ զինք ու կը փախցնէ քիւրտերուն ձեռքէն եւ կը վերահաստատուին իրենց գիւղը՝ Սասուն:

Ինը տարեկան Զարուկ կ'ամուսնանայ մօրս մեծօր հետ: Ան կը ծառայէր ֆրանսական բանակին, իրեն կը կոչէին «ճենտրերմէ Մարտիրոս»: Զարուկ կ'ամուսնանայ անոր հետ որպէսզի թուրքերը չմօտենան ու չվնասեն զինք: Իր ամուսինը

գործի կ'երթար, ինքը ոչ մէկ բան գիտէր. իր թաղի պզտիկներուն հետ ժամանակ կ'անցընէր ու կը խաղար: Ամուսինը միշտ գործէն եկած ժամանակ իրեն կ'առնէր ու տուն կը բերէր: 12 տարեկանէն ետք ընտանիք կազմեցին, ժամանակ մը ետք փոխադրուեցան Սուրիա, Քամըշլի շրջանը, ընտանիքը բազմացաւ ու թռռնիկ ունեցան:

Այս բոլորը պատմելու ժամանակ, մօրս մեծմայրը կը յուզուէր ու կու լար:



ՏԷՐ ԶՕՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Սինթիա Դալիթեան

Մեծնօրս մեծհայրը ծնած է Այնթապ, շատ համեստ ընտանիքի մը մէջ: Երեք եղբայր եւ մէկ քոյր էին. ինք՝ կրտսերը: Ութ տարեկան ըլլալու էր, երբ սկսան այն ահաւոր դէպքերը, զոր տեսած ու ապրած է:

Այս հեռաւորութենէն երբ կը դիտեմ մանուկը, առաջին զգացումը, որ կ'ունենամ, ո՛չ սէրն է, ո՛չ ալ գուրջը, այլ հիացում մը անոր հանդէպ:

Կը յիշէ տեսարան մը, որ շատ անգամ կը կրկնուէր իրենց տան մէջ: Գիշերները կ'արթննար, վերմակը կ'առնէր ուսերուն, կը վառէր մոմերը ու երկա՛ր պահեր կը մնար աղօթելու մէջ: Երբ ալ յոգնած կը պատրաստուէր վերադանալ անկողին՝ կը նշմարէ մայրը, որ ետին ծունկի եկած կ'աղօթէր, արցունքի կաթիլներ հոսելով անոր աչքերէն: Խեղճ կին, բարի, առաքինի...

Մայրը գիշեր-ցերեկ ձեռագործ կ'ընէր, Այնթապի ասեղնագործ, օգնելու համար իր ընտանիքին: Համեստ այս ընտանիքը ունէր փոքրիկ տուն մը եւ քաղաքէն դուրս այգիներ: Հայրը գեղեցիկ մարդ մըն էր, բարձրահասակ, նիհար: Ան ալ բարի էր, մօրը չափ, միշտ լուռ էր եւ տխուր:

Եւ ահա 1915ի ամրան՝ աքսորը սկսաւ Կիլիկիոյ մէջ: Թուրք ոստիկաններու հրամանին տակ ինք, հայրը եւ մայրը յղի վիճակով ձգեցին իրենց տունը եւ միացան արքայականներու շարքերուն:

Բոլորը կու լային: Ամբողջ օրը քալեցին. կանգ առին միայն այն ժամանակ երբ կոխեց մութը: Տեղաւորուեցան չոր գետնի վրայ, իրենց մարմինները հանգչեցնելու համար: Իրարանցում մըն էր որ սկսաւ, բոլորը մէկ կը պռոռային առանց իրար հասկնալու... Թուրքերու խումբեր մտած էին

կարաւաններուն մէջ ու կը կողոպտէին, կը փախցնէին աղջիկներ, երեխաներ, կիներ...

Մեծմօրս մեծհայրը ամբողջ ճամփու ընթացքին կ'աղօթէր: Ուտելիք չկար, մանաւանդ ջուր չկար: Ան մերժեց քալել, ինկաւ գետին անշարժ: Հայրը զայն շալկեց, տարաւնստեցուց ճամփուն եզերքը գտնուող ծառի մը տակ: Կտոր մը հաց տուաւ անոր: Պահ մը գետի ջուրով կը լուար արեւէն չորցած դէմքը, ափովը խմցուց այդ պղտոր ջուրէն: Ան կը վկայէր թէ ջուրը արիւնի համ ունէր եւ դիակ կը հոտէր: Ի՞նչ սոսկալի բան: Ինչէ՛ր տեսան այդ խեղճ աչքերը:

Ինչպէ՞ս ապրեցաւ եւ ինչպէս ապրեցան բոլոր անոնք որոնք տեսան դժոխքը. կարելի չէ երեւակայել, ըմբռնել:

Գիշերուան մէջ ծնած էր իր փոքր եղբայրը: Ի՞նչպէս ծնաւ չեմ գիտեր. ո՛չ խմելիք կաթ կար, ո՛չ մէկ բան: Յաջորդ օրը մեռաւ սիրելի մայրը, իր սրտի ցաւէն եւ տառապանքէն: Երեքը մէկ շուրջը հաւաքուած էին, ծունկի եկած կ'աղօթէին, կու լային: Խեղճ կին, խեղճ մայր ու խեղճ որբեր:

Ի՞նչ պիտի ընէին հիմա, ի՞նչպէս պիտի ապրէին, անտէր անտիրական: Գետնէն վերցուց մօրը դիակը, շատ դիւրութեամբ՝ այնքան թեթեւ էր ան, մարմին չէր մնացած, միս չէր մնացած... Ա՛հ կարելի չէ մարդկային լեզուի բառերով բացատրել ողբերգութիւնը, սարսափը:

...Աշխարհ զինք որբ դարձուցած էր, տառապանք ու ցաւ տուած: Ան կ'ընդունէր այդ վիճակը ու կ'ուզէր ապրիլ իրեն տրուած կեանքը, առանց տկարանալու: ...Հարցուցած ու գտած էր որբանոցը: Նստաւ դրան աջեւ: Մարդ մը հաց շալկած որբանոց պիտի մտնէր, տեսաւ զինք:

- Ո՞վ ես,- հարցուց:

- Որբ մըն եմ,- ըսաւ,- ինձի ալ կ'առնէ՞ք ներս, կ'ուզեմ կարդալ, սորվիլ:

Մարդը ընդունած էր զինք որբանոցէն ներս, ուր մինակ չէր, ուրիշ տարեկիցներ ալ կային: Բոլորն ալ մէկ բառ հայերէն չէին գիտեր: Թրքախօս դարձած էին, արդէն

մոռցած էին ու կը խօսէին անապատի ցեղերուն բարբառներով. շատեր նստիլ նոյնիսկ չէին գիտեր: Նոր հագուստներ տուին, մաքուր, անուշաբոյր վերմակ ու անկողին:

Սկսած էր նոր կեանք մը: Շատ բաներ մոռցած էր: Իրեն դրեր էին իր տարիքին համապատասխան դասարան մը. սկսած էր սորվիլ հայերէն այբուբենը, ինք այդ բոլորը գիտէր, չէր մոռցած: Հայերէն բառական լաւ կը խօսէր, բայց միւսները կարծէք անձանօթ լեզու կը սորվէին: Ամբողջ հոգիով նետուած էր գիրքերու աշխարհին մէջ, հոգիով ու սրտով կ'ուզէր օգնել իրենց:

Կեանքը թարմացաւ, մեծ տառապանքի անապատին մէջ, զուլալ ջուրի աղբիւրներ սկսան հոսիլ: Վեց ամիս մնաց հոն, կեանքը փոխուեցաւ, իմաստ մը ունեցաւ:

...Անդին, քրոջը տան մէջ սուգ էր: Այդ ամբողջ ժամանակ զինք փնտռած էին, բոլոր որբանոցները գացած, որ զինք տուն բերեն: Վերջապէս գտան:

Ան կ'ուզէր աշխատիլ, դրամ շահիլ, տէրը ըլլալ իր ճակատագրին, ուրիշներուն կարօտ չմնալ: Անոր բոլոր սիրելիները սպաննուեցան Տէր Զօրի մէջ, բայց ինք չյուսահատեցաւ, զօրաւոր կամքով եւ ապրելու փափաքով բարձրացաւ աստիճաններէն: Ինքնիրեն համար, ու ընտանքին անդամներուն համար ապահով կեանք ստեղծեց:

Կը բաւէ՞ այսչափը: Ո՛չ, չի բաւեր:

Մեծ պարտաւորութիւններ ունինք մեր սիրելի նահատակներուն հանդէպ: Պէտք է միանանք, մեր բոլոր ջանքերը, անձնական կարողութիւնները, նիւթական, բարոյական, մեր բոլոր ունեցածը հաւաքենք եւ տանք մեր ժողովուրդին: Մենք պարտաւոր ենք լուծել վրէժը մեր սիրելի մեռելալիներուն, Տէր Զօրի որբերուն, որպէսզի անոնք հանգիստ ննջեն իրենց գերեզմաններուն մէջ: Խաղաղի անոնց հոգին, խաղաղին նաեւ մեր հոգիները...

ԹԱՆԿԱԳԻՆ ՆՈՒԷՐԸ

Սեւակ Եահնիեան



Տարեդարձս էր: Տասներկու տարեկան պիտի ըլլայի: Բոլոր ազգականներս հրաւիրուած էին: Մօրս հօրեղբայրը՝ Արամ հօբարը, մօտեցաւ ինձի եւ մատանի մը նուէր տուաւ. «Սեւակ,- ըսաւ,- Գուրգէն մեծպապային կողմէ է այս մատանին, լա՛ւ պահէ»: Գուրգէնը մօրս մեծհայրն էր: Ուրեմն պապենական ժառանգ մըն էր որ ինձի կը յանձնէր Արամ հօբարը եւ ես պէտք է որ լաւ պահէի:

Այս մատանին վստահաբար ունէր իր պատմութիւնը, իր անցեալի յիշատակները: Կ'ուզէի ետ երթալ, տեսնել մեծհայրիկը եւ լսել իր պատմութիւնները: Շատ բան չէի գիտեր մեծհայրիկին եւ մեծմայրիկին մասին: Միայն գիտէի, որ անոնք եղած են որբանոցէն եւ շնորհիւ իրենց տքնաջան աշխատանքին եւ զօրաւոր կամքին կրցած են յաջողիլ: Այսպէս մտածումներու մէջ թաղուած կը դիտէի մատանին, երբ մայրս մօտեցաւ ու ըսաւ. «գիտեմ որ հետաքրքրուած ես Սեւակ եւ կ'ուզես գիտնալ մեծհայրիկիս եւ մեծ մայրիկիս պատմութիւնը: Ականջներդ լաւ բաց եւ մտիկ ըրէ. այս բոլորը ինձի պատմած է Գուրգէն մեծհայրիկը, երբ ես քեզի չափ էի»:

«Երբ ես փոքր էի, ընտանիքիս հետ կ'ապրէի Վանի Շատախ գիւղը: Շատ գեղեցիկ գիւղ մըն էր: Օդը մաքուր, ջուրը մաքուր, պտղատու ծառեր: Հայրս վաճառական էր, վիճակով հանգիստ էինք եւ կ'օգնէինք նաեւ մեր շրջանը գտնուող աղքատ ընտանիքներուն: Ունէի քոյրեր եւ եղբայրներ: Ես տունին ամէնափոքրն էի: Եղբայրս՝ Արամը տան անդրանիկ զաւակն էր: Ան կտրիճ ու անվախ էր: Թուրքերը Արամը կը հալածէին, որովհետեւ ան երկու թուրք սպաննած էր: Ան յաճախ կը բացակայէր տունէն: Արամը ինձի խոստացած էր նուէր մը բերել, եւ իրապէս օր մը տուն

մտաւ ձեռքը թռչունի ձագ մը: Այս ձագուկը եղաւ կեանքիս ամէնասիրելի նուէրը: Կը յիշեմ նաեւ քոյրիկս՝ Նուարդը: Նուարդին տարիքը մօտ էր իմ տարիքիս, մենք միասին կը խաղայինք եւ չարութիւններ կ'ընէինք: Օր մը աղբիւրին քով ծրար մը գտանք, բացինք այդ ծրարը եւ կերանք մէջի պահուած բոլոր ուտելիքները:

Սակայն մեր այս երջանկութիւնը երկար չտուեց: Չեմ յիշեր ինչու յանկարծ առաւօտ մը բոլորս ալ ստիպուեցանք ձգել մեր հողն ու տունը եւ սկսանք քալել: Ես կը քալէի քոյրերուս եւ եղբայրներուս հետ: Ահագին ժողովուրդ փողոցները, իրարանցում ժխոր: Այդ բազմութեան մէջ կորսուեցայ. կորսնցուցի հայրս, մայրս եւ հարազատներս: Նայեցայ չորս կողմս, պռռացի, լացի սակայն իզուր: Շարունակեցի քալել վանեցի երեխաներու հետ:

Մեզ տարին Իրան, յետոյ Իրաք, ապա Երուսաղէմ: Շրջան մը մնացի Երուսաղէմի որբանոցը: Երուսաղէմի Պատրիարքը եղած է որբանոցի իմ մտերիմ ընկերս: Որբանոցին մէջ հարցուցին մականունս. չէի գիտեր եւ ըսի թէ հօրեղբօրս անունը Պաղտասար է եւ այդպէս ինծի Պաղտասարեան մականունը տուին:

Ամէնէն հետաքրքրականը այն է որ ճամփու ընթացքին հանդիպեցայ Գարեգին Նժդեհին: Մենք՝ բոլոր որբերս, սկսանք դառնալ իր շուրջը: Նժդեհ մեզ շատ կը սիրէր եւ հոգ կը տանէր: Իր յիշատակին յետագային հօրդ անունը դրի Նժդեհ: Երուսաղէմէն ետք մեզ փոխադրեցին Լիբանան: Մինչեւ 15 տարեկանս մնացի Պէյրութի որբանոցին մէջ եւ հոն գտայ զարմուհիս՝ Սիրունը, ծանօթացայ հրեշտակիս՝ մեծմայրիկիդ:

Մեծմայրիկդ Զէյթունի որբերէն է: Թուրքերուն հրամանով, ընտանիքին հետ ձգած է Զէյթունը եւ բռնած Տէր Զօրի ճամփան: Ան շատ օրեր անօթի-ծարաւ քալած է անապատին մէջ: Մեծմայրիկդ ունէր հինգ քոյրեր: Ինք եղած է տան ամէնէն փոքրն ու ամէմէն գեղեցիկը: Ծածկելու համար

Հայկուհիին գեղեցկութիւնը՝ մայրը մոխիր կը քսէր անոր երեսներուն: Հայկուհիին մօր երազը եղած է ունենալ տղայ զաւակ մը, եւ անապատին մէջ ան աշխարհ կը բերէ իր եօթերորդ զաւակը՝ մանչ մը: Անապատին մէջ դժուար էր կեանքը: Պէտք էր տոկալ, պայքարիլ: Երեկոյ մը անձանօթ ձիաւոր մը կու գայ երեխաներ հաւաքելու: Մայրը կ'աղաչէ որ Հայկուհին ալ առնէ իր հետ: Անձանօթը կ'ընդունի եւ Հայկուհին կը տանին նախ Հալէպի որբանոցը, ետքը՝ Պէյրութի որբանոցը: Յետագային Հայկուհին իր հօր՝ Մանուկին անունով կ'ըլլայ Մանուկեան»:

Մեծ յուզումով մտիկ կ'ընէի պատմութիւնը: Յուզուած էր նաեւ մայրս՝ Թաիւնը: Ան վայրկեան մը կանգ կ'առնէ, կը սրբէ աչքերուն արցունքի կաթիլները եւ կը շարունակէ. «որբանոցին մէջ Սիրունը եւ Հայկուհին կ'ըլլան մտերիմ ընկերուհիներ: Գիտե՞ս Սեւակ, որբանոցի կեանքը դիւրին չէր: Պէտք էր ուտել՝ ապրելու չափ: Հեռու՝ տաքուկ տունէն, մօր գուրգուրանքէն, պէտք էր տոկալ եւ շարունակել ապրիլ: Հակառակ բոլոր դժուարութիւններուն որբանոցը իրենց համար եղաւ երկրորդ տուն, իսկ ընկերները՝ նոր քոյրեր եւ եղբայրներ: Որոշ տարիքէ մը ետք պէտք էր ձգել որբանոցը եւ նետուիլ դուրսի աշխարհ: Այսպէս, երբ տասնհինգ տարեկան կ'ըլլան Սիրունը եւ Հայկուհին կը ձգեն որբանոցը եւ Գուրգէնին հետ միասին կ'ապրին սենեակի մը մէջ, Ս. Նշանի շրջանը: Մեկնելու ժամանակ որբանոցի մեծ քոյրերը կու տան կարի մեքենայ մը: Անմիջապէս բոլորը կը լծուին աշխատանքի: Հայկուհին եւ Սիրունը կար կը կարեն իսկ Գուրգէնը կ'աշխատի երկաթագործի մը քով:

Երբ քսան տարեկան կ'ըլլան, մեծհայրիկը եւ մայրիկը կ'ամուսնանան: Անոնք կ'ունենան չորս զաւակներ՝ Նժդեհ, Զեփիւռ, Արամ եւ Սօսի: Գուրգէնը կ'աշխատի գիշեր ցերեկ, որպէսզի ապահովէ իր ընտանիքին ապրուստը: Ան տարիներու ընթացքին կը դառնայ վարպետ երկաթագործ: Կը ստանձնէ մեծ շինութիւններ Հոմսի, Լաթաքիայի եւ

Դամասկոսի մէջ: Ան որոշ շրջան մը իր ընտանիքին հետ կը հաստատուի Հոմա: Երեխաները հոն կը յաճախեն ֆրէրներու դպրոցը: Յետոյ երեխաները կը դառնան Պէյրութ եւ Սիրունին հետ եւ կը յաճախեն Հայ Աւետ. Գոլէճ եւ Ն.Փ. Ճեմարան: Տարիներու ընթացքին, Գուրգէնը իր գործին մէջ շատ կը յառաջանայ եւ Պէյրութի Խալիլ Պատաուի շարջանին մէջ կը շինէ չորս յարկանի շէնք մը իր զաւակներուն համար: «Ճակտի քրտինքովս եւ տարիներու աշխատանքովս շինած եմ այս շէնքը» կ'ըսէր ան: Պէյրութ վերադառնալէ ետք կ'ապրի իր սեփական շէնքին մէջ: 1958ի կուսակցական կռիւներուն կը ստիպուի ձգել տունը եւ հաստատուիլ Պէյրութի Ուաթուաթ շրջանը:

Գուրգէնը եւ Հայկուիին ունեցան 6 աղջիկ թոռներ: Գուրգէնը պահպանեց իր ընտանիքէն ներս քրիստոնէական եւ հայկական ասանդութիւնները եւ սովորութիւնները: Կը յիշեմ ամէն տարի Վարդանանցին հերիսա կ'եփէր եւ կը կանչէր մեզ բոլորս: Զատկուան քաթան անպակաս էր տունէն: Մեծմայրիկը Սիրունին հետ կ'եփէր եւ կը բաժնէր բոլոր զաւակներուն եւ դպրոցներուն: Նորտարին պէտք էր տօնել մեծ խումբով, զաւակներով եւ թոռներով: Նորտարուան յաջորդ օրը կը հաւաքուէին մաժունով քէօֆթէն ուտելու: Ամէնէն կարելորդ այն է որ տունէն ներս արգիլուած էր թրքերէն խօսիլ...»:

Երկար պատմելէ ետք, մայրս կանգ առաւ. անոր այտերը կարմրած էին: Այս բոլորը երեւակայական պատմութիւն մը չէր այլ իրական: Պատմութիւնն էր թափառական հայ ընտանիքի մը, որ ձգելով իր հայրենի տունն ու ընտանիքը հետեւած էր իր ճակատագրին:

Թուրքը ուզեց ոչնչացնել ընտանիքս, սակայն չյաջողեցաւ:



ԸՆՏԱՆԻՔԻՍ ԿԵԱՆՔԸ ՔԵՍԱՊԻ ՄԷՋ ԵՒ ԱՐՏԱԳԱՂԹԸ

Յովսէփ Եուսէֆ

Ասկէ 100 տարի առաջ ընտանիքս Քեսապ կը բնակէր: Պատմական բախտաւոր դարձուածքով մը Քեսապը զերծ մնացած է մեր դարաւոր թշնամիին՝ թուրքին կողմէ բռնագրաւուելէ կամ իւրացուելէ: Ան մնաց Սուրիական Պետութեան սահմաններուն մէջ եւ կը մնայ մինչեւ այսօր:

Քեսապը, հակառակ բազում վերիվայրումներու, կրցած է տոկալ, մնալ ինքնիրեն հարազատ եւ իր կեանքովն ու գործունէութեամբ շարունակել եւ արժեւորել հայուն յատուկ տաղանդն ու նկարագիրը: Նեղ ու լայն, տաք ու պաղ ժամանակներու մէջէն անցած է, բայց մնացած է տոկուն ու յամառ:

Քեսապ նշանաւոր եղած է իր համեղ խնձորով, թուզով, խաղողով, դափնեծէթով եւ այլ պտուղներով: 1920ականներուն գիւղատնտեսական բոլոր հիմնական արտադրութիւնները՝ ծխախոտ, դափնեծէթ, ածուխ, խոզակ Քեսապէն կ'արտածուէին Եգիպտոս, իբր նաւահանգիստ ունենալով Գարատուրանի ծովափը:

1915ին գարատուրանցիներու եւ պաշորացիներու կարաւանէն ետք, քեսապցիներու երկու կարաւանները կը հասնին Համա: Այս կարաւաններու մէջ էր մեծօրս 9 հոգիէ բաղկացած ընտանիքը, որ զանազան տառապանքներու ենթարկուած է. մեծհայրս կորսնցուցած է ծնողքն ու երկու հորեղբայրները:

Մեծհայրս կը պատմէր, թէ հայրը կօշկակար եղած էր, իսկ մայրը իր վեց մանչ զաւակներու հոգածութեամբ կը զբաղէր եւ մերթ կ'օգնէր հարազատներու եւ դրացի պարտէզներու մէջ բերքահաւաքի եւ *մէսէրէյի* աշխատանքին:

Ան պատմած է, թէ իր վերջին 2 զաւակները ծննդաբերած է պարտէզներուն մէջ: Ընտանիքիս անցեալի աշխատանքը նոյնը չէ մնացած. այժմ հայրս ունի իր անձնական արհեստանոցը եւ կը շինէ ու կը նորոգէ քարի մեքենաներ:

Յարդ ընտանիքիս մէջ խառն ամուսնութիւն կ'ընուած չէ, ընդհակառակը, հարազատներս ունին քեսապցի կիներ, որոնք կազմած են լաւ ընտանիքներ եւ տան մէջ հայերէնի կողքին կը խօսին նաեւ Քեսապի բարբառը: Պապենական ծննդավայրէն մնացած են մեծօրս ընտանիքին նկարները եւ Ս. Յակոբի տօնին հերիսայի աւանդը: Այդ օրը մայրս մեծ կաթսայով կը պատրաստէ հերիսա եւ հարազատներով կը խմբուինք ու կ'ուտենք, խօսելով այդ աւանդին մասին:

Մեծհայրս 1950 թուականին առանձին հաստատուած է Լիբանան, որմէ ետք յաջորդաբար եկած են երեք եղբարներն ու մայրը, իսկ երկու կրտսեր եղբայրները Սուրիոյ պարտադիր զինուորական ծառայութենէն խոյս տալու համար մեկնած են Ֆրանսա եւ Գերմանիա: Որոշ շրջան մը ետք մեծհայրս ընտանիքի հինգ անդամներով բնակած է Քարանթինա, ապա Էշրեֆիէ, հոն ամուսնացած ու մահացած: Ընտանիքիս անդամներուն մեծամասնութիւնը կ'ապրի Լիբանան, եւ գերդաստանէս ալ շատ անդամներ կը գտնուին Հայաստան եւ Ամերիկա:

Այսօր եթէ ես իմ պապենական ծննդավայրս ապրէի, վստահ եմ, որ աւելի հարազատ հայ պիտի զգայի ինքզինքս, եւ հպարտօրէն քալէի իմ պապերու արահետներէն, եւ այդ «պատառ մը Հայաստանը» (ինչպէս կ'ըսէր վախճանեալ Գարեգին Բ. Կաթողիկոսը) ընէի Սփիւռքի Հայաստանը եւ ազգակիցներուս հետ մեր դատը իրաւական դարձնէի միջազգային համայնքին:



ՄՈՒԹ ԹՈՒԱԿԱՆ

Նանօր Զաքարեան

1914-1915. մութ թուական, երբ տեղի ունեցաւ կարմիր ջարդը Հայաստանի մէջ. հոն կային մեզմէ ամէն մէկուն պապերը: Անոնք կ'ապրէին զանազան վայրերու մէջ, օրինակ՝ Ատանա, Սասուն, Սիս, Եւայլն....

Այսօր, ես ձեզի պիտի պատմեմ իմ պապերու կեանքը:

Պապերս ասկէ 100 տարի առաջ կը բնակէին Ատանա, որուն յատկանիշերն են՝ ճաշ, ձեռագործ, նաեւ բամպակ:

Երբ ջարդը սկսաւ, մեր պապերը՝ երկու հարազատ եղբայրներ՝ Անդրանիկ եւ Աւետիս ու մէկ ընկեր՝ Բենիամին՝ Անդրանիկ փաշային զինուորներէն էին: Անոնք նախ կը փախչին Պուրսա, Աւետիսը կ'անցնի Յունաստան: Միքանի ամիս մնալէ ետք, Անդրանիկը (հօրս մեծհայրը) եւ Բենիամինը քալելով կը հասնին Տէր Զօր, ուր կը մնան միքանի օր, չարչարանքի տակ: Իրենց հետ բաւական ժողովուրդ կար, բայց հոն ապրուելիք վայր չէր, ուտելիք, հաց չունէին՝ անոնք քարերը կը կրծէին, ասագ կը լզէին...:

Անդրանիկ ու Բենիամին Տէր Զօրէն ելլելով կը բաժնուին. Անդրանիկ կ'երթայ իր եղբօր՝ Աւետիսին ետեւէն Յունաստան: Բենիամին կը շարունակէ դէպի Երուսաղէմ: Անդրանիկ բաւական չարչարուեցաւ, որպէսզի միանայ իր եղբօր, սակայն ապարդիւն. մինչեւ այսօր ան գտնուած չէ:

Յունաստան, Անդրանիկ կը ծանօթանայ կնոջ մը՝ Կիլիզար անունով, որ ընտանիքով թուրքերէն փախած էր:

Անդրանիկ ու Կիլիզար ամուսնանալէ ետք, մանչ մը կ'ունենան, կը կոչեն Բենիամին (իմ մեծհայրս) եւ Լիբանան կու գան: 15-20 տարի ետք, Բենիամինի հայրը մահանալէն առաջ կ'ըսէ թէ Բենիամինը հօրեղբայր ունի Երուսաղէմ՝ Բենիամին անունով եւ կ'ուզէ զայն գտնել:

Բենիամին Երուսաղէմ կ'երթայ իր ոչ-հարազատ հորեղբայրը փնտռելու: Չայն կը գտնէ ամուսնացած, երկու աղջիկի ու մէկ տղու հայր: Մէկ աղջիկը՝ Մարիամ, կը սիրահարի Բենիամինին (մեծօրս): Մարիամ ուսուցչուհի էր լաթին կաթոլիկներուն քով: Երբ անոնք կ'որոշեն ամուսնանալ վարդապետերը չեն ընդունիր անոնց ամուսնութիւնը մինչեւ որ Բենիամին լաթին կաթոլիկ չդառնայ: Բենիամին կ'ընդունի կաթոլիկ դառնալ, քանի որ չափազանց սիրահարած էր Մարիամին (մեծմայրս):

Անոնք ամուսնանալէ ետք, կու գան Լիբանան ու կ'ունենան հինգ զաւակ՝ երեք տղայ ու երկու աղջիկ: Առաջին զաւակը կը կոչեն Անդրանիկ (մեծօր անունը), որ իմ հայրս է. հորեղբայրներէս մէկը կը կոչուի Աբրահամ, միւրը՝ Աւետիս, հորաքոյրերս՝ Անահիտ եւ Ովսաննա:

Աւետիս հորեղբայրս ամուսնացած է լիբանանցի տեղացի արաբ կնոջ մը հետ: Մեր ընտանիքի ազգանունը փոփոխութեան ենթարկուած է. բունով Շեքերճեան ենք, բայց Յունաստանի մէջ փոխուեցաւ Չաքարիասի. յունարէն Չաքարին զաքարիաս կ'ըսեն. հիմա եղած է Չաքարեան:

Ունինք պապենական ծննդավայրէն նկար մը՝ երեք չեթէ՝ Անդրանիկ, Աւետիս եւ Բենիամին միասին նկարուած:

Անդրանիկ ատաղձագործ էր, Բենիամին՝ Երուսաղէմի Վանքին պարտիզպանն էր: Անոնք Լիբանան հաստատուած են 1951ին, 18 տարի բնակած են քամի Թրատ, Կիլլապաշէն: Լիբանանի կացութեան պատճառով անցան Ամանոս:

Գերդաստանէս շատ անդամներ այսօր կը բնակին օտար երկիրներ՝ Աւստրալիա, Ամերիկա, Քանատա, Հոլանտա. անշուշտ անոնք հակառակ որ Լիբանան եւ Հայաստան չեն, անդադար կը զբաղին հայկական հարցերով:

Ատանայի մէջ ունեցած ենք կալուած մը... այսօր եթէ ես իմ պապերուս ծննդավայրը ապրէի կ'ուզէի պրպտել ու գտնել այդ կալուածը եւ ետ տէրը դառնալ մեր սեփական հողին, որ այսօր թուրքերու ձեռքերու տակ է:



ԽՈՒՆԿ ՈՒ ՄՈՄ՝ ԱՆՈՆՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վանեսաա Էլ Հլու

Մեր ժողովուրդին պատմութիւնը լի է պատերազմներով, տեղահանութիւններով եւ գաղթերով: Ասոնց գլխաւորը կը հանդիսանայ թուրքերու կողմէ կազմակերպուած Յեղասպանութիւնը, որուն պատճառով մէկուկէս միլիոն հայեր ջարդուեցան:

Մօրս մեծհայրը եղած է ղարսցի հայ ընտանիքի զաւակ: Ծնած է 1910ին: Երբ ան հինգ տարեկան էր, իր մօրը հետ տեղահանուած է եւ տարագրուած: Տէր Զօրի չարչարանքի ճամփուն վրայ կը կորսնցնէ իր մայրը, կը հասնի Լիբանան, ուր կը դաստիարակուի արաբ ընտանիքի մը մէջ: Ան սոյն տողերով կ'ուզէր փոխանցել մեզի իր վկայութիւնները, որ ինծի փոխանցած է մայրս յուզմունքով:

...Կիրակի կէսօրէ ետք մը, թաղի ասանդութեան համաձայն երբ բոլոր թաղեցիները հաւաքուած էին թաղին մէջ գտնուող շքեղ պարտէզին մէջ, ուր ան իր տարեկից ընկերներուն հետ կը զուարճանար մանկական խաղերով, յանկարծ թաղին մէջ իրարանցում եւ աղմուկ մը ստեղծուեցաւ: Հեռուէն տեսան եկեղեցւոյ պահակը, որ կը վազէր իրենց կողմ: Ան կու գայ տեղեկացնելու, թէ թուրքերը կը յարձակէին թաղին վրայ: Սակայն բոլորը չհասան իրենց տուները: Թաղը պաշարուեցաւ, ձերբակալեցին բոլոր մեծերը եւ երիտասարդները ու բոլորը տարին եկեղեցի:

Դժբախտաբար բոլորն ալ մահացան: Մօրս մեծհայրը ապշած եւ վախով կը նայէր, եւ իր տարեկից ընկերներուն հետ կու լար, սակայն իրենց մայրերը միշտ կը պատուիրէին, որ չյուզուին, զօրաւոր ու քաջ մնան:

Թուրքերը յետոյ սկսան հարուածել մայրերը եւ պատուիրեցին որ բոլորը հետեւին իրենց: Կարծես թէ այս հետեւիլը տեւեց օրեր... շաբաթներ, ու հասան Տէր Զօրի անապատը: Ան՝ 5 տարեկան երեխայ, տժգոյն ու ծարաւ, ուժաթափ կը քալէր մեծ քրոջ հետ, սակայն քոյրը՝ ուժաթափ ու յոգնած, գետին փռուեցաւ: Այլեւս ուժ չկար քալելու: Թուրք գազանները մօտեցան իրենց եւ զինք զարնելով հեռացուցին քրոջմէ, մինչ քոյրը կը պոռար եւ ամէն ջանք թափեց, որ իրմէ չհեռանայ, սակայն թուրք զինուորը դաշոյնի հարուածով մը լռեցուց քոյրը:

Անոնք հասան Սուրիա եւ որպէս որբ տղայ մնաց Հալէպի ճամփաները, սակայն արաբ մարդ մը զինք գրկեց ու տարաւ իրենց տունը: Ան հոգաց իրեն. անոր մինչեւ այսօր երախտապարտ կը զգայ: Անոնց տունը մնաց վեց տարի, մինչեւ որ արաբը իրեն Ճիպէյլի Ամերիկեան Որբանոցը հասցուց, ուր մնաց մինչեւ երիտասարդ տարիքը:

Յետոյ հաստատուեցաւ Պէյրութ:

Ան իր ճակտի քրտինքով կազմեց մեր սիրելի ընտանիքը:

Մօրս մեծհայրը մեզմէ մարմնապէս բաժնուեցաւ, սակայն անոր յիշատակները եւ վկայութիւնները երբեք պիտի չմոռնանք, մանաւանդ այն տողը, որ մշտական կ'ըսէր. «Տէր Զօրի չարչարանքը»:

Բնականաբար այսօր՝ 100ամեակին Հայոց Յեղասպանութեան, մենք որպէս հայորդիներ, պարտք կը զգանք յիշելու մեր նախնիկները, յիշելու ոչ թէ հոգեհանգստեան պաշտօններով եւ սգահանդէսներով, այլ՝ մեր աշխատանքով եւ պահանջատիրութեամբ ու ցոյց կու տանք աշխարհին, որ մենք պահանջատէր ժողովուրդ ենք եւ ճիգ պիտի չխնայենք մեր իրաւունքներուն վերատիրանալու: Այս բոլորը կը յաջողի հաւաքական աշխատանքով եւ վստահ եմ, մենք մօտիկ ապագային թշնամիին ցոյց պիտի տանք մեր ուժը:

Խունկ ու մոմ անոնց անթառամ յիշատակին:



ՊԱՊԵՐՈՒՄ ՕՃԱԽԸ

Ուիլսոն Թամզարեան

Ես սուրիահայ, կամ աւելի՛ ճիշդը՝ հալէպահայ տղայ մըն եմ: Երկրիս՝ Սուրիոյ, քաղաքական աննպաստ պայմաններուն բերումով գաղթած-եկած եմ Լիբանան:

Հալէպի մէջ մեր շրջանը վտանգաւոր եղած էր, ամէն վայրկեան մահուան վախը կը դիմագրաւէինք: Աւերակ դարձան մեր տուները, դպրոցներն ու եկեղեցիները: Եւ որովհետեւ վտանգը միշտ մեզ կը հալածէր, ստիպուեցանք հեռանալ-հաստատուիլ Լիբանան, մեր ետին ձգելով մեր տաքուկ օճախը եւ իմ շատ սիրելի դպրոցս, ուսուցիչներս ու ընկերներս:

Ճիշդ մեր պապերուն պէս, որոնք 100 տարիներ առաջ ձգեցին իրենց տունն ու տեղը եւ փախան միայն իրենց կեանքը ազատելու գնով, փախանք նաեւ մենք: Ասոր համար է, որ ես շատ լաւ կը զգամ մեր նախահայրերուն ապրած չարչարանքն ու տառապանքը: Ինչպէս կ'ըսեն՝ «պատմութիւնը ինքզինք կը կրկնէ»:

Ձմրան ցուրտ օրերուն, երբ մեծօրս տան մէջ տաքուկ վառարանին քով նստած կ'ըլլայինք, մեծհայրս՝ յիշելով իր ծնողքին ապրած տառապանքը, արցունքոտ աչքերով կը սկսէր պատմել անոնց պատմութիւնը, նշելով թէ նման ցուրտ օրերուն, երբ մենք վառարանին քով հանգիստ կը նստինք, իր հայրն ու մայրը աքսորուած են իրենց տաքուկ օճախէն՝ Պոլսոյ Պուրսա քաղաքէն: Թուրքերը կ'աքսորէին Թուրքիոյ մէջ գտնուած հայերը իրենց հողերէն՝ հաւաքելով գիւղերու այր մարդիկը, ոմանց չարչարելու նպատակով, իսկ մեծագոյն նպատակը՝ հայ ցեղը կործանելն էր:

Այդ ընտանիքներէն էր Թադէոս Թադէոսեանի ընտանիքը, որ կ'ապրէր Պուրսա, ուրկէ աքսորուեցան

դաժան թուրքերուն կողմէ: Նախքան գաղթը, թուրքերը Թաղէոս տետէն բռնի տունէն կը հանեն: Թաղէոսին կինը՝ Արմէնուհին, իր երեք զաւակներով ստիպուած տունը կը ձգէ եւ կը միանայ գիւղի մնացեալ կիներուն: Մօտաւորապէս 3700 կին ու մանուկ միասնաբար կը բռնեն Տէր Զօրի ճամփան: Ամիսներ տետող ճամփու ծանր յոգնութիւնը, օդի չականկալուած փոփոխութիւնը եւ շրջաններու անապահովութիւնն ու սովը պատճառ կը դառնան մեծ թիւով կիներու ու մանուկներու մահուան: Վերջապէս Հալէպ կը հասնի 2000 հոգի միայն:

Կնոջ խեղճ ամուսինը՝ Թաղէոս տետէն, իր ճարպիկութեամբ կրցած էր փախչիլ թուրքերու ձեռքէն եւ եկած էր Հալէպ: Ան երկար ամիսներ կը փնտոէ իր կինն ու երեք զաւակները: Դժբախտաբար, ոչ մէկը լուր ունէր: Օր մըն ալ կը ծանօթանայ հնակարկատի մը եւ կը սկսի ամէն օր քովը երթալ: Հնակարկատին յաճախորդներն ալ կ'իմանան Թաղէոս տետէին պատմութիւնը:

Օր մը, երբ նստած էր հնակարկատին քով, մարդ մը կու գայ: Բարեկամները կ'ըսեն, թէ *Ֆալճի* է: *Ֆալճին* կ'ըսէ. «Թաղէոս աղա, տո՛ւր հինգ ոսկի եւ քեզի կ'ըսեմ, թէ ո՛ւր են կինդ եւ զաւակներդ»: Թաղէոս աղան չէր հաւատար այսպիսի բաներու, բայց իր ընկերներուն ստիպումով կը համոզուի՝ յուսալով որ կը գտնէ կինը, եւ մարդուն կու տայ հինգ ոսկի: *Ֆալճին* դրամը կ'առնէ եւ կ'ըսէ. «Կինդ եւ զաւակներդ ողջ են ու կը մնան շատ հին եկեղեցիի մը մէջ»:

Թաղէոս տետէն մէկ-մէկ եկեղեցիները կը պտտի, կը փնտոէ կինն ու զաւակները: Երեք ամիս կը տեւէ մինչեւ որ գտնէ այդ եկեղեցին, որ Քառասուն Մանկանց եկեղեցին էր: Հոն կը տեսնէ իր կինն ու զաւակները, եւ կ'ըսէ. «Արմէնուհի՛, հոս ես դուն»: Կինն ալ կը բացագանչէ. «Թաղէոս աղա, գտա՛ր մեզ: Փա՛ռք Աստուծոյ»: Այսպիսով անոնք կրկին իրարու կը միանան Հալէպի մէջ, կ'ունենան եւս երկու զաւակ, որոնցմէ մէկը մեծհայրս է (մօրս հայրը):

Ես՝ լսելով այս պատմութիւնը, անշուշտ, որ շատ զգացուեցայ իմ պապերու հանդէպ պատահածներէն: Եթէ իրենց տեղը ըլլայի չեմ գիտեր, թէ ի՛նչ կ'ընէի: Բայց լաւ գիտեմ, որ քաջ Անդրանիկին զինուորներէն պիտի ուզէի ըլլալ եւ պաշտպանել մեր հայ ազգը:

Պիտի ուզէի մեր հայ ընտանիքներէն, որ հայերէն խօսին եւ հայկական վարժարան յաճախեն, իրենց զաւակներուն հայկական անուն դնեն, որպէսզի հայը ճանչցուի իր անուններով, հայկական անուններով:

Բայց բացառութիւնները յարգելի են, չէ՞: Ինչպէս իմ անունս, որ Ուիլսըն է: Ըսեմ, թէ ինչո՞ւ Ուիլսըն դրուած է:

Հօրս մեծհայրը ծնած է Մաշկիրտ, 1864 թուին: Նախնական ուսումը ստացած է Գոնիա, ապա աւարտած է Պոլսոյ Իրաւաբանական Համալսարանը: Ամուսնացած է պոլսահայ Եւգինէ անունով աղջկայ մը հետ: Նախքան Մեծ Եղեռնը եկած են Հալէպ եւ բնակած են Ճտէյտէ թաղամասին մէջ: Հալէպ հաստատուելէն ետք՝ 1917ին, ծնած է իմ մեծհայրս՝ Ուիլսըն Թամզարեանը:

Հօրս մեծհայրը փաստաբան էր, ան կը ճանչնար անգլիացի եւ ֆրանսացի մեծ անձնաւորութիւններ, որոնք այդ շրջանին կ'իշխէին Սուրիոյ մէջ: Անգլիացի զօրավար մը կար, որուն հետ շատ մտերիմ էր: Այդ զօրավարը զաւակ մը կ'ունենայ այդ շրջանին եւ անունը Ուիլսըն կը դնէ: Երբ հօրս մեծհայրն ալ զաւակ կ'ունենայ զօրավարը կ'ըսէ. «Ես Ուիլսըն դրի, դո՛ւն ալ դիր»: Հօրս մեծհայրն ալ կը համոզուի, որ Ուիլսըն անունը լաւ անուն է, եւ միեւնոյն ատեն Հայաստանի քարտէսը գծող Ամերիկայի նախագահին անունն է:

Այս է իմ պապերու դրոշմած պատմութիւնը, ու ես հպարտ եւ ուրախ եմ իրենցմով: Մենք՝ պատանիներս, կը խոստանանք, որ մեր պապերէն մնացած աւանդութիւնները եւ մայրենի լեզուն պահենք ու պահպանենք եւ փոխանցենք յաջորդ սերունդներուն:



ՄՈՒՍԱ ԼԵՌԷՆ ԱՅՆՃԱՐ

Հայկ Թապագեան

Մօրենական արմատներս եղած են Մուսա Լեռէն, ուրկէ գաղթած են նախնիներս Լիբանան: Մեծօրս մեծհայրը, Տուտագլեան ընտանիքի գաւակ, ծնած է 1840ականներուն, Մուսա Լեռան Հաճի Հապիպլի գիւղը, ուր ապրած է մինչեւ իր մահը: Ունեցած է ութ մանչ գաւակ: Ան ծանօթ եղած է գիւղին մէջ իբրեւ Էճէնենց Խաչիկը: 1915ին՝ չբարձրանալով ֆրանսական նաւը, ան կը մնայ իր գիւղը, ուր ջարդի եւ պատերազմի հետեւանքով կը կորսնցնէ իր եօթ գաւակները. ոմանք կը զոհուին, ոմանք ալ անյայտ կը կորսուին: Ողջ կը մնայ միայն մէկ գաւակը՝ Պետրոսը, որ 19 տարեկան էր (ծն. 1886): Քանի մը տարի ետք Խաչիկ կը մահանայ:

Պետրոս Տուտագլեան կ'ամուսնանայ մուսալեռցի աղջկան մը՝ Սիմա Չէօնկիլեանի հետ (ծն. 1898): Անոնք կ'ունենան հինգ գաւակ՝ Անուշ (1917), Վարդան (1918), Մարի (1920), Յակոբ (մեծհայրս, 1933) եւ Վիքթոր (1934): Բոլորն ալ կը ծնին Հաճի Հապիպլի մէջ:

Պետրոս արհեստով սանտրագործ եղած է, բայց զբաղած է նաեւ հողագործութեամբ եւ հովիւութեամբ: Մեծհայրս կը պատմէ, թէ ան կանուխ տարիքէն իր մեծ եղբօր հետ կ'երթար իրենց ոչխարները արածելու, եւ թէ անգամ մը, երբ ինք տակաւին փոքր էր, գիւղի ձորերը կորսուած է, ու բախտով ազատած շուներու վտանգէն:

Յունիս 1939ին, երբ հրամանը կը հասնի գիւղերէն հեռանալու, Պետրոս Տուտագլեան կ'առնէ իր ընտանիքը եւ կ'ուղղուի Րաս Պասիթ, ուր կ'ընդունուին մուսալեռցիները: Այդտեղ կ'ապրին շուրջ մէկ ամիս, տախտակէ տուներու մէջ, ֆրանսացի զինուորներու հսկողութեան եւ ապահովութեան

տակ: Սկիզբը որոշուած էր զանոնք Րաս Պասիթ ձգել, սակայն յետոյ կ'որոշեն զանոնք Լիբանան փոխադրել:

Յուլիսի վերջաւորութեան, վեց գիւղերէ եկած մարդիկ կ'ուղղուին ֆրանսական նաւերու միջոցով (ինչպէս 1915ին) Թրիփոլի, անկէ՝ Ռայաք, անկէ ալ Այնճար: Այնճարը ամբողջովին կը յատկացուի մուսալեոցիներուն:

Մեծօրս օր - ինչպէս բոլոր մուսալեոցիներուն - ֆրանսական իշխանութիւնը կու տայ մէկ սենեակէ բաղկացած տուն մը, ժամանակ մը վերջ՝ պարտէզ մը, ուր մեծհայրս, ինչպէս իր հայրը, կ'անցնէ իր ժամանակը: Այնճարը կը բաժնեն վեց բաժիններու եւ կ'անուանեն՝ Քապուսիէ, Եողուն Օլութ, Խըտըր Պէկ, Հաճի Հապիպլի, Պիթիաս եւ Վաքըֆ (յիշելով իրենց գիւղերը): Իրենց հայրենի գիւղին յիշատակով, Պետրոս կը բնակի Հաճի Հապիպլի բաժինը:

Մեծհայրս կը յիշէ եւ կը պատմէ, թէ իր հայրը՝ Պետրոս, օր մը որոշած ըլլալով գիւղ վերադառնալ, իր հինգ զաւակները կը ձգէ կնոջ քով եւ երկու բարեկամներով կը վերադառնայ Հաճի Հապիպլի... Սակայն գիւղը ամայի տեսնելով՝ կ'որոշէ ետ՝ Այնճար վերադառնալ եւ հոն մնալ:

Լիբանան հաստատուելէ մօտ վեց տարիներ ետք՝ 1945ին, Վարդան Տուտազլեան կը զինուորագրուի Ֆրանսական Անկախ Ուժերուն, երբ դեռ մեծհայրս 12 տարեկան էր: Այդ տարիներուն ալ նիւթական դժուարութիւններու պատճառով, Յակոբ դպրոցէն տուն կը դրկուի եւ չի կրնար շարունակել իր ուսումը, հակառակ իր խելացութեան ու աշխատասիրութեան: Այդ մէկն ալ շատ մեծ հետք ձգած է իր վրան: Պետրոս եւ իր կինը՝ Սիմա, կը մահանան Լիբանան, յաջորդաբար 1945ին եւ 1946ին:

1953-1954ին, Յակոբ Տուտազլեան, տակաւին 20-21 տարեկան երիտասարդ, մաս կը կազմէ գիւղի պաշտպանութեան խմբակին, եւ զէնքը ձեռքին՝ կը պահէ գիւղի սահմանները: 1966ին ան կ'ամուսնանայ Սիմա

Չափարեանին հետ, մուսալեռցի աղջիկ մը, որ երեք ամսուան երեխայ մը եղած է տեղահանութեան ժամանակ: Անոնք կ'ունենան ինը զաւակ, որոնցմէ երեքը կը մահանան. երկուքը՝ ծնելէ անմիջապէս ետք, բժշկութեան միջոցներու սակաւութեան պատճառով, իսկ երրորդը՝ արկածի հետեանքով: Յակոբ եւ Սիմա իրենց վեց զաւակներուն կու տան մուսալեռցիի կրթութիւն, փոխանցելով իրենց գիւղի մշակոյթը եւ իրենց մայրենի բարբառը: Անոնք կ'ամուսնացնեն զաւակներէն չորսը, որոնցմէ մէկն է՝ մայրս: Աւելի ուշ, ընտանիքին պէտքերը ապահովելու համար՝ մեծհայրս կ'աշխատի ճամփաներու շինութեամբ, իսկ ազատ ժամերուն կը զբաղի հողագործութեամբ՝ իր հօրմէն ժառանգած պարտէզին մէջ:

Մինչեւ այսօր մեր ընտանիքը կը պահէ իր մայրենի բարբառը, ճաշերը, ինչպէս՝ *խուրը թանուն, ծուրնը թրախըկը, կրկուպէկը*, եւ երգն ու նուագը, ինչպէս՝ տաւուլ-զունան: Ամէն արձակուրդի երբ Այնճար մնայի, մեծհայրս ու մեծմայրս ինծի կը պատմէին իրենց յիշատակները անցեալէն եւ կը կրկնէին իրենց փափաքը՝ վերադառնալու Մուսա Լեռ, բայց դժբախտաբար երկուքն ալ կը մահանան 2009ին:

Ես այսօր կ'ուզեմ իրականացնել այդ փափաքը՝ այցելելով Մուսա Լեռան գիւղերը...



ՄԵՐ ՀՈՂԵՐՈՒՆՅԱՐԳԸ

Գարին Թերզեան

Այս տարի 2015 է. Մեծ Եղեռնի 100ամեակը: Մեծ շուքով պիտի յիշուի մէկուկէս միլիոն հայերու՝ դարուս մեծագոյն Ցեղասպանութիւնը:

Մեր երէցներէն բազմիցս լսած ենք պատահած վայրագ ոճիրները... բայց ու՛ր է թէ մեր մայրերը լսած ըլլան եւ կը պատմեն մեզի եւ ու՛ր է թէ մեր մեծմայրերը՝ այս դէպքերը տեսած անձերը, մեզի փոխանցեն:

Իմ մեծմօրս ծնողքը կը բնակէր Թուրքիա: Մեծմայրս ինծի փոխանցեց իր լսած իրական ոճիրներուն պատմութիւնը, ցաւելով թէ իր ընտանիքը կը բաղկանար վեց անդամէ՝ չորս զաւակ, հայր ու մայր: Մեծմօրս հայրը ինը տարեկան էր, յիշողութիւնը շատ զօրաւոր եւ մեծմօրս պատմած է իրենց պատահածը: Անակնկալ ջարդը սկսած է շատ վայրագ. իր քոյրը շատ պզտիկ ըլլալով, մայրը զինք պահած էր իր փէշին մէջ երբ թուրքը խուժած է իրենց տուն: Հայրը ցանքի գործով զբաղած ըլլալուն տունը չէր գտնուեր:

Անոնք ելած են Մարաշէն եւ սկիզբը հաստատուած են Հալէպ, բայց կը գաղթեն եւ Լիբանան, ուր կը հաստատուին 1971 թուականին: Այդ թուականէն ի վեր անոնք կը բնակին նոյն բնակավայրը: Մարաշցիք նշանաւոր են իրենց ճաշով՝ *քեշկէկ դապախլը*, որ հարսանեկան ճաշն էր: Նշանաւոր են նաեւ ձեռագործով. մեծմայրս մինչեւ օրս Մարաշի նախշով կը զբաղի:

Ներկայիս, մօրս մեծհօր հարազատները իր գործով չեն զբաղիր, անոնք բոլորը պսակած են իրենց մանուկները, հայկական անուններ ունին եւ մինչեւ օրս խառն ամուսնութիւն չէ պատահած. բոլորն ալ հայ մեցած են: Հարազատներս, վերջերս դարձեալ երկրի անկանոն պատճառներով, մեծ մասամբ ցրուեցան. Ոմանք՝ Ամերիկա,

ոմանք Ֆրանսա իրենց յարմար գործերով: Սակայն մեծօրս մօրեղբայրը մինչեւ օրս հացագործ է:

Շատ մը հայեր մինչեւ օրս կ'ապրին իրենց պապերուն ծննդավայրը, բայց չեն գիտեր այդ հողերուն յարգը: Եթէ ես մինչեւ օրս մնայի իմ պապերուս հողին վրայ շատ հաւանաբար հայութիւնս պահած մնայի եւ պայքարէի հայութեանս համար եւ կ'ուզէի հայ աշակերտներ դաստիարակել որպէսզի այդ անիծեալ թուրքին հպատակութիւնը ջնջեմ, որովհետեւ իր նպատակն էր հայերը ոչնչացնել եւ մէկ հայ ձգել իբր նմուշ, բայց չկրցաւ հասնիլ նպատակին այլ հակառակը պատահեցաւ, մենք շատցանք մեր պապերուն տանջանքներուն հետեւանքով:

Մեծմայրս կը պատմէ թէ 100 տարի առաջ դաժան թուրքերը երանելի Իգնատիոս Մալոյեանի մարմինը ողջ-ողջ կ'այրեն...: Երբ Ջմմառ այցելեմ այս դէպքը աչքիս առջեւ կու գայ: Ասոր նման շատ մը դէպքեր ունէր մեծմայրս պատմելիք. պատմութիւնները երբեք չեն մեռնիր:

Այսօր թուրք նոր երիտասարդութիւնը կ'ըսէ թէ իրենք նոյն թուրքերը չեն որ ջարդը կատարեցին, բայց իրենք նոյնն են իրենց կատարած ոճիրներով, Տէր Զօրի Նահատակաց Եկեղեցիին քանդումով եւ աճիւններուն անհետացումով: Միենոյնը ըրին հայկական Քեսապի մէջ... իրենց կատարած բոլոր այս ոճիրները ցոյց կու տան թէ անոնք կը շարունակեն իրենց պապերուն գործը:

Առանց յուսահատելու կը մաղթեմ որ բարուօք լուծում մը գտնուի Հայկական Հարցին եւ այն ալ ինչու չէ մօտիկ ապագային:



ԵՕԹԵՐՈՐԴ ՓԱՄՓՈՒՇՏԸ

Ստեփան Թեքլեյեան

Մեծմօրս հայրը՝ Գէորգ, ծնած էր 1901ին, Մուսա Լեռ, Հաճի Հապիպլի գիւղը, Սուետիա: Գէորգին եղբայրը՝ Մովսէս, որ Մարտիրոսի մանչերուն երկրորդն էր, մեկնած էր Ատանա, մօտաւորապէս 1909ին, գործ մը գտնելու նպատակով: Ատանա Կիլիկիոյ քաղաքաներէն մէկն է:

Հոն հաստատուելով հեռացած էր իր ընտանիքէն: Մայրը կարօտի տենչանքով ուզած էր Ատանա երթալ եւ այցելել տղան: Սակայն իր փոքր տղան՝ Գէորգը, միշտ միջամուխ եղած էր այս հարցին եւ կ'ուզէր անպայման ինք ալ մօրը հետ երթալ: Չենք գիտեր թէ արդեօք չէ՞ր ուզեր որ մայրը առանձին ճամփորդէր, թէ՛ ինք ալ կարօտցած էր եղբայրը: Սակայն օր մը, Գէորգ արթննալով նկատած էր մօրը մեկնումը Ատանա՝ առանց իրեն: Գէորգ, այն ատեն ութ տարեկան, շատ նեղուած՝ անիծած էր մայրը՝ «երթալդ ըլլայ, բայց վերադարձդ չըլլայ»: Զարմանալի հրաշք. Աստուած այդ պահուն լսած էր անմեղ Գէորգին անէծքը: Մայրը հիւանդանալով Ատանայի մէջ մահացած էր:

Գրեթէ վեց տարիներ ետք, Մովսէս վերադարձած էր Ատանայէն եւ Գէորգ իր հօր, քոյրերուն, եղբայրներուն եւ ամբողջ պարագաներուն հետ լեռ բարձրացած էր 1915ին:

Մեծմօրս միւս մեծհայրը եւ մեծմայրը՝ Յովհաննէս եւ Ծաղիկ Ճերէճեաններն են: Ունէին երեք զաւակներ, երկու աղջիկ եւ մէկ մանչ, որոնք ծնած էին Հաճի Հապիպլի գիւղը: Անդրանիկ զաւակն էր մեծմօրս մայրը՝ Մարին, որ ծնած էր 1903ին, իսկ կրտսեր աղջկան անունն էր Հեղինէ, որ ծնած էր 1907ին. մանչուն անունն էր Պետրոս, որ կրտսերն էր տունին:

Համաշխարհային Ա. Պատերազմին, երբ Երոպան զբաղած էր պատերազմով, ոսմանեան կառավարութիւնը

առիթը օգտագործեց պատերազմելու արեւմտահայութեան դէմ: Սուետիա ալ զոհ գնաց այդ պայմաններուն:

Ժողովուրդը անակնկալի եկաւ: Մաս մը որոշեց երթալ գաղթականութեան, Սուրիոյ անապատները մինչեւ Տէր Չօր, իսկ մաս մը լեռ բարձրանալով ապստամբեցաւ: Յովհաննէս Ճերէճեան եւ իր եղբայրները ընդառաջելով օսմանեան կառավարութեան զօրակոչին, 1914ին զինուորագրուելով մաս կազմեցին Թուրքիոյ բանակին: Լքելով իրենց ծննդավայրը հեռացան, բայց երբեք չվերադարձան:

Միւս կողմէ, Ծաղիկ Ճերէճեանը իր երեք զաւակներով լեռ կը բարձրանայ, հետեւելով ժողովուրդին: Մարի, որ հազիւ տասներկու տարեկան էր, շատ յուզուած էր թէ ինչպէ՛ս պիտի ձգէր իր լաթէ շինուած պուպրիկը: Բայց մայրը կը խրատէր թէ պէտք էր եղբօրը շորերը շալկէր եւ մօրը օգտակար ըլլար, երբեմն փոքրիկն Պետրոսին հոգալու համար՝ ճամփորդութեան ընթացքին: Փոքրիկն Պետրոս, միքանի ամսուայ երեխայ, որ մօրը կուրծքէն կը սնանէր, տառապանքի այդ կարէն թունաւորուելով կը մահանայ լեռան գագաթին: Իսկ ուրիշ հարազատներ կը պատմէին թէ «աչքէ գնաց», որովհետեւ այնքա՛ն գեղեցիկ էր. ճերմակամորթ, կապոյտ աչքերով եւ շատ սիրուն:

Անցնինք մեծօրս: Դժբախտաբար մեծհայրս մահացած ըլլալուն չկրցայ տեղեկութիւն հաւաքել: Բարեբախտաբար մեծմօրս միտքը մնացած էր պզտիկ պատմութիւն մը:

Մեծօրս հայրը՝ Սիմոն Թեքէլեան, 1915ին զինուած է եւ ուզած է պաշտպանել Մարաշի եկեղեցին՝ դէմ դնելով Օսմանեան կառավարութեան: Սակայն, ան եօթ փամփուշտ ստանալով, այդ վիճակով եկած է Լիբանան: Եօթերորդ փամփուշտը մարմինին մէջէն հանած են Լիբանանի մէջ: Սակայն, ժամանակի ընթացքին այդ փամփուշտներէն մէկը թունաւորած է զինք եւ դարձած իր մահուան պատճառ:



ՊԱՏՈՒԻ ԶՈՒՆԵՐ

Պետրոս Թիւթինճեան

Ասկէ հարիւր տարի առաջ մեծմօրս մեծմօր ընտանիքը կ'ապրէր Էրզրումի հողերուն վրայ: 1915ին երբ թուրքերը տեղահան ըրին ժողովուրդը իրենց հողերէն, բնակարաններէն՝ ամբողջ գիւղի տղամարդերը գերի բռնեցին, մնացին կիները, որոնց մէջ կը գտնուէր մեծմօրս մեծմայրը: Ան մնաց մէկ զաւակով, որ մեծմօրս հայրն էր: Անոնք գաղթեցին, բայց ճամփան ան այնքան յոգնեցաւ, որ իր նորածին զաւակը ուզեց դնել երկու քարի արանքը եւ ձգել քալել, որովհետեւ այլեւս կարողութիւնը չունէր սնելու մանուկը: Յանկարծ այդ միջոցին թուրք զինուոր մը տեսնելով իրեն կը գոռայ. «*ուլան կեաւոր սէն ներտէ էօլէրսէն, օտրա պարապար օլտուն*», այսինքն՝ «դուն ուր որ մեռնիս, զաւակդ ալ հոն թող մեռնի»:

Ան առնելով իր զաւակը կը մեկնի Հալէպ, դպրոց մը կ'աշխատի եւ այդպիսով կրնայ սնել իր զաւակը:

Երբ մեծմօրս մեծմօր ամուսինը գերի բռնուեցաւ, թուրքերուն մէկ մասը սկսած էր աղջիկները հաւաքել տանիլ եւ անոնց պատուին անցնիլ: Բայց մեծմօրս մօրը մայրը յաջողեցաւ ազատիլ անոնց ձեռքէն, փախչիլ ախոռ եւ պահուրտիլ էշին տակ: Այն ժամանակ էշին վրայ կ'ըլլար երկար լաթ որուն տակը չէր երեւեր: Ան երեք օր հոն մնաց անօթի, յետոյ ստիպուեցաւ էշին աղտին մէջի ցորենները ուտել որ ապրի: Ետքը ան գաղթեց ուրիշ խումբի միանալով: Այդ խումբին մէջ կը գտնուէր Տէրհօր մը գեղեցիկ աղջիկը, որուն թուրք ձիաւոր մը կու գայ եւ կ'ըսէ. «ի՞նչ կը քալես, եկուր ձիուն վրայ հեծիր, որ չյոգնիս»: Աղջիկը առանց անդրադառնալու՝ կը նստի ձիուն: Թուրքը զինք տանելով

լերան ետեւ կը պղծէ աղջկան, ու ետ բերելով կը նետէ իր գաղթող խումբին մէջ:

...1967ին ընտանիքէս մաս մը հաստատուեցաւ Լիբանան, իսկ մաս մը հոն մնաց, որոնք տակաւին չեն ճանչնար, եւ ոչ ալ տեսած են:



ԻՄ ՃԻՒՂԵՐՍ

Ժիրայր Թոսունեան

1915ի անմոռանալի Յեղասպանութեան, հայերուն կէսը ստիպուեցաւ արտագաղթել տարբեր երկիրներ, իսկ միւս կէսը սպաննուեցաւ: Ինչպէս ամէն հայ ընտանիք, իմ ընտանիքս ալ ապրեցաւ այս դժբախտութիւնն ու տառապանքը:

Իմ մեծմօրս ընտանիքը կ'ապրէր Ատանա. մեծմայրս տակաւին չէր ծնած: Ինքը ունէր չորս եղբայր՝ Պօղոս, Ստեփան, Ալպերթ եւ Ժիրայր: Ալպերթը իմ մեծմօրս պէս ծնաւ Թրիփոլի, արտագաղթելէն ետք: Ատանա կ'ապրէին իրենց մեծմայրը՝ Հռիփսիմէն եւ երկու եղբայրները: Մեծմօրս անունը Վերոնիքա էր, իսկ մեծհօրս անունը՝ Կիրակոս: Կիրակոսը հոջակաւոր վարորդ էր եւ ինքնաշարժ նորոգող:

Ջարդին մեծմօրս եւ չորս եղբայրներուն հայրը եւ մեծմայրը կրցան արտագաղթել. Հռիփսիմէին երկու եղբայրները նահատակուեցան: Արտագաղթողները հասան Իսքանտարուն, ուր ծնան Ժիրայրը ու Ստեփանը. Կիրակոս ծառայեց ֆրանսական բանակին որպէս հմուտ մեքենագործ: Տեղափոխուեցան Թրիփոլի, ուր ծնաւ մեծմայրս եւ եղբայրը՝ Ալպերթ: Այժմ, մեծմայրս Պէյրութ կը բնակի, Պօղոսը՝ Հայաստան, Ժիրայրը՝ Ամերիկա, Ալպերթը՝ մահացաւ:

Մեծհայրս իր քոյրն ու երկու եղբայրները ծնան Լիբանան: Իրենց մօր անունը Արուսեակ էր, հօր անունը՝ Սեդրակ: Արուսեակը եւ Սեդրակը կ'ապրէին Հաճըն. Սեդրակ ուսուցիչ էր: Ջարդի ժամանակ դժուար պայմաններէ ազդուած, ստիպուեցան ձգել իրենց հողը, հայրենիքը, տունը եւ տեղափոխուիլ Պէյրութ: Ժիրայրը աշխատեցաւ Էշրեֆիէի որբանոցի մէջ, նաեւ՝ Ազունիէի Բուժարանը: Մեծհայրս *Նայիրի* թերթը հրատարակեց մինչեւ իր մահը՝ Նոյեմբեր 2013:



ԸՆՏԱՆԻՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մարիա Թորոսեան


Այս շարադրութեամբ հակիրճ պիտի ներկայացնեմ իմ ընտանիքիս պատմութիւնը: Այս աշխատանքը ինծի համար եւ վստահ ուրիշներու համար հաճելի պրպտում մըն է, որու միջոցով ա՛լ ատելի տեղեկացայ իմ ընտանիքիս պատմութեան:

Հօրենական ընտանիքս ապրած է Տէօրթ Եոլ, որ յայտնի եղած է նարնջենիներով: Մեծհայրս՝ Պետրոս Տէօվլէթեան, կորսնցուցած էր հայրը՝ Բիւզանդ, կոտորածին: Մայրը՝ էլիզա Թախթաճեան, կը նախընտրէ լքել ամուսինէն ունեցած զաւակները եւ փախչիլ նոր ամուսինին հետ: Մեծհայրս կը բռնէ գաղթի ճամփան. իր խորթ եւ հարազատ եղբայրները՝ Կարապետը, Աւետիսը եւ Պետօն ու հարազատ քոյրը՝ Եղիսաբէթը, կը հաստատուին Հայաստան: Ան որք վիճակի մէջ Սանճաքէն կը հասնի Պէյրութ, կը հաստատուի Արագածի շրջանը, Պուրճ Համուտ:

Իր խորթ եղբայրը՝ Սիմոն եւ խորթ քոյրը Եղիսաբէթ որ զաւակներն էին Գէորգ Քէօշկէրեանի, կը հաստատուին Սուրիա: Մեծհայրս Պէյրութի մէջ կը դադրի Տէօվլէթեան կոչուելէ, որովհետեւ կ'որդեգրուի Թորոս Թորոսեանի կողմէ եւ կը դառնայ Պետրոս Թորոսեան:

Ան մօտաւորապէս 1933ին, այսինքն եօթ տարեկանին, կը լծուի աշխատանքի, դառնալով սափրիչ Պուրճ Համուտի մէջ: 1955ին Պուրճ Համուտի մէջ գնած է տուն մը “Ճիճի Յակոբ”էն: Ան ամուսնացած է Յասմիկ Գէորգեանի հետ 1 Յունիս 1952ին քեմի Սիսի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ: Անոնք ունեցած են հինգ զաւակներ: Հօրենական ընտանիքիս գրեթէ բոլոր անդամները մնացած են առանց ուսումի: Հօրաքոյրս՝ Աստղիկը, ստացած է իր ուսումը Վահան

Թէքէան Վարժարանին մէջ, իսկ հայրս նախ յաճախած է Թէքէան, ապա՝ Յովակիմեան: Ան յետագային ընտրած է ոսկերչութիւնը՝ որպէս ասպարէզ:



Մօրենական ընտանիքս մինչեւ Մարաշի աղէտը ապրած է Մարաշ: Մեծօրս՝ Անդրանիկ Կեցոյեանի մայրը՝ Սեման, ունէր էլմաստ անունով աղջիկ զաւակ մը իր առաջին ամուսինէն: Յեղասպանութեան օրերու զօրակոչին, անոր ամուսինն ալ կը մեկնի ու չի վերադառնար: Սեման

կ'ամուսնանայ Մարտիրոս Կեցոյեանի հետ, որմէ կը ծնին մեծհայրս՝ Անդրանիկը, եղբայրը՝ Սարգիս, քոյրերը՝ Լիտիա եւ Մարի: Մարաշի աղէտին, այսինքն 1921ին, մեծհայրս իր հօր եւ մօր հետ կը հասնի Լիբանան: Անոնք կը հաստատուին Պորճ Համուտ, սակայն հայրը կը հիւանդանայ եւ կը մահանայ: Սեման, իր զաւակները ստիպուած կ'ըլլայ գործի դրկելու երբ մեծհայրս դեռ վեց տարեկան էր: Ան կ'աշխատի կօշկակարի մը մօտ որպէս օգնական: Մօրենական ընտանիքս 1929ին ստացած է լիբանանեան հպատակութիւն:

Մեծհայրս քսան տարեկանին, 1941ին մեկնած է Պաղեստին՝ աշխատելու, ուրկէ վերադարձած է 1948ին, Իսրայէլի հիմնումէն ետք: Ան 1950ին գնած է կօշկակարի անձնական խանութ մը, 1952ին անձնական տուն, իսկ 1957ին ամուսնացած է Մարի Աւետիսեանին հետ որմէ ունեցած է չորս զաւակ: Մօրենական ընտանիքէս կարգ մը անդամներ հաստատուած են Հայաստան, սակայն մեծամասնութիւնը կը գտնուի ԱՄՆի մէջ: Մօրենական ընտանիքիս անդամները երբ Լիբանան հաստատուեցան՝ նպաստ ստացան Լիբանանի մէջ գործող “International Mission Pour les Refugies” հաստատութենէն, 1934-37ին: Շնորհակալութիւն կ'ուզեմ յայտնել օրին իր օգնութիւնը բերած հաստատութեան:



ԿԵԱՆՔԻ ԲՈԼՈՐ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԷՆ ԵՏՔ

Մեր Թորոսեան

Թրքական Տեղասպանութեան ակնատես եղած են մօրս մեծհայրը՝ Մկրտիչ Տէր Եագուպեան (Փանոսեան) եւ Չարուիի Իսաչատուրեան: Մկրտիչը 13 տարեկան էր, կը բնակէր Խառնի: Իր պարտականութիւնն էր գիւղէն հաց եւ կերակուր տանիլ հայկական կամաւոր ջոկատներուն:

Օր մը, երբ դարձեալ հաց կը տանէր, դիմացը կ'ելլեն թուրք զինուորները եւ այս հարցազրոյցը տեղի կ'ունենայ.-

- *Նէ թաշիյորսուն չոճուխ:*

- *Քէօյէ էքմէք կէօթիրիյորում:*

- *Աէն եալան սէօյիյորսուն սէն էրմէնի չեթէլէրէ էքմէք վէ սիլահ թաշիյորսուն:*

- *Վալլահ քէօյէ կէօթիրիյորում:*

- *Թութութլային օնու, քոմանտանա կէօթիրին:*

Եւ բռնելով զինք կը տանին մեծաւորին քով, որուն քով կը գտնուէր մեծ խան մը: Խանին տէրը երբ կը տեսնէ մեծհայրս, դրամ վճարելով կը գնէ զինք:

Միքանի շաբաթ ետք խանին դուռը կը զարնեն թուրք զինուորները եւ ետ կ'ուզեն մեծհայրս. «քոմանտան տետրի քի կերի վերէճէքսըն կեաւորու»:

- *Պենին իւչ օղլում վար օնլարը վերիրիմ ամմա օ օղլան սիզէ վերմէմ: Կետին պէօյլէ տէյին քոմանտանընըզա:*

Զինուորները կը հեռանան հայիոյելով: Իսկ խանին տիկինը մեծօրս աղջկայ հագուստ կը հագցնէ եւ հաց ու ճաշ պաշար տալով կըսէ. «պու եոլտան կիթ էրմէնլէրի պուլարսըն»: Մեծհայրս այդ ճամփան կը բռնէ կ'երթայ:

Միքանի օր քալելէ ետք կը հանդիպի գաղթական հայերու եւ կը միանայ անոնց: Անոնք տեսնելով ձեռքի

պաշարը կը յարձակին եւ կ'առնեն պաշարը, քանի որ անօթի էին: Միքանի օր ետք թուրք ջոկատ մը կը գտնէ իրենց եւ կը սկսին զատել կիները ծերերէն, տղամարդիկը զատ, պզտիկները զատ: Այդ պահուն մեծհայրս կը տեսնէ որ իր մտերիմ բարեկամը իրենց խումբին մէջն է:

Կը սկսի կոտորածը. իր բարեկամը կացինի հարուած կը ստանայ գլուխէն: Բոլոր էրիկ մարդիկը կը սպաննեն, երիտասարդ կիները կը չարչարեն, կ'անպատուեն: Ծեր կին մը արագ մը ցեխ կ'առնէ գետնէն եւ կը քսէ մեծօրս երեսին՝ «այսպէս տգեղ կ'երեւիս, քեզի բան մը չեն ըներ», կ'ըսէ: Երբ մեծհայրս կը տեսնէ թէ զինուորները զբաղած են՝ ճամփուն ծայրը, մեռելներուն տակը կը պահուրտի: Իր աչքերով կը տեսնէ թէ ինչպէս կը կոտորեն բոլորը, ձգելով միայն ծերերը եւ տգեղ փոքրիկներու մէկ մասը: Միւս մասը կ'առեւանգեն իրենց մեծաւորին տանելու համար...: Գիշերը մնացածները կը սկսին քշել անյայտ ուղղութեամբ:

Ան այդպէս անշարժ կը մնայ մինչեւ ջոկատին հեռանալը, ապա լուսնի լոյսին տակ կը վազէ նայելու իր ընկերոջ եւ կը տեսնէ թէ ողջ է ան: Ուսին շալկելով ընկերը կ'ուղղուի մօտակայ քրտական գիւղը: Բաւական քալելէ ետք կը հասնի առտուան դէմ եւ հանդիպած առաջին դուռը կը զարնէ որ օգնութիւն խնդրէ: Տանտիրուհին՝ տարիքոտ կին մը, զիրենք ախոռ կը տանի եւ կը հասկցնէ որ հոն իրեն սպասեն ու կը մեկնի տուն: Տասը վայրկեան ետք կը վերադառնայ խմոր շաղած, քիչ մը հաց եւ ջուրով կը սկսի խնամել վիրաւորը. խմորը դնելով գլխին վերջին՝ կը կապէ, ապա հաց ու ջուր տալով իրենց կ'ըսէ «*պենիմ քոճամ տա օնլարտան լութֆէն պու եոլտան կիտին չիւնքի պիրազտան օ տիժնէր...*»:

Մեծհայրս բարեկամին ձեռքը մտած կը հեռանայ այդտեղէն կիսին ըսած ճամփայէն:

Միքանի օրերէ ետք, քաղցած ու ծարաւ գետին կ'իյնան ուշակորոյս: Երբ աչքերնին կը բանան ինքզինքնին կը գտնեն սենեակի մը մէջ. ապշած իրարու երես կը նային...:

Դուռը կը բացուի եւ ներս կը մտնէ տանտէրը եւ կ'ըսէ որ չվախնան՝ ապահով տեղ են: Բաւական կազդուրուելէ ետք, տանտէրը կ'առաջարկէ որ իր զաւակը ըլլայ եւ բարեկամին ալ հովիւութեան պաշտօնը տայ: Երկուքն ալ կ'ընդունին մարդուն ըսածը: Մէկ շաբաթ ետք, տանտէրը կ'ըսէ մեծօրս թէ որպէսզի կարենան պահել զիրենք, պէտք է իրենք թլփատուին: Մեծհայրս կը մտածէ. եթէ ոչ ըսէ՝ կրնան զիրենք գերի պահել, մեծհայրս կ'ընդունի, սակայն երբ գիշեր կըլլայ, առանց ձայնի բարեկամը առնելով կը փախչին այդ վայրէն: Ընկերը լաւ գիտէր լեռնային ճամփան: Երկու օր ետք, կը միանան հայ գաղթականներուն եւ անոնց մէջ մեծհայրս կը գտնէ մօրաքոյրը եւ միասին կը հասնին Սուրիա եւ հոնկէ կ'անցնին Լիբանան, Քարանթինայի քեմփը:

Կեանքի բոլոր չարչարանքներէն ետք, մեծհայրս կը սկսի աշխատիլ: Միքանի տարիներ ետք, կը բանայ փոքրիկ կրպակ մը եւ կը սկսի տուփեղէններ, ծխախոտ, հաց ծախել: Երբ ան 25 տարեկան կ'ըլլայ, մօրաքոյրը զինք կ'ամուսնացնէ մեծմօրս՝ Զարուհիին հետ:

Ատանայի ջարդին ժամանակ մեծմայրս երկու տարեկան փոքրիկ էր, կորսնցուցած էր հայրը եւ մայրը. հօրաքոյրը զինք մեծցուցած էր:

Մեծհայրս եւ Զարուհին կ'ունենան եօթ աղջիկ եւ երկու տղայ: Մեծ տղան՝ Յակոբ Փանոսեան՝ քեմփի ոտնագնդակի խումբի անդամներէն մէկը, զոհ կ'երթայ թուրքի մը դանակին: Թուրքը ու՛ր ալ ըլլայ, ո՛ր ժամանակ ալ ըլլայ, վայրագ է եւ մարդասպան:

Երբ Լիբանան եկած էր մեծհայրս, ան չէ կրցած իր մականունը գրել արաբերէն, այդ պատճառով ալ «Փանոսեան» եղած է:



ԻՄ ԸՆՏԱՆԻՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Քրիստին Թորոսեան

Պուրսայէն արքայազն, ահա կը գտնուինք Լիբանանի մէջ: Ինչպէս գիտենք, Յեղասպանութենէն ետք հայերը ցրուեցան զանազան արեւելեան թէ արեւմտեան երկիրներու մէջ ուր կազմեցին նոր գաղութներ:

Եղեռնէն շատ մը հայեր ազատեցան. անոնցմէ մէկն է մեծօրս հայրը: Ան շատ բախտաւոր անձ մը եղած է իր կեանքին ընթացքին, որովհետեւ ընտանիքին միակ անդամն էր, որ կարելիութիւնը ունեցաւ փախչելու տառապանքէն: Ընտանիքի միւս անդամները, դժբախտաբար զոհուեցան եւ չարաչար սպաննուեցան եղեռնի ընթացքին, անապատը:

Մեծօրս հայրը եղած է Պուրսայէն, բայց ապրած է Լիբանան, որովհետեւ արքայէն ետք հասած է Լիբանան: Ան տէր դարձաւ չորս զաւակներու որոնցմէ մէկն է իմ մեծհայրս:

Եղեռնէն ետք ոմանք շարունակեցին իրենց սովորական նախկին գործը եւ ոմանք նոր գործերու դիմեցին: Իմ մեծհայրս ճամփորդական գրասենեակի մը պաշտօնեայ էր: Հօրս արհեստն է ձուլագործութիւն: Ան նաեւ իր գործերու կողքին եղած է քարոզիչ եւ մինչեւ այսօր Աստուծոյ խօսքը կը փոխանցէ:

Մայրս եւ մեծմայրս եղած են ուսուցչուհիներ: Չորս տարիներու դասաւանդութենէ ետք, մեծմայրս որոշած է տանտիկինութեամբ զբաղիլ եւ իր թոռնիկներուն հետ ժամանակ անցընել: Ան նաեւ սիրահար է ընթերցանութեան եւ զրուցելու՝ հին օրերու մասին: Ան մինչեւ այսօր մեր տան սուրբն է: Մայրս երբ ամուսնացաւ, դադարեցուց իր աշխատանքը եւ հօրս ընկերակցութեամբ հաստատուեցաւ Հալէպ, Լիբանանի պատերազմին պատճառաւ, 1988ին:

Հալէպի մէջ անոնք ունեցան երեք զաւակներ՝ ես եւ քոյրերս: Հայրս եւ մայրս Հալէպը վայելեցին քսանչորս տարիներ: Ես իմ մանկութիւնս անցուցած եմ Հալէպ. երիտասարդութիւնս հոն չապրած՝ փոխադրուեցանք Լիբանան 2012ին, Սուրիոյ պատերազմին պատճառաւ:

Պէյրութ... մայրս վերսկսաւ իր ուսուցչութեան ասպարէզին, նոյն վարժարանը դասաւանդելով: Պէյրութի մէջ հայրս կը զբաղի ձուլագործութեամբ:

Լսած ենք, թէ շատ մը հայկական ազգանուններ փոխուած են հետեւեալ պատճառով. երբ հայերը աքսորէն հասան եւ բաժան-բաժան եղան արաբական երկիրներու մէջ, արաբ կառավարական պաշտօնեաներ չեն կրցած գրել կամ հնչել հայկական անունները եւ մականունները. Մեր պարագային, այսպիսի դէպք մը չպատահեցաւ:

Մեր ընտանիքէն ներս խառն ամուսնութիւններ եղած չեն:

Շատ տարիներ առաջ, մեր ընտանիքի մէկ անդամը այցելեց Պուրսա, տեսնելու համար հայկական, պապենական ծննդավայրը: Այնտեղէն իր հետ բերաւ իւրաքանչիւր ընտանիքի մէկական յիշատակ: Մեզի բերաւ աման մը որպէս Պուրսայի յիշատակ: Այդ ամանը մեծմօրս համար մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ երբ այդ ամանը տեսնէ կը վերյիշէ հին օրերը:

1918ի շրջանին մեծօրս հօրը ընտանիքը նախ հաստատուեցաւ Ջահլէ, որոշ ժամանակ մը ետք՝ Պէյրութ: Պէյրութ հաստատուելէ ետք, Հաճըն կոչուած թաղամասէն փոխադրուեցան մօտակայ Ժեիթաուի շրջանը: Այդ տան մէջ մեծհայրս եւ մեծմայրս բնակեցան յիսուն տարիներ: Իսկ մենք որ Հալէպ կը բնակէինք, ստիպուեցանք վերջին երեք տարիները միանալ մեծօրս եւ մեծմօրս: Մինչեւ այսօր կը բնակինք Պէյրութի մէջ հանդերձ գերդաստանօք: Բոլորս ալ հետաքրքրուած ենք հայկական հարցերով:

Եթէ ես պապերուս ծննդավայրը ապրէի, առաջին քայլս պիտի ըլլար հայկական դպրոցներ հիմնելու առաջարկը

յայտնել, որպէսզի հայօրէն մեծնան մեր զաւակները, իսկ յետոյ՝ հայկական շրջանակներուն մաս կազմելով զարգացնել հայկական մշակոյթը՝ պար, երգ, երաժշտութիւն, գծագրութիւն եւ ուրիշ որեւէ արուեստ՝ հայ մանուկին հոգւոյն մէջ: Սորվեցնեն հայերէն, խօսիմ հայերէն, դիտեն եւ գիտնամ հայերէն...:

Հայ մանուկին իրաւունքն է զարգանալ, խնդալ, ուրախ ըլլալ, ուրախացնել, սիրել, սիրուիլ: Այս դարուն մտային զարգացումը յառաջացած է եւ շատ կարեւոր է: Մենք՝ հայերս, կարող ենք ունենալ բազմաթիւ գիտելիքներ, պրպտելով եւ գիրք կարդալով: Միայն օտարը չէ որ կրնայ պահանջել, շինել, ստեղծել. մենք ալ կրնանք ամէն բան ընել: Ամէն հայ պէտք է ազատութիւնը ունենայ իր իրաւունքը պահանջելու:

Մէկուկէս միլիոն զոհերու եւ մեր Հայ Դատի իրաւունքները կը պահանջենք: Պիտի չմոռնանք թուրքերուն այս անգութ վերաբերմունքը հայերուն հանդէպ. պիտի յիշենք ու պիտի տարածենք այդ մասին բոլոր աշխարհին:



ԻՄ ԸՆՏԱՆԻՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մոնիքա Թովմեան

Մեծհայրս եւ ընտանիքը կ'ապրէին Կիլիկիա, Այնթապ: Մեծհայրս եւ մեծմայրս զաւակ չունէին երբ գաղթեցին: Անոնք Կիլիկիայէն քալելով եկած են Տէր Զօրի անապատը, բայց ի'նչ դժուարութեամբ... իմ մեծմայրս երեսը ծածկած է, կաւ եւ մուր քսած: Ծպտուելով հասած են Հալէպ եւ հոն հաստատուած: Մեծմօրս հայրը սափրիչ էր: Այդ գործը շարունակուեցաւ մինչեւ երկու մանչ զաւակ ունեցան եւ մեծհայրս ինք եղաւ սափրիչ: Մեծօրս եղբայրը ձուլագործ էր:

Երբ մեծհայրս եւ մեծմայրս սահման հասած են, հոն հարցուցած են, թէ ի'նչ է ձեր ազգանունը: Մեր ազգանունը եղած է Դանիէլեան, բայց քանի որ մեծօրս մեծհայրը դէմքին վրայ պզտիկ-պզտիկ փոսիկներ ունեցած է, անոր համար *չոփուր* ըսած են: Չոփուրը դարձաւ Չափարեան եւ շարունակուեցաւ այս ազգանունը:

Ահաւասիկ կը գրեմ իմ մօրս եւ մեծօրս ընտանիքին մասին, որ ազատած են Յեղասպանութենէն: Երբ կը սկսի ամէն օր նոր չար լուրեր լսուիլ իրենց ապրած վայրին մէջ՝ Այնթապ, եւ վախ տարածուիլ, մեծմայրիկը՝ Աննա Չափարեան, ունէր երկու զաւակ՝ Գէորգ եւ Աննա (իր մօր անունով, որովհետեւ մայրը ծննդաբերելէն ետք մահացած էր): Ինք փոքր եղած ատեն հայրիկը երկրորդ ամուսնութիւնը կ'ընէ Զարուհի անունով աղջկայ մը հետ: Ան ալ մանչ մը ունեցած էր՝ Գրիգոր:

Գէորգ ամուսնացած էր, իր ծնողքը ամբողջութեամբ կորսնցուցած 13 տարեկան Տիրուհիին հետ, որ կը մնար իր քեռիին քով: Ան տակաւին ամուսնութեան անպատրաստ էր, բայց որպէսզի թուրքերուն ձեռքը չմնայ, կ'ամուսնացնեն զինք

Եւ երկիրը ւելի վատ դառնալուն պէս ծնողքը շուտ մը կ'ուզէ հեռացնել թուրքերուն ձեռքէն: Մեծհայրիկս միջոցներու դիմելով Սուրիա կը հասցնէ զանոնք: Շատ նեղութիւններու հանդիպելով կը հաստատուին Հալէպի հրէական թաղամասը, շատ պզտիկ տան մը մէջ, թէեւ - ինչքան որ մայրս լսած է իր մեծմօր եւ մեծհօրմէն - մեր գիւղը իրենք կ'ապրէին շատ մեծ, աղուոր տուն մը, պիստակի ծառերով, տան առաջ՝ խոշոր թութի ծառ մը: Իսկ հիմա՝ հրեաներու թաղամասէն պզտիկ տան մէջ. հոն կը մնան ժամանակաւոր, կ'ունենան իրենց առաջին զաւակը, որ կոչած են իր մեծհօր անունով՝ Սարգիս:

1922էն ետք կը տեղափոխուին Հալէպի Սուլէյմանիէ թաղամասին քամփը, ուր շատ հայեր կ'ապրէին: Մեծ մայրիկս երկրորդ մանչ մըն ալ կ'ունենայ, անունը՝ Խաչատուր: Մանչերը կը մեծնան, Հալէպի ւետարանական Բեթէլ վարժարան կը յաճախեն: Տարիներ ետք, մեծհայրիկը Հալէպի Էշրեֆիէի մէջ տուն կը շինէ եւ հոն կը հաստատուին: Նաեւ խանութ ալ կ'ունենայ տան կողքին: Սարգիս կը սկսի իր հօրը հետ աշխատանքի լծուիլ 14 տարեկանին: Տարիներ կ'անցնին եւ երիտասարդ կը դառնայ, կ'ամուսնանայ եւ մեծ ընտանիք կը կազմէ: Աղջիկ մը եւ երկու տղայ կ'ունենայ, տարիներ ետք կը դառնայ Էշրեֆիէի թաղապետ եւ կը ծառայէ 25 տարի:

Հիւանդութեան պատճառով կը մահանայ 66 տարեկանին: Իր պզտիկ եղբայրը՝ Խաչատուր, որուն Խաչիկ կ'ըսէին, ամուսնացած եւ ունեցած երկու մանչ եւ մէկ աղջիկ: Երկու եղբայրները իրենց զաւակները կ'ամուսնացնեն եւ թոռներու տէր կ'ըլլան: Թոռներէն մէկը ես եմ:

1922ին ծնած է մեծհայրս: 1962ին ընտրուած է թաղապետ Հալէպ Տաուտիէ Աշրաֆիէ թաղամասի:

Անշուշտ մենք Հալէպ կ'ապրէինք մինչեւ 2013, բայց պատերազմի պատճառով Լիբանան փոխադրուեցանք:

Մենք երեք քոյր էինք, կ'ուսանէինք: Հոս քոյրերս կ'աշխատին, միայն ես եմ որ ուսումս կը շարունակեմ:

Այսօր մենք Լիբանան կ'ապրինք մեր ընտանիքին անդամներուն հետ միատեղ, բայց գերդաստանիս անդամներէն մաս մը Երոպա գնաց, միւս մասն ալ Սուրիա կը գտնուի: Անշուշտ քանի հայ ենք, պէտք է որ մեր հայկական հարցով զբաղինք: Հայ ենք եւ հայ ալ կը մնանք եւ մեր ազգը կը շատցնենք:

Մեր ընտանիքին մէջ խառն ամուսնութիւն չէ եղած: Ունինք Այնթապի ասեղնագործ, քանի որ Այնթապի մէջ ապրած են մերինները: Մեծմայրս աշխատած է եւ մինչեւ այս օրը պահած ենք իբր յիշատակ:

Մեր ծգտումն է աւելի լաւ եւ հանգիստ կեանք ապրիլ եւ մեր ուսումը աւելիով յառաջացնել, ըլլալ մէկ սիրտ մէկ հոգի, ուր ալ երթանք, բոյն շինենք եւ մեր հայրենիքին անունը բարձր պահենք:



ԸՆՏԱՆԻՔԻՍ ՄՕՏ ՈՉ ՄԷԿ
ԱՌԱՐԿԱՅ ԿԱՅ ՄԵՐ
ՆԱԽՆԻՔՆԵՐՈՒՆ ԵՐԿՐԷՆ
Գարին Խաչերեան

Ընտանիքիս հորենական շառաւիղը կը սեռի Կիլիկիոյ Ատանա քաղաքէն: Ատանան Կիլիկիոյ վաճառաշահ մեծ քաղաքներէն մէկն էր, ուր կը գտնուէր շրջանի նահանգապետարանը:

Ատանայի դաշտավայրերը կ'ոռոգէին Սիհուն եւ Ճիհուն գետերը, եւ այդ պատճառով ալ Ատանան ջրառատ էր, ունէր բերրի հող, որով ան նշանաւոր էր բամպակի արտադրութեամբ, եւ դարձած էր վաճառականական կարեւոր կեդրոնը շրջանի քաղաքներուն եւ գիւղերուն:

Մեծօրս հայրը՝ Յովսէփ Խաչերեան կը զբաղէր շինարարութեամբ: Ատանայի կոտորածին՝ իր ընտանիքի բոլոր անդամները զոհուած են եւ միայն ինք ազատած է: Աւելի յետոյ ամուսնացած է ատանացի աղջկայ մը հետ, որ նոյնպէս կորսնցուցած էր իր ընտանիքի բոլոր տղամարդիկը եւ ջարդերէն հրաշքով ազատած:

Մեծօրս հայրը Ատանայէն հասած է Լիբանան եւ հաստատուած Ալէյ գիւղաքաղաքին մէջ: Հոն ան շարունակած է շինարարութեամբ զբաղիլ եւ շնորհիւ իր վարպետութեան, շրջանին մէջ շինած է բնակարաններ, գործատեղիներ: Իր շինած շէնքերէն կը յիշուի շրջանի յայտնի մարդոցմէ Ասաստ Պէյի վիլլան:

Մեծհայրս՝ Սարգիս Խաչերեան ամուսնացած է սեբաստացի Գեղամ Գաբրիէլեանի եւ ատանացի Մարի Սահակեանի աղջկան՝ Սեդա Գաբրիէլեանի հետ: Մեծմայրս իր Արմենակ եղբօր հետ միասին իրենց հօրմէն ժառանգած են շինարարութեան արհեստը եւ դարձած նոյնքան վարպետ շինարարներ, եւ Ալէյէն Պէյրութ փոխադրուելով իրենց

կարգին կատարած են բաւական շինութիւններ, որոնցմէ կը յիշուի մօտիկ անցեալին ծանօթ Chevrolet ինքնաշարժի ընկերութեան շէնքը:

Շինարարութեան արհեստը շարունակուած է մեր ընտանքին մէջ: Հայրս՝ Յովսէփ Խաչերեան (որ ամուսնացած է պրուսացի Դաւիթ Մինասեանի եւ սերաստացի Լուսին Գրիգորեանի աղջկան՝ Թամար Մինասեանի հետ) եւ հօրեղբայրս՝ Աթանաս Խաչերեան եւս ժառանցած են այդ արհեստը եւ կը շարունակեն շինարարութիւնը այստեղ եւ վերջին տարիներուն՝ Հայաստանի մէջ: Ծնողքս մէկէ աւելի բնակարաններ փոխադրուած է:

Հօրենական ընտանիքիս նախնիքներուն մականունը եղած է Աստուրեան: Ընտանեկան յուշերուն մէջ կը պատմուի, թէ հայերուն Լիբանան հասնելէն ետք, Ալէյ գիւղաքաղաքի մէջ հաստատուած հայերու արձանագրութեան ատեն պետական պաշտօնեան հարցուցած է մեծօրս հօրը՝ Յովսէփ Խաչերեանին, թէ ինչ է հօրը անունը, ան ալ պատասխանած է՝ «Խաչեր», ու պաշտօնեան արձանագրած է Խաչերեան: Բայց մեծօրս Ալէյի Ազգային Վարժարանի դասընկերը ինք զարմացած է հօրեղբօրս՝ Սրբազանին, թէ հօրը մականունը Աստուրեան էր դպրոցին մէջ, ինչպէ՞ս Խաչերեան եղաւ:

Ընտանիքիս մէջ օտար ամուսնութիւններ չեն եղած եւ ուրախ եմ որ մինչեւ հիմա չկայ եւ կը կարծեմ որ պէտք չէ ալ ըլլայ, քանի որ մենք հայ ենք, ինչպէս որ հօրեղբայրս՝ Գեղամ Սրբազանն ալ մեզի միշտ կ'ըսէ, որ ամուսնութիւնը անձնական փափաք-նախընտրութիւն չէ միայն, այլ նաեւ ազգային պարտաւորութիւն: Այսինքն, ամէն հայ պէտք է հայկական ամուսնութիւն ընէ, որպէսզի ընտանիքը մնայ հայկական արմատներով եւ նոր սերունդները ամբողջութեամբ հայկական դաստիարակութիւն առնեն եւ ժառանգեն հայկական ազգային բոլոր սովորութիւնները եւ

ոգին, մանաւանդ որ մենք կ'ապրինք սփիւոքի մէջ եւ շրջապատուած ենք ոչ-հայկական միջավայրերով:

Ընտանիքիս անդամները կ'ապրին Լիբանան եւ բնականաբար հայեցի դաստիարակութեան իբրեւ բնական հետեւանք բոլորն ալ զանազան ձեւերով կը մասնակցին ազգային կեանքին:

Մեծօրս հայրը գաղթական ըլլալով հազիւ ինքզինք ազատած է ջարդերէն, անոր համար ալ ընտանիքիս մօտ ոչ մէկ առարկայ կամ յիշատակ կայ մեր նախնիքներուն երկրէն:

Այս տարի Հայկական Յեղասպանութեան հարիւրամեակն է, բոլորս ալ տխրութեամբ կը յիշենք այն երկիրը, ուր մեր պապերը կ'ապրէին: Մեր ընտանիքներէն ներս եւ հայկական վարժարաններուն մէջ մեր դաստիարակները մեզի կը պատուիրեն, որ մենք իբրեւ նոր սերունդ պէտք է շարունակենք պահանջել աշխարհէն մեր իրաւունքները: Անշուշտ շատ բաներ լսած ենք մեր պապերուն գեղեցիկ երկրին մասին՝ ընտանիքի յուշերէն կամ ալ աշխարհագրութեան դասերէն: Եթէ հոն մնայինք, անշուշտ բոլոր հայերը տէր պիտի ըլլային իրենց հողերուն, կալուածներուն եւ ով գիտէ ամէն մէկս ինչ պիտի ընէր, բայց վստահաբար պիտի շարունակէինք իբրեւ նոր սերունդներ՝ մեր նախահայրերուն պէս ապրիլ խաղաղ եւ շէնցնել, զարգացնել ու ծաղկեցնել մեր ապրած երկիրը:

Ընտանիքիս կողմէ կ'ուզեմ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ուսանողներու Խմբակցութեան այս գեղեցիկ մտածումին համար:



ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ՝ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԵՀ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Թամար Կանիմեան

Սիսը մայրաքաղաքն է Կիլիկիոյ Հայկական Թագաւորութեան եւ կաթողիկոսութեան: Ան կը գտնուի հարաւը ներկայ Թուրքիոյ Ատանայի Նահանգին:

Հոն կ'ապրէր արի եւ հայրենասէր մարդ մը՝ Կարապետ Գալայճեան, ծնած 1891ին: Ան ճանչցուած էր իր քաջ բնաւորութեամբ եւ զօրաւոր ֆիզիքական յատկանիշերով: Պահպանած էր իր գիւղը թշնամի զօրքերէն: Կարապետ ունէր իր զէնքը, որպէսզի կրակէր, երբ թշնամին վնաս հասցնէր իր գիւղին:

1915ի Հայոց Ցեղասպանութեան շրջանին, 24 տարեկանին, Կարապետը պահուրտած է անտառներու մէջ, օրերով քնացած ծառերու վրայ, ականատես դարձած է թուրքերուն կատարած վայրենի ջարդերուն: Ան գաղտնի մտած է զինուորական կեդրոնները, որպէսզի սպաննէ այս ջարդերուն ղեկավարները: Կարապետ ականատես դարձած է իր ծնողքին սպանութեան: Իր ընտանիքէն փրկուած է միայն պզտիկ եղբայրը՝ Սարգիսը:

Մեծմօրս պատմածներէն գիտցայ, որ Կարապետ շաքար մը տուած է թուրք փոքրիկի մը, որպէսզի ցոյց տայ թուրք ղեկավարին կեդրոնը: Ան կ'ըսէր. «փոքրիկները շատ դիւրին կը խաբուին»:

Բաւական երկար ճամփորդութենէ ետք ճամփան Սարգիս եւ Կարապետ իրար կը կորսնցնեն: Կարապետ կը բանտարկուի թուրք զինուորի մը կողմէ, քանի որ հայ է: Սակայն, ան գիտէր քրտերէն եւ թրքերէն: Խօսելով զինուորին հետ, ինքզինք թուրք ձեւացնելով, կ'ազատի

բանտէն: Կ'անցնի սահմաններ եւ կը մտնէ Սուրիա, ապա՝
Լիբանան, ուր կը հաստատուի:

Լիբանանի մէջ նախ կը փնտռէ իր եղբայրը: Վերջապէս
կը գտնէ Սարգիսը լքուած՝ որբանոցի մը մէջ:

Կարապետ կը կազմէ իր ընտանիքը, ամուսնանալով
Եղիսաբէթ Տէօվլէթեանի հետ 1920ին, 29 տարեկանին:

Եղիսաբէթն ալ ուժեղ էր, իրեն պէս պայքարած է
թուրքերուն դէմ, հայերու կողքին: 1924ին կ'ունենայ զաւակ
մը՝ Գրիգոր: Կարապետ իր ընտանիքին ապրուստը
կ'ապահովէր ծախելով տաբատներ, որոնք իր կոնակին վրայ
կը կրէր ու կը քալէր երկար ճամփաներ:

33 տարեկանին ան կը սկսի սորվիլ հայերէն՝ կարդալով
թերթեր, լսելով ձայնասփիւռ եւ մասնակցելով ակումբի
ժողովներուն: Օր մը՝ ժողովի ընթացքին, ընկեր Կարո
Սասունի հարցումներ կ'ուղղէ ներկաներուն: Կարապետ,
յանկարծ կը վերցնէ իր ձեռքը եւ կու տայ հարցումին
պատասխանը՝ հայերէնով: Կարո Սասունի ապշած հարց կու
տայ. «դուն ո՞ւր էիր մինչեւ հիմա, ընկեր Կարապետ, ինչո՞ւ
չէիր պատասխաներ հարցումներուն»: Կարապետ կ'ըսէ.
«ընկեր Սասունի, ես մինչեւ հիմա երեխայ էի»:

Բայց Կարապետ բնաւ չի մոռնար իր թշնամիին լեզուն: Ան
յաճախ կ'ըսէր իր շուրջիներուն. «շատ կարեւոր է թշնամիին
լեզուն գիտնալը, սակայն ւսելի կարեւոր է գիտնալ զայն ե՛րբ
եւ ո՛ւր գործածելը»:

Սակայն 1969ին Կարապետ կը կորսնցնէ իր միակ
զաւակը՝ Գրիգորը: Ան կը մնայ մինակ իր հարսին եւ երկու
թոռներուն հետ:

Մեծմայրս եւ մայրս կը նշեն, թէ Կարապետը ճանչցուած է
իբրեւ ՀՄԸՄի հայրիկը, քանի որ ոտնագնդակի խաղերու
ժամանակ ան երիտասարդները դաշտ կը մտցնէր առանց
մուտքի գումարի: Իսկ յաղթանակի ժամանակ զինք կը
շալկէին եւ կը դարձնէին դաշտին վրայ: Կարապետը, ունէր
խանութ մը թաղին ծայրը, ուր ամէ օր, առանց յոգնելու

կ'իջնէր: Այդ խանութին փակցուցած էր գրութիւն մը. «թրքերէն խօսողին հայերէն պատասխանէ»: Ան կ'այպանէր թրքերէն խօսողը եւ կ'ըսէր՝ «ինչո՞ւ չէք սորվիր եւ խօսիր մեր մայրենի լեզուն՝ հայերէնը»: Կարապետ մեզի այցելող ամէն մէկ հիւրին կը պատմէր Յեղասպանութենէն. եւ այդ հիւրը պարտաւոր էր լսել իրեն:

Կարապետ շատ կը սիրէր իր հայրենիքը՝ Հայաստանը: Իր միակ փափաքն էր այցելել Հայաստան: Ան մարմնապէս եւ հոգեպէս կապուած էր իր հայրենիքին: Ան նեղութիւն կը զգար, երբ գէշ բան մը պատահէր Հայաստանի մէջ, եւ ուրախութիւն կը զգար, եթէ լաւ բան մը պատահէր հոն:

Սակայն, Կարապետ կը մահանայ առանց տեսնելու իր հայրենիքը, 1991ին՝ 100 տարեկանին, իր ետին ձգելով յիշատակներ եւ մեծ փաստեր:

Կարապետ եւ իրեն պէս շատերը դարձած են հերոսներ մեր հայ ազգին: Անոնք մեզի ժառանգած են Հայ Դատը: Անոնք մեր ուսերուն ձգած են մեծ պարտականութիւն մը:

Այս տարի Յեղասպանութեան 100ամեակն է, եւ մեզմէ կը պահանջուի չյուսահատիլ եւ պահանջել մեր իրաւունքները: Մենք պէտք է շարունակենք մեր Դատը եւ հպարտանանք մեր հայ ինքնութեամբ:



A WORTHY GENOCIDE WITNESS STORY

Salpy Ganimian

The Armenian Genocide is marked as the first big crime against humanity in the 20th century. It is at the same time the tragic opening of the 1900s and a future prediction of what mankind will face: two massive world wars. It constitutes the ugliest and the most horrible example of premeditated and organized murder committed by a state, motivated by ego and greed, against an ethnic community without regard for gender or age.

Raphael Lemkin was moved by the Armenian annihilation explicitly to coin the word genocide in 1943 and define systematic and premeditated exterminations within legal parameters. Turkey, the successor state of the Ottoman Empire, denies that the word genocide is an accurate term for the mass killings of Armenians that began under Ottoman rule in 1915. In recent years, Turkey has been faced with repeated calls to recognize them as genocide.

To date, more than 23 countries have officially recognized the mass killings as genocide, a view which is shared by most genocide scholars and historians.

As a descendant of this ethnic community, and as an aware person, I would like to share with you a story from my mother's family.

The story of Sarkis Boghtchalian, my maternal ancestor, was told by my grandmother Pergrouhi Boghtchalian-Kalaydjian.

...

Kayseri is a large, industrialized city in Central Turkey. It is the seat of Kayseri Province. The story of our genocide survivor Sarkis Boghtchalian starts before 1915, in the city of Gesarya.

(23 April 2014) Today my grandmother shared with me what she heard from her father...

“My father, Sarkis, and his sister, Lucine, were two children who lived in a happy family. Their happiness was destroyed by the death of their mother and father, and consequently they were left orphans. My grandmother does not remember who, but one of the villagers knew a wealthy family called Boghtchalian, who didn't have any children.

The Boghtchalian family was rich as they had plots of lands, houses and jewelry. They were generous and kind. Because they weren't able to have children, they wanted to adopt one. They talked to many people and Lucine, Sarkis's sister, was suggested. The Boghtchalian family decided to have the little girl as a daughter... the villagers suggested the wealthy family also adopt Sarkis, Lucine's brother, and they accepted.

So Sarkis and his sister Lucine started living with the Boghtchalian family until deportation.”

My grandmother says that her father and the Boghtchalian family were put in a small carriage and headed towards Der Zor. All of a sudden, Sarkis turned and realized that his family was no more there, except for Lucine. Sarkis and Lucine came to Lebanon and were placed in Jbeil's orphanage, the “Bird Nest.” Sarkis then married and was able to form an Armenian family having “Boghtchalian” as a family name instead of his initial unknown one...

The story that I told today is so precious and one of a kind. It is the story of my mother's family.

Unfortunately, today my father remembers only small, dim stories from Marash. Thus, I advise you to ask about and search for your great grandparents' stories as a means to protect our heritage and rich culture.

Last but not least, I would like to thank Haigazian University's Society of Armenian Studies for giving us this particular chance

to share with the entire world our precious stories and to restate to people of other origins the necessity of recognizing the Armenian Genocide, since a genocide gone unrecognized is a genocide repeated.

Today, we have a huge responsibility inherited from our great grandparents. It is forbidden to us to encourage Turkish products including movies, food and clothing. At this moment, after exactly 100 years, we can only unite and continuously demand our lands and rights. These demands can be achieved by awareness, speaking, writing and reading Armenian and, finally, praying as we are the first Christian nation on the surface of the Earth.



ԱՅԴ ՕՐԵՐԸ

Սէրլի Կարապետեան

Ահաւասիկ այն օրը, երբ ընտանիք մը եւս քանդուեցաւ: Ուրֆայի շրջաններէն մէկն էր: Թուրք զինուորները հոս ու հոն կը ջարդէին խեղճ հայերը: Անբացատրելի դէպք մըն էր ան:

Ուրֆայի մէջ կ'ապրէին մեծմօրս մեծմայրը եւ իր ընտանիքը: Մեծմօրս մեծմայրը՝ Ֆերիտէ Շալտանեան, այդ ժամանակ տասներեք տարեկան երիտասարդուհի մըն էր: Լուրը կու գայ՝ «հայ ժողովուրդ, ջարդը սկսած է»: Ժողովուրդը այս ու այն կողմ կը փախչէր, սակայն դաժան թուրքը որոշած էր հայ ցեղը ոչնչացնել ու անխնայ սպաննել: Ան ծրագրած էր ջարդը ու անգութ զինուորները ջարդեցին մեզ:

Ֆերիտէի հայրը կ'որոշէ կրակ վառել ու անձնասպան ըլլալ՝ փոխանակ անխիղճ թուրքին ձեռքին տակ հոգի տալու: Անոնք կը նետուին կրակին մէջ: Այդ ցաւի պոռչտութեն, Ֆերիտէն ու եղբայրը՝ Նազարէթը կը վախնան ու կ'որոշեն փախչիլ: Անոնք դուրս կ'ելլեն, սակայն թուրք զինուորութիւնը խուժած էր բոլոր շրջանը: Անոնք կը բաժնուին եւ կը շարունակեն իրենց ճանապարհը առանձին-առանձին: Ճանապարհի ընթացքին, ճամփաները դիակներ, լացուկոծի ձայներ, երեխաներ նետուած Եփրատ գետի մէջ... Արդէն սկսած էր Մեծ Եղեռնը:

Ֆերիտէ կը մնայ անշարժ՝ երբ կը լսէ ձայն մը. «Ֆերիտէ՛, Ֆերիտէ՛»: Մօրաքրոջը աղջիկն էր՝ Լիան: Ան պահուրտած էր ծխնելոյզին մէջ, երեսը սեւ ներկած եւ գլուխը ծածկած: Ֆերիտէն ալ նոյն կերպարանքը առնելով կ'ուղղուին իրենց դրացի Փեմփէ Խանըմին քով: Անոնք մէկ հագուստով,


բոպիկ, անօթի ու ծարաւ, կը հասնին անոր քով: Հոն բոլորը կ'որոշեն փախչիլ դէպի Հալէպ:

Դժբախտաբար, թուրք զինուոր մը կը ձերբակալէ Ֆերիտէն եւ բռնի ուժով կ'ուզէ հետը ամուսնանալ: Թուրք զինուորը արդէն ամուսնացած էր եւ ունէր զաւակներ: Անոր կինը չէր ուզեր Ֆերիտէն: Նոյնպէս ալ Ֆերիտէն: Ան կ'օգնէ Ֆերիտէին եւ իրիկունը Ֆերիտէն կը փախչի: Անոնք օրերով, ամիսներով կը քալեն: Վիրաւոր ոտքերով կը հասնին Տէր Զօր, կը գտնեն քարայր մը եւ կը հանգստանան: Ֆերիտէն կը մտածէր թէ արդե՞օք եղբայրը կ'ապրի, ու՞ր է, ի՞նչ կ'ընէ:

Փեմփէ Խանըմը կը մտածէ որ պէտք է Ֆերիտէն ամուսնացնէ: Բայց ան տակաւին տասներեք տարեկան էր: Ճանապարհին անոնք կը հանդիպին խումբ մը հայ տղոց, որոնք նոյնպէս կը փախչէին: Պետրոս Ռաստկելենեան, որ այդ խումբէն էր, եղած է ֆետայի Յարութիւն Ռաստկելեանի ընտանիքէն: Անոնք կ'ամուսնանան:

Տարիներ վերջ երբ անոնք տուն կ'ունենան՝ կ'ունենան պզտիկներ: Անոնցմէ մէկը կ'ըլլայ մեծմօրս մայրը՝ Ովսաննա: Մեծնալէ ետք, ան կ'ամուսնանայ եւ կ'ուղղուի Լիբանան: Ան կ'ունենայ երեք աղջիկ եւ երեք տղայ: Մեծմայրս ալ, մեծնալէ ետք կ'ամուսնանայ եւ այսպիսով մինչեւ այսօր, ժամանակին քանդուած ընտանիքը կրկին կը կազմուի:

Ահա անցաւ 100 տարի: Տակաւին կանք ու դեռ կը շատանանք: Թուրքը իր ուզածը չիրականացուց, եւ օրը պիտի գայ ու մենք պիտի շահինք մեր դատը ու թուրքը պիտի վճարէ մեր արեան գինը: Օրը պիտի գայ եւ մենք կրկին պիտի առնենք մեր հողերը...



ՓԱԽՉԻԼ՝ ՄԱՅՐԸ ԳՐԿԱԾ

Յարութ Կիլիզեան

Ասկէ հարիւր տարի առաջ, Կիլիկիոյ Մարաշ քաղաքին մէջ կ'ապրէր ընտանիքս, որ նշանաւոր էր իբրեւ արհեստաւոր, արուեստագէտ կօշկակար, ձեռագործներու վարպետ եւ հողամշակ:

1890ականներուն, մեծհօրս մեծհայրը կը սպաննուի թուրք կառավարութեան կողմէ Մարաշի մէջ: Շատ չանցած, 1915ին, թուրք անխիղճ կառավարութիւնը կրկին բնաջնջելու նպատակով սպաննել եւ ջարդել կու տայ Կիլիկիոյ տարբեր քաղաքներու մէջ գտնուող հայերը, ներառեալ՝ Մարաշի: Տղամարդիկը կը հաւաքեն եւ կը քշեն դէպի Տէր Զօրի անապատը, ուր կը սկսին հրացաններով եւ սուրերով հարուածել:

Անոնց մէջ կար նաեւ հօրս մեծհայրը, ամուսնացած եւ մանչ զաւակի տէր: Կարգը կու գայ անոր, բայց ան գլխէն կը վիրաւորուի եւ արիւնոտ վիճակի մէջ կ'իյնայ գետին: Քանի մը ժամ ետք ան կ'արթննայ ու կը տեսնէ հազարաւոր դիակներ իր շուրջը. անոնց վրայէն անցնելով կը հեռանայ: Ան ատարանական էր. ծունկի կու գայ եւ կ'աղօթէ Աստուծոյ, որպէսզի ջուր գտնէ՝ օրինակ բերելով Մովսէսի անապատին մէջ ջուր գտնելը: Ժամեր անապատին մէջ դառնալէ ետք փոքր լճակ մը կը գտնէ՝ գորտերով եւ բոյսերով լեցուն: Հապճեպով կը խմէ ու կը լուայ իր արիւնոտ գլուխը: Երեք տարի Այնթապի գիւղերուն մէջ կ'աշխատի հարուստ աղայի մը քով իբր պարտիզպան: Աղան զինք կոչած էր Ահմէտ եւ այդ անունով ճանչցուած էր, հակառակ որ իր անունը Յովհաննէս էր:

Օր մը աղան ցոյց տուաւ իր չորս աղջիկներէն մէկը՝ ամուսնացնելու առաջարկով: Ան ալ աղային կ'ըսէ. «աղա,

գիշեր մը մտածեմ», բայց նոյն գիշերին կը փախչի՝ յիշելով իր կինն ու մանչը: Քանի մը շաբաթ վերջ կը հասնի Մարաշ ուր քիչ թիով մարաշցիներ կը հաւաքուին շուրջը՝ զարմացած, կը հարցնեն լալով եւ արցունքով՝ միւս տղամարդոց մասին: Շատ չանցած կրկին անոնք կը հալածուին ու կ'աքսորուին: Այն ատեն Մարաշի բոլոր հայ ժողովուրդը կը սկսի փախչիլ տունէ տուն: Սակայն, անխիղճ վատ թուրքերը կու գան ու կ'այրեն զանոնք եկեղեցիներով միասին: Իր մայրը, փախչելու ժամանակ կը վիրաւորուի հրացանի կապարով: Ինք կը շարունակէ մայրը գրկած փախչիլ իր կնոջ ու մանչին հետ: Թուրքին հարուածէն չմեռնողը կարկուտէն կամ ցուրտէն կը մեռնէր:

Անոնք կը հաստատուին Հալէպի Սլէյմէնիէի մօտ, Միտան շրջանը: Քանի մը տարի ետք կը փոխադրուին Դամասկոս, Խչերի Քեմփ կոչուած վայրը, ուր կը ծնի մեծհայրս 1926ին:

1927ին ընտանիքս Դամասկոսէն շոգեկառք նստելով կու գայ ու կը հաստատուի Պէյրութ, Լիբանան: Անոնք հաստատուած են Քարանթինայի շրջանը եւ առած լիբանանեան հպատակութիւն: Տարիներ ետք անոնք կը փոխադրուին Պուրճ Համուտի Նոր Մարաշ թաղամասը, ուր ինք եւ ուրիշներ կը կառուցեն հայ Աւետարանական Շամլեան Թաթիկեան դպրոցը:

Եթէ իմ պապերուս ծննդավայրը ապրէի՝ բարձր կ'ուզէի պահել հայ անունը, յառաջ կ'ուզէի տանիլ հայրենիքս, պաշտպանելով հայրենի հողս եւ զոհուելով անոր համար:



ԵՍ ՀՊԱՐՏ ԵՄ

Արծուի Կոստանեան

Հօրս մեծհայրը՝ Եփրեմ Կոստանեան, ծնած է 1885ին, Եոզղաթի Սերայ գիւղը: Ան եղած է թրքական բանակի *ժանդարմա*: Ան՝ իր պաշտօնին բերումով կ'իմանայ, որ թուրքերը սկսած են սպաննել թրքական բանակին մէջ ծառայող հայ զինուորները, ուստի կ'որոշէ փախչիլ Թուրքիայէն: Գիշեր մը, հօրը հետ խորհրդակցելէ ետք, առանձին ճամփայ կ'ելլէ եւ մեծ դժուարութիւններով ու վտանգներէ ազատելով՝ կը հասնի Յունաստան: Յունաստանէն կը տեղափոխուի Ֆրանսա՝ միջնորդութեամբ հայ կնոջ մը, որ լծուած էր հայ փախստական երիտասարդներու օգնութեան: Եփրեմ հոն կ'ապրի մինչեւ 1918 թուական: Հոն կ'իմանայ որ հայրը սպաննուած է թուրքերու կողմէ, սակայն ոչ մէկ տեղեկութիւն կը ստանայ իր մօր եւ չորս քոյրերուն մասին:

Եփրեմ չի կրնար հանգիստ ապրիլ Ֆրանսայի մէջ: 1918ին կը զինուորագրուի հայկական կամաւորական գունդերուն, որոնց նպատակն էր Կիլիկիոյ ազատագրումը: Ան կ'ուզէ վրէժ լուծել թուրքէն, կը մասնակցի Պաղեստինի Արարա բարձունքի ճակատամարտին՝ ֆրանսական բանակին կողքին: Անոնք ջախջախիչ պարտութեան կը մատնեն թրքական բանակը, որմէ ետք կ'ազատագրեն Լիբանանը եւ կ'անցնին Կիլիկիա:

Հետաքրքրական են քաջագործութիւնները ֆրանսական բանակի հայ զինուորներուն, որոնց մէջն էր նաեւ հօրս մեծհայրը: Անոնք՝ հակառակելով ֆրանսական բանակի հրամանատարութեան հրահանգներուն՝ գաղտնօրէն կը սկսին յարձակումներ կազմակերպել Ատանայի շրջանի թրքական գիւղերուն եւ զօրանցներուն վրայ՝ սպաննելով

մեծ թիւով թուրքեր: Եթէ բացայայտուէր իրենց այս արարքը՝ պատիժը գնդակահարում էր ֆրանսական բանակի ղեկավարութեան կողմէ:

Մօտաւորապէս մէկ տարի կը մնան Ատանայի շրջանը: Այդ ընթացքին, Ատանայի քահանան հայ կամաւորներէն կը խնդրէ, որ ամուսնանան հայ այրի կիներու հետ, որոնց ամուսինները սպաննուած էին թուրքերու կողմէ: Եփրեմ կ'ամուսնանայ Աղւանիին հետ, որուն ամուսինը եղած էր Ատանայի մէջ ֆետայի: 1919ին Ատանայի մէջ կը ծնի իրենց առջինեկը՝ Ազատը, ապա կը գաղթեն Լիբանան:

Լիբանան հաստատուելէ ետք՝ Եփրեմ կ'իմանայ, որ իր մայրը եւ չորս քոյրերը ողջ են եւ կ'ապրին Պոլիս: Կապ կը հաստատուի հարազատներուն միջեւ եւ 40 տարիներ ետք՝ 1954ին, ան կ'այցելէ Պոլիս եւ կը միանայ իր մօր ու քոյրերուն: Եփրեմ կ'ունենայ չորս զաւակ՝ երկու աղջիկ եւ երկու տղայ:

Հայրս եւ մայրս եղզղատցի են: Հայրս՝ Արա (Աբրահամ) Կոստանեան, բժիշկ է, իսկ մայրս՝ Անի Սարգիսեան-Կոստանեան, պարի ուսուցչուհի է: Ունիմ ինձմէ մեծ եղբայր մը՝ Վանանդ, համալսարանի ուսանող է, եւ քոյր մը՝ Լալէ:

Մօրս մեծհայրը եւ մեծմայրը մօր կողմէն այնթապցի են: Մեծհայրը՝ Յակոբ Թիւրիւմլեան, եղած է վարպետ պղնձագործ: Այնթապի ինքնապաշտպանութեան ժամանակ ինք եւ իր եղբայրը՝ Նազար Թիւրիւմլեանը, տուներէն հաւաքուած պղնձեայ իրերէն կը շինեն զէնքեր եւ ժողովուրդին հետ միասնաբար կը դիմադրեն թրքական յարձակումներուն՝ մինչեւ ֆրանսական բանակի օգնութեան հասնիլը: Անկէ ետք կը գաղթեն Հալէպ: Գաղթի ժամանակ Յակոբ եւ Մարի Թիւրիւմլեանները ունէին երկու զաւակ՝ Լեւոն եւ Ազատ: Լեւոնը կը դիմանայ անօթութեան եւ կը հասնի Հալէպ, իսկ Ազատը կը մահանայ գաղթի ճամփուն վրայ: Հալէպ կը մնան 6 տարի: Հոն, Մարի իր ընտանիքին



Յակոբ Թիրիմլեանի ձեռակերտ
փաշա-մանդալը մեր տան մէջ

ապրուստը ապահովելու համար՝ կ'օգնէ իր ամուսինին, եւ Այնթապի ձեռագործի աշխատանոց մը կը հիմնէ: Իսկ ամուսինը՝ Յակոբ, կը շարունակէ իր արհեստը՝ պղնձագործութիւնը: Մեծմայրս՝ Նուարդը, կը ծնի Հալէպ: Կ'ունենայ քոյր մը, զոր կ'անուանեն Ազատ: Վեց տարիներ ետք կը գաղթեն Լիբանան եւ կը հաստատուին Ջահլէ: Հոն կ'ունենան եւս երկու մանչ զաւակ՝ Կարապետ եւ Յարութիւն:

Հայրս եւ մայրս մեզի հայեցի դաստիարակութիւն տուած են: Շատ մօտ ենք հայ արուեստին, մշակոյթին, գրականութեան, պատմութեան եւ հակառակ որ Հայաստանի հողին վրայ չենք ապրիր՝ կը շնչենք հայերէն եւ կը մտածենք հայերէն: Ես հպարտ եմ, որ ծնած եմ հայ եւ զաւակն եմ ու կը պատկանիմ այս տաղանդաւոր ազգին՝ հայութեան:



ՅՈՒՇԵՐ

Նարեկ Հաճէքեան

Մեծհայրիկս՝ մօրս հայրը Հմայեակ Պօղոսեան, որ այսօր 80 տարեկան է, կը պատմէ: Ան ծնած է Սուրիոյ գիւղերէն մէկուն մէջ որ հայ գաղթականներու կողմէ կոչուած էր Մուշաշէն: Ան հոն կը ծնի ու կը մեծնայ մինչեւ իր 10 տարիքը: Հոն հայերու հետ կ'ապրէին քիւրտեր եւ ալաուի սուրիացիներ:

Մեծհայրս ջարդի սերունդէն չէ, սակայն ան տառապած է անոր ձգած հետքերէն. անոր հայրն ու մայրը եղած են ջարդի սերունդէն եւ ահա կը գրեմ այն ինչ որ մեծօրս հայրն ու մայրը՝ Յովհաննէսն ու Մարիամը, պատմած են իրեն:

Յովհաննէս Պօղոսեանը՝ մօրս մեծհայրը, եղած է էրզրումէն ուր ջարդն ու կոտորածը իր առաջին ձեռքը երկարած են գիշերով, երբ թուրք ճենսերմաները կը յարձակին գիւղին վրայ՝ անակնկալի բերելով խեղճ գիւղացի հայերը, կրակի կու տան անոնց տուները: Ճարպիկ Յովհաննէս կրցած է արագ շարժումով բոցերէն դուրս ցատկել, իր հետ առնելով իրմէ փոքր քոյրը: Բաւական քալելէ ետք քոյրը շատ կը յոգնի ու դժբախտաբար իր դիմաց կու գայ հարուստ հսկայ քիւրտ մը եւ կ'ըսէ անոր որ քոյրը իրեն տայ ու ինք փախչի այսպիսով ազատած կ'ըլլային երկուքը, որովհետեւ ա՛լ փոքր քոյրը անկարող էր քալել: Այդպէս ալ կ'ընէ Յովհաննէս, կարծելով որ կ'ազատէ իր քոյրը. ան կու տայ զայն քիւրտին, որ առնելով աղջիկը կը հեռանայ, իսկ ինք շուտով գետին մէջ կը նետուի ու եղէգներուն մէջ պահուրտելով կ'ազատի իրենց հալածող թուրք մարդասպաններէն:

Յովհաննէս կը միանայ հայ որբ տղոց խումբին, որոնք կը փոխադրուին Լիբանան: Ան Լիբանանի մէջ Անթիլիասի

շրջանի մայրավանքը կառուցողներու հետ կ'աշխատի ու հոն կ'ապաստանի երկար ատեն մինչեւ պատանեկութիւն: Անկէ ետք պէտք էր դուրս ելլէր ու իր կեանքը շարունակէր: Ան կը փոխադրուի Սուրիա, Մուշաշէն, որովհետեւ կը լսէ թէ բաւական էրզրումցիներ հոն հաստատուած են:

Մօրենական մեծօրս՝ Հմայեակին, մայրը Պիթիսէն կը փախչի դարձեալ իրեն հալածող թուրք *ճենտերման*երէն ու կ'ապաստանի ջրհորի մը մէջ: Ընտանիքը կորսնցուցած՝ փոքր Մարիամը երկար ատեն կը մնայ ջրհորին մէջ: Երբ վտանգը կը հեռանայ կը սկսի պոռալ, բարեբախտաբար հոնկէ անցնող քիւրտ կիներ կը լսեն անոր ձայնը ու վեր կը քաշեն զինք ջրհորէն: Մարիամ կը միանայ որբ հայ աղջիկներու խումբին որոնք կարաւաններով կը փոխադրուին Լիբանան, Ղազիրի շրջանը ինչպէս Ֆիլիբ Չաքարեան կը գրէ իր գիրքին՝ *Որբը Տուն Շինեցի Բ.* հատորին մէջ:

Մարիամ Ղազիրի մէջ կը մնայ մինչեւ դառնայ պարմանուիի: Հոն կը սորվի ձեռագործ աշխատիլ եւ գորգ հիւսել. հիւսած է Ղազիրի նշանաւոր հսկայ ու գեղեցիկ գորգը: Երբ կը մեծնայ, դուրս կ'ելլէ որբանոցէն եւ լսելով հայաբնակ Մուշաշէն գիւղին մասին, կ'որոշէ հոն հաստատուիլ: Յովհաննէս ու Մարիամ Մուշաշէնի մէջ իրար կը միանան ու կը կազմեն նոր հայ ընտանիք մը: Միքանի զաւակներ կ'ունենան սակայն հիւանդութեան պատճառով բոլորը կը մահանան ու կը մնայ Հմայեակ մեծօրս որ հինգ տարեկանին կը կորսնցնէ իր մայրը՝ Մարիամը:

Հմայեակ շատ դժուար ու դժբախտ օրեր կ'անցընէ իր հօրը հետ մինչեւ ինը տարեկան. ան կը յիշէ սաստիկ ցուրտ գիշերներ առանց կրակի ու անօթի քնանալը: Ան դժուար կը յիշէ իր մօր դէմքը: Հայրը՝ Յովհաննէսը զինք կը դրկէ Լիբանան, հարուստ ազարակապանի մը հետ որ կու գայ ու կը հաստատուի Սուրի շրջանը: Երկու տարի ետք մեծօրս հայրը Յովհաննէսն ալ կու գայ Լիբանան եւ կը փոխադրուին

Պէյրութի Սանճաք քեմփ, ուր հայեր վրաններու տակ կ'ապրէին: Սակայն նոր դժբախտութիւն մը՝ Հմայեակ մեծհայրս երկու տարի ետք կը կորսնցնէ իր հայրն ալ ու կը մնայ բոլորովին մինակ եւ կ'անցնի Պուրճ Համուտ: Հմայեակ ինքզինք որբ կը սեպէր այն օրէն որ կորսնցուցած էր իր մայրը: Ան կը պսակուի մեծմօրս հետ եւ կ'ունենայ չորս զաւակներ եւ եօթ թռռներ, որոնցմէ մէկը ես եմ:



ԵՍ՝ ՄԻՀՐԱՆՈՒՇ
ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ԹՈՌՆԻԿԸ
Արամ Հելվաճեան

Սոյն պատմութիւնը մեծօրս՝
Միհրանուշ Գոյումճեանի
տարագրութեան տարիներու
պատմութիւնն է, արտասանուած ի՛ր

բառերով:

«1915ին միայն հինգ տարեկան էի: Ջարդէն առաջ թուրք զինուորներ եկան ու մայրս առին-տարին: Երեք շաբաթ անտանելի կերպով զինք չարչարելէ ու բռնաբարելէ ետք բերին ու նետեցին մեր տան դրան առջեւ: Երեք ժամ ետք մայրս մահացաւ՝ զիս որք ձգելով: Այս պատիժը տրուած էր մօրս, որովհետեւ, ըստ թուրքերուն, ան հայդուկներուն նամակ կը տանէր:

Մենք կը բնակէինք Հասան Պէյի մէջ: Հասան Պէյը հովիտ մըն էր: Ունէր փախուստի մէկ ճամփայ, որովհետեւ երեք կողմերէն շրջապատուած էր լեռներով: Այդ լեռներուն վրայ հայդուկներ կը դիմադրէին թուրք զինուորներուն:

Ընտանիքիս ամէնափոքրն էի, եօթը եղբայրներու միակ քոյրը: Մայրս դպրոցի տնօրէնուի էր, իսկ հայրս՝ զինուոր: Մայրս երբ կը նկատէ որ շրջանէն երիտասարդներ կը կորսուին եւ ընտանիքներ կը ջանան իրենց մեծ տղաքը երկրէն փախցնել, կ'ուզէ որ եղբայրներս ալ փախչին երկրէն: Եղբայրներէն երկուքը նաւ կ'ելլեն եւ առանց ուղղութիւնը իմանալու փախուստ կու տան երկրէն: Եղբայրս՝ Սամուէլը, կ'իյնայ Նիւ Եորք, միւսը՝ Մոնթէվիտէօ: Մնացեալ եղբայրներս կորսուեցան. Ու՛ր մնացին՝ ոչ ոք գիտէ:

Սկսան 1915ի ջարդերը: Թուրք զինուորները մեզ հանեցին մեր տունէն: Ունէի ինձմէ մեծ մէկ եղբայր: Այդ ժամանակ նոր գնած էինք Singer կարի մեքենայ մը: Եղբայրս՝ Նաթանը,

նախքան մեր տունէն ելլելը կոտորեց այդ մեքենան, ըսելով, որ թուրքը բնաւ թող չգործածէ զայն: Մենք՝ Հասան Պէյի ժողովուրդս, տեղահան ըլլալով, սկսանք քալել քաղաքէն դուրս տանող ճանապարհէն: Մայրս նկատելով անօթի ըլլալս՝ զիս դրաւ թուրք ընտանիքի մը քով՝ իբրեւ սպասուհի աշխատելու, որպէսզի ողջ մնամ: Այդ ընտանիքը ունէր փոքր երեխայ մը: Երեխան մօտս կու գար, որ գրկեմ զինք ու հոգ տանիմ իրեն, բայց փոքր ըլլալուս չէի կրնար զինք գրկել, եւ կամաց մը կսմթելով կը լացնէի. տնեցիները կու գային եւ կը գրկէին երեխան, ես ալ կ'ազատէի անոր հոգ տանելու պարտականութենէս:

Օր մը տանտիրուհին ըսաւ, որ իրենց հօրեղբօր տունէն իշապան մը պիտի գայ եւ ինծի պիտի ըսէ. «բէ՛ր, իջի՛ր վար ու վէ՛ր կրէ ապրանքները»: Երբ իշապանը եկաւ, ես վար իջայ: Ան զիս տեսնելուն պէս երեսիս նայեցաւ ու անունս հարցուց: Ըսի, որ անունս Միհրանուշ է: Հարցուց քանի՞ եղբայր ունիմ: Ըսի՝ «չորս»: Երբ հարցուց անոնց անունները, յիշեցի միայն Մովսէսն ու Նաթանը: Իսկ մականունս ալ ըսի Ատուրեան է, որովհետեւ կը յիշէի, թէ ինչ անունը Ատուր է: Իշապանը այն ատեն ըսաւ. «Միհրանուշ, ես քեզ ճանչցայ: Ես Նաթանն եմ, եւ դուն ալ իմ քոյրս ես»:

Չեմ գիտեր, ինչպէ՛ս եղբայրս ինկած էր թուրքերուն ձեռքը եւ իշապանութիւն ընելով կ'ապրէր: Օր մըն ալ, մարդ մը զիս ճանչցաւ ու ըսաւ. «ես կը ճանչնամ քու հայրդ: Ան հո՛ւս բանտն է»: Վազեցի ետեւէն ու ըսի. «հաճի՛ս, զիս ինչ քով տար»: Ան զիս տարաւ ինչ քով: Երբ բանտ մտայ, Աստուած իմ, ի՞նչ տեսնեմ: Հայրս բանտարկուած էր շատ նեղ սենեակի մը մէջ: Նոյնիսկ բանտարկեալներուն տեղ չկար նստելու: Անոնք հոն անօթի-ծարաւ պիտի մեռնէին ու ոչնչանային: Ես այդ տեսարանին չդիմանալով լացի եւ բացազանչեցի. «պապա՛, զիս ազատէ՛»: Ան մելամաղձոտ պատասխանեց. «աղջի՛կս, ես բանտարկուած եմ եւ անօթի պիտի մեռնիմ, ինչպէ՛ս քեզ ազատեմ»:

Ասիկա իմ վերջին հանդիպումս էր հորս հետ:

Այս դէպքէն ետք, օր մը խումբ մը անգլիացիներ եկան եւ մտան մեր բնակարանը: Հետերնին կար մունետիկ մը, որ կը բացագանչէր. «Եթէ հայ երեխայ կայ, թող յայտնուի շուտով»: Ես անմիջապէս ճչացի որ հայ եմ, սակայն տանտիրուհին գիտմէկ կողմ քաշեց եւ ըսաւ. «հո՛ւս՝ իմ տանս մէջ մեծցիր: Մենք քեզի մեր տղուն կ'առնենք»: Ես մտիկ չըրի անոր խօսքերը եւ շարունակեցի պոռալ, որ հայ եմ: Անգլիացիները հարցուցին անունս ու մականունս: Այս անգամ մականունս՝ Գոյումճեան, ճիշդ ըսի, որովհետեւ եղբայրս սրբագրած էր սխալս: Զիտ առին ու դրին շոգեկառքի մը մէջ: Հասայ Ղազիրի որբանոցը: Հոն մնացի մինչեւ 18 տարեկան:

Օր մը առանց գիտնալու գետնէն ասեղ մը գտայ, ինչ որ արգիլուած էր որբանոցին մէջ: Գիտէի, որ անոր համար պիտի պատժուիմ: Ուրիշ աղջիկ մըն ալ կար, որ ամէն օր կը պատժուէր, գիշերները տակը թրջելուն պատճառով: Գլուխ-գլխի դնելով, ինը ընկերուհիներ, փախուստ տուինք որբանոցէն, առանց նոյնիսկ ճամփան իմանալու: Արաբերէն լեզուն ալ չէինք գիտեր: Հոս-հոն հարցուցինք մինչեւ գտանք Պէյրութի ճամփան եւ հասանք Քարանթինայի որբանոցը: Հոն դարձեալ գտայ եղբայրս՝ Նաթանը: Երկար տարիներ ետք գտնուեցաւ նաեւ եղայրս՝ Սամուէլը, Նիւ Եորքի մէջ»:

Այս է իմ մեծմօրս պատմութիւնը՝ ցաւալի անցեալի մը նկարագրութեամբ եւ պատկերումով: Իսկ Մեծ Եղեռնի յիսնամեակին, երբ մեծհայրս իմացաւ, որ ո՛չ թէ միայն իրեն, այլ ամբողջ հայութեան պատահած է այս բոլորը, արգիլեց մեր տան մէջ թրքերէն խօսիլը: Թրքերէն լեզուով ձայնասփիւռն ալ մարեց ու լռեցուց այդ թրքերէն լեզուն: Մեծհայրս, որ Աստուածաշունչը կը կարդար թրքերէնով, մէկ կողմ դրաւ զայն ու գնեց հայերէն Ս. Գիրք եւ հեգելով՝ սորվեցաւ հայերէն: Ես՝ Միհրանուշ Գոյումճեանին թոռնիկը, այդ պատճառով չեմ գիտեր թրքերէն եւ հպարտ եմ անոր համար:



ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷԻ ԻՄ ՊԱՊԵՐՈՒՄ ԳՈՐԾԸ

Արմիկ Հեքիմեան

Կը գրեմ մեծմօրս (հօրս մօր) ընտանիքին մասին: Հրանդ Մալումեան ծնած է 1903ին, Արաբկիր: Հօր անունն է Գրիգոր, մօրը՝ Արմէնուհի Բարունակեան: Ունեցած է մէկ քոյր, Զարիկ (ծն. 1899) եւ մէկ եղբայր, Խաչատուր (ծն. 1901): Մայրը մահացած է Յեղասպանութենէն առաջ, երբ Հրանդ 10 տարեկան էր: Հայրը ձերբակալուած է թուրք ոստիկանութեան կողմէ եւ կորսուած, երբ Հրանդ 12 տարեկան էր: Զարիկ եւ Խաչատուր սպաննուած են 1915ին: Հրանդին հօրաքոյրը զինք կ'առնէ Արաբկիրի որբանոցէն: Հօրաքոյրը ունէր զաւակ մը՝ Արաքսի,



Արմէնուհի մեծմայրիկս,
իր հայրը եւ մայրը

որ տարեկից էր Հրանդին: Կը քալեն մինչեւ Հալէպ: Հրանդ կ'ապրի Հալէպ մինչեւ 17 տարեկան, Արաքսիին հետ, յետոյ, կ'երթայ Պէյրութ:

Հրանդ կ'ապրէր ուրիշ երիտասարդներու հետ: Կը սորվի մեքենագիտութիւն, կը

դառնայ վառորդ, վարիչ եւ վաճառական մը՝ թղթաշինարանի մը մէջ:

Կ'ամուսնանայ Արուսեակ Քարթալեանին (ծն. 1910) հետ: Կ'ունենան երկու զաւակ, Գրիգոր (ծն. 1931) եւ Արմէնուհի (ծն. 1935, մեծմայրս): Հրանդ Մալումեան կը մահանայ 1986ին, 83 տարեկանին:

Հրանդին կինը՝ Արուսեակ Քարթալեան, ծնած է Արաբկիր: Հօրը անունն է Սարգիս, մօրը՝ Ներիմէ

Երզնկացեան: Յեղասպանութեան ժամանակ ան կը գտնուէր իր մօրաքրոջ՝ Զարիկ Տիարպէքիրլեանի հետ, Մալաթիա: Հայրը մահացած է Յեղասպանութեան ատեն: Գացած է Հալէպ Զարիկին հետ, որ ամուսնացած էր Օտապաշեանի հետ: Յետոյ մեկնած է Պէյրութ ուր կը գտնուէին իր եղբայրները:

Արուսեակ եւ իր եղբայրները Հրանդին պէս կ'ապրէին քեմփը: Երբ ամուսնացան՝ ապրեցան Էշրեֆիէ: Արուսեակ կը



Արուսեակ Քարթալեան եւ իր եղբայրը՝ Մարտիրոս

մահանայ 1960ին, 50 տարեկանին: Խաչատուր ամէնէն հոչակաւոր Մալումեանն է որ Մեղրիէն էր: ՀՅԴի հոչակաւոր դէմքերէն մէկը, որ ճանչցուած էր «քեռի» ծածկանունով: Աշխատած եւ մտածած է Քրիստափոր Միքայէլեանի եւ Ռոստոմի հետ:

Մեծմայրս (հօրս մայրը) կը բնակէր Ֆանար, բայց ամուսնանալէ ետք տեղափոխուած է Պուրճ Համուտ, ուր կը բնակինք մինչեւ այսօր:

Մեծմայրս (մօրս մայրը) կը բնակէր Հաճըն (մեծմայրս եւ մեծհայրս հաճընցի են), բայց

ամուսնանալէ քանի մը տարի ետք տեղափոխուած են Խալիլ Պատաուի, ուր կը բնակին մինչեւ այսօր:

Հայրս անձնական վարիչ է, ձեռով մը կը շարունակէ իր մեծհօր գործը:

Ընտանիքիս մէջ մէկ խառն ամուսնութիւն կայ. մօրաքոյրս ամուսնացած է յոյնի մը հետ, երբ Յունաստան գնաց: Սակայն զարմիկս դիւրութեամբ հայերէն կը խօսի:



Ետեի շարքէն, աջէն ձախ՝
Պողոս Մաալումեան, Յակոբ
(Պողոսի հայրը), Անթառամ
Խերպեճեան (Պողոսի
մայրը), Աղասի (Յակոբի
հայրը), Նազենի եւ
Խաչատուր (Պողոսի
զաւակները, նահատակուած
1915ին)

Ընտանիքիս բոլոր
անդամները հոս չեն բնակիր.
մօրաքոյրերէս մին կը բնակի
Յունաստան, միւսը՝ Քանաա,
հօրաքոյրերէս մին կը բնակի
Ամերիկա, միւսը՝ Քանաա,
երրորդը՝ Վիեննա,
հօրեղբայրներէս մին կը բնակի
Ֆրանսա, միւսը՝ Լիբանան:

Եթէ ես բախտը ունենայի
ապրելու Մալաթիա, Արաբկիր
կամ Հաճըն, պիտի
շարունակէի իմ պապերուս
սկսած գործը՝ իրենց արհեստը
սորվելով եւ իրենց օգնելով
իրենց գործերուն մէջ: Պիտի
ուզէի նաեւ միշտ շարունակել
իմ փորձառութիւնս
երաժշտութեան մէջ, ինչպէս
մեծմայրս (հօրս մայրը), որ
դաշնամուր կը նուագէր եւ
մեծհայրս (հօրս մայրը) որ
աքորտէն կը նուագէր:



ՆԱՐՕՏԸ ԵՒ ՆԱՐԵԿԸ

Ռիթա Ղալունճեան

Սիրելի՛ բարեկամ-բարեկամուհիներ, ձեզի պիտի պատմեմ տարաբախտ երկուորեակներուն՝ Նարօտին եւ Նարեկին յուզիչ պատմութիւնը:

Ուրբաթ օր էր՝ դպրոցի արձակուրդէն մէկ օր առաջ, երբ հայերէնի ուսուցչուհին խնդրեց մեզմէ, որ գրենք մեր գերդաստանի ջարդին պատմութիւնը: Երկար ժամանակ լուռ մնացի, ապա բարձրաձայն ըսի ուսուցչուհիին. «օրիորդ, մենք չունինք ջարդէն առնուած պատմութիւն»: Օրիորդս ըսաւ, թէ ամէն հայ ընտանիք անպայման ունի ջարդէն առնուած պատմութիւն մը: Օրերով փնտռեցի, բայց միշտ յուսախաբ էի: Օր մըն ալ մեծմօրս հարցուցի՝ վերջին յոյս մը ունենալով: Բայց այս անգամ առանց յուսախաբ ըլլալու գացի տուն եւ յաջորդ օրն իսկ սկսայ գրել իմ շարադրութիւնս:

Մեծմօրս հօրեղբայրը՝ Կարօն, եւ իր երկու զաւակները ապրած են ջարդը: Կարօն կ'ապրէր առանձին իր երկու զաւակներուն հետ, որովհետեւ կինը մահացած էր երիտասարդ տարիքին: Դաժան գիշեր մը, թուրքերը կը յարձակին անոնց տան վրայ: Կարօն շատ գէշ ձեռով կը սպաննեն իր երկու զաւակներուն աչքերուն առջեւ: Նարօտը, այդ ոճիրը տեսնելով, ուղղակի ուղեղային խանգարում կ'ունենայ, բայց Նարեկը՝ ո՛չ: Ան կ'ազատի այդ վայրագ թուրքերէն, բայց իր խեղճ քոյրը կը մնայ թուրքին ձեռքը: Մեծմայրս ըսաւ, թէ երբ Նարօտը կը քաշեն ու կը խլեն հօրը գիրկէն, փոքրիկ աղջկան ձեռքը կը մնայ հօրը շղթան, որուն վրայ իր զաւակներուն ու կնոջ անունները փորագրուած էին:

Տարիներ կ'անցնին: Նարեկը մեծահարուստ կը դառնայ եւ օր մը կ'որոշէ Հայաստանի մէջ այցելել շատ աղքատ խենթանոց մը, որպէսզի նուիրատուութիւն կ'ատարէ: Ան

ուխտ ըրած էր որ մինչեւ իր քոյրը չգտնէ, միշտ իր ունեցածը պիտի բաժնէ այսպիսի հաստատութիւններու: Ան կ'այցելէ այդ խենթանոցը, եւ տնօրէնին հետ հանդիպման ժամանակ, յանկարծ ցաւալի ձայնով աղջիկ մը «Նարե՛կ, Նարե՛կ» կը պոռայ: Տնօրէնը կ'ըսէ, թէ այս խեղճ աղջիկը ջարդէն ազատած հասած էր հոն, եւ եկած վայրկեանէն իսկ «Նարե՛կ, Նարե՛կ» անունը կը պոռար: Նարեկ հետաքրքրուած կը հարցնէ աղջկան անունը: Տնօրէնը Ձէյնէպ կ'ըսէ: Թուրքերը աղջկան անունը փոխած, երեսը այրած ու նետած էին զինք խենթանոց: Նարեկ անպայման կ'ուզէ տեսնել այդ աղջիկը: Կը մտնէ սենեակ եւ ...անմիջապէս կ'ուզէ դուրս ելլել, որովհետեւ աղջկան երեսը ամբողջովին այրած էր: Ելած ատեն կը նկատէ աղջկան վիզին գտնուող շղթան: Քանի մը վայրկեան, առանց բառ արտասանելու շշմած կը մնայ՝ յիշելով անցեալին պատահած այդ ցաւալի դէպքը, ինչպէս նաեւ հօր շղթան: Ապա արցունքոտ աչքերով կը մօտենայ քրոջ ու կ'ըսէ. «քո՛յրս, ես գիտէի, թէ պիտի հանդիպինք կրկին: Ես Նարե՛կն եմ՝ քու սիրելի եղբայրդ»: Նարօտը՝ «Նարեկ» անունը լսելուն պէս կը յիշէ ամէն բան, եւ ուղեղը կրկին սովորականին կը վերադառնայ:

Ես եւ ամբողջ ընտանիքս տակաւին չենք գիտեր, թէ Նարօտը ինչպէ՛ս ազատած է այդ թուրքերուն ձեռքէն եւ ինչպէ՛ս հասած է հոս: Բայց ես մէկ բան գիտեմ, թէ այն ինչ Աստուած գրած է պիտի պատահի եւ կեանքը չի կրնար երկու կապուած հոգիներ այս ձեւով իրարմէ բաժնել: Նարեկը յոյսը չէր կտրած, ո՛չ ալ՝ Նարօտը: Եւ այս պատճառով է, որ անոնք կրկին միացան: Ուստի ձեր երազներուն ետեւէն մնացէք, ձեր յոյսին լոյսը երբեք մի՛ ձգէք որ մարի, եւ պիտի տեսնէք, թէ անկարելի բան չկայ այս աշխարհին վրայ: Քանզի այնքան ատեն, որ մարդ արարածը կը շնչէ, յոյսը վառ կը մնայ: Նարօտը թէեւ խելագարած էր, բայց երբեք չէր դադրած երազելէն, ու գիշեր-ցերեկ իր եղբօր անունը պոռալով կը սպասէր անոր:



ԱԻԵՏԻՍ ՄԵԾ ՄԵԾՀԱՅՐԻԿԻՆ ԳԱՂԹԸ ԵՈՂԿԱԹԷՆ ԼԻՔԱՆԱՆ

Լիսի Ղարիպեան

Մօրս մեծհայրիկը՝ Աւետիս Մեծհայրիկը, Լիբանան եկած է 1921 թուականին, Եոզկաթի Չաքմաք գիւղէն: Եոզկաթ մեծ շրջան մը ըլլալով ընդգրկած է բազմաթիւ գիւղեր եւ քաղաքներ: Մեծհայրիկը տեսած եւ ապրած է Օսմանեան պետութեան արհաւիրքը եւ տանջուած է:

Ան կը պատմէր, թէ պատերազմի դառն օրերուն կ'աշխատէր քիւրտ հողատիրոջ մը քով: Օր մը, թուրք զինուորներ կը մօտենան իրեն կասկածամտութեամբ եւ մինակ տեսնելով զինք, կը բռնեն եւ քաշքշելով կը տանին: Այդ միջոցին հեռուէն կ'երեւի գործատէր աղային կինը. ան վազելով կու գայ ու կը խլէ զինք թուրք զինուորներուն ձեռքէն, բացագանչելով՝ «ու՛ր կը տանիք իմ տղաս»: Երբ զինուորները կը հարցնեն ի՞նչ է անունը, տիկինը՝ «Հիսէյին Չաուշ» կը պատասխանէ: Այսպիսով, մեծհայրիկը կ'ազատի թուրք զինուորներուն վտանգէն:

Երբ թուրքերը կը յարձակին մեծհայրիկին գիւղը, գիւղի երիտասարդութիւնը քաջաբար կը դիմադրէ: Սակայն, անոնք կը ստիպուին լքել իրենց տուները եւ հողերը ու հեռանալ, երբ անարգ թուրքը կը հրկիզէ կալուածները: Մեծհայրիկը իր ընտանիքին հետ կը հասնի Լիբանան եւ կը հաստատուի Քարանթինայի շրջանը, *վարաքաներուն* տակ:

Ան Լիբանանի մէջ զբաղած է փոռապանութեամբ մինչեւ 1941, երբ տնտեսական տագնապին պատճառով, կը մտնէ ֆրանսական բանակ, կը շարունակէ փոռապանութիւնը՝ զօրքին հաց պատրաստելով: Պատերազմի աւարտին ան կ'անցնի հանրակառքի ընկերութիւն, ուր կը պաշտօնավարէ որպէս ելեկտրական հարցերով զբաղող անձ:

Ան ամուսնացած է դարձեալ իր գիւղէն եկող ընտանիքի մը աղջկան, որուն անունն էր Լիւսի, եւ անկէ ունեցած է չորս մանչ եւ երկու աղջիկ զաւակներ: Բայց մեծ աղջիկը մահացած է փոքր տարիքէն: Անոնք տեղափոխուելով Քարանթինայի շրջանէն, հողամաս մը կը գնեն Պուրճ Համուտի թաղամասերէն մէկուն մէջ եւ կը շինեն իրենց անձնական տունը: Այդ թաղամասին բոլոր հայ բնակիչները եկած ըլլալով Եոզկաթէն, այդ շրջանը կոչուեցաւ Նոր Եոզկաթ:

Մեծհայրիկը այդ տունը շինած է իր զաւակներուն հետ, իրենց աշխատանքով եւ յոգնութեամբ: Միշտ ապագայի լաւ երազներով, ան հիւսած է ամուր սիւներ եւ պատեր՝ իր փռապանի հաստ ձեռքերով, որպէսզի յետագային ապահոված ըլլայ իր զաւակներուն տունն ու տեղը:

Մայրս յաճախ կը պատմէ իր մեծօր մասին եւ կ'ըսէ թէ ան իր թոռնիկներուն սորվեցուցած է այբուբեն գրել եւ թէ ամէն օր հայերէն օրաթերթը ամբողջութեամբ կարդալէ ետք է, որ տունէն դուրս կ'ելլէր՝ իր տարեկից ընկերները այցելելու եւ անոնց հետ ժամանակ անցընելու համար: Մեծհայրիկը ընթերցասէր մարդ եղած է. ան յաճախ կը կարդար մօրս հայերէն դասագիրքը եւ պատմութեան գիրքերը: Մայրիկս կ'ըսէ թէ շատ գթասիրտ եւ բարի եղած է ան, քիչով գոհացող, աշխատասէր, միշտ Աստուծոյ փառք տուող իր ունեցածին համար, ազգասէր եւ կրօնասէր: Սիրուած եւ փնտռուած իր ընկերներէն, յաճախ ջրոտած աչքերով կը յիշէր իր անցեալը եւ մանկութիւնը, մանաւանդ մինակ եղած պահերուն:

Մեծհայրիկին շինած տունը տակաւին լաւ վիճակի մէջ է: Հոն կ'ապրին մեծհայրիկս եւ մեծմայրիկս, այսինքն Աւետիս մեծհայրիկին անդրանիկ զաւակը: Իսկ մնացեալ զաւակները 40-50 տարի առաջ հաստատուած Աւստրալիա:

Աւետիս մեծհայրիկը զաւակներուն կարօտը առնելու համար կը ճամփորդէ Աւստրալիա եւ հոն ապրելով տարիներ, կը մահանայ խոր ծերութեան մէջ 1994 Օգոստոսին:



ՔԵՍԱՊԻ ՅՈՒՇԵՐ

Մարի Ճուրեան

Հայկական վերջին թագաւորութեան անկումին իբր հետեւանք, 1375 թուականին հիմնուեցաւ իմ եւ նախնիներու ծննդավայրը՝ Քեսապ հայաւանը, իմ փոքր հայրենիքս, ուր նախահայրերս քար քարի վրայ դնելով կառուցեցին իրենց բնակարաններն ու մանաւանդ իրենց սրբավայր եկեղեցիները: Անոնք ապրեցան խաղաղ եւ համերաշխ կեանք մը, մտածելով միայն վաստկիլ իրենց առօրեայ հացը, իրենց արիւնն ու քրտինքը խառնելով անմշակ եւ խոպան հողին, զայն վերածելու բերրի եւ պտղաբեր այգիներու:

1915ի տեղահանութիւնն ու ջարդերը երկրորդ մեծ հարուած մը հասցուցին հայահոծ Քեսապին, քանզի վեց տարիներ առաջ՝ 1909ին, Կիլիկեան Կոտորածներու ատեն Քեսապն ալ համտեսեց թալանն ու բնակարաններու հրկիզումը, որուն յաջորդեց գաղթը, ապա՝ վերադարձն ու վերականգնումը աներակ դարձած ամառին:

1915ին տակաւին չսթափած դառն հարուածէն՝ հասաւ հրահանգը մեծ տեղահանութեան Քեսապի բնակիչներուն, որուն յաջորդեց ամբողջական պարպումը Քեսապի եւ շրջակայ 10 գիւղերուն, որոնց բնակիչները թափառեցան Սուրիոյ զանազան քաղաքներ եւ երեք տարի ետք կարողացան վերադառնալ իրենց պապենական հողերը, կորսնցնելով իրենց թիւին երկու-երրորդը անապատի անազներուն: Աւելորդ է ըսել, որ վերադարձին գտան ամէն ինչ ոչնչացած. բնակարանները քանդուած, եկեղեցիները՝ նոյնպէս, այգիներն ու արտերը չորցած:

Բազմանդամ նախնիներու ընտանիքը վերադարձաւ իր քաղցր տունները: Հայու աննկուն կամքով նախնիներս

դարձեալ կերտեցին Քեսապը ու շարունակեցին ապրիլ անդորրութեան եւ համերաշխութեան մթնոլորտի մէջ, պահելով հայկական հին սովորութիւններն ու բարքերը:

Ինչպէս ամէն քեսապցի, իմ նախնիներս ալ կը զբաղէին հողամշակութեամբ եւ անասնաբուծութեամբ: Քեսապցիք իրենց տքնաջան աշխատանքով անուանի դարձուցին Քեսապի արտադրութիւնները, մանաւանդ՝ խնձորն ու դափնիի ձէթը, որմէ կը պատրաստուի աշխարհահռչակ Քեսապի օճառը:

Ընտանիքս շարունակեց ապրիլ Քեսապի մէջ մինչեւ միեւնոյն թշնամին հարուածեց մեզ երրորդ անգամ, ասկէ ճիշդ մէկ տարի առաջ. ես այդ հարուածին ականատեսը եղայ եւ համտեսեցի տեղահանութեան դառնութիւնը:

Արդարեւ, 21 Մարտ 2014ին, առաւօտ կանուխ թրքական հողերէն Քեսապ ներխուժեցին հազարաւոր զինեալներ եւ քանի մը ժամու ընթացքին գրաւեցին ամբողջ օւանը: Դարձեալ ւաւեր, հրկիզում եւ թալան: Դարձեալ տեղահանութիւն, դարձեալ զոհեր...:

Քեսապը այսօր կը մնայ անապահով եւ վտանգուած՝ ըլլալով ճիշդ սահմանի վրայ մեր դարաւոր թշնամիին հետ, հակառակ զինեալներու նահանջին: Կարելի չէ վստահիլ այն թշնամիին, որ ամէն պատեհ առիթի կը փորձէ յագեցնել իր արեան ծարաւը հայու արիւնով:

Առ ի հետեւանք այս վերջին տեղահանութեան, ընտանիքիս հետ հաստատուած եմ Լիբանան, բայց կարօտով՝ իմ պապենական ծննդավայրիս, տանս, եկեղեցիիս, վարժարանիս, բարեկամներուս եւ բոլոր այն բաներուն, զորս մանկութենէս ի վեր ապրած եւ տեսած եմ:

Յիշողութեանս մէջ կու գան մեր գիւղին օւանդական սովորութիւններն ու բարքերը, որոնք ամէն եղանակի եւ առիթի՝ յատուկ ձեւով կը կատարուէին, ուրախութիւն ներշնչելով մեծին ու փոքրին: Այդ սովորութիւններէն կը յիշեմ յատկապէս խաղողի հիւթին պատրաստութիւնը, որ կը

կատարուէր մեծ շուքով, նոյնիսկ տօնական բնոյթով: Անիկա տեղի կ'ունենար ամէն աշնան: Ամէն ոք իր այգիի խնձորի բերքը հաւաքելէ ետք կ'անցնէր խաղողի հաւաքի եւ մասարայի պատրաստութեան, որ կը տեւէր օրեր ու կը համախմբէր ասանի բնակիչներուն մեծ մասը: Ամէն թաղ ունէր իր մասարայի յատուկ կեդրոնը, ուր բոլոր թաղեցիները հերթով իրենց խաղողը կը վերածէին համեղ հիւթի իբր ձմերուան անփոխարինելի եւ սննդատու ուտելիք:

Պատրաստութիւնը կը սկսէր նախ խաղողի սնտուկները պարպելով յատուկ տախտակէ կամ քարէ տաշտի մը մէջ, ու յաղթանդամ երիտասարդներէն մէկը՝ հագած կերպընկալ մոյկը, զանոնք կը ճզմէր իր ոտքերուն տակ: Խաղողին ջուրը կ'իջնէր մեծ պղինձի մը մէջ, որուն կ'աւելցնէին յատուկ զտող խողովակ մը ու քանի մը ժամ զտուելէ ետք մաքուր հեղուկը կը փոխադրուէր կրակին դրուած մեծ պղինձէ կաթսայի մը մէջ, ուր կ'եռար ժամեր շարունակ: Ի վերջոյ բաւական պնդանալէ ետք վար կ'առնուէր հիւթը եւ երիտասարդներէն բարձրահասակը կօշի մը միջոցաւ, կ'առնէր հիւթէն ու ձեռքի հաւասար բարձրութենէն ետ կը թափէր կաթսային մէջ, յառաջացնելով *փրփուր* մը: Բոլոր ներկաները բարձրաձայն կը գոչէին՝ «փրփուր, փրփուր», որպէսզի բոլոր գիւղացիները լսելով գային ու համտեսէին այդ տաշտին փրփուրը:

Օրեր կը տեւէր այս արարողութիւնը, մինչեւ որ բոլոր թաղեցիները իրենց խաղողի հիւթը պատրաստէին՝ կապելով ցերեկները գիշերուան եւ այդ օրերը վերածելով մեծ խրախճանքներու, որոնցմէ անպակաս կ'ըլլային գիւղական զանազան խաղերն ու շուրջպարերը:

Յատուկ բնոյթ ունէին նոյնպէս Քեսապի զանազան տօները, ինչպէս Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Բարեկենդանը:

Թուրքը բազմիցս փորձած է մեզ բնաջնջել. ուզեց թողուլ միայն մէկ հայ աշխարհի վրայ՝ այն ալ թանգարանին մէջ, բայց մենք վերապրեցանք, կերտեցինք նոր Հայաստան,

պահեցինք մեր հարուստ մշակոյթը եւ վերաշինեցինք ու պիտի վերաշինենք մեր հայրենի Քեսապը: Ու ես՝ իբրեւ քեսապցի հայ, իմ պապերուս աննկուն կամքով պիտի վերադառնամ դարձեալ իմ գիւղս, իմ տունս եւ հողս, ուր ծնողքիս հետ մէկտեղ պիտի աշխատիմ տիւ ու գիշեր ծաղկեցնելու մեր այգիները, վերակառուցելու մեր տուները, վարժարաններն ու եկեղեցիները եւ տէր կանգնելու պապերէս ինձի հասած ամէնաթանկ հարստութեան՝ իմ հայրենի Քեսապիս, իր յատուկ բարբառով, սովորութիւններով ու բարքերով, իբր անբաժան մաս մեր հայ հարուստ մշակոյթին:



ԵՍ ԱՅՍՔԱՆ ԳԻՏԵՄ ԻՐ ՄԱՍԻՆ Ժուլիանա Մանուկեան

Ահա կը մօտենայ 100ամեակը Մեծ Եղեռնին, որուն ընթացքին հայեր ջարդուեցան թուրքերուն կողմէ: Մեր նախահայրերը տեղահանուեցան մեր արժէքաւոր հողերէն եւ քշուեցան օտար երկիրներ: Այսօր, թուրքին պատճառով է որ մենք՝ հայերս, կը տառապինք օտարութեան մէջ եւ արդէն հայութեան կէսը օտարացած է տարբեր երկիրներու մէջ:

Սակայն կարեւոր է յիշենք թէ ուրկէ եկած են մեր նախահայրերը եւ ինչպէս կազմուած են մեր ընտանիքները:

Հօրս ընտանիքը կեսարացի է. անոնք կը բնակէին Կեսարիա քաղաքի Ռումտիկին շրջանին մէջ:

Մօրս ընտանիքը եկած է Չոմախլու շրջանէն, որ նոյնպէս կը գտնուի Կեսարիոյ մէջ: Հօրս մեծմայրը՝ Մարիամ Մանուկեան, որ սեբաստացի էր, պատմած է թէ 1915 Մարտին, թուրքերը սկսած են հաւաքել գիւղերուն տղամարդիկը, սակայն իր հայրը մերժած էր զինուոր ըլլալ եւ փախած էր: Տարեցներէն բացի բոլոր տղամարդիկը տարուած էին: Մարիամ կը պատմէ թէ թուրքերը հայ մանուկները սուրերու վրայ ճօճելէ ետք կը նետէին Կարմիր գետին մէջ, որ ամբողջովին լեցուն էր հայ մանուկներով: Ան տեսած է թէ ինչպէս իր քեռիին զոյգ կաղ աղջիկները բռնաբարուած էին թուրքին կողմէ եւ մորթուած՝ իր աչքին առջեւ:

Ան մօրաքրոջ հետ գացած է որպէսզի ողջ մնայ եւ իբրեւ սպասուի աշխատած է թուրք աղայի մը քով: Հայրը իրեն այցելած է աղային տունը եւ պատմած է թէ ինչ պատահած է իր ընտանիքին միւս անդամներուն: Հայրը պատմած է թէ իր քոյրը խեղդուած է գետին մէջ, մայրը բռնաբարուած է, բայց

չէ մեռած եւ փախած է անբնակ տուն մը, բայց թուրքերը եկած եւ սպաննած են զայն: Հայրը ձերբակալուած էր եւ դարձած է թուրքերու գերի: Երկու-երեք տարի ետք եկած էր հանդիպելու Մարիամին: Օրեր ետք թուրք աղան իմացուցած է Մարամին թէ հայրը գիւղի մը մէջ հիւանդութենէ մահացած է:

Մարիամ լսած է որ Կեսարիոյ մէջ հայ որբեր կան որբանոցի մը մէջ: Որոշեր է փախչիլ հոն, բայց երբ Սեբաստիա հասած է՝ նորէն բռնուած է եւ սպասուիի եղած է: Ժամանակ մը ետք ան օգնութիւն խնդրած է օտար մարդոցմէ որ զինք տանին Կեսարիա. յաջողած է հասնիլ հոն, գտած է իր հօրեղբօր տղան, իմացած է որ իր մօրաքոյրը իր ամուսինին հետ կ'ապրի Ատանայի մէջ: Գացած Ատանա, հոն գտած է մօրաքոյրը:

Ան ամուսնացուցած է տղու մը հետ: 1921ին Մարիամ Պէյրութ հաստատուած է իր ամուսինին հետ եւ ետքը՝ Դամասկոս, ուր շրջան մը մնացած են, ապա վերադարձած են Պէյրութ, վերջնականապէս:

Հօրս մեծմայրը՝ Մարիամ, մահացած է եւ ես իր մասին այսքան գիտեմ. ինչ որ իմ ծնողքս պատմած է ինծի: Ընտանիքիս մէջ միայն ունիմ մեծհայրս, որ ողջ է եւ ինծի պատմած է թէ իր հայրը եղած է ֆետայի եւ կռուած է, որպէսզի հայրենիքը ազատէ թուրքերէն:

Այսօր մենք՝ չորրորդ սերունդի հայերս, պէտք է ամէն ձեռով պահենք մեր հայութիւնը եւ չմոռնանք մեր անմեղ նախահայրերը որ թուրքերուն սուրին տակ արիւն թափեցին: Մանաւանդ չմոռնանք մեր հողերը որուն գեղեցիկ բնութիւնը ներկայիս թուրքերը կը վայելեն եւ կը բնակին մեր տուներուն մէջ: Կը յուսամ որ օր մը բոլոր հայերս, կը վերադառնանք մեր հողերը եւ կը միանանք ներկայ Հայաստանին ու կը կազմենք նոր հսկայ Միացեալ Հայկական պետութիւն:



ԲԱԶՄԱԶԱՐԶԱՐ ԹՐՈՒԱՆՏԱՆ

Նարինէ Մարգարեան

Հայրս՝ զէյթունցի:

Մայրս՝ մարաշցի:

Ճիշդ այնպէս՝ ինչպէս հին ժամանակ, երբ զէյթունցիները կ'երթային Մարաշ եւ հոնկէ հարս կը բերէին:

Հօրս մեծհայրը ապրած է Զէյթունի Ֆոնուզ ականը: 1915ին երբ ան ֆետայիներու հետ կը գտնուէր Զէյթունի բարձր լեռները, ականատես կ'ըլլայ Ֆոնուզի հրկիզման. Այսպէս, ան կը կորսնցնէ իր ընտանիքը ամբողջութեամբ:

Կը հասնի Հալէպ, կրկին կ'ամուսնանայ, նոր ընտանիք կը կազմէ եւ կ'որոշէ վերադառնալ իր հայրենի հողը՝ Զէյթուն: Կը վերադառնայ Զէյթուն, սակայն չեմ գիտեր ինչպէս կը մասնակցի Մուսա Լերան հերոսամարտին:

...Մուսալեռցիներուն հետ ինք ալ կը հաստատուի Այնճար (ան դեր ունեցած է քաղաքական գետնի վրայ, ֆրանսացի պետական մարդոց հետ ժողովի նստած է):

Ան աղա էր: Հօրս մեծհայրը ունեցած է երեք աղջիկ եւ մէկ տղայ՝ Օսաննա, Էլմաստ, Մարի եւ Եսայի: Հօրս մեծմայրը շատ կանուխ կը մահանայ: Այս դժբախտութիւնը աւելի կը ծանրանայ, երբ հօրս մեծհայրը Այնճարի պաղօդին, գետը լողալով կը հիւանդանայ եւ կը մահանայ՝ ձգելով չորս զաւակները անտէր եւ անտիրական: Անոնք կը փոխադրուին Հալէպի որբանոցը: Մեծ աղջիկը՝ Օսաննան, շատ կարճ միջոցին կ'ամուսնանայ եւ կը հեռանայ որբանոցի մթնոլորտէն, կազմելով իր ընտանիքը:

Երբ հասուն տարիքի կը հասնին աղջիկները, մեծհայրս ալ կ'ամուսնանայ մեծմօրս՝ Լուսաձին Թրուանտեանի հետ եւ այսպիսով կը կազմէ ընտանիք, ունենալով չորս տղայ եւ մէկ աղջիկ: Հայրս տան ամէնափոքր զաւակն է:

Ուրիշ պատմություն է մեծօրս՝ Լուսածինին խորթ մօր պատմությունը: Ցառալի պատմություն մը՝ նման այն բոլոր հայ աղջիկներուն կամ տիկիներուն, որոնք Յեղասպանութեան շրջանին տառապեցան, որովհետեւ հայ էին եւ կին դասակարգին կը պատկանէին:

Մեծմայրս՝ միքանի ամսուայ նորածին, կը կորսնցնէ իր մայրը: Հայրը կ'ամուսնանայ երկրորդ անգամ՝ Թրուանտայի հետ, որ կ'ըլլայ իմ մեծօրս խորթ մայրը: Մեծմայրս երբեք չէ զգացած, որ իր հարազատ մայրը չէ Թրուանտան:

Մեծօրս խորթ մօր պատմությունը հետեւեալն է.- Յեղասպանութենէն առաջ ան ամուսնացած էր քահանայի մը հետ եւ ունէր զաւակ մը: Յեղասպանութեան ընթացքին Թրուանտան եւ տէրհայրը իրար կը կորսնցնեն: Թրուանտա՝ նոր հարս, իր նորածին զաւակին հետ կը բռնէ գաղթի ճամփան, ուր նորածինը կը մահանայ:

Թրուանտա գեղեցիկ կին էր: Անոր գեղեցկութիւնը աչքի կը զարնէ եւ ան արաբ ցեղապետի մը կինը կը դառնայ, կ'ունենայ երկու մանչ եւ մէկ աղջիկ: Արաբ ցեղապետը շատ կը սիրէ Թրուանտան, որ նախանձը կ'արթնցնէ տան մէջ ապրող միւս կիներուն: Անոնք կ'որոշեն Թրուանտային կզակը եւ երեսը գծել իրենց սովորութեան համաձայն: Թրուանտա կը մերժէ, չ'ուզեր քրիստոնեայ կնկայ իր դիմագիծը կորսնցնել: Երբ ամուսինը կ'իմանայ Թրուանտայի տխրութեան պատճառը՝ բոլորին կը զգուշացնէ Թրուանտայի նեղութիւն տալէ: Թրուանտա կ'ազատի այդ նեղ կացութենէն, սակայն ան երբեք ուրախ չէր: Օր մը, շրջուն հայ վաճառական մը կը գիտնայ Թրուանտային հայ ըլլալը եւ կը խոստանայ ազատել: Ան կը գտնէ Թրուանտային ազգականները: Փախուստի ամէն կարգադրութիւն ընելէ ետք, գիշերով իր երկու մանչ զաւակները ձգելով, Թրուանտան կ'առնէ միայն նորածին աղջիկը եւ կը փախչի Հալէպ: Բայց հարազատները չեն ուզեր այդ այլազգի նորածինը: Անոնք կը ստիպեն լքել նորածինը, յանձնել

որբանոց: Ամէն աղերսանք ապարդիւն կ'ըլլայ. Թրուանտա կը ստիպուի իր զաւակը յանձնել որբանոց եւ երբեք չ'այցելեր անոր, որովհետեւ երբեք չի ներեր ինքզինք իր կատարածին: Թրուանտա կ'ամուսնանայ մեծմօրս հօր հետ, որ արդէն միքանի զաւակ ունէր, անոնցմէ մէկն էր մեծմայրս՝ միքանի ամսուան նորածին:

Բաւական ետք Թրուանտայի առաջին ամուսինը՝ քահանան մէջտեղ կ'ելլէ եւ կ'ուզէ անպայման տեսնել զինք, բայց ան բացարձակապէս կը մերժէ, որովհետեւ ինք այլեւս ուրիշի կինն էր: Այսպէս Թրուանտա բաւական չարչարանքէ ետք կ'ունենայ իր ընտանիքը եւ դէպի Հայաստան ներգաղթի ժամանակ իր ամէնափոքր զաւակին հետ կը փոխադրուի Հայաստան այն յոյսով որ միւս զաւակներն ալ պիտի հետեւին իրենց, սակայն դժբախտաբար անոնք չեն միացած եւ Թրուանտա այլեւս չէ տեսած իր զաւակները:

Մեծհայրս իր ընտանիքով հաստատուած է Լիբանան: Ան արհեստով եղած է կօշկակար: Այդ արհեստը իմ միջնեկ հօրեղբայրս սորված է իր հօրմէն եւ կ'աշխատի: Հայրս արհեստով եղած է ոսկերիչ: Մեր ընտանիքին մէջ խառն ամուսնութիւն չէ եղած:

Մեծմայրս եւ իր հարազատները, որոնք զէյթունցի են, մինչեւ հիմա երբ իրար քով գան կը խօսին Չէյթունի բարբառով: Մայրս մարաշցի է, իսկ մարաշցիները ունին իրենց նշանաւոր դդումով ճաշը՝ *քեշքէք դապախլըն*, որ ամէն առիթի կը պատրաստեն եւ քով քովի գալով կ'ուտեն: Մօրս մօրաքոյրերը եղած են նշանաւոր Մարաշի ձեռագործ ասեղնագործողներ. իր մեծմօրմէն յիշատակ մնացած են Այնթապի ձեռագործ եւ ուրիշ շատ մը ձեռագործներ:

Եթէ ես կամ սփիւռքահայերս ապրէինք մեր պապերուն ծննդավայրը, որ մեր արդար իրաւունքն է, անշուշտ շատ բան տարբեր պիտի ըլլար: Նախ մեր հայրենիքին օդը, ջուրը եւ հողը վայելած պիտի ըլլայինք: Պիտի չթափառէինք օտար երկիրներ...



ՄՆԱՍ ԲԱՐՈՎ ԱՅԳԻՍ

Փաթիլ Մելքոնեան

Հայրիկս պատմած է, թէ ասկէ հարիւր տարի առաջ իր մեծհայրը՝ Մինաս Մելքոնեան, կ'ապրէր Ղոյախ գիւղին մէջ, որ նշանաւոր էր իր մեղմ կլիմայով, լայնատարած այգիներով ու հսկայ լեռներով:

Մինաս ունէր այգի մը եւ կը զբաղէր գինի պատրաստելով: Ան ունէր հինգ զաւակ: Մինասին կինը՝ Վիքթորիան, յղի էր իր վեցերորդ զաւակով: Մինասին գերդաստանը մօտաւորապէս հարիւրվաթւոն հոգի կը հաշուէր: 1915ին թրքական կառավարութիւնը կը հասնի Մինասին այգին ու կը ստիպէ, որ այգին իրենց յանձնէ: Ան կը մերժէ ու կը փորձէ վնասել զանոնք, բայց թուրք զինուոր մը իր սուրը անոր կողը կը խրէ, ապա զինք իր տան դռնէն կը կախեն: Քանի մը օրերու ընթացքին Մինասին ամբողջ գերդաստանը կը ջարդուի, Վիքթորիան իր զաւակներով կը քշուի Տէր Զօրի անապատը եւ օրերով ուժաթափ կը քալէ, զաւակները կը ջարդուին, բացի Յարութէն որ մեռելներու տակ կը պահուրտի: Անգութ զինուոր մը մօտենալով Վիքթորիային զայն կը բռնաբարէ, ետքն ալ սուրը փորը մտցնելով մանուկը դուրս կը հանէ ու օդը բարձրացնելով միւս զինուորներուն հետ կը սկսին խնդալ ու նայիլ թէ նորաձինը աղջիկ է, թէ՞ տղայ: Յարութը այս բոլորը տեսնելէ ետք զգուշութեամբ կը սկսի վազել զինուորներուն աչքէն փախչելով: Ճամփան կը զարնուի մարդու մը, մարդը կը ծոխ Յարութին աչքերը կը սրբէ, ու իր ձիով կը հասնին Հալէպի սահմանները: Հոն Յարութը կը յանձնէ նորաբաց հայկական որբանոցին:

Յարութ կը մնայ հոն մօտ քսան տարի. ետքը կ'աշխատի հայ կօշկակարի մը քով՝ Պրն. Երուանդ անունով, կը

ծանօթանայ անոր աղջկան եւ կ'ամուսնանան իրարու հետ: Անոնք կը հաստատուին Պուրճ Համուտ, կ'ունենան զաւակներ՝ Վիքի, Ռաֆֆի (հայրս), Վազգէն եւ Նենսի: Հայրս մեծհօրմէն ժառանգած է այգիի սէրը, իսկ հօրմէն՝ կօշիկի արհեստը: Ան մեր տան տանիքը փոքր որթատունկ մը մշակած էր:

Օր մը հայրս դրուագ մը պատմեց, թէ երեք գերմանացի զբօսաշրջիկներ Մինասին քով կու գան. ան գինի կը հրամցնէ, շատ կը խմեն ու կը գինովնան. Մինասը զանոնք իր տան մէջ կը պառկեցնէ, առաւօտեան քանի մը շիշ գինի կու տայ, ու անոնք շատ ուրախ ու գոհ կը մեկնին:

Հայրս կ'ըսէր թէ բարեբախտաբար մեր մականունը չէ փոխուած, նաեւ օտարի հետ ամուսնութիւն չէ պատահած մեր ընտանիքին մէջ: Հօրս ընտանիքը տարիներ ետք գետեզերքէն փոխադրուեցաւ Տրպպայէ:

Օր մը հօրս հարցուցի թէ մենք ինչու հողեր չունինք: Ան պատասխանեց. «Եթէ մենք մեր հայրենիքին մէջ մնայինք՝ կ'ունենայինք հողեր»:

Ես պահ մը մտածեցի թէ այսօր եթէ հողի տէր ըլլայի, այդ այգին մշակած կ'ըլլայի եւ տուն մը կը շինէի պարտէզով: Նաեւ եթէ մեր հայրենիքին մէջ ըլլայինք՝ ուսումը ձրի կ'ըլլար ու ապագային կ'առավարութիւնը մեր ծերութիւնը կը հոգար: Լիբանանի մէջ մենք ունինք շատ մը իրաւունքներ, հայկական եկեղեցիներ, դպրոցներ, թերթեր եւ այլն: Բայց մայր հայրենիքը միշտ ալ Հայաստանն է, թէեւ մեր երկրորդ հայրենիքն է սիրելի Լիբանանը:



ՄԵԾ ՄԵԾՀՕՐՍ ՀԱՅՐԸ

Հրակ Մեսրոպեան

Ես Հրակ Մեսրոպեան, գաւակն եմ Րաֆֆի Մեսրոպեանին եւ Շաղիկ Տէր խաչատուրեանին: Հայրս ծագումով ուրֆացի է, իսկ մայրս՝ մշեցի: Պիտի պատմեմ մօրենական ընտանիքիս անցեալի պատմութիւնը:

Մեծ մեծհայրս՝ Համազասպ Տէր խաչատուրեան, ծնած է 1905ին, Մուշի Խաշխալտաղ գիւղը, իսկ մեծ մայրս՝ Ազնիւ Մկրտիչեան՝ Մուշի Յրօնք գիւղը: Ըստ մեծօրս յուշերուն, Խաշխալտաղ գիւղը կը գտնուէր Մուշ քաղաքէն երկու ժամ հեռու, Սուրբ Կարապետ Վանք տանող ճամփուն վրայ:

Մեծ մեծօրս հայրը՝ Տէր խաչատուր Թամոյեան, Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետի վերջին քահանաներէն եղած է: 1915ին Վարդավառի Կիրակին նախորդող Երեքշաբթի, Սուրբ Կարապետ Վանքի վանահայր Վարդան Վարդապետ իր սպիտակ՝ Քալաշ անունով, ձիուն հեծած կու գայ Տէր խաչատուրին դրան առջեւ կը կենայ: Ան ձիէն կ'իջնէ դէմքը տխուր եւ սիրտը ալեկոծ, կ'ըսէ թէ Մուշ քաղաք պէտք է երթան ժողով գումարելու: Տէր խաչատուր կ'ըսէ թէ «մենք մեր ոտքով թակարդ պիտի իյնանք, քաղաքը դիւրութեամբ կրնանք ձերբակալուիլ. նախընտրելի է Սասունի կամ Սուրբ Կարապետի լեռները երթալ, ուր շատ ապահով է եւ ազատ, իսկ քաղաքը՝ կրնան մեզ պաշարել»: Վարդապետը կը պնդէ թէ քաղաք երթալը աւելի լաւ է, որովհետեւ իրենց ժողովը Ազգային Առաջնորդարանին մէջ պիտի գումարեն, իսկ եթէ լեռները բարձրանան, կրնան փոքրիկ կասկածով իսկ հետապնդուիլ եւ ձերբակալուիլ: Երբ Տէր խաչատուր կրկին կը հակառակի՝ Վարդան Վարդապետ կը շեշտէ թէ Մշոյ կառավարիչ Սերվէթ Պէյի հրամանով՝ քաղաք ժողովի հրաւիրուած են: Վարդապետը կը համոզէ թէ լեռները

բարձրանալը քաղաքական բնոյթ պիտի առնէ քան՝ կրօնական, ու կ'աւելցնէ. «հակառակ պարագային, եթէ տեսնես կացութիւնը վտանգաւոր է, քաղաքէն շատ դիւրին է Սասուն բարձրանալ»: Տէր Խաչատուր չի համոզուիր բայց կը համակերպի: Հետը կ'առնէ մեծ մեծօրմէս երեք տարի մեծ եղբայրը՝ Ենովքը, անոր լալուն եւ պնդումներուն վրայ:

Այս ճամփորդութիւնը շատ տարբեր էր սովորական ճամփորդութիւններէն. տան դրան առջեւ հաւաքուած էր բազմութիւնը: Վարդան Վարդապետ, Տէր Խաչատուր առանձին-առանձին կը համբուրուին բարեկամներու ու ազգականներու հետ եւ ձիերնին հեծած, առանց զէնքի կը մեկնին: Ատիկա կ'ըլլայ իրենց վերջին մեկնումը:

Իրենց մեկնելէն ետք ճամփաները հսկողութեան տակ կ'առնուին, իրարմէ լուր ունենալը անկարելի կ'ըլլայ: Երեք օր ետք, Ուրբաթ օր, ծանօթ հայերը ջորիներով մեր տան առջեւ կը կենան, երէցկիւնին կ'ուզեն նամակ մը յանձնել Տէրհայրէն: Նամակին մէջը գրուած էր թէ կացութիւնը շատ վատ է, ուստի թողուն տունը եւ ամէն ինչ, իրենց հետը վերցնեն քանի մը ամսուան ուտելիք եւ քաղաք երթան: Անոնք զարմանքով կը կարդան այս նամակը, թէ նախապէս ի'նք դէմ կեցաւ վարդապետին քաղաք երթալուն եւ հիմա ի'նք նամակ գրած է զիրենք տանելու: Չեն համոզուիր եւ նամակին կը պատասխանեն թէ կը մերժեն երթալ: Զորեպանները կը վերադառնան քաղաք:

Շաբաթ երեկոյ լուր կը տարածուի որ Ազգային Առաջնորդարանը պաշարուած է: Սուգը կը պատէ ամբողջ Տարօնի աշխարհը: Անմիջապէս Հաճի Մամէի տղուն՝ Սմբատին, քով կ'երթան որ քաղաքէն նոր եկած էր: Ան կ'ըսէ, թէ ճիշդ է պաշարումի լուրը եւ թէ ինք աշխատած է՝ որոշ լուր մը առնէ քահանայէն, բայց չէ կրցած, ու կ'աւելցնէ թէ ինք հաստատ գիտէ որ անոնք եւ իրենց նման կրօնական եւ աշխարհական յիսունէ աւելի անձինք ձերբակալուած են եւ

հսկողութեան տակ են: Սմբատէն կը խնդրեն որ առաւօտեան քաղաք իջնէ եւ նոր լուր բերէ:

Կիրակի առաւօտ պաշարուածները՝ շրջանիս երեւելի յիսուն-վաթսուն անձերէ աւելի (կրօնական եւ աշխարհական անձեր), կապուած եւ խիստ հսկողութեան տակ կը տանին Հալիւրնան գիւղը, եւ հազար ու մէկ տեսակ չարչարանքներէ վերջը կը սպաննեն. ատով ալ չգոհալով դիակները կը հաւաքեն մարագի մը մէջ ու քարիւղ լեցնելով կ'այրեն: Մասնաւորաբար շատ կը չարչարեն Վարդան Վարդապետը եւ քահանան՝ որպէս յայտնի գործիչներ եւ ազգային ղեկավարներ:

Այս դրուագը մեծ մեծօրս գրի առած յուշատետրի զանազան դրուագներէն մէկն է: Բոլոր գրութիւններն ալ իմ մէջս աւելիով կ'արթնցնեն պահանջատիրութեան ոգին: Յարգանք մէկուկէս միլիոնէն աւելի զոհուածներու անշիրիմ ոսկորներուն:



ԱԿԱ ՀԱՅԸ

Լոռի Միթիլեան

Մեծհայրս կը պատմէ, թէ իր հայրը՝ Յակոբ Միթիլեանը ունեցած էր մանչ զաւակ մը Հայկազ անունով. անոր մայրը ծննդաբերութեան ատեն մահացած էր:

Յակոբ կ'ամուսնանայ Պէթթիս Սանթուրեանի հետ եւ ուրախ ընտանիք մը կը կազմեն ու կ'ունենան աղջնակ մը: 1920ին ֆրասանցիները զգալով թէ թուրքերու մոլեգնած ուժերը պիտի յարձակին Մարաշի վրայ, իրիկունով - որպէսզի ձայն չելլէ եւ բնակիչները չզգան - իրենց ձիերուն ոտքերուն քուրջեր կապելով կը փորձեն փախչիլ Մարաշէն: Բնակիչները կը հետեւին ձիաւորներուն:

Յակոբ՝ հողաշէն պատին մէջ ծեփած գէնքը առնելով, իբր պաշտպան իր ընտանիքին, դուրս կու գայ իր բնակարանէն: Ան Մարաշի Ս. Յակոբ Վանքի որբանոցին մէջ կը տեղաւորէ երկու ամսուան աղջնակը՝ յոյսով, որ պիտի վերադառնան: Իր կնոջ՝ Պէթթիսին հետ, կը գաղթէ հազարաւոր մարաշցիներու հետ:

Օդը ցուրտ էր եւ ձիւնոտ, ժողովուրդը կը սառէր, լաց ու կոծ, արինալի տեսարաններ, իսկ Հայկազը խղճալի տեսք մը ունէր: Յակոբը զայն իր ուսերուն վրայ առած քալեց: Հօր համար դժուար էր զաւակէն բաժնուիլը: Ան ժամերով քալեց գիտնալով, որ Հայկազը սառած է: Մշուշոտ օդին մէջ Յակոբն ու Պէթթիսը իրար կորսնցուցին: Պէթթիս յուսահատ էր իր կեանքէն, սկսած էր տժգունիլ, դանդաղիլ. «զգացի՛ պիտի սառիմ», կը պատմէր ան: Յանկարծ երկու հուժկու երտասարդներ, որոնք դրացիին տղաքն էին, կը մտնեն թելերէն, վերարկու մը կ'անցընեն ուսերուն եւ կը կերակրեն Մարաշի *թարխանան*:

Երկար քալել է ետք ժողովուրդը կը հասնի կայարան: Պէտքերիս կը հանդիպի Յակոբին մեծ բախտաւորութեամբ եւ միասնաբար իրենց ընտանիքը կը վերակազմեն Պէյրութի Մար Մխայիլ շրջանին մէջ: Կ'ունենան երեք զաւակ՝ Անժէլ, Գրիգոր եւ Գուրգէն: Այդ շրջանին Հայր Պօղոս Արիսը եւ Ներսէսեանը Պուրճ Համուտի գետեզերքէն երկու թաղ կը գնեն եւ հայերու կը բաժնեն, որպէսզի հոն հաստատուին:

Հայերը հոն կը հիմնեն դպրոցներ, կը կառուցեն Ս. Քառասուն Մանուկ եկեղեցին ու կը յառաջանայ Նոր Մարաշ թաղամասը: Յակոբ Նոր Մարաշէն կը յաջողի գնել տուն մը, որուն տակ կար խանութ: Ան մաշիկ-հողաթափ (փանթուփ) կարող էր եւ իր օրապահիկը կը հանէր ամէն օր իր կարած փանթուփները քաղաք տանելով ու ծախելով:

Յակոբ իր կեանքի դժուար պայմաններուն հետ ունէր շատ կարծր բնավորութիւն: Մեծհայրս կը պատմէ. «Քառասուն Մանուկ դպրոցի երրորդ դասարանի աշակերտ էի, առտու մը երբ պայուսակս ուսս դրած դպրոց պիտի երթայի, հայրս կանչեց. Գրիգոր, եկու՛ր, պայուսակդ վա՛ր առ եւ նստէ սա աթոռին վրայ: Ան այնպէս խիստ էր որ չէի կրնար աչքերս աջէն ձախ դարձնել»: Դարձեալ մեծհայրս կը պատմէ «Տասնութը տարեկան էի, երբ օր մը հօրս հետ քաղաք պիտի երթայի փանթուփները ծախելու: Հայրս՝ յոգնած ու քրտնած, նետեց փանթուփները եւ ըսաւ. «գնա դու՛ն ծախէ նայիմ»: Առի փանթուփները եւ քաղաք իջայ ծախելու: Ի՞նչ տեսնեմ, քաղաքի կօշիկները տարբեր տեսք ունէին, զմայլեցայ անոնց: Առի հատ մը ձեռքս, աջ ու ձախ դարձուցի, լաւ մը դիտեցի եւ ...մոռցայ փանթուփները ծախելու: Իրիկունը տուն վերադարձայ եւ մօրս պատմեցի պատահածը ու ըսի, թէ ես կրնամ շինել այդ կօշիկներէն, բայց գոյքերու պէտք ունիմ աշխատելու համար: Հայրս լրգցած ժամանակ՝ մայրս անոր գրպանէն գաղտնի դրամ առաւ ինձի տուաւ եւ ըսաւ՝ առնեմ այն ինչ որ պէտք է: Յաջորդ օրն իսկ ապրանքները ապահովեցի, գիշերը գաղտնի աշխատեցայ: Երբ հայրս տուն

վերադարձա՝ կօշիկները պատրաստ էին: Յաջորդ օրը կօշիկները թուղթով փաթեցի թեփա տակ դրի եւ քաղաք իջայ: Յոյց տուի վաճառականին: Ան անմիջապէս գնեց այդ զոյգը եւ ըսաւ՝ ինչքան որ ունիմ բերեմ իրեն: Ուրախութիւնս անսահման էր: Գիշերներ ես ու փոքր եղբայրս՝ Գուրգէնը, կը պատրաստէինք եւ ցերեկը կը ծախէինք:

1948ին առետուրի մտանք, բայց հայրս իր փանթօւփի գործը զատէն կ'աշխատէր: Յուսահատ, ան օր մը սեղանը հրեց ըսելով. «Ես քու աշակերտդ եղայ, դուն իմ վարպետս»:

Գրիգոր հակառակ իր բազմազբաղութեան կը սորվի ֆրանսերէն, կը մասնակցի ցուցահանդէսներու՝ օտար երկիրներու մէջ, ուրկէ միշտ իր հետ կը բերէր կօշիկի նմուշներ, յատկապէս Իտալիայէն:

1962ին Գրիգոր իր ընտանիքով կը փոխադրուի Տպայէի շրջանը, բայց իր գործը կը մնայ Պուրճ Համուտի մէջ: 1966ին քաղաքի խանութը կը ճանչցուի «Լիօ Շուզ» անունով, որ կը մեծնայ ու հռչակ կը շահի որովհետեւ յատուկ էր: Նորածե, հանգստաւետ եւ որակաւոր էին իր կօշիկները, խանութին ցուցափեղկերէրն յաճախորդին ուշադրութիւնը կը գրաւէին:

Աւելի ուշ, Գուրգէն կը մահանայ անհանգստութեան պատճառով: Մեծհայրս կը շարունակէ գործը մինչեւ 82 տարեկան: Ապա Վիգէն ու Յակոբ Միթիլեանները կը ստանձնեն գործը, եւ ճգնաջան աշխատանք կը տանին բարձր պահելով պապերու ժառանգած գործը:

Հարիւր տարիներ անցան Հայոց Յեղասպանութեան ու կը շարունակենք գոյատեւել: Յարգանք մեր անմեղ զոհերուն ու հազար փառք այդ հուժկու երիտասարդներուն, որոնք մեծմօրս կեանքը փրկեցին: Ահա հայը իր աշխատասիրութեամբ եւ ինքնավստահութեամբ կու գայ ինքզինք փաստելու եւ արդարութեան ձայնը հասցնելու ամբողջ աշխարհին:



ՃԱԿԱՏԱԳԻՐ

Կարո Միսաքեան

Երկիր մը ծուլումի ենթարկելու լաւագոյն միջոցն է պատերազմը: Այս միջոցը յաճախ գործածուած է մեծ երկիրներու կողմէ՝ փոքր երկիրներու վրայ: Շատ են այն երկիրները որոնք կատարեցին նման վայրագութիւններ, բայց չէ եղած երկիր մը որ կրցած է պատերազմն ու Եղեռնը միասին այնպէս խառնել, ինչպէս՝ Օսմանեան Կայսրութիւնը, ասկէ 100 տարիներ առաջ՝ 1915ին, երբ կը գտնուէր Համաշխարհային Ա. Պատերազմին մէջ, ու երբ ոեւէ երկիր չէր հետաքրքրուած ուրիշով:

Անտեսեցին մեզ, չհետաքրքրուեցան մեզմով, չփորձեցին կասեցնել Թուրքիոյ վայրագ գործը: Այս Եղեռնին զոհ գացին իմ ընտանիքիս մեծհայրերը, բայց մեծմայրերը ազատեցան ու կրցան հոգ տանիլ ընտանիքի մնացորդացին:

Պատմութիւնս իմ մեծմօրս մօրը մասին է. ան հազիւ կրցաւ ազատել իր զաւակները թուրք ջարդարարներէն, որոնք չմեռնողը կ'ուղարկէին աքսորի: Անոնք կարաւանի մը միացած քալեցին երկրէն դուրս, հասան Սուրիոյ Քամըշլիի գիւղերէն մէկը, ուր կառավարութիւնը տուն-տեղ ապահովեց իրենց: Մեծմօրս մայրը ունէր երեք զաւակ՝ Վազգէն, Ջարեհ եւ Յասմիկ: Վազգէնը մեծ զաւակն էր, 11 տարեկան, Ջարեհը՝ միջնեկը եւ Յասմիկը՝ կրտսերը: Իրենց մայրը թոքախտէ կը տառապէր, եւ կը զգար որ իր վերջին օրերուն հասած էր եւ մէկը չունէր որ իր զաւակներուն տէր դառնայ այս դժուար օրերուն, մէկը չկար որ զանոնք որդեգրէ:

Ան ունէր իր անձնական ոսկիները որ կրցաւ փախցնել իր հետ: Ան որոշած էր որ այս ոսկիները իր զաւակներուն ապրելու դրամն է, որովհետեւ անոնք անկարող են աշխատիլ փոքր տարիքէն: Ան որոշեց այդ ոսկիները յանձնել հայ

քահանային, որ ստանձնած էր եկեղեցի մը որ հայերուն նուիրուած էր Սուրիոյ կառավարութենէն: Ան ըսաւ Տէրհօր որ ոսկիները քովը ձգէ մինչեւ որ զաւակները մեծնան ու դրամը օգտագործեն ապրելու համար իրենց անձնական օգտին:

Տէրհայրը կը մերժէ առաջարկը, եւ կը թելադրէ ժամկոչին քովը դնել: Մայրը կը փափաքի տեսնել ժամկոչը որպէսզի նախ քննէ, համոզուի, ապա՝ տայ: Ժամկոչը կը խանդավառուի եւ կ'ըսէ. «անկասկած կը պահեմ, մի՛ մտահոգուիք, ապահով ձեռքերու մէջ է»: Մայրը կը յանձնէ ոսկիները, եւ երկու շաբաթ ետք կը մահանայ: Զաւակները մէկը չեն ունենար նայելու իրենց, ու իրենց միակ միջոցը կ'ըլլայ ոսկիները ծախել որ իրենց ուտելիքը ապահովեն: Անոնք կ'երթան ժամկոչին քով, սակայն ան կը մերժէ իրենց ըսածները: Անոնք կը պատմեն եղելութիւնը Տէրհօր. ան բարկացած կը խօսի ժամկոչին հետ, սակայն ժամկոչը որոշումը չի փոխեր: Տէրհայրը կը վռնտէ ժամկոչը:

Զաւակները չկրցան անոր պատիժը տալ որովհետեւ անկարող էին, սակայն Աստուած չներեց իրեն: Երկու շաբաթ ետք ան կը կուրնայ եւ ամիս մը ետք փոսի մը մէջ իյնալով կը մեռնի, եւ այսպիսով պատիժը կ'առնէ: Զաւակները չկրցան դրամները առնել եւ այդ պատճառով դժուար կեանք մը կ'ապրին: Առաջինը Յասմիկը կ'ամուսնանայ իմ մեծօրս հետ, եւ կ'ունենան զաւակ մը որ հայրս էր, եւ ետքը՝ ես:



ՀԱՅՈՒ ԲԵԿՈՐ ՄԸ

Սեան Մկրտիչեան

«Արամ Չոլաքեան՝ վերապրած Յեղասպանութենէն ...» այսպէս կ'ըսէր խօսնակը:

Հաւաքուած էինք մեծմօրս տան մէջ, 11 տարի առաջ, մօրաքոյրերս, մայրս, մեծմայրս, մեծհայրս ու ես: Աղմկալի մթնոլորտ էր, ուրախ ենք, բայց երբ լսեցինք հեռատեսիլէն ըսուած այդ տողը՝ քար լռութիւն տիրեց եւ բոլորս հետաքրքրուած սկսանք հետեւիլ յայտագիրին:

«Յեղասպանութիւն» բառը չէր որ մեր ուշադրութիւնը գրաւեց, այլ՝ Չոլաքեան մականունը:

Արամ Չոլաքեան, աւելի ճանչցուած «*ժըպրօ* Արամ» անունով, ներկայացաւ բեմ. ան երկարահասակ, ճերմակ մազերով ծերուկ մըն էր, բաւական կը նմանէր մեծօրս:

Բոլորը ապշած, մտահոգ կը հետեւէին յայտագիրին, այնքան լուռ էինք որ, եթէ գնդասեղ մը նետէի՝ ձայնը կը լսուէր: Կրնա՞յ ըլլալ որ ան մեզի հետ կապ ունենար, կամ ազգական ըլլար:

Արամ սկսաւ խօսիլ իր դաժան յուշերուն մասին, անոր աչքերը լեցուած էին դժոխքի յուշերու տեսարաններով: Սիրտը՝ դառն ցաւով, կեանքը՝ լեցուած...:

Ձեռքը ունէր թաշկինակ մը, մատին վրայ ծալած, խաղալով այդ թաշկինակին հետ կը պատմէր իր Տէր Զօրի մէջ ունեցած թափառումը, որ իր կեանքը վերածեց դժոխքի:

Վեց տարեկան էր Արամը, երբ թուրքերը խուժած են իրենց տունը եւ արքորած իր մայրն ու հայրը: Ինք ու իրմէ ոչ-շատ մեծ եղբայրը փախած ու պահուրտած են ծառի մը ետեւ, ու անկէ տակաւին կը տեսնէին իրենց աշխարհ բերող անձերը ինչպէս կը պայքարէին, կը չարչարուէին: Բայց

անոնք ոչ մէկ բան ընել կարենալով կը դիտէին իրենց մօր, հօր սպաննուիլը, թուրքին ձեռքով...:

Ինչ գէշ զգացում է գիտնալը թէ սիրելիներդ ողջ են, բայց չգիտնալը թէ ուր են: ...Արամը փախած էր թուրքերէն ու վեց տարի մնացած էր գնչուներու քով, մինչեւ 13 տարեկան, երբ մարդիկ եկած ու բերած են զինք Լիբանան ուր մնացած է որբանոց իրեն նմաններուն հետ: Բայց որբանոցի ընկերները մինակ ձգելով զինք փախած են որբանոցէն:

Տարիներ անցած են եւ Արամը արդէն մեծցած ու դարձած է արհեստի տէր: Կը յիշէ թէ իր եղբօրը կոնակին վրայ նշան մը կար, հետք մը որ դժուար թէ ուրիշ անձ ունենայ: Կը փնտռէ ու կ'իմանայ թէ ան կը գտնուի Հալէպ: Կը մեկնի Հալէպ ու գիւղէ գիւղ թափառելով իր եղբայրը փնտռելով կը տառապի: Կ'անցին օրեր եւ կը հանդիպի ատաղձագործի մը, եւ կը նշմարէ այդ նոյն նշանը մարդուն վրայ:

Եղբայրն էր ան կը մօտենայ եւ կը հարցնէ թէ անունը Վազգէ՞ն է. առանց մէկ բառի ան կը փաթթուի իր եղբօրը, իսկ եղբայրը կը զգայ թէ եղբայրն է:

Այսպիսով Արամ կը գտնէ եղբայրը:

Կ'անցնին տարիներ: Արամը կը ստանայ հեռաձայն մը ու կ'իմանայ թէ իր միւս եղբայրը դարձեալ կը գտնուի Հալէպ: Ան կը մեկնի Հալէպ, կը ծանօթանայ եղբօր ընտանիքին:

Արամը ունեցած է կեանք մը որ մարդ մտածել իսկ չ'ուզեր այդպիսի կեանքի մը մասին. անբախտութիւն: Բայց ան պահած է իր ազգը, կրօնքը: Իր հօր ու մօր վրէժը լուծած էր պայքարելով եւ դառնալով հերոս մը, տիպար մը, կազմելով ոչ միայն ընտանիք մը այլ՝ հայ ընտանիք մը եւ պահպանելով իր ազգանունը:

...Այո, վերջապէս կրնամ ըսել թէ ան իմ մեծհօրս հօրեղբօր զաւակն էր: Մենք ընդունեցինք զայն մեր տան մէջ, եւ ուրախ եմ ըսելու թէ առիթը ունեցայ ծանօթանալու անոր թէեւ փոքր էի շատ ու չեմ յիշեր զինք:



ՍԵՐՈՔ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԵՒ ԺՈՂԷՖ ԹՈՒԹԻԿԵԱՆԻ ՇԱՌԱԻՒՂՆԵՐԸ

Վարդ Վարս Մկրտիչեան

Կասիոս Լերան ստորոտին, Միջերկրական Ծովու մակերեսէն շուրջ 800մ. բարձրութեամբ կը գտնուի հրաշալի Քեսապը, իրայատուկ՝ իր մաքուր օդով, գեղեցիկ բնութեամբ, ղօղանջող եկեղեցիներով, հայաշունչ դպրոցներով, մշակութային կեդրոններով: Քեսապը մեր Կիլիկիոյ փրկուած վերջին կտորն է: Այս դրախտին մէջ ապրած են եւ հասակ առած իմ նախահայրերս, որոնք ամէն ջանք թափած են պահպանելու համար իրենց գիւղն ու անոր մշակոյթը:

1800ականներէն իվեր Մկրտիչեանները կը բնակէին Քեսապ՝ զբաղած իրենց աշխատանքով: Մեծմօրս ընտանիքը կ'ապրէր ուրիշ հրաշալի վայր մը. բնութեան ծոցին մէջ գտնուող Քեսապի կից Էքիզօլուխ գիւղը:

1915ին, երբ թուրքը խուժեց Քեսապ եւ ժողովուրդը տեղահան ըրաւ, հօրս մեծհայրը՝ Սերոբ Մկրտիչեանը, ընտանեօք տարագրուեցաւ Ճըսըր Շղուր, իսկ Մարի Աբէլեանը (հօրս մեծմայրը), որ տեղահանութեան ատեն կը կորսնցնէ իր ընտանիքը եւ հարազատները, կը քշուի Տէր Աթիէ (Դամասկոսի մօտերը) եւ տարիներ որպէս որբ չարչարուելէ ետք կը վերադառնայ Քէօրքիւնա-Քեսապ եւ կը խնամուի իր հօրեղբօր՝ Տոքթ. Աբէլեանի կողմէ:

Ժողէֆ Թութիկեան՝ մեծմօրս հայրը, կ'ապրէր ԱՄՆ: Ան 1915ին երբ կ'իմանայ թէ գիւղը տեղահան եղած է ու վտանգի մէջ է, կը վերադառնայ Էքիզօլուխ եւ կը միանայ կամաւորներու խումբին, որպէսզի պաշտպանէ Քեսապը: Իսկ Մարի Մակարեանը (մեծմօրս մայրը) կը տարագրուի Ճըսըր Շղուր, ապա՝ Մահարտէ-Համա, կը կորսնցնէ ամբողջ

գերդաստանը: Երեք տարիներ ետք, կը վերադառնայ ընտանեօք, իր ծաղկեալ գիւղը կը տեսնէ աւերակ, փողոցները՝ անճանաչելի, պարտէզներն ու այգիները խոպան, տուները՝ թալանուած. օտարներ հաստատուած էին հոն: Ժողովուրդը սկսաւ վերանորոգման աշխատանքներու, Մկրտիչեաններն ալ նոյնպէս սկսան հերկել, ցանել ու մշակել ծխախոտ եւ դափնի, նաեւ զբաղեցան պարտիզամշակութեամբ: Մշակեցին թթենին, թզենին, որթատունկը, դեղձենին, ադամաթզենին եւ խնձորենին: Զբաղեցան անասնապահութեամբ, մեղուաբուծութեամբ եւ շերամաբուծութեամբ:

1939ին թուրքը կրկին խուժեց Քեսապ եւ զայն բաժնեց երկու մասի. Քեսապի շրջանը մինչեւ Էքիզօլուխ իշխեց Թուրքիան, Պաղճաղազէն անդին՝ պատկանեցաւ Սուրիոյ:

Ժողէֆ Թութիկեանը կամաւոր էր եւ կը բնակէր Էքիզօլուխ, ան կը փնտռուէր թուրք զինուորներու կողմէ, ան զինուորական կօշիկը ոտքէն չէր հանած եւ զինուորական հագուստները չէր փոխած երեք ամիս, որովհետեւ միշտ պատրաստ էր կռիւի, մէկ ձեռքին ատրճանակ, միւսին՝ հրացան: Առտու մը, երբ ժողէֆ աղբիւրի մը քով ծարաւը կը յագեցնէր, իրեն ընկերակցողը կը տեղեկացնէ թէ շշուկ մը կը լսէ. ժողէֆ կամաց մը դառնալով կը տեսնէ թուրք զինուոր մը, հրացանը ուղղած էր իրեն, կրակելու համար. ժողէֆ՝ խելացիօրէն կ'ըսէ թէ գլխու ցաւ ունի եւ չի կրնար ոտքի կենալ եւ յանկարծ արագօրէն եւ քաջութեամբ մեծ պատի մը վրայէն ցատկելով եւ ծուռ ու մուր վազելով կը փախչի երեք թուրք զինուորներու յարատեւ կրակոցներէն: Այս Աստուածային հրաշքէն ետք կը փոխադրուին Պաղճաղազ, մինչեւ Էքիզօլուխի կցուիլը Քեսապի, Սուրիոյ:

Սերոբ Մկրտիչեան եղած էր ֆետայի, իր կողքին նաեւ ունենալով երջանկայիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Վեհափառին հայրը: Ան եղած է Քեսապի Հայ Աւետարանական Համայնքին *մովսթարը* եւ 45 տարի վարած

է այս նուիրական ծառայութիւնը, իր կողքին ունենալով Տոքթ. Աւետիս Ինճեճիկեանը եւ ուրիշ համայնքի պետեր, որոնք միասին կրցած են Քեսապը կանգուն պահել:

Մենք ալ մեր հերթին, մեծմօրմէս սորվեցանք պահել աւանդութիւնները, որոնք փոխանցուած են սերունդէ սերունդ: Ծնողքս ալ մեզ դաստիարակեցին որ ջանանք միեւնոյն տոհմիկ բարքերը պահել: Անոնցմէ մէկն է մեր ընտանիքին նշանաւոր *փախլաւան*, նաեւ *ձիթօն փիկեղը*, *քեամանով քիշկիրը*, *քուրթենիկը*, *թոնիրով հացը*:

Հարսանիքները եղած են միշտ յատուկ. հարսը քալելով կ'ուղղուի եկեղեցի, ընտանիքին, հարազատներուն եւ բարեկամներուն ընկերակցութեամբ՝ երգով ու պարով, թմբուկով եւ զուռնայով: Իսկ փեսան կը պատրաստուի պսակին, երբ ընտանիքը կ'երգէ *Ջարթիր Որդեակ* երգը: Սակայն ամէնէն իւրայատուկը Քեսապի բարբառն է, որուն պահպանումը շատ կարեւոր է, նկատի առնելով որ քիչ թիւով խօսողներ եւ հասկցողներ կան:

Ներկայիս Մկրտիչեանները տարածուած են աշխարհի չորս կողմերը՝ Ֆրանսա, Հայաստան, Արժանթին եւ Անգլիա, բայց ամէնէն շատ՝ Մ. Նահանգներ եւ Քանադա: Միայն մեր ընտանիքը կը բնակի Սուրիա եւ Լիբանան:

100ամեակի սէմին, 2015ը չթեւակոխած, կրկին դաժան օրեր եկան եւ մութ ամպերը ծածկեցին Քեսապի ջինջ ու կապոյտ երկինքը. Ամպեր՝ սոսկումի եւ անորոշութեան, անպատասխան հարցումներու եւ կասկածներու ու ապագայի մտավախութեան, թէ թշնամին՝ Յեղասպան Թուրքը մինչեւ ե՞րբ անպատիժ պիտի մնայ, մինչեւ ե՞րբ անարդարութիւնը պիտի տիրէ, մինչեւ ե՞րբ նահատակներուն արեան կանչը անպատասխան պիտի մնայ, բայց եւ այնպէս, մենք կոչուած ենք պահանջատէր ըլլալու, պահելու մեր լեզուն ու մշակոյթը եւ հաւատարիմ մնալու մեր նահատակներուն սրբազան կտակին:



ՏԱՌԱՊԱՆՔ, ԳԱՂԹ ԵՒ ՎԵՐԱՊՐՈՒՄ...

Նայիրի Յակոբեան


«Նշան Յովսէփեան. ժողովուրդէն ճանչցուած Միշէլ անունով: Չեմ յիշեր բուն անունս: Արեւմտեան Հայաստանի Ուրֆա քաղաքէն տեղահան եղանք՝ մայրս, քոյրս եւ ես, այն ատեն հազիւ 4-5 տարեկան: Հայրս ձերբակալուած-քշուած էր մեզմէ առաջ թուրք զինուորներու կողմէ եւ ապա սպաննուած: Իսկ խեղճ մայրս կորսնցուցինք: Ան եղաւ այդ մեծաթիւ հայ մայրերու, քոյրերու եւ մանուկներու շարքին անօթի, ծարաւ..., որոնք մեռան հայ ազգի գողգոթայի ճամփուն վրայ: Շարունակեցի ճամփան քրոջս հետ, մեր մայրը ձգելով ետին: Սակայն այդ մեծ բազմութեան մէջ կորսնցուցինք զիրար: Շատե՛ր մեզի պէս կորսուեցան եւ իրար կորսնցուցին: Չէի գիտեր ինչ ընեմ. անշուշտ միայն պէտք էր լայի: Եւ ահա խումբ մը մանուկներու հետ ինքզինքս գտայ որբանոցի մէջ: Չեմ գիտեր շրջանը, սակայն մեզի հոգ կը տանէր մայրիկ մը՝ Խաթուն Մայրիկը: Ան իր աչքին լոյսին պէս կը պահէր մեզ: Որբանոցին մէջ կ'ուտէինք, կը խմէինք եւ զբօսանքի ձեւով բակ կ'ելլէինք կէսօրուան ժամերուն:

Որբանոցին դէմ կար թուրքերուն պատկանող զինուորատուն մը. միշտ կը տեսնէինք աստիճաններէն ելլող-իջնող թուրք զինուորները: Եւ ահա օր մը, ինչպէս կը պատահի ուրիշ մանուկներու հետ ալ, ես կ'ելլեմ որբանոցի երկաթէ դուռէն դուրս. թուրք զինուոր մը՝ դեղնորակ ու գեղեցիկ 4-5 տարեկան մանուկ մը տեսնելով, զիս կը գրկէ եւ զինուորատուն կը հանէ: Այսօրուան պէս կը յիշեմ պոռալս եւ լալս, սակայն զիս հանդարտեցնլու համար ինձի կու տայ ուտելիք եւ ուրիշ զինուոր մը շուկայ կը դրկէ, որ քիչ ետք կը վերադառնայ ձեռքը տոպրակով մը: Չինուորը հագուստներս

կը հանէ եւ ինծի կը հագցնէ նոր հագուստ՝ թրքական *զուպուն* եւ ոտքիս կօշիկ՝ *եմանի*:

Մինչ այդ, որբանոցէն կը զգան իմ բացակայութիւնս եւ կը սկսին զիս փնտռել: Իսաթուն Մայրիկը՝ քաջ ու զօրաւոր, քանի մը բարեկամներով կը սկսի զիս փնտռել: Ու ես, որ տակաւին կու լամ, Իսաթուն Մայրիկը ձայնս կը լսէ, կը վազէ քովս ու կ'ազատէ զիս: Այդ օրէն, Իսաթուն Մայրիկը զիս կը կոչէ Նշան:


Չեմ յիշեր որքան ժամանակ ետք հիւրեր ունեցանք որբանոցը: Անգլիացի զոյգեր եւ ընտանիքներ եկան՝ հոգեզաւակ առնելու հայ մանուկներ: Մարդ մը մօտենալով՝ սկսաւ զիս սիրել բայց քիչ մը անդին կինը սկսաւ սիրել սիրուն աղջիկ մը: Ու անոնք օտար լեզուով սկսան վիճաբանիլ եւ եզրակացութեան եկան, որ որդեգրեն աղջիկը: Ու այսպիսով ես մնացի հոն:



Նշան Յովսէփեան

Քանի մը տարի հոն մնալէ ետք մեզ փոխադրեցին Լիբանանի Ժպէլլի որբանոցը: Եւ ահա մեզմէ առաջ քշուած հայեր, խուժեցին որբանոց՝ փնտռելու համար իրենցմէ բաժնուած հարազատները: Լիբանանէն եւ նոյնիսկ Սուրիայէն եկան հայ ընտանիքներ փնտռելու, հարցնելու

իրենց քոյր-եղբայրներուն համար: Մինչ ես անկիւնը նստած լուռ կը հետեւէի ամէն մէկ անձի շարժումին, ինձի մօտեցաւ երիտասարդ մը եւ միասին ուղղուեցանք տնօրէնին սենեակը: Երբ մտայ սենեակ, տեսայ 15-16 տարեկան աղջիկ մը ու ինձի ըսին, թէ ան քոյրս է:



Փոքրիկն Նշան Յովսէփեան,
քոյրը եւ քեռայրը

Չեմ գիտեր ինչպէս հասած էր Հալէպ եւ ամուսնացած հայ երիտասարդի մը հետ: Քրոջս հետ ուղղուեցայ Հալէպ: Ինձի համար անձանօթ մարդիկ էին անոնք: Բայց քոյրս, իր բոլոր միջոցներով, գուրգուրանքով կը փորձէր ուրախ պահել զիս եւ կշտանալ իր եղբորը տարիներու կարօտէն: Քեռայրս՝ հայ կօշկակար մը, հազիւ օրական ապրուստը կ'ապահովէր, ինչպէս իրենց երկրէն քշուած ուրիշ հայեր. աղքատ էին եւ խղճալի կեանք կ'ապրէին: Ու յանկարծ օրին մէկը կը լսեմ անոր վիճաբանութիւնը քրոջս հետ. ան կ'ըսէր, թէ անկարող էր

երրորդ անձի մը ապրուստը հոգալ եւ կը ստիպէր, որ ես նետուէի գործի ասպարէզ: Ես այդ օրէն սկսայ աշխատիլ քեռայրիս հետ: Թէեւ քոյրս կը ջանար անելին տալ ինձի, սակայն կը նեղանար իր ամուսնոյն վարուելակերպէն եւ չէր կրնար փոխել իրավիճակը:

Դժուար ապրեցայ մօտ 3 տարի եւ որոշեցի բաժնուիլ իրենցմէ: Եկայ Լիբանան: Նոր երկիր, նոր կեանք, նոր էջ: Դարձեալ միս-մինակ, կեանքի այիքներուն նետուեցայ: Պէտք էր աշխատէի: Աստուծմէ զատ մէկը չունէի: Գործ գտայ

Պէյրուֆի Պուրճի հրապարակին վրայ գտնուող շարժապատկերներէն մէկուն մէջ: Աֆիշները կը փակցնէի, եւ որովհետեւ տուն-տեղ չունէի, գիշերները հոն՝ սրահին աթոռներուն վրայ կը պառկէի: Յերեկը գործով զբաղած, իսկ գիշերները ընկերներս մուկերն էին: Հոս ալ բաւական աշխատելէ ետք ընկերներ կազմեցի եւ միատեղ տուն վարձեցինք: Անոնցմէ լսելով, թէ St. Georges լողաւազանը գործաւորներ կ'ուզէ՝ հոն սկսայ աշխատիլ իբրեւ մաքրող:

Հոս սկսաւ կեանքիս նոր էջ մը: Ֆրանսացի մարձող մը, որուն սենեակը կը մաքրէի, գրաւեց իմ հետաքրքրութիւնս: Անոր աշխատասիրութիւնը եւ ազնուութիւնը իմ իտէալս եղան: Դուռին ճեղքէն կը հետեւէի իր գործին եւ կը փորձէի սորվիլ արհեստը, իր ձեռքի շարժումներէն: Օր մը, երբ դարձեալ ճեղքէն կը դիտէի զինք, բռնեց զիս, բայց առանց ջղայնանալու, այլ ուրախութեամբ կանչեց զիս իր մօտ եւ իր տեղը տուաւ որ աշխատիմ: ...Դժբախտաբար 1940ականներուն՝ պատերազմի շրջանին, ֆրանսացի պարոնս որոշեց Ֆրանսա վերադառնալ: Սակայն այս կէտը ինծի բախտաբեր եղաւ, որովհետեւ ան չգացած ինծի օգնեց, որպէսզի մարծելու վկայական ստանամ: Ան նոյնիսկ իր գրասենեակը ինծի տրամադրեց:

Հայը միշտ գիտցուած է իր աշխատասիրութեամբ եւ խելացութեամբ: Ինծի պէս շատ հայեր ինքնաշխատութեամբ եւ տաժանակիր աշխատանքով կրցան շարունակել իրենց կեանքը: Տարիներ աշխատեցայ եւ զբաղեցայ մարձանքով: Սենեակս էր իմ աշխարհս ...հոն էր իմ կեանքս:

Տակաւին օտար եւ մինակ կը զգայի, մինչեւ որ հանդիպեցայ կեանքիս կենտին՝ Ռոզային: Ուրֆա քաղաքէն, պահպանողական հայ ընտանիք, հինգ քոյր եւ մայր: Երեք քոյրերը ամուսնացած, իսկ ինքը՝ ամէնափոքրը, կ'ապրէր իր մօր եւ այրի մեծ քրոջ՝ Մարիին հետ: Ես եղայ իրենց հայր, եղբայր եւ իրենք եղան իմ ընտանիքս: Ես շարունակեցի աշխատիլ St. Georgeի մէջ մինչեւ Լիբանանի

քաղաքացիական պատերազմի օրերը, մինչև 1990ականները: Այդ թուականին ետք ունեցայ անձնական յաճախորդներ եւ արհեստս շարունակեցի այցելելով տուներ:

1970ականներուն՝ Լիբանանի պատերազմէն առաջ դարձեալ հանդիպեցայ քրոջս, որ ամուսնոյն մահէն ետք Հալէպէն փոխադրուեցաւ Լիբանան իր երկու մանչ զաւակներով: Անոնք միշտ կ'այցելէին ինծի առիթներով: Իսկ քրոջս մահէն ետք՝ 1990ականներուն, քրոջս զաւակները վերջնականապէս փոխադրուեցան Ամերիկա, եւ մեր կապերը խզուեցան: Միւս կողմէ անշուշտ՝ ծանօթացայ տիկնոջս միւս երեք քոյրերուն եւ իրենց ընտանիքներուն. առաջինը՝ Հալէպ, երկրորդը՝ Ամերիկա, իսկ երրորդը՝ Լիբանան կը բնակէին իրենց ընտանիքներով: Ամէնասերտ կապը անշուշտ Լիբանանի քրոջը՝ Ովսաննային եւ անոր զաւակներուն հետ էր, որ տեւեց մինչեւ մեր կեանքի վերջին օրերը եւ մանաւանդ անոր աղջկան՝ Մարիին, եւ դստեր՝ Անիին, որ ամուսնացած էր Գաբրիէլին հետ եւ ունեցաւ երեք աղջիկ զաւակներ: Թէեւ Աստուած մեզի զաւակ չտուաւ, սակայն Մարին, իր աղջիկը եւ ընտանիքը մեզի եղան զաւակներ եւ թոռներ: Անոնք մեզի կ'այցելէին ամէն առիթի եւ շաբաթավերջերուն: Կ'ընէին պէտք եղած գնումները եւ կ'եփէին որոշ ճաշեր: Մինչեւ իսկ չեմ մոռնար շաբաթ օրով՝ 9 Փետրուար 2002ին, երբ կարկանդակով եկան տօնելու մեր ամուսնութեան 50րդ տարեդարձը:

Կնոջս քոյրը՝ Մարին, հիւանդացաւ եւ մեռաւ 82 տարեկանին, 2003 թուականին: Մնացինք ես՝ 89 տարեկան եւ կինս՝ 79 տարեկան: Կնոջս առողջութիւնը սկսաւ ետ երթալ. ան չհաւատաց իր քրոջ մահը, 82 տարեկանին իյնալով իր կոնքի ոսկորը կոտրեց: Իր գործողութենէն ետք ստիպուեցայ զինք դնել Պուրճ Համուտի ՔԱՀԼ Ծերանոցը: Մինչ ինծի տէր գտայ՝ Մարին, Անին եւ Գաբրիէլը, որոնք ամէն Կիրակի զիս իրենց կը տանէին եւ տիկնոջս այցելելէ ետք կը հանէին զիս տուն: Ես ալ՝ որոշ տարիք առնելով

սկսած էր առողջութիւնս ետ երթալ: Երբ օր մը տունն էի առանձինս, ինկայ: Համոզուեցայ, որ ես ալ պէտք է ծերանոց երթամ: Եւ այդպէս ալ եղաւ: Տիկինս եւ ես մնացինք կուրանոցի բաժինը՝ միշտ մեզի այցելու ունենալով Մարին, Անին եւ Գաբրիէլը:

Ինչպէս երիտասարդութեանս պատասխանատու էի կնոջս եւ իր քրոջը, կեանքիս վերջին օրերուն ալ...կ'աղօթէի Աստուծոյ, որ իրենք մահանան ինձմէ առաջ, պարզապէս որպէսզի իրենց հոգ տանէի իբր պատասխանատու: Այդպէս ալ եղաւ: Մարիին մահէն ետք, կինս՝ Ռոզան, վերջին շունչը տուաւ 7 Յունուար 2008ին: Ռոզան հողին յանձնելէ ետք, զգացի որ ինձի համար այլեւս անիմաստ էր ապրիլը. պատրաստ էի մեռնելու, որովհետեւ այլեւս ոեւէ մէկու հանդէպ պատասխանատուութիւն չունէի. իսկապէս, երկու շաբաթ ետք վիճակս ծանրացաւ եւ անկողին ինկայ: Հոգիս Աստուծոյ յանձնեցի 2 Փետրուար 2008ին»:

Անվախ, հուժկու եւ ինքնավստահ երիտասարդ եղած էր ան: Զարդէն ազատելով, ապրեցաւ 97 տարի: Կրցաւ դէմ կենալ կեանքի բոլոր դժուարութիւններուն: Իր կամքին տէրը ըլլալով կրցաւ ապրեցնել ընտանիք: Հողը թեթեւ գայ վրադ, Նշան քեռայր:



ԱՅՍ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԾԱՌԸ... 2015...

Անահիտ Գէորգ Նալպանտեան, ուրֆացի

Դեկտեմբեր ամսու մէջ ենք, ծնողքիս կը հարցնեմ թէ երբ պիտի զարդարենք նոր տարուան ծառը: Հայրս կ'ըսէ. «երբ նոր տարուան արծակուրդը առնէք, առաջին օրը կը շտկենք»:

Վերջապէս կը հասնի արծակուրդի առաջին օրը. հայրս պարտականութիւն կու տայ նոր տարուան ծառը եւ զարդարանքի պսպղուն գնդակները իջեցնել տանիքի շտեմարանէն:

Հօրս տուն վերադարձին արդէն ծառն ու անոր զարդարանքը պատրաստ՝ կը սպասէին հիւրասենեակին մէջտեղը: Երեկոյեան ընթրիքէն ետք, հայրս նոր տարուան եղանակներու խտասալիկը դնել տուաւ համակարգիչին մէջ ու անուշ երգերով եւ մեր ընկերակցութեամբ սկսանք աշխատանքի: Անցկութեամբ կը սպասէի, թէ ինչպէս պիտի ըլլար տօնածառը: Նախ ծառին տակ բարձունք ստեղծեցինք, որպէսզի կարենանք լերան ու քարայրին համար տեղ ապահովել, ապա ծառը բարձրացուցինք, լոյսերը վրան տեղաւորեցինք, յետոյ ուրախ զուարթ կլոր, պսպղուն ոսկեայ գնդակները վրան զետեղեցինք: Կէս գիշերին արդէն իսկ գեղեցիկ տօնածառ մը ունեցանք լոյսերը վառելէ ետք, մտուրը շտկելէ ետք, կերպարները տեղաւորեցինք քարայրին մէջ՝ սպասելով Յիսուսի ծննդեան օրը: Տան մէջ ուրախութեան ժպիտներ կ'արծակուէին: Հուռաաաա....

Յաջորդ օրը, երբ մօրս հետ շուկայէն վերադարձանք, անակնկալի եկանք. մտուրին վրայի լեռնաշղթայի բարձունքներուն վրայ ձինաճաճկ քաղաք մը հիմնուած էր, տարբեր հասակով շէնքերով: Հետաքրքիր մօտեցանք եւ ի՞նչ տեսնենք. հօրս ձեռակերտով իւրաքանչիւր շէնք մեր

գերդաստանին մաս կազմող ընտանիքի անունով կերտուած էր. զարմանքով հարց տուի հօրս, թէ ի՞նչ էր նպատակը այս պատրաստութեան, ան ժպիտով պատասխանեց. «այս շէնքերը մեր գերդաստանի ճիւղաւորումներն են, իւրաքանչիւրը կը պատկանի մօրաքոյրերուդ, հօրաքոյրերուդ, մօրեղբայրներուդ, հօրեղբայրներուդ, մեծհօր եւ մօր, անոնց ծնողներուն որ գիտնաք ձեր արմատները: Երկու կողմի ընտանիքներու անդամներու շէնքերն են. ծնողք ու որդիք»:

Յանկարծ փայլատակեցին ուղեղիս լարերը, միտքս եկաւ արձակուրդի ընթացքին պատրաստելիք մեզի տրուած հարցարանին աշխատանքը, վերնագիր ունենալով «Իմ Ընտանիքիս Պատմութիւնը»: Ժամանակս տրամադրելով սկսայ աչքով այցելութիւն տալ իւրաքանչիւրին, սկսայ փնտռել ծնողքիս ծնողներուն անունները:

Շարքը երկար էր, շառաւիղը՝ մեծ: Երբ հասայ հօրս մեծհօր եւ մեծմօր շէնքին, հարցուցի, թէ արդեօք բան մը գիտէ՞ր անոնց մասին: Ըսաւ, թէ մեր ինչի՞ն է պէտք, մանաւանդ նոր սերունդի զաւակներուն, որ մինչեւ այսօր տարուած են համակարգիչի ընձեռած բարիքներն ու շնորհքները վայելելով: Երբ պարզեցի նպատակս, ժպտելով ըսաւ. «տանիք կ'ելլես, ձայներիզներուս մէջ կը փնտռես «Մեծմօրս Հետ Հարցազրոյց»ը, մտիկ կ'ընես եւ պէտք եղածը կը քաղես»: Չհաւատացի ըսածներուն, կարծելով, թէ կատակ կ'ընէր՝ ըստ սովորականին: Երբ կրկնեց խօսքը, վազելով տանիք բարձրացայ, քանի որ հօրս աշխատանքի դաշտը վերն էր: Ամրան թէ ձմրան նոյնն էր:

Բաւական փնտռտուքէ ետք, վերջապէս գտայ: Վար իջնելով հօրս ցուցուցի, թէ ճի՞շդ էր: Դրական պատասխան: Սակայն ինչպէ՞ս մտիկ ընէի երբ դարը փոխուած էր եւ այստեսակի գործիքները ժամանակավրէպ դարձած էին: Հայրս խնդալով ըսաւ. «աղջիկս, քիչ մը մարզանք ըրէ, ետ տանիք բարձրացիր, «պապուդ սթօք» մեքենային վրայ մտիկ

ըրէ»: Օդը պաղ ըլլալով, մեքենան սենեակս իջեցուցի, ես ու պզտիկ քոյրս անյագօրէն մտիկ ըրինք: Հետաքրքրականը այն էր, որ հօրս ծայնը ասկէ 35 տարի առաջ ինչպէ՛ս էր արձանագրուած Պուրճ Համուտի առաջին ռատիօկայանին համար Ապրիլ 24ի առթիւ:

Հարցազրոյցը տեւած էր երկու ժամ, սակայն արձանագրութեան տելոդութիւնը մէկ ժամ էր: Երկու քոյր մերթընդմերթ աչքի ծայրով իրար կը գննէինք. մեր դէմքի արտայայտութիւնները երբեմն ուրախ երբեմն տխուր կերպարանք կը ստանային: Հազիւ վերջ գտան խօսքերը, սրտիս վրդովմունքը մեծ էր, մամիկին ծայնով պատմուածքը շատ ցաւալի էր առաջին բաժնին մէջ: Յուզմունքս չկրցայ զսպել, որոշեցի այս վիճակէն դուրս գալ ու աշխատանքս նոր տարիէն ետք կատարել:

Նոր տարին ուրախութեամբ անցընելէ ետք, հանգիստի օր մը, կրկին մտիկ ըրի ծայներիզը. հօրս մեծմայրը կը պատմէր սկսելով մանկութեան օրերէն.-

«Ինչ որ կը յիշեմ, տակաւին չորս տարեկան էի, երբ մօրս գիրկն էի եւ գաղթի ելած էինք»: Չի յիշեր հօր ու մօր անունները, ոչ ալ հօր գործին մասին գաղափար ունի. միայն գիտէ, որ ինք մօր հետ Երզնկայէն գաղթի ճամփան բռնած է հօր մահէն ետք: Ըստ մօր՝ հայրը սպաննուած էր թուրք զինուորներու ձեռքով: Մեռելներու մասին գաղափար չունենալով՝ չէր գիտեր ինչ կը նշանակէ մեռել: Ճամփու ընթացքին մայրն ալ կը մահանայ: Ինք յօգնած, թմրած մօր գիրկը երկար ժամանակ պառկած կը մնայ: Երբ կ'արթննայ, չորսդին մարդ չի տեսներ. կը փորձէ մայրը արթնցնել, սակայն ապարդիւն, ինք արթուն՝ մայրը պառկած, արդէօք ի՞նչ ձեւով մայրը արթնցնէր, կու լայ՝ մտիկ ընող չկայ: Երբ արցունք չի մնար աչքերուն, միտքը կու գայ մօր խօսքերը, թէ՛ իր մէջքը կապոցին մէջ միքանի ոսկիներ պահած է, խրատելով. «կ'առնես ու մարդու կու տաս, որպէսզի հացով, ուտելիքով փորոգ կշտացնես»: Միքանի ոսկիները առնելէ

ետք, շուարած աջ ու ձախ կ'երթայ. անօթի-ծարաւ բաւական թափառելէ ետք, վերջապէս կը հասնի լճակի մը մօտ. ծարաւը յագեցնելու համար՝ ուրախութենէն կը վազէ ջուր խմելու: Հազիւ կը ծոխ, յանկարծ բաղեր վրան կը յարձակին, կարծես թուրք ըլլային, նոյնիսկ կենդանիները թուրքերուն հաշուոյն կ'աշխատէին: Օգնութիւն կը կանչէ լալով. ծայն տուող չկայ: Անոնցմէ մեծը կը յաջողի ոտքը խաճնել: Բաղերուն հետ կռիւի կը բռնուի, գետնէն ծառի ճիւղ մը կը վերցնէ, ահ ու դողով՝ այդ ճիւղով կը յաջողի հեռացնել բաղերը: Փորը ջուրով լեցնելէ ետք, ծառի մը տակ կը նստի: Վերքը լուալէ եւ հանգչելէ ետք, կաղալով կրկին հոս ու հոն կը թափառի մէկը գտնելու համար: Ողջ էակ դիմացը չ'երեւիր, անոնց փոխարէն կը հանդիպի այլանդակ պառկած մարմիններու, որոնք երկար ժամանակ աչքին առջեւէն չէին հեռանար...

Մանուկներ, կիներ, մարդեր մերկ, կիսամերկ՝ ճամփու եզրին առանց ամչնալու պառկեր են. «խելքս չէր հասներ որ գիտնայի ինչու այդպէս պառկած են»: Սարսափը սրտին մէջ կը շարունակէ շրջիլ, վերջապէս հեռուէն կը նշմարէ՝ մարդու կերպարանքներ իր ուղղութեամբ կը մօտենան, եւ ահա կարաւան մը, որ արհաւիրքէն ճողոպրած կը փախչի ապահով վայր մը գտնելու, իր մօտ կը հասնի: Կին մը կը նշմարէ որ առանձին որբ մըն է. զինք կը համոզէ որ միանայ իրենց: Խումբին միանալով, գիշերով կը հասնին Ուրֆա: Հոն կինը իրեն կը յանձնէ Միս Շաթըքի Որբանոցը: Որբանոցի կեանքը քիչ մը կը սփոփէ առանձնութեան վիճակը: Հոն կը մնայ հինգ ամիս, կը սորվի ԱԲԳ եւ Հայր Մեր: Իրեն միշտ կը յիշեցնեն որ չմոռնայ թէ հայ է...

Բայց արհաւիրքը կը հասնի Ուրֆա:

Սեպտեմբերի վերջաւորութեան հայկական սփրանքներով սկսած ինքնապաշտպանութիւնը կը տել մէկ ամիս: Դիմադրութիւնը հետզհետէ կը տկարանայ գերմանական հրասայլերու ոմբակոծման տակ: Հոկտեմբերի վերջը Ուրֆայի անկումէն ետք, թուրքեր կը մտնեն հայկական

թաղերը, կ'այրեն, կը թալանեն, կը սպաննեն մեծերը, կը յարձակին Միս Շաթըքի Որբանոցին վրայ այն պատրուակով՝ որ հոն զինեալներ պահուրտած են: Միս Շաթըք կ'ընդդիմանայ, սակայն ապարդիւն. թուրք դարանակալ մը զինք կը վերցնէ որպէս ապագացու սպասաւոր, կը տանի իր տունը: Ինք կը դառնայ տան ծառայ, կը սպասարկէ տան անդամներուն: Ծեծով՝ կ'ենթարկուի բոլորին. իր լացուկոծը ոչ մէկ արդիւնք կու տայ: Նոյնիսկ շուկայի գործերը իրեն կը հրամայեն որ կատարէ: Երեք տարի կը սպասարկէ թուրք ընտանիքին, ամէն անգամ որ շուկայ կը դրկէին որ ուտելիք ապահովէ, այդ միջոցին կը հանդիպէր Միս Շաթըքի Որբանոցը՝ իր ընկերուիիները տեսնելու, անոնք դարձեալ կը յիշեցնէին, թէ չմոռնայ որ հայ է:

Անգամ մը կը փորձէ մնալ Միս Շաթըքի մօտ: Սակայն թուրքը անողոք է, գիտէ որ ինք կը հանդիպի որբանոց եւ իմանալով որ հոն պահուրտած է, կ'երթայ ու ետ կը վերադարձնէ զայն տուն: Աղուոր ծեծ մը ուտելէ ետք, երեք օր կը պատժուի, յետոյ սովորական կը դառնայ կեանքը մինչեւ իր անհանգստութեան օրը, երբ կը վիճի ու կը պնդէ որ խորթ եղբայրը երթայ իր տեղ, ծեծի տակ կը ստիպուի իր գործին տէրը ըլլալ: Կ'իջնէ շուկայ լացով, հեկեկալով, շուկայի մէջ կը հանդիպի իրմէ մեծ ընկերուիիին, որ պատրաստութիւն կը տեսնէր ճամփորդելու մօտակայ գիւղ մը: Իրեն կ'առաջարկեն միանալ իրենց եւ ազատիլ թուրք բարբարոսներու ձեռքէն: Կը վախնայ պատիժէն ու մերժելով կը հեռանայ եւ կ'ուղղուի դէմի տունը: Հազիւ թաղին անկիւնը կը դառնայ, ինքնիրեն կը մտածէ որ այսպէս այնպէս՝ մեռած է, ինչու մինչեւ վերջ ծեծ պիտի ուտէ: Եթէ բռնուի նորէն ծեծ պիտի ուտէ, իսկ եթէ յաջողի փախչիլ՝ լաւ կ'ըլլայ: Վերջապէս միտքը կը փոխէ, վազելով ընկերուիիներուն քով կը հասնի, որոնք արդէն կազմ ու պատրաստ էին քալելու, կը նետուի անոնց մօտ, զինք կը դնեն պարկերու ետին, որ ճամփու ընթացքին մէկը չնշմարէ: Միանալով անոնց, այսպիսով կը փրկուի թուրքին լուծէն: Մէկ

Ժամ ետք կը հասնին Արաբ Փունար գիւղը (որ կը կոչուի Այն Արապ, իսկ այսօր քիւրտերը կ'անուանեն Քոպանի), որ սահմանակից էր Ուրֆայի:

Հոն կը ծանօթանայ հայ ընտանիքի մը, որ կ'որդեգրէ զինք: Իր դիմագիծին նայելով զինք կը կոչեն «Ազնի», սակայն ինք կը հաստատէ որ անունը «Հռիփսիմէ» է եւ ոչ «Ազնի»: Ընտանիքին հայրը՝ այժմու ծնողքը, կը համոզէ որ ապահովութեան համար է փոփոխութիւնը, որպէսզի հալածանքի չենթարկուի: Անունը կը փոխուի եւ մաս կազմելով այս ընտանիքին կը կոչուի «Ազնի Հազարվարդեան»: Ծնողքը, երկար ժամանակ զաւակ չէր ունեցած. իր գալուստը բախտաւոր կ'ըլլայ եւ ծնողքը կ'ունենայ յաջորդական երկու եղբայր եւ երեք քոյրեր: Բազմանդամ ընտանիքին հետ կ'ապրի մինչեւ բախտը կ'ունենայ ամուսնանալու ոսկերիչ Գէորգ Գրտեանի հետ: Իր բախտէն Աստուած կը պարգեւէ զաւակներ եւ կ'ունենայ երկու աղջիկ եւ երկու մանչ:

Երբ կը հարցնէ հայրս իր հօր-մօր անունները, ան կ'ըսէ.- «չեմ գիտեր, տղա՛ս, միայն կը յիշեմ գաղթի ճամփան բռնած ժամանակ մօրս գիրկն էի. չէր ուզեր վար ձգել զիս՝ չկորսնցնելու մտահոգութեամբ: Իսկ հայրս չէի տեսներ, քանի որ մայրս կ'ըսէր որ թուրքերը զարկին, մեռաւ պապադ ու կու լար»:

Տասնվեց տարեկան հասակին իր առջինեկ դուստրը՝ Ռոզան (որ իմ մեծմայրս է) կ'ամուսնացնէ փռապան Յակոբ Նալպանտեանին հետ, որ ծնած էր Ուրֆա եւ կ'ապրէր Արաբ Փունարի մէջ: Հոն գործերը թերեւ ըլլալով՝ զոյգը կ'որոշէ Պէյրութ հաստատուիլ բարեկամներու խորհուրդով: Կը փոխադրուին Պէյրութ, ուր կը հաստատուին ուրֆացիներու յատուկ թաղամասին մէջ՝ Կիլլապաշէն, Նոր Սիսի շրջանին մէջ:

Հազի տեղաւորուած իրենց բնական կեանքը կ'ապրին՝ ներգաղթի լուրը կայծակնային արագութեամբ կը տարածուի:

Հօրս հօրեղբայրը ընտանեօք եւ տասնեակ մը ընտանիքներ կրկին գաղթի ցուպը կը բռնեն, սակայն այս անգամ՝ հայրենիք, կարծելով որ հոն շատ հանգիստ պիտի ապրին. միքանի տարի ետք շատեր վերադարձան ռուսական ռեժիմին չդիմանալով: Անոնք որոնք իրենց տունը չէին ծախսած՝ բախտաւոր էին, որովհետեւ դժուարութիւն չունեցան տունի:

Քանի մեծհայրս տունը գնած էր, այդ իսկ պատճառաւ չէր ուզած կրկին գաղթի ճամփան բռնել եւ ներգաղթել: Ան կ'ունենայ հինգերորդ գաւակը: Բոլորին անունը հայկական անուն կը զատէ՝ Կարապետ (հօրս մեծհօր անունով), Վարդգէս (նահատակ հայ երեսփոխանին անունով), իսկ վերջինը Զօհրապ՝ Գրիգոր Զօհրապի յիշատակին, որպէսզի Վարդգէսը առանձին չմնայ: Ուրֆայէն դուրս հանուած ու սպաննուած ըլլալուն՝ Գրիգոր Զօհրապի եւ Վարդգէսի աղէտալի մահը շատ գէշ տպաւորութիւն ձգած էր մեծհօրս վրան, որովհետեւ անոնց վեհանձն հոգին բարձր գնահատած էր. այս անուններով ինքզինք հպարտ կը զգար ու իրենց յիշատակը անթառամ կը պահէր:

Որոշ ժամանակ ետք, մեծմօրս ամուսնոյն անակնկալ մահէն ետք, կը փոխադրուին նոյն շրջանին մօտիկ, Պուրճ Համուտի ծերանոցին շրջանը: Մեծհայրս իր չորրորդ գաւակը ունենալէ ետք կ'որոշէ նստած տան հողը գնելէ ետք երեք յարկանի շէնք մը բարձրացնել: Իսկ երկու տղաքը կը դրկէ Այնճարի Հայ Աւետարանական գիշերօթիկ վարժարանը: Ամառները, մեծհայրս կը ստիպէր իր գաւակները որ իր արհեստը սորվին: Մեծհայրս վարպետ փռապան մը ըլլալով, իր պատրաստած հացը, Ուրֆայի հայկական մսաշօթը, *կելինի հացը*, քեսապի յատուկ *ճերմակ հացը*, *չամիչով պըրիորը* հոչակ շահած էին. բոլորն ալ կ'ըսէին «Ֆռնճի ճանիկին քովէն բերէք խմորեղէնները»:

Տղաքը՝ տեսնելով որ յոգնեցուցիչ գործ է փռապանութիւնը, չէին ուզեր հետեւիլ իրենց հօրենական

գործին, որովհետեւ գործաւորները երբեմն կը բացակայէին, եւ ամբողջ բեռը կը մնար մեծօրս վրայ: Ան ալ իր կարգին ստիպուած առաւօտեան կանուխ ժամերուն տուն կու գար եւ մեծմայրս արթնցնելով հետը կը տանէր իրեն օգնելու համար:

Այդ ժամանակ այսօրուան արդիական մեքենաները չկային, որ խեղճ մեծհայրս հանգիստ աշխատէր: Իսկ այսօր շատ դիւրին աշխատանք է, որովհետեւ մեքենաներն են, որ գործերուն ինիսուն տոկոսը կը կատարեն: Երբ շէնքի շինութեան կը սկսին, ստիպուած երկու անդրանիկ զաւակները գիշերօթիկ կը դրկէ որ նեղութեան չմատնուին: Սակայն ամառը, երբ կը վերադառնան անոնք սկիզբը ինքնաշարժի նորոգութեամբ կը զբաղին, յետոյ՝ շապկագործութեամբ, որ կը շարունակեն մինչեւ այսօր: Սակայն հայրս անոնց փոխարէն ամառուայ արծակուրդին մեծօրս կ'օգնէր, մանաւանդ երբ գիւղ ելլէին:

Կեանքը հաճելի էր, որովհետեւ ճամփաները շատ ինքնաշարժներ չկային: Ժամը չորսին ընտանիքները կ'աւլէին իւրաքանչիւրը իր տան առջեւ, կը ջրէին եւ կը պատրաստուէին փողոցի ժողովներուն, տղամարդիկ թուղթ խաղալով կը զբաղէին, կիները *ճեննէթ*՝ կուտ, ուտելով շատախօսութիւն կ'ընէին, եւ կամ մեծերուն գաղթի ճամփան պատահած դէպքերուն մասին կը խօսէին, կամ նոր լուրեր կը սպասէին թրքական սահմաններէն, իսկ աղջիկները *գիծ* կամ *հինգ քար* խաղալով կը զբաղէին: Տղաքն ալ հետաքրքրական խաղեր ունէին, ինչպէս *աչք խփուկ*, *չելլիկ*, *ուզուն էշէկ*, իսկ փոքրերը գնդիկով եւ ծիրանի կուտով խաղը կամ *հոլի խաղը* կը խաղային: Բոլոր խաղերն ալ անվնաս էին, բացի *ուզուն էշէկ* խաղէն, որ տոկունութիւն ցոյց տուող խաղ էր:

Ձմեռը աւելի հետաքրքրական էր: Տունը նստած Ուրֆայի բարբառով պատմութիւններ կը պատմէին. հայրենիքի, գաղթականներու, ներգաղթի զրոյցները շատ էին: Իսկ մեծմայրը պատմութեան ընթացքին ամէն անգամ «հէյ վախ» մը կը բացագանչէր երբ իր յուշերուն մէջ մեռել մը յիշէր:

Ուրֆացիներուն մէջ թրքերէն խօսող շատ քիչ կը գտնուէր: Մեծերը քրտերէն գիտէին, բայց չէին խօսեր: Կէսօրուան ճաշերը պէտք էր ճոխ եւ տեսակաւոր ըլլային: Համով ճաշերուն շարքը երկար էր, ինչպէս ձմեռնային ճաշերը՝ լըզլզուն քէօֆթէն, պոռանին, սեմսէքը, դաւուրման, միջուկով տոլման, սարման... իսկ ամառնայինը՝ Ուրֆայի պալճան քեպապը, թահինով, ձաւարով տաք ու պաղ իջերը, թթու կծու դյման, որ լիբանանեան թապպուլէի նման է, որթատունկի թարմ տերեւով կ'ուտէին: Իսկ որպէս անուշ, պտուղներու անուշներ կը պատրաստէին ձմրան համար, ինչպէս դափամայի անուշը, վարդի անուշը...

Հօրս ծնողքը կ'ունենան հինգ զաւակներ: Մեծ եղբայրը եւ քոյրը կը բնակին Մ. Նահանգներ, մօրս կողմէ, երէց մօրաքոյրս ալ ԱՄՆ կը բնակի: Հօրս հօրեղբայրներէն մին ԱՄՆ, իսկ միւսը՝ Հայաստան կը բնակի:

Բարեբախտաբար, ծնողքիս ազգականներէն ոեւէ մէկը օտար ամուսնութիւն չէ ունեցած: Ասոր համար հպարտ կը զգամ, որ զուտ հայ մնացած ենք եւ հայախօս: Կը սիրենք ՀԱՅԱՍՏԱՆԸ, բայց չենք մոռնար մեր պապենական հողերը, որոնք Կիլիկիոյ մէջ կը գտնուին:

Այսօր, հարիւրամեակի սէմին, շատ կորուստներ ունեցած ենք: Մեծերը մահացած են, մնացած են անոնց լաւ ու վատ յիշատակները մեր յիշողութեան մէջ, եւ տակաւին նոր սերունդի զաւակներս պիտի շարունակենք անոնց երթը մինչեւ որ իրականանան մեր երազները եւ ունենանք ազատ ու անկախ ՀԱՅԱՍՏԱՆ:

Ո՛չ՝ թուրքին կատարած Հայոց Յեղասպանութեան, ո՛չ՝ թրքախօսութեան, ո՛չ՝ թրքական ապրանքներու ներածումին, ո՛չ՝ առանց պայմաններու սահմաններու բացումին:

Հարիւրամեակի սէմին՝ այր՝ հայոց միասնականութեան, Սփիւռք, Ղարաբաղ եւ Հայաստանին եւ վերջապէս այր՝ ԱԶԱՏ ԱՆԿԱԽ ՈՒ ՄԻԱՅԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ:



ՄՕՐՍ ՄԵԾՀԱՅՐԸ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏՕՆՈՅԵԱՆԸ

Նարեկ Նալպանտեան

Յովհաննէսի մեծհայրը՝ Սասունի Հատկոն գիւղէն կը տեղափոխուի Ուրֆայի Կարմուճ գիւղը եւ հոն Յովհաննէսի հայրը կը մեծնայ ու կ'ամուսնանայ ու կ'ունենայ զաւակներ՝ Յովհաննէսը, Սեդրակը եւ երկու աղջիկ:

Առաջին ահաւոր դէպքը կը պատահի, երբ օր մը Սեդրակը սովորականին պէս լեռներէն կ'իջնէ տուն՝ պաշար ապահովելու իր ֆետայի ընկերներուն: Ասիկա կ'ըլլայ սկիզբը ողբերգութեան:

Այդ օրը լուր կը տարածուի գիւղին մէջ, թէ թուրքերը յայտարարութիւն մը ունին փոխանցելու գիւղի երիտասարդութեան եւ գիրենք հաւաքած են եկեղեցիին բակը: Սեդրակ կը մտածէ երթալ նայիլ, թէ այս թուրքերը ի՛նչ սուտեր ունին փոխանցելու ժողովուրդին: Մայրը կ'աղաչէ Սեդրակին որ չերթայ. կրնայ ըլլալ որ մարդիկ զինք ճանչնան, բայց Սեդրակ կը պնդէ որ մարդ հոս չի գիտեր, որ ինք ֆետայի է, եւ վտանգ չկայ եկեղեցի երթալու: Ան կ'երթայ եւ կը միանայ ամբոխին որ եկեղեցիին բակը հաւաքուած էր: Յանկարծ եկեղեցիին բակին դուռերը կը գոցուին եւ թուրքերը որ բռնած ու չարչարած էին մէկը, եղունգները քաշած կը շրջեցնէին բակին մէջ, որպէսզի մատնանշէ ովքեր էին ֆետայիները ... այսպէս Սեդրակ միւս ֆետայիներուն հետ կը ձերբակալուի ու կը գլխատուի:

Շատ չանցած ամբողջ ժողովուրդը տեղահան կ'ընեն եւ կ'ուղղեն Սուրիոյ անապատները, ներառեալ՝ Յովհաննէսը, իր մայրը, քոյրերը: Նախապէս Յովհաննէսի հայրն ալ կը սպաննուի: Քոյրերը ճամփան կը մահանան, ինք ու մայրը կը հասնին Տէր Զօր, ետքը՝ Հասաքէ, ուր պատառուի կին մը

գիշերով կու գայ ազատելու Յովհաննէսը: Ան սկիզբը չ'երթար, ետքը երբ պատառիւն կը խոստանայ նախ զինք ազատել եւ ետքը գալ մայրը ազատել՝ Յովհաննէս կը համաձայնի: Սակայն յաջորդ օրը երբ կու գան մայրը առնելու՝ կարաւանը արդէն մեկնած էր:

Այսպէս, Յովհաննէսը մինակը կը փրկուի ջարդէն եւ կ'ապրի այդ պատառիին ընտանիքին մէջ: Յովհաննէս եօթէն մինչեւ տասնչորս տարեկան, հովի կը դառնայ եւ չէօլերը մայրը կը փնտռէ: Արցունքները աչքին, եօթը տարի ողբաց, լացաւ, մայրը փնտռեց, բայց ապարդիւն:

Յովհաննէսը կը մեծնայ արցունքոտ աչքերով, սակայն՝ առիծի սրտով եւ կը դառնայ անապատի հայ առիծը, սարսափ դնելով շրջակայ արաբներուն, որոնք զինք *անթար* անուանած էին իր քաջութեան եւ առիծի սիրտ ունենալուն: Ամէն մարդ իր հաշիւը կ'ընէր:

Ձիարշափ եթէ մասնակցէր, ինք անպայման յաղթական կ'ելլէր. «սեւաչեայ հայը» անպայման յաղթական է:

Տարիներ անցան, կրցաւ գտնել իր հօրեղբօր զաւակները Հալէպ: Յովհաննէս մեծցաւ պատառիներուն քով, սակայն նախկին փոքրիկ մանչուկը պահեց իր հոգիին մէջ հայ լեզուն, հայ արմատները եւ հայու իր ինքնութիւնը եւ երբ մեծցաւ ամուսնացաւ հայ աղջկայ հետ:

Յովհաննէս հինգ տարի պզտիկ չ'ունենար. իր պատառի մայրը շատ կը տխրի, ամէն օր կը փորձէ համոզել, որ ամուսնանայ աշիրայէն ոեւէ աղջկայ մը հետ. «տղա՛ս,- կ'ըսէր ան,- դուն ջարդի բեկոր ես, ջարդէն ազատուած, չի կրնար ըլլալ որ սերունդ չունենաս, տասնեակ աղջիկներ կան, միայն ըսէ ով կ'ուզես՝ քեզի ամուսնացնենմ»:

Խեղճ կինը կ'ուզէր տեսնել որ իր ազատած փոքրիկին սերունդը շարունակուի, իբր մահուան դէմ յաղթութիւն եւ ինք՝ այդ յաղթութեան հեղինակը:

Սակայն Յովհաննէս միշտ կ'ըսէր ու կը կրկնէր «մամա, մենք հայ քրիստոնէայ ենք եւ չենք կրնար ունենալ մէկէ աւելի կիւն»:

Աստուած հինգ տարի ետք Յովհաննէսին կը պարգեւէ հինգ մանչ եւ երկու աղջիկ: Պատաուի մայրը իր վերջին տարիները Յովհաննէսի տան մէջ կ'ապրի ու կը մահանայ: Ան շատ կը սիրէր Յովհաննէսը. թէեւ ունէր հինգ զաւակներ, սակայն Յովհաննէսը իր սիրելին էր, իր նախընտրածը: Ան Յովհաննէսին անունը դրած էր Օպէյտ, եւ վա՛յ եկեր էր անոր, որ Յովհաննէսը կը նեղացնէր:

Յովհաննէս, սուրիական զինուորական ծառայութիւնը կ'ամբողջացնէ: Ֆրանսական իշխանութեան շրջանին ան իր գիւղը կը պաշտպանէ, որպէսզի զինուորները ամբողջ ցորենը չառնեն եւ անօթի չմնան հայ ընտանիքները: Ֆրանսացի հրամանատարը իր ետեւ կը դրկէ որ նայի ով է այս համարձակ հայը որ դէմ կը կենայ ֆրանսացի զինուորներուն: Ան տեսնելով իր բացառիկ քաջութիւնն ու արիութիւնը զինք կը նշանակէ այդ շրջանին պարէտը եւ կը յատկացնէ իրեն ուսուցիչ մը, որ ֆրանսերէն սորվի:

Ֆրանսացիները քաջուեցան Սուրիայէն եւ Լիբանանէն: Ֆրանսացի հրամանատարը շատ փորձեց համոզել Յովհաննէսը եւ իր ընտանիքը՝ հետը Ֆրանսա երթան, սակայն Յովհաննէս մերժեց, որովհետեւ իր ընտանիքը Հայաստան պիտի վերադառնար. Լիբանան պիտի գար, որպէսզի նաւով Հայաստան դառնան: 1948ի ներգաղթն էր դէպի հայրենիք:

Սակայն այդ ալ չիրականացաւ, որովհետեւ մինչ իր կիներ եւ զաւակները Լիբանան հասան, եւ ինչպէս շատ մը հայեր՝ եկեղեցիին մէջ հաստատուեցան մինչեւ նաւուն գալը, ինք վերադարձաւ Սուրիա՝ ծախելու իր տունը եւ հետը դրամ ունենալու: Այդ միջոցին նաւը հասաւ Լիբանան, ժամն էր վերադառնալու հայրենիք, սակայն մօրս մեծմայրը՝ Ալիսը, չընդունեց առանց իր ամուսինին նաւ ելլել եւ չկրցան

Հայաստան երթալ ու վերադարձան Սուրիա, ուր տարիներ ապրելէ ետք դարձեալ կը վերադառնան ու կը հաստատուին Լիբանան, ուր 61 տարեկանին Յովհաննէս կը մահանայ:

Իր անդրանիկ զաւակը՝ Սեդրակ (իւր նահատակուած եղբօր անունը կրող) կը ծնի Յասմիկը՝ իմ մայրս, որ իր նախահայրերուն կտակը կրած կը շարունակէ մեզի ներշնչել երազը՝ վերադառնալու արմատներուն:

*Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ...*



ՄՈՒՇԷՆ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ԵՒ ՔԱՄՐՇԼԻ

Մարալ Նորրնձայեան

Իմ մեծնորս մօրը մեծմաման Տիգրանակերտ կ'ապրէր: Մեծհայրը Մուշ քաղաքէն էր: Գաղթեցին Մուշ քաղաքէն մինչեւ Տիգրանակերտ: 12 եղբայր էին. մեծհայրը՝ Հայրապետը, 12 տղայ զաւակ ունէր: Տիգրանակերտէն գաղթեցին Քամըշլի: Ճամփան հանդիպեցան ճերմակ մօրուքով *սուֆիի* մը, ճերմակ իշու մը նստած: Ամառ էր, Հայրապետին զաւակները նստած էին Եփրատ գետին դէմ, *սուֆին* ըսաւ արաբերէնով *عليكم السلام* եւ իրենք պատասխանեցին *وعليكم السلام* եւ խնդացին: *Սուֆին* պնդելով ըսաւ՝ «Մուհամմէտի բարեւը ետ պիտի դարձնէք», որովհետեւ հայ էին եւ *կեաւոր*: Մերինները չկրցան համոզել մարդը եւ չազատեցան անկէ, մինչեւ որ *սուֆին* սպաննեցին, գետը նետեցին եւ էջը ճամփեցին, գոմէշները առին փախան:

Ճամփան քիւրտ մը ելաւ իրենց առջեւը եւ ըսաւ իրենց. «դուք *կեաւոր* էք»: Մեծհայրը քրտերէն չէր հասկնար գլուխը շարժեց: Մեծմայրը՝ ետեւը, մեծհայրը առջեւը, եւ 12 պզտիկները մէջտեղ շարեցին որ ամէնը մէկ փամփուշտով զարնեն: Սակայն զէնքը չաշխատեցաւ: Մեծհայրը ձեռքով նշան ըրաւ որ իրեն տայ զէնքը: Քիւրտը տուաւ զայն: Մեծհայրը զէնքը շինեց, փամփուշտը մէջը դրաւ, լարեց եւ իրենց վերադարձուց որ իրենց սպաննէ: Անդի կողմէն ուրիշ քիւրտ մը, ձիու վրայ, տեսաւ ու հարցուց. «ի՞նչ կ'ընես»:

- Աս կեաւորները պիտի սպաննեմ:

- Ասոնք Պարան Պէկին ատաղձագործներն են, իրենց քիթէն արին եթէ գայ՝ քեզի կը սպաննէ:- Ան զարկաւ քիւրտին եւ ազատեց զիրենք, ու այսպէսով հասան Քամըշլի:



ՆԱԽԿԻՆ ՀԵՏՔԵՐ

Կարինե Շատոյեան

Ահա կ'երթանք առաջ: Արդէն իսկ անցած է հարիւր տարի մեր պապերուն զոհուելուն: Մինչեւ օրս կը յիշեմ այդ պատմութիւնը, որ մեծմայրս միշտ կը պատմէր ինձի, աչքերը արտասուքով լեցուն:

Ուրֆայի մէջ կ'ապրէր հօրս մեծհայրը, Մուրատ, որ տասներեք տարեկան պատանի մըն էր: Ունէին մեծ այգի, կը ցանէին խաղող: Երբ բուսնէր՝ կը հաւաքէին եւ գինի կը շինէին, ցորեն կ'աղային, հաց կ'եփէին: Այսպէս կ'ապրէին:

Գիշեր մը, երբ հօրս մեծհայրը կը քնանար, յանկարծ թշնամին՝ անգութ թուրքը կը յարձակի իրենց տունը: Դուրս կը հանեն բոլոր ընտանիքը, կը զարնեն ու ւտերակ կ'ընեն իրենց կեանքը՝ անխիղճ, անաստուած թուրքերը: Ան կը փախչի: Իր ընտանիքը Եփրատ գետ կը նետուին. չարչարուելու տեղ անձնասպան կ'ըլլան, որովհետեւ չեն կրնար փախչիլ:

Հօրս մեծհայրը Թուրքիոյ սահմանէն փախչելով կը հասնի Հալէպ: Տուներու մէջ ընդհանրապէս հին ժամանակ թոնիր կ'ըլլար: Ինք կը գտնէ տուն մը եւ կը պահուըտի թոնիրին մէջ: Մէկ գիշեր այդ թոնիրին մէջ կը մնայ: Այդ օրերը անօթի, ծարաւ կ'անցընէ: Յետոյ կ'երթայ գիւղին եկեղեցին եւ հոն կը պահուըտի: Թուրքերը եկեղեցիին վրան ալ կը յարձակին ու կը քանդեն, կը կողոպտեն հոն գտնուող բոլոր հայերը: Ան կը փախչի ու կը հասնի Տէր Զօր, ուր կ'ապրէին իսլամներ:

Զինք ստիպելով իսլամ կը դարձնեն, ազգը կ'ուրացնեն: Տէր Զօրի մէջ նաեւ կը տեսնէ իր ընկերները, որոնք կ'առաջարկեն, որ ինք իբրեւ հայ ապրի իրենց հետ, չմնայ իսլամներուն մէջ: Կը մեկնին Արաբ Փունար գիւղը, ուր հայ ծեր կին մը կ'ապրէր. ան փաթթած էր գլուխը, որպէսզի

թուրքերը զինք չբռնեն ու չտանին: Գիւղը գրեթէ ամէն հայրութիւն էր: Կինը կ'ընդունի զինք ու ինք կը բնակի այդ հայ կնոջ քով: Մուրատին անունը փոխած էին եւ դրած էին Մուհամմատ Նուրի: Կնոջ անունն ալ փոխուած էր. Վարդուկը եղած էր Ֆարթմէ:

Յաջորդ օր կը սկսին աշխատանքի. արտ կը հերկեն միասին, մայր եւ տղու պէս կ'ապրին: Հայ որբ աղջիկ մը կը միանայ իրենց: Երկար ժամանակ ապրելէ ետք Մարիամ եւ Մուրատ իրարու հետ կ'ամուսնանան, որ կազմեն հայ ընտանիք: Մինչեւ օրս տակաւին կը պատմուի ու կը յիշուի այս պատմութիւնը ու ասոր նման ուրիշ պատմութիւններ:

1973ին մեծմօրս ընտանիքը Լիբանան հաստատուեցաւ: Կազմեցին իրենց ընտանիքը:

Փառք կու տանք, որ տակաւին մինչեւ հիմա կը յիշուին այն հին օրերը, որպէսզի փաստ ըլլայ օտարին եւ չմոռցուի այդ մէկուկէս միլիոն խեղճ հայ ազգը, որ առանց պատճառի իր կեանքը զոհեց:

Արդէն մէկ դար է անցեր: Թէկուզ դարեր անցնին, մեր վրէժը չի մարի: Մենք պահանջատէր պիտի ըլլանք, մինչեւ մեր պապենական հողերը ունենանք մեր ձեռքը: Մենք կանք: Թէկուզ վաղը մենք ալ չըլլանք, մեր թոռները, ապագայ սերունդը պիտի շարունակէ մեր կէս մնացած գործը ու պիտի պայքարի յարատեւ:

Հայ ազգն է, որ պիտի հասնի Մասիսին, պիտի տեսնէ իր աչքովը պատմական հողերը ու պիտի չզգայ այլեւս կարօտը անոնց: Մենք կոչուած ենք պահպանելու ու ազատագրելու այն հողերը, ուր մեր պապերուն արիւնը թափուած է:

Չենք մոռանար մեր պապերուն ապրածը, այլ կոչ կ'ուղղենք բոլոր հայերուն, որ արթննան պահանջելու իրենց հողերը:



ՍՊԻ

Կարո Շատոյեան

Մեծ է, փոքր է՝ հարց չէ, կարելորդ հայ է, դեռ կ'ապրի ու կը պայքարի իր անունը պահպանելու ու բարձր պահելու: Ա՛ս է երկիրս, որով կը հպարտանամ ու իր ժողովուրդով՝ որ որքան չարչարանքէ անցաւ բայց դիմացաւ ու ամէն ատեն ազատութեան ձգտեցաւ: Ազատութեան ջախը մեր մէջ միշտ անմահ կը մնայ՝ որքան ալ օրերը կամ դարերը անցնին: Այս է Հայաստանը, որուն կը պատկանիմ:

...Պատմութիւնը սկսաւ Հայաստանի արեւմտեան հողերուն վրայ, ուր ժողովուրդը ունէր քիչ թէ շատ հանգիստ կեանք, բայց՝ ոչ խաղաղ, որովհետեւ կը գտնուէին Համաշխարհային Ա. Պատերազմին մէջ, որուն Թուրքիան նաեւ կը մասնակցէր: Այս ահռելի պատերազմէն պարտուած դուրս եկաւ ան, բայց անոր կողքին մեծ շահ ձեռք բերաւ՝ գրաւելով մեր հողերը ու մեզի ձգելով փոքր մաս մը որ յաղթութեամբ պահպանեցինք: Հանգիստ էինք, այո, որովհետեւ այս Եղեռնէն առաջ մենք Թուրքիոյ կառավարութեան հետ լաւ էինք, նախքան սեղմեն ժողովուրդներուն վրայ որ թրքանան: Թուրքը որոշեց, քիտը գործեց՝ երազելով ունենալ անկախ երկիր մը՝ Քիւրտիստան, բայց անոնք նոյն ճակատագիրը ունեցան:

Իմ մօրս մեծմայրը պատմած է ինչպէս՝ սոսկալի ու ահաւոր այդ օրերուն, գազան թուրքը խլեց իրենց հանգստութիւնը եւ զրկեց իրենց երկրէն: Մեծմայրիկին պատմութիւնը կը սկսի Տիգրանակերտէն, գիւղէ մը որուն կողքէն Տիգրիս գետը կ'անցնի:

«Փախէ՛ք, փախէ՛ք» գոռալու սկսան գիւղացիները. թուրք ջարդարարները գիւղ մտած էին եւ դիւրութեամբ տուները կը

մտնէին, քանի էրիկմարդերը պատերազմի էին եւ տան պաշտպան չէր գտնուեր: Մեծմայրիկին ընտանիքը հաւաքուեցաւ եւ մեկնեցաւ գետին եզերքը ուր ընտանիքները հաւաքուած էին զաւակներով եւ ծերերով: Իրենք երեք հոգի էին՝ մեծմայրը, որ ութ տարեկան էր, մայրը եւ հիւանդ հայրը, որ չէր կանչուած զինուորութեան: Չկրցան ձերբազատիլ թուրքերէն, որովհետեւ թուրքերը ձիերով հալածեցին զիրենք, պաշարեցին եւ հրամայեցին յառաջանալ, որ յանձնեն քիւրտերուն որոնք իրենց ուղեցոյցները պիտի ըլլային դէպի Սուրիոյ անապատները:

Քիւրտերը ստանձնեցին զիրենք ու գաղթելու իսկական պահը սկսաւ: Երկար քալելէ ետք հասան Տէր Զօրի անապատներուն, ուր մեծմայրը լալու կը սկսի սնունդ ուզելով, որովհետեւ երկու օր է անօթի էր. իր ձայնը ամբողջ խումբը կը լսէր եւ կը նեղանային ատկէ, որովհետեւ այդ ձայնը կրնար զայրացնել քիւրտերը եւ անոր զոհը ըլլալ: Այդ պատճառով այր ու կին կը մտածեն զայն ծառի մը տակ ձգել, յուսալով որ մէկը գտնէ, կամ ալ գայլերը յօշոտեն: Այդպէս կ'ընեն եւ ճամփանին կը շարունակեցին դէպի Քամըշլի: Յաջորդ օրը այդ ճամփայէն կ'անցնին խումբ մը պատառիներ: Անոնք կ'առնեն փոքրիկը իբր տան զաւակ:

Հայրը Քամըշլի տեղաւորուելէ ետք եւ կնոջը ապահով տեղ դնելէ ետք, ինք եւ եղբայրը միասին կը մեկնին Տէր Զօր՝ թէ՛ փնտռելու զաւակը եւ թէ՛ աշխատելու իրենց գործը՝ պղինձ փայլեցնելը: Մինչայդ աղջիկը կը մեծնայ եւ 12 տարեկան կ'ըլլայ, զայն կ'ամուսնացնեն իր եղբօր Հուսէյնին հետ: Մեծմայրս երեք տարուայ ընթացքին երեք զաւակ կ'ունենայ իր տաճիկ ամուսինէն:

Օր մը, երբ այս ցեղախումբին տուները կը շրջէին գործի բերմամբ, երեսը բաց կին մը, դեղին մազերով, գեղեցիկ դէմքով կը կեցնէ զիրենք, երկու աղտոտ ափսէ կու տայ հօրեղբօր, քանի որ այդ պահուն հայրը հոն չէր:

Հօրեղբայրը զարմանալով, կը կասկածի, որովհետեւ չէր կրնար ըլլալ որ դեղին մագերով, ճերմակ դէմքով աղջիկ մը տաճիկ ըլլայ: Այդ պատճառով հօրեղբայրը կ'ուզէ որ ափսէները մէկ օր քովը մնան որովհետեւ ժամանակ պիտի առնեն: Կինը չի մերժեր: Հօրեղբայրը երբ եղբօրը կը հանդիպի կը պատմէ իր տեսածը եւ պատահածը: Եղբայրը կը յայտնէ որ ստուգելու համար պէտք է նայի եթէ ոտքին վրայ այրուածքի հետք մը կայ, որովհետեւ փոքրութեան վրան տաք ջուր թափուած էր:

Յաջորդ օրը հօրեղբայրը ափսէները փայլեցուցած կը վերադառնայ, մինչ հայրը հեռուէն կը դիտէ: Բարեւը տալով կը յանձնէ ափսէները, կը գանձէ, եւ կը հարցնէ եթէ ան հոս ծներ է: Կինը «այո» կը պատասխանէ: Հօրեղբայրը կը հարցնէ եթէ ոտքին վրայ այրուածքի տեղ ունի՞:

Աղջիկը աչքը լայն բացած անոր նայեցաւ եւ զարմանքով պատասխանեց իրեն՝ «այո», եւ փէշը վեր հանելով անոր ցոյց տուաւ հետքը առանց ամչնալու, կարծես սիրտը հետը խօսեցաւ եւ ըսաւ՝ «ցոյց տուր՝ կ'ուրախանաս»:

- Հօրեղբայրդ եմ աղջիկս, անունս Պետրոս է, քու անունդ Խատիժէ չէ, այլ Նայիրի է: Ահա հայրդ հո՛ւս է, Գեղամը:

Աղջիկը հօր նայելով հասկցաւ եղածը, լայն ժպիտով, լալով վազեց ու մեծ փաթթուկ ըրաւ, հօրը ձեռքերը պաշիկ ըրաւ: Հայրը գրկեց, կլոր դարձաւ ու գոռաց «ա՛ղջիկս»:

Այդ օրը ուրախ օր էր իրենց համար, որովհետեւ գտնելէ զատ, բոլոր ցեղախումբը յուզուած իրենց նայեցան եւ արցունքով լեցուեցան իրենց աչքերը: Անոնք ընդունեցին հրաժարիլ իրենց աղջիկէն եւ անոր երեք զաւակներէն, իր բուն հօր համար, որ անկախ իր կամքին զայն ձգեր էր հոն:

Անոնք գացին մօր քով, որ տեսնելով իր աղջիկը՝ մարեցաւ՝ դեռ փաթթուկ չըրած ու չհամբուրած: Ան կ'ամուսնանայ հայու մը հետ, երեք զաւակ կ'ունենայ, իսկ չորրորդը բերած աստեն չ'ազատիր ու կը մահանայ:



ԱՆՄԱՐ ՄՈՄԸ

Նարեկ Շարոյեան

Տարիներ անցան ու անցան, բայց յիշատակները չկորսուեցան: Փոքր էի, այդ պատճառով ալ մտքէս երբեք չէի անցուցած հօրս, մօրս եւ կամ ընտանեկան պարագաներէս ոեւէ մէկուն հարցնել իմ նախահայրերու պատմութիւնը:

Հօրս գերդաստանին ամէնամեծ եւ մէկ հատիկ զաւակը հօրաքոյրս՝ Քնարն էր: Ան միակ անձն էր, որ գիտէր նախահայրերու պատմութիւնը: Յաճախ կ'այցելէիք զինք: Իր տան մէկ անկիւնը կախուած էր գունաւոր, զարդարուն գորգ մը: Սիրտս միշտ կը պայքարէր, սրտէս հոլը կ'ելլէր, կ'ուզէի հարցնել այդ գորգին մասին, որովհետեւ կը զգայի, թէ մեծ պատմութիւն մը ունի ան: Դարեր ապրած ու նախահայրերու պատմութիւնը գրկած գորգ մը ըլլալու էր: Բայց փոքր էի, հարցնելու քաջութիւնը չունէի: Ո՛չ, չունէի: Վախ մը կար մէջս: Չէի համարձակեր:

Այդ վախը քակուեցաւ 24 Ապրիլ 2007ին, երբ մինակս հօրաքրոջս այցելութեան գացած էի: Այդ օրը, ի յիշատակ Ապրիլեան Եղեռնին, հեռատեսիլէն յայտագրի մը ընթացքին կը ցուցադրէին Եղեռնէն վերապրած պապիկներ ու մամիկներ: Լուռ կը հետեւէի հօրաքրոջս, որ նստած անձայն կու լար: Ես հայեացքս սեւեռած էի պատէն կախուած գորգին, որ կարծես ծուռ-ծուռ կը նայէր ինծի, մղելով որ հարցումս հարցնեմ: Անմիջապէս բացագանչեցի. «արդեօք ես ալ նախահայրեր ունեցա՞ծ եմ»: Հարցումիս պատասխանին բանալին ունէի, բայց ուզեցի անուղղակիօրէն հարցնել հօրաքրոջս, որպէսզի ընդլայնէ ու մանրամասնօրէն պատմէ նախահայրերու պատմութիւնը:

Հօրաքոյրս պատմեց. «հայուն արմատները անոր նախահայրերն են: Ամէն հայ ունի իր նախահայրը: Ես շատ լաւ կը յիշեմ մեծհայրս՝ Խաչիկ Շարոյեանը: Ան մե՛ծ մարդ էր: Այն օրերուն կ'ապրէինք Սուրիոյ Քամըշլի քաղաքը, որուն մեծապետն էր մեծհայրս: Ան քրտախօս էր եւ չէր գիտեր հայերէն, բայց մեծ մտաւորական էր: Ունէր չորս կին:

Ես այդ օրերուն ասարտած էի ութերորդ դասարանս: Այդ օրերուն ո՛ր աղջնակը հասած կ'ըլլար մինչեւ ութերորդ: Ուսումս շարունակելու բուն փափաքը ունէի, բայց դժբախտաբար այդ ժամանակուայ օրէնքները կ'արգիլէին աղջիկներուն դպրոց յաճախելը: Շնորհիւ Կորին Վարդապետին, որ կրցաւ մեծհայրս համոզել որ ուսումս շարունակեմ՝ ասարտեցի իններորդ դասարանն ալ:

Մեր տունը կ'այցելէին մտաւորականներ, վարդապետեր ու առաջնորդներ: Մեծհայրս իր պաշտօնին բերումով մեծ դեր ունէր քաղաքի հարցերուն, կռիւներուն ու անհամաձայնութիւններուն լուծման մէջ: Իսկ ես իր մնայուն թարգմանիչն էի: Ի՞նչ ըսեմ անոր արտաքին երեւոյթին մասին. երկարահասակ, կապոյտ աչքերով, երկար պէխով մարդ մըն էր»:

Ես կը հարցնեմ մանկութենէս ի վեր միտքս տառապեցնող հարցումը.-

- Իսկ ի՞նչ է այս գորգին պատմութիւնը:- Ան կը պատասխանէ.

- Այս գորգը ապրած է մէկ դար: Ան կը պարփակէ մեծօրս պատմութիւնը: Ապրած է՝ նոր սերունդին փոխանցելու անոր պատմութիւնը: Այս գորգը մեծհայրս մասնաւոր հիւսել տուած է Հայաստանի մէջ: Ան աղօթելու համար կը գործածէր զայն: Ան հետեւեալը կը պատմէր.

«1924ին երեք տարեկան էի: Թշնամիները առաջին անգամ երիտասարդները տեղահան ըրին գիւղէն: Այդ գիշեր մեր աչքը չգոցուեցաւ: Արթուն մնացինք մինչեւ առաւօտ: Յաջորդ օրը յանկարծ լսեցինք խուճապի ձայն: Մայրս

պատուհանէն թաքուն նայեցաւ ու ի՛նչ տեսնէ: Թորք զինուորները տեղահան կ'ընէին մնացեալ գիւղացիները: Մեր տան ետեւի դռնէն մայրս փորձեց փախցնել զիս, սակայն թորք զինուոր մը նկատեց մեզ ու սկսաւ հալածել: Մայրս զիս շալկած կը վազէր ու կը վազէր: Վերջապէս հասանք խիտ ծառերով անտառ մը: Բայց մայրս չէր մոռցած մեզ հալածողը, եւ կը փորձէր զիս պահել ամէն փորձանքէ: Ան զիս լաւ մը կը ծածկէ, պէտք եղածները կ'ըսէ ու խիտ ծառերուն մէջ կը պահէ: Ապա պարան մը կը բերէ, կը կապէ ամէնաբարձր ծառին: Ու ի՛նչ տեսնեմ... Մօրս անձնասպանութիւնը... Արդէն կը հասնի թշնամին, բայց ի զու՛ր: Մայրս չկար այլեւս:

Աշխարհի ամէնէն ահռելի դէպքն է՝ լուռ ու մունջ, առանց իսկ մէկ բառ արտասանելու տեսնել մօր մահը: Թշնամին հեռանալէ ետք, խիտ ծառերէն դուրս եկայ աճապարանօք ու սկսայ լալ: Չէի կրնար ուրիշ բան ընել: Ժամեր նստայ մօրս դիակին մօտ ու վերջին համբոյր մը տալով հեռացայ: Մութ էր: Բան չէի տեսներ: Կը հեռանայի՝ յուսալով, որ քաղաք մը կը հասնիմ: Հասայ անծանօթ տեղ մը ու յոգնութենէս գլուխս ժայռի մը տեղաւորեցի ու քնացայ:

Խոր քունէ մը ետք, երբ աչքերս բացի, ինքզինքս գտայ հարուստի մը տունը: Անոր պահակները բերք հաւաքելու ժամանակ զիս գտած ու բերած են իր տունը: Ան 70 տարեկան ծերունի մըն էր: Ունէր 13 աղջիկ զաւակ եւ միշտ փափաքած էր ունենալ մանչ զաւակ մը: Ես եղայ անոր մէկհատիկ մանչ զաւակը, ապագային ալ անոր քիւրտ անունը պիտի կրէի: Իմ անունս՝ Խաչիկը, փոխուեցաւ ու եղաւ Ալի: Ես արդէն ճնշումի մէջ էի: Մօրս մահն ու հօրս անհետացումը միակ դէպքերն էին, որոնց մասին կը մտածէի: Բայց ի զու՛ր: Տարիներ ետք է, որ կամաց-կամաց սկսայ իրենց կենցաղին հետեւիլ: Բայց չմոռցայ իմ հայրենիքս, հողս, հայրս ու մայրս: Անոնք միշտ մնացին սրտիս խորերը, մանաւանդ հայ անունս՝ Խաչիկը: Կրնամ ըսել, որ կեանքիս ամէնադաժան օրերը անցուցի այդ ժամանակ:

Խորթ մայրս եւ 13 քոյրերս միշտ կը փորձէին զիս մահուան ենթարկել: Մինակ մնացի այդ տան մէջ: Զբաղեցայ վաճառականութեամբ: Օր մը գործով Հալէպ ճամփորդեցի ու հոն 15 օր անցուցի: Կը յիշեմ երկրորդ օրը, երբ պանդոկէն դուրս եկայ եւ դէպի շուկայ սկսայ երթալ, ճամփուս վրայ հանդիպեցայ աղջկայ մը: Իսկական գեղեցկուիի մըն էր: Դէմ դիմաց կեցանք: Անոր ըսի, թէ նախապէս հանդիպած ենք եւ զայն սրճարան մը հրաւիրեցի: Երկար նստելէ ետք ծանօթացանք իրարու: Ան Եղին էր, մանկութեանս ընկերուիին: Ժամեր ու ժամեր նստանք ու զրուցեցինք, յիշելով մեր անցեալի տխուր ու լաւ օրերը: Մեր մանկական խաղերը, խանդավառութիւնները»:

Հօրաքոյրս շարունակեց մեծօրս պատմութիւնը. «Այդպիսով, մեծհայրս ու Եղին կը սիրահարին, կ'ամուսնանան եւ կը բախտաւորուին 14 զաւակով: Տարիները անցան ու մեծհայրս ունեցաւ 4 կին եւ 38 զաւակ:

Պզտիկ դէպք մըն ալ, որ շատ կարելոր է ձեզի փոխանցելը՝ մեծհայրս 121 տարեկան էր, երբ Ամերիկայէն ամէնամեծ թոռնիկը՝ Անդրանիկը, եկած էր անոր այցելութեան: Երբ ան մտաւ սենեակ, կարծես կեանք եկաւ մեծօրս: Ան բացագանչեց. «Անդո՛, ազատեցի՞ք Հայաստանը»: Բայց ան առանց պատասխան ստանալու մահացաւ...»:

Մեծօրս ամէնամեծ եւ ամէնակարելոր նպատակը եղած էր տեսնել Միացեալ Հայաստանը: 121 տարի ապրած ու աշխատած էր հայ սերունդը բազմացնելու եւ քաջալերելու, տարածելու հայութիւնը բոլոր աշխարհին: Ան մոմ մըն էր, որ 121 տարի վառած մնաց ու կը մնայ մինչեւ այսօր: Պատերազմներն անցան ու չկրցան մարել զայն, հովեր փչեցին բայց չմարեցին զայն:



ՄՕՐԱ ՄԵԾՃՕՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Կարին Շորճեան

Ես պիտի պատմեմ մօրս մեծմօր մասին, որ 1915ի Հայկական Եղեռնի վերապրողներէն եղած է: Ան ծնած է 1900ին Սուսի Տարագճեան անունով, Տիարպեքի որ կը գտնուի Մեծ Հայքի Աղձնիք Նահանգին մէջ՝ Արեւմտեան Տիգրիսի աջ ափին:

Ըստ հայոց ասանդական պատմութեան Տիարպեքիը կառուցուած էր հայոց Երուանդունի Տիգրանին կողմէ որուն անունով հայ պատմիչները քաղաքը անուանած են Տիգրանակերտ: Այդ պատճառով պատմագրութեան մէջ երբեմն Տիարպեքիը շփոթած են Աղձնիք Նահանգի Տիգրանի հիմնած Տիգրանակերտին հետ:

Մինչեւ 20րդ դարու սկիզբը Տիարպեքիի բնակչութեան մեծամասնութիւնը եղած է հայ. անոնք կարելի էր խաղցած են քաղաքի տնտեսական եւ մշակութային կեանքին մէջ:

1915ին թուրքերը կը ձերբակալեն մեծմօրս հայրը եւ կը տանին բանտ: Ըստ մեծմօրս մօր, ան բանտին մէջ ականատես կ'ըլլայ հայերուն դէմ թուրքերուն անպատմելի բարբարոսութիւններուն: Օր մը հայ բարնտարկեալները բանտին բակը կը հանեն եւ կը ստիպեն որ շրջանակ կազմեն, ու իրենց մէջտեղը կը կեցնեն հայ քահանայ մը, որուն վրայ քարիւղ կը թափեն ու կրակ կու տան: Քահանան կ'այրի, մինչ թուրքերը կը ստիպեն շրջանակ կազմող հայերը որ ծափեն ու այրող քահանային շուրջը դառնան: Այս դէպքին վրայ մեծմօրս հայրը սրտին ցաւէն կը հիւանդանայ ու բանտին մէջ կը մահանայ:

Ապա, թուրքերը հայերուն կը սկսին տեղահան ընել: Մեծմօրս մայրը երեք քոյր ունի եղեր, որոնք կը բռնուին թուրքերուն կողմէ: Ինք անոնցմէ մեծ ըլլալով փախուստ կու

տայ եւ փողոցները կը սկսի թափառիլ: Թուրք աղջիկներուն նման գլուխը եւ երեսը կը գոցէ, որպէսզի չգգան թէ հայ է: Մայրս կ'ըսէ որ մեծմայրը իրեն կը պատմէր թէ ինք շատ գեղեցիկ աղջիկ մըն էր. երբ ճամփան քալէր՝ ամէն մարդ իրեն կը նայէր:

Մեծմօրս մայրը կը սկսի ամէն օր թրքական բաղնիք երթալ եւ օրը հոն անցընել անօթի ծարաւ. սակայն ան կը փորձէր իր կեանքը փրկել: Օր մը բաղնիքին թուրք պատասխանատուն կը կասկածի եւ իրմէ կը պահանջէ անձնաթուղթ, որպէսզի փաստէ որ ինք հայ չէ: Ատկից ետք ան ասորի դրացիներու տունը կը պահուլտի: Իր դրացի ասորիներն ալ կը վախնային զինք ընդունելու, որովհետեւ ան որ հայ պահէ՝ ինք ալ կը սպաննուի: Թուրք ոստիկանները միշտ խուզարկութեան կ'ելլէին: Օր մը մեծմօրս հայրը իր ասորի դրացիին տունը պահուլտած է եղեր, թուրք ոստիկանները կու գան եւ տունը կը խուզարկեն: Ինք կը պահուլտի դուռին ետեւը եւ եօթը անգամ «Հայր Մեր» կ'աղօթէ եւ թուրքերը չեն գտներ զինք ու կը հեռանան:

Օր մըն ալ ուրիշ ասորի դրացիի մը տունը կը պահուլտի: Հոն ալ թուրք ոստիկանները անակնկալ խուզարկութեան կու գան: Մեծմօրս մայրը հաւնոց կը մտնէ, իսկ թուրք ոստիկանները կը գանին հաւնոց մտնելու: Այսպիսով ան կը թափառի մինչեւ որ պատերազմը կ'աւարտի:

Մեծմօրս մայրը մօրս կը պատմէ թէ զինք եւ ուրիշ հայ աղջիկներ կը բռնեն թուրքերը եւ կրօնափոխ կը դարձնեն: Մեծմօրս մայրը կը հաւատար թէ եթէ իսլամներուն աղօթքը չըսէ չ'իսլամանար: Հետեւաբար ան սխալ կ'ըսէր աղօթքը:

Ան թուրքերուն սուտ կը խօսի եւ կ'ըսէ թէ ինք եւ իր ծնողքը ուխտ ըրած են որ ան պիտի չամուսնանայ եւ այն մարդը որ հետը ամուսնանայ՝ կը մեռնի: Թուրքերը կը վախնան եւ ազատ կ'արձակեն զինք:

Ապա իր ասորի դրացիին տղան հետը կ'ամուսնանայ որ վերջնականապէս ազատի այս չարչարանքէն: Տիարպեքիի

մէջ անոնք կ'ունենան չորս տղայ զաւակներ, որոնք կը մահանան: Մեծօրս հորը անունը Լուսֆիկ Մասուտ էր: Անոնք կու գան Լիբանան եւ կը հաստատուին Պէյրութի Խալիլ Պատաուի թաղին մէջ: Շատ աղքատ պայմաններու մէջ կ'ապրին: Կ'ունենան չորս զաւակ՝ երկու տղայ եւ երկու աղջիկ: Առաջին զաւակը կ'ըլլայ Յակոբը: Մեծօրս մայրը կ'ուխտէ որ եթէ Յակոբը ապրի միջեւ եօթը տարեկան անոր մազերը պիտի չկտրէ եւ եօթը տարեկանին Երուսաղէմ պիտի տանի ու հոն պիտի կտրէ մազը: Ան ուխտը կը կատարէ: Մեծմայրս՝ Ժանէթը, տան կրտսերն էր, ունէր Ռոզ անունով քոյր եւ Միշէլ անունով եղբայր մը:

Մեծօրս մայրը իր զաւակներուն ջամբած է հայեցի դաստիարակութիւն: Անոնք յաճախած են նորակառոյց Ազգ. Ռուբինեան Վարժարանը: Մեծմայրս կիրակնօրեայի ուսուցչուի եղած եւ իր մականունը փոխելով, հորը արհեստին հիման վրայ, եղած է Ժանէթ Կօշկակարեան: Այնքան հայու հոգիով լեցուած էր ան որ կ'ամչնար ըսելու որ ինք հայ չէ:

Մեծօրս եղբայրները չեն ամուսնացած: Մեծմայրս եւ քոյրը հայու հետ ամուսնացած են եւ հայ ընտանիք կազմած: Մեծօրս քոյրը ամուսնացած է Տիարպեքիրէն հայու մը հետ՝ Օհաննէս Փիթարեան, եւ ունեցած չորս զաւակներ՝ Սարգիս որ լիբանանցիի հետ ամուսնացած է, Սեդա որ հայու հետ ամուսնացած է եւ կ'ապրի Քանատա, Հանրի՝ լիբանանցիի հետ ամուսնացած է եւ Լարա հայու հետ ամուսնացած է:

Մեծմայրս ամուսնացած է լափաշցի Աւետիս Գասպարեանին հետ եւ ունեցած է չորս զաւակ՝ Մարի որ մայրս է եւ ամուսնացած է հաճընցի Ստեփան Շորճեանին հետ: Ունեցած են երեք աղջիկ՝ Նայիրի (որ ամուսնացած է Վարազ Սիսեռեանին հետ եւ կ'ապրի Հայաստան), Դուին (կը յաճախէ Հայկազեան Համալսարան) եւ Կարին՝ ես, կ'ուսանիմ Սահակեան Գոլէճի մէջ:

Մօրաքոյրս՝ Սիլվա ամուսնացած է հայու հետ եւ ունի մէկ զաւակ՝ Կարէն: Քեռիներս օտար ամուսնութիւններ կնքած են: Մեծ քեռիս՝ Սարգիս Գասպարեան կ'ապրի Քանատա եւ պզտիկ քեռիս՝ Հրաչ, կ'ապրի Ամերիկա:

Մայրս կ'ըսէ որ ինք շատ զղջացած է որ իր մեծմօր ըսածները չէ արձանագրած եւ որպէս վաւերագիր չէ պահած: Սակայն ան այս պատմութիւնները շատ լաւ կը յիշէ:



ՄԵԾՄՕՐԱ ՄԱՅՐԸ՝ ԱՐԱՔՍԻՆ

Արաքս Չերջեան

Հայ ազգը ենթարկուած է 20րդ դարու առաջին Յեղասպանութեան: Տարի մը ետք համայն հայութիւնը պիտի նշէ Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակը որ տակաւին կը ժխտուի թիւրք իշխանութիւններուն կողմէ:

Մենք որ չորրորդ սերունդն ենք Յեղասպանութենէն ետք, մեզի համար դժուար է պատկերացնել թէ տարագրութիւնը կամ բռնագաղթը որքա՛ն դժուար կամ ահաւոր եղած է:

Մեծմօրս մայրը՝ Արաքսին, որուն անունը կը կրեմ, յաճախ պատմած է ընտանիքին տարագրութեան եւ ապրած դժուարութիւններուն մասին: Ես անձնապէս չեմ ճանչցած զինք եւ ունկնդիր չեմ եղած իր պատմութիւններուն, որովհետեւ իր մահէն հինգ օր ետք ծնած եմ, սակայն պիտի փորձեմ գրել ինչ որ լսած եմ մեծմօրմէս:

Արաքսի մեծմաման ծնած էր Դեկտեմբեր 1910ին, ունէր երկու եղբայր եւ երկու քոյր: Իրենք շատ հարուստ ընտանիք մը եղած էին Կեսարիոյ մէջ եւ ունեցած էին բազմաթիւ խանութներ: 1915ին ամրան գիշեր մը, թուրք ոստիկաններ կը ձերբակալեն իր հայրը եւ կը կախեն քաղաքին հրապարակին վրայ: Արաքսի մեծմաման, որ չորս տարեկան էր, իր մօրը հետ կը ստիպուի լքել հայրենի տունն ու կառք մը վարձելով կը փորձեն հեռանալ քաղաքէն: Ճամփուն ընթացքին մայրը իր մեծ, գեղեցիկ աղջիկներուն երեսը կը մրոտէ, որպէսզի թուրքերը չառեւանգեն զանոնք: Ամէն անգամ որ ոստիկան մը կը մօտենար իրենց ընտանիքին՝ մայրը դեղին ոսկիով մը կը կաշառէր զայն: Ահա այսպէս բազմաթիւ չարչարանքներէ ետք մայր ու հինգ երեխաներ կը հասնին Հալէպ անօթի, ծարաւ եւ առանց արաբերէն լեզուն հասկնալու:

Հոս կը սկսի չարչարանքի երկրորդ հանգրուանը: Հալէպէն ետք կ'անցնին Դամասկոս: Տարիներ ետք, տասնվեց տարեկանին Արաքսի մեծմաման կ'ամուսնանայ եւ Պէյրուֆ հարս կու գայ: Ան բախտաւոր էր, որովհետեւ իր ընտանիքի անդամներէն կորսնցուցած էր միայն հայրը:

Նման պատմութիւններ շատ կարելի են որպէսզի մենք եւ մեր յաջորդող սերունդները երբեք չմոռնանք մէկուկէս միլիոն զոհերը, տէր կանգնինք Հայ Դատին եւ շարունակենք պահանջատէր ըլլալ մինչեւ Մեծ Երազի իրականուումը:



ԱՆԱՐԴԱՐ ԹՈՒՐՔ

Յարութին Չիլափոշեան

Երբ ես իմ պապերու ժամանակաշրջանին իրենց ծննդավայրը ապրէի պիտի ուզէի ըլլալ քաջ, հայրենասէր պատանի մը, հաւատարիմ՝ հայրենիքիս:

Իսկ երբ անարդար թուրքը սկսէր մեզ ջարդել, պիտի ուզէի ո՛չ զէնքով, այլ՝ խորամանկութեամբ որոշ չափով պայքար մղել ջլաջողցնելու իր անարարդար եւ գէշ նպատակը:

Պերեճիք կը բնակէր իմ ընտանիքս, այսինքն իմ մեծօրս մեծհայրը, որ ունէր երկու տղայ, մէկ աղջիկ: Անդրանիկ տղուն անունն էր Կարօ, իսկ միաները չեմ գիտեր: Անոնք կը զբաղէին հողագործութեամբ եւ միաժամանակ բարեկամի մը հետ մօտ յիսուն ոչխարներ կ'արածէին: Առաւօտ մը մեծօրս մեծհայրը ագարակ կ'երթայ - ագարակը կը գտնուէր տան ճիշդ կոնակը - ու կը տեսնէ որ միայն քսան ոչխար մնացած է այնտեղ, իսկ երկու հատ սատկած ու արհիւնլուայ փռուած են գետին: Շատ կը յուզուի այս դէպքէն եւ կ'անհանգստանայ:

Իր տղան՝ Կարօն, այն ատեն մօտ 10-11 տարու էր, իր հօրը վիճակին ցաւելով միտքը կը դնէ գտնել ոչխարները: Կը սկսի գիւղին ագարակները մէկիկ-մէկիկ պրպտել՝ երբեմն ագարակապաններէն վռնտուելով, բարկութիւն լսելով, ծեծուելով եւ հայիոյուելով, բայց չի գտներ ոչխարները:

Առաւօտ մը ճամփայ կ'իջնէ եւ կը սկսի քալել յուսահատ: Բաւական քալելէ ետք կը զգայ թէ քիչ մը հեռացած է գիւղին սահմաններէն: Հազիւ ետ կը դառնայ, որպէսզի նոյն ճամփայէն տուն վերադառնայ, հեռուէն կը նշմարէ խուժան ու պոռչտութիւն: Երբ կը հասնի, կը տեսնէ թէ այնտեղ դրուած են յարմար գիներով ծախու ոչխարներ: Յանկարծ կը նշմարէ ոչխար մը որ տեսած էր իրենց ագարակը, եւ երբ կը տեսնէ այնտեղ իր հօր բարեկամը՝ կը գուշակէ եղելութիւնը, թէ իր

հոր բարեկամը որ (հայ չէր) առած է ոչխարները եւ ուրիշ ոչխարներու հետ նուազ գիներով կը ծախէ: Գուրգուրալով իր հորը, իր ամբողջ հաւաքած գումարը կը յատկացնէ ոչխարներուն, բայց պզտիկ գումար մը պակաս էր որոշուած գումարէն: Ստիպուած կօշիկները կը ծախէ եւ այդ գումարներով կը գնէ ոչխարները: Կը վերադառնայ իր հոր քով եւ կը յայտնէ թէ գտած է ոչխարները, բայց չի յայտներ բարեկամին ազահութիւնն ու գողութիւնը որպէսզի իր հայրը առաւել եւս չանհանգստանայ:

Կարոյին ծնողքը կը բնակէր փոքրիկ տնակի մը մէջ, Հասաքէ: Օր մը խումբ մը թուրք զինուորներ կու գան եւ դուռը կը զարնեն: Մայրը դուռը կը բանայ. թուրք զինուորներէն մէկը կ'ըսէ. «ձեր քով ինչ ոսկի կամ արժէքաւոր բաներ ունի՞ք՝ տուէք որպէս ապահովութիւն»: Կարօն կը հասկնայ իրականութիւնը եւ իր մօր կ'ըսէ. «մա՛յր, մա՛յր մի՛ յանձներ բան մը, որովհետեւ անոնք մեզ կը խաբեն»: Մայրը կ'ընդդիմանայ իր զաւկին խօսքին եւ ամէն ոսկիները կը յանձնէ:

Միքանի օր ետք կրկին կու գան, դուռը կը զարնեն եւ կ'ըսեն. «ելէ՛ք տունէն որպէսզի ձեզ ապահով տեղ տանինք»: Կարօն կը հասկնայ նպատակնին եւ իր մօրը դարձեալ կ'ըսէ. «մայր, հաւատա ինձի, անոնք մեզ կը խաբեն, կը խաբե՛ն, անոնք եկած են մեզ տանելու եւ ջարդելու: Մայր հաճի՛ս, խնդրեմ հաւատա»: Մայրը դարձեալ կ'ընդդիմանայ եւ ճամփայ կ'ելլեն Կարօն ալ հետերնին: Ճամփու ընթացքին Կարօն վերջին անգամ իր մօրը կը փորձէ հասկնել իրականութիւնը, բայց ի զուր: Յուսահատ, արցունքը աչքերուն եւ խեղդուած ձայնով կ'ըսէ. «մա՛յր, կ'երթանք մորթուելու հաւատա՛ ինձի»: Մայրը կը պատասխանէ. «մեզ ապահով տեղ կը տանին սիրելիս, զաւակս, մի՛ վախնար»: Կարօն տեսնելով իր մօր ընդդիմութիւնը, ուժերը կը հաւաքէ, կը վազէ եւ ինքզինք ձոր կը նետէ, եւ ի՛նչ ահաւոր տեսարան. ձորը լեցուն էր հայու անմեղ դիակներով, որոնք ջարդուած

էին ցեղասպան թուրքին կողմէ: Կը հեռանայ եւ հեռուէն դիտելով կը տեսնէ թէ ինչպէս իրենց կարաւանը եւս անխնայ կը մորթուի ու մէկիկ-մէկիկ ձոր կը նետուի: Սրտի խոր կսկիծով կու լայ եւ կը գոչէ. «Աստուած իմ, ներէ ինծի, անձնասիրութեանս համար»: Կարօն կը շարունակէ իր ճամփան, բայց անգիտակից թէ ու՛ր կ'երթար: Կը զգայ թէ անօթի է եւ կարօտ մայրական գուրգուրանքի: Ճամփու ընթացքին յոգնաբեկ կ'իյնայ գետին, միաժամանակ զառանցելով եւ մայրը փնտռելով: Բաւական այդ վիճակին մէջ մնալէ ետք, յանկարծ գէշ երազէ արթնցողի մը պէս կ'արթննայ եւ կը տեսնէ թէ անձանօթ մը կը փորձէր զինք արթնցնել: Այդ անձանօթը հովիւ մըն էր, երկարահասակ, հուժկու եւ գթասիրտ մարդու մը կերպարանքով: Ոտքի հանելով զինք, մեղմ ձայնով հետեւեալը կ'ըսէ. «Եկու՛ր ինծի հետ, յայտնի է որ փախած ես անգութ թուրքին ձեռքէն»: Մարդուն դէմքը ծանօթ էր Կարոյին:

Բարի հովիւը Կարոյին ձեռքէն բռնելով զինք կը տանի իր բնակարանը, ուր կը հոգայ չորս տարիներ շարունակ եւ իր մականունը փոխելով կը կոչէ Չիլաբոշ (իր նախկին մականունն էր Սահակեան): Այդ օրէն սկսեալ գթասիրտ հովիւը կը հոգայ Կարոյին որպէս անմեղ մանուկ մը, կարօտ հայրական գուրգուրանքի եւ սիրոյ: Չորս տարի Կարօն կը զբաղի հովիւութեամբ:

Կարոյին ապրած տեղը կ'ապրէր նաեւ ուրիշ գեղանի աղջիկ մը, որ դարձեալ Կարոյին նման որդեգրուած էր այդ գթասիրտ հովիւին կողմէ եւ որուն անունն էր Շաքիպա (ծածկանունն էր): Օր մը, երբ մայրամուտին նստած էր ծառի մը տակ երազկոտ, բարի հովիւը եկաւ եւ իրեն հետեւեալը ըսաւ. «տղա՛ս, եկուր քեզ ամուսնացնեմ Շաքիպային հետ»: Կարօն անակնկալի կու գայ ու կը տատամսի: Հովիւը կ'ըսէ. «սիրելի՛ս, չկայ ատի ճեմ, ճշմարիտ ու յորդահոս, անսպառ աղբիւր երջանկութեան քան՝ սէրը»: Կարօն համոզուելով այդ հիանալի խօսքերէն, իր համաձայնութիւնը կը յայտնէ:

Յաջորդ շաբաթ իսկ կը կատարուի երկու որբերուն պսակի խորհուրդը: Բայց Կարօ չէր գիտեր աղջկան ազգութեան եւ կրօնքին մասին: Յանկարծակիի կու գայ երբ կը գիտնայ թէ Շաքիպա եւ ինք ապրած էին նոյն գիւղին մէջ: 1921ին կը փոխադրուին Ճարապլուս (Սուրիա): Այնտեղ կը հասատատուին եւ իրենց ամբողջ կեանքը այդտեղ կ'անցընեն: Կարօ ազարակ մը գնելով կը սկսի աշխատանքի: Կ'ունենայ քանի մը զաւակներ որոնցմէ մէկը մեծհայրս է՝ Յարութիւնը:

Մեծհայրս ծնած է Ճարապլուս: Զբաղած է առեւտուրով եւ ունեցած է հինգ զաւակներ՝ երկու աղջիկ (Եղիսաբէթ եւ Յասմիկ) եւ երեք արու զաւակ (Արա՝ հայրս, Գէորգ եւ Կարօ՝ իր հորը անունով): Ժամանակ մը ետք ընտանիքով կը փոխադրուին Հալէպ: Այդտեղ մեծհայրս կը բանայ ինքնաշարժի վերաբերեալ առեւտուրի փոքր խանութ մը, ապա քիչ ժամանակ ետք կը մահանայ: Խանութը կը թողու հորս, որ մինչեւ այսօր կ'աշխատի այդ խանութին մէջ:

Հօրեղբայրս՝ Կարօն, կը փոխադրուի Ամերիկա եւ կը կազմէ իր ընտանիքը, իսկ մնացեալը կը գտնուին Հալէպ ներառեալ իմ ծնողքս:

Վերաջապէս գրչիս վերջին շունչովը, կ'ուզեմ խորին շնորհակալութիւնս յայտնել անոնց, որոնք պատճառ դարձան իմ ինքնութեանս պատմութեան մասին հետաքրքրուելու եւ ապա տեղեկութիւն ունենալու, որոնց նաեւ իմ ինքնութեանս բարերարները կը նկատեմ:



ՎԻՇՏԸ ՓՈՒՇ Է ՍՐՏԻ...ԿԸ

ԾԱՂԿԻ ՈՒ ԿԸ ԲՈՒՐԷ

Ռոզալին Չիրիշեան

Ջարդը հայերուս մէջ շատ խիստ ձեւով տպաւորուած է... կը լսէի իմ մեծմայրս, ան կը պատմէր եւ մինչեւ հիմա ալ կը պատմէ իր մօր հետաքրքրական կեանքը ջարդի ժամանակ, իր Սուրիա հասնիլը ու շարունակելը իր կեանքը:

Իմ մեծմօրս մօրը անունը Աղանի էր: Ան բարձրագոյն վարժարան յաճախած էր, 10րդ դասարանը նոր վերջացուցած, 14 տարեկան աղջիկ մըն էր: Ան դեղին մազեր ունէր, կանաչ աչքեր ու երկարահասակ էր: Ունէր երկու քոյր եւ երկու եղբայր, ինք երէցն էր: Քոյրերը եւ մէկ եղբայրը մօտ էին իրեն տարիքով, իսկ միւս պզտիկ եղբայրը հինգ տարեկան էր:

Մայիսին գաղթական ելած էին: Անոնց հայրը հիւանդ էր, կ'ուզէր զիրենք դրկել անոնց մօրեղբօրը քով, սակայն չկրցաւ եւ մեռաւ: Դէպի Տարաա սկսան քալել, բաւական քալելէն ետք զգացին, որ զինուորները զիրենք երեք անգամ նոյն տեղը կ'որ կը քալեցնէին, ամէն քայլի հայ մը կը վիրաւորէին, եւ կը չարչարէին: Զինուոր մը անոնց ըսաւ. «չարըն սիզին ալլահինիզ օ քուրթալըր սիզէ», այսինքն՝ «կանչեցէք ձեր Աստուածը, ան ձեզ կ'ազատէ»:

Ճամփու ընթացքին հինգ տարեկան եղբայրը ծարաւցած էր, ջուր ուզեց, իմ մեծմօրս մայրն ալ զինուորէն ուզեց քիչ մը ջուր, սակայն զինուորը շիշը բացաւ խմեց ու մնացածը գետին թափեց: Գիշերով անոնց լուր հասաւ թէ ձեւով մը կրնան *ղաչախ* երթալ՝ փախչիլ: Յունական գիւղ մը կրցան երթալ, հոն յունական ճաշ կար, բայց այդտեղի ժողովուրդը հայերուն թրքացած կը համարէր եւ մահմետական կը սեպէր, արգիլուած էր անոնց եկեղեցի մտնել:

Այդ ժամանակ մեծմօրս մեծմայրը ուզեց գաղտնի եկեղեցի մտնել. գիշերով ժողովուրդին մէջ խառնուելով կրցան մտնել եւ սպասեցին վերջանալուն եւ երբ մարդ չմնաց եկեղեցիին մէջ, բացի քահանայէն՝ անկէ հաղորդութիւն ուզեցին: Քանի որ արգիլուած էր, քահանան վախցաւ այդ բանը ընելու, որովհետեւ դաւաճանած կ'ըլլար իր ժողովուրդին: Իմ մեծմօրս մայրը շեշտեց նոյն բանը քանի մը անգամ մինչեւ որ քահանան համոզուեցաւ, եւ գաղտնօրէն հաղորդութիւնը տուաւ: Յաջորդ օրը, Շաբաթ առտու եկեղեցիին զանգը հնչեց, անոր մայրը արթնցաւ խաչակնքեց երեսը եւ ինկաւ անկողին ու մեռաւ: Ան կարծես գիտէր, որ իր ժամանակը հասած էր:

Այսպիսով հինգ զաւակ որբ մնացին: Բեռնակիր մը գտան, որ անոնց կայարան տանի ու թուրք զինուորներէն փախչին: Գիշերով քալեցին, պզտիկ եղբայրը սկսաւ յոգնիլ...: Բաւական քալելէ ետք յոգնեցաւ ետեւ մնաց ու կորսնցուց բեռնակիրը, երկու քոյրերը եւ եղբայրը: Ամէն տեղ խաւար էր. ան կը քալէր առանց տեսնելու թէ ուր կ'երթար, կարծելով, որ ճամփան կայարան կը հասցնէ: Յանկարծ լոյս մը տեսաւ եւ կարծեց անոնք էին, սակայն գերմանական զինուորներ, զէնքերով նստած կ'ուտէին: Ան վախէն կ'իյնայ ծունկերուն վրայ շփոթած, կը զգայ որ ողնաշարին երկարութեամբ պաղ բան մը սողաց դէպի վար, գլուխը քարշ ձգած էր եւ սկսաւ աղօթել եւ յանկարծ կը զգայ անձ մը՝ անոր ձեռքը բռնած էր, եւ երբ վերեւ կը նայի անոր աչքին զարմանալի տեսարան մը կը ներկայանայ: Անոր քովը ոչ մէկը կար բայց կը զգար անձ մը զինք առաջնորդեց միւս կողմը՝ զինուորներուն մէջէն քալելով. շատ զարմանալիօրէն կը նայէր, զինուորներուն ճիշդ առջեւէն կ'անցնէր եւ անոնք աչքերով կը տեսնէին եւ չէին տեսներ, սառած կը նայէին Աղաւնի մեծ մայրիկիս առանց շարժելու, ոչ մէկ բան ընելու կամ ըսելու:

Անոր եղբայրը գետինը կը պառկէր ու ան աչքերը բաց երկնցած էր քովը, երբ լոյս ելաւ ըսաւ եղբօրը, որ կանչէ քրոջը

անունը եւ քոյրն ալ անոր կանչեց, եւ այսպէս ծայները լսելով իրար գտան: Անոնք կը շարունակեն քալել մինչեւ կայարան, ուրկէ շուտով բոլորը միասին Սուրիա կ'երթան:

Ան հարազատ մը չունէր Սուրիոյ մէջ. կը սկսի աշխատիլ թրքական հաստատութեան մը մէջ, որ ունէր հինգ հանգրուաններ: Որբանոց կը ձգէ քոյրերը եւ եղբայրները, բայց դժբախտաբար պզտիկ եղբայրը անօթութենէն կը մեռնի: Ան իրենց հոգ կը տանէր, ճակտի քրտինքով կ'աշխատէր, որպէսզի հաց շահէր եւ խաշուած ճակնդեղի ջուր: Կէսը քոյրերուն կու տար միւս կէսը ինքը եւ եղբայրը կ'ուտէին:

Տարիներ ետք կրցաւ դրկել քոյրերը Ամերիկա, իսկ եղբայրն ալ զինուորութեան մտնելով գնաց Ֆրանսա, ուր քանի մը տարի ետք հիւանդացաւ. քոյրը գնաց հիւանդանոց բայց մինչեւ իր հասնիլը՝ եղբայրը մեռեր էր:

Սրբուհին ետքը կ'ամուսնանայ ու հայերէնի ուսուցչուհի կը դառնայ: Ճիշդ 35 տարի ետք ինք եւ քոյրը կը հանդիպին իրարու: Սրբուհին միշտ խօսք մը կ'ըսէր. «վիշտը փուշ է սրտի, եւ այդ փուշը կը դառնայ ծաղիկ, որ ծաղիկի պէս անուշ բուրէ շուրջին»: Ան նկատի ունէր իր 94 տարուան շատ դժուար սակայն հետաքրքրական կեանքը:



ՄԵԾՄԱՅՐԻԿԻՆ ԿԵԱՆՔԸ

Գէորգ Չոպանեան

Մօրմէս լսած եմ իր մեծ մեծմօր մասին, որ ջարդէն ազատած եւ չորս տարեկանին հազարաւոր որբերու հետ Եոզկաթէն հասած էր Լիբանան ու տեղաւորուած Ղազիրի որբանոցը: Երբ չափահաս դարձած էր, մեծահարուստ ընտանիքի մը քով սպասուի դրուած էր: Միքանի տարի ետք ամուսնացեր է Սիսէն եկած հայ երիտասարդի մը հետ, կազմելով նահապետական բազմազաւակ ընտանիք մը: Ճիշդ է որ օրերը անցան, տարիները բոլորուեցան ու ինք դարձաւ բարեհոգի ալեհեր մեծ մայրիկ մը, բայց իր յուշերէն երբեք չջնջուեցան իր մանկութեան դառն ու ցաւոտ օրերը: Յաճախ կը յիշէր ու կը պատմէր իր հօր յաղթանդամ, հզօր մարմինն ու զինուած տեսքը՝ երբ գիւղացիներով կ'ուղղուէին պաշտպանելու իրենց շրջանը. մեծմօրս յուշերուն մէջ հերոսի պատկերը անջնջելի մնաց: Կը պատմէր մօրը գեղեցկութեան մասին, բայց չէր հասկցած թէ ինչու մօրը հրեշտակային դէմքը ծածկուած էր ցեխով. իրեն նման ուրիշներ ալ ցեխոտած էին իրենց դէմքերը:

Կը յիշէր այն օրը երբ գիւղին խաղաղութիւնը կորսուած էր, իրար անցած վիճակ մը կը տիրէր ամէն կողմ եւ ամէնուն դէմքերուն վախ ու դող կար, ընտանիքներ իրար կը կորսնցնէին: Այդ օրը ինք մեծ եղբայրը կը կորսնցնէ ու կը մնայ պզտիկ եղբօր հետ առանձին, շուարած. կ'իյնայ փողոցները եղբայրը գրկած (հակառակ որ իր ուժը չէր բաւեր, բայց ամուր սեղմած էր). կը յիշէր մօր խօսքերը՝ «եղբօրդ տէր եղի՛ր»: Կը հարցնէր բոլորին՝ հօր, մօր, եղբօր մասին բայց չէր լսուեր իր փոքրիկ ծայնը այդ աղմկոտ վիճակին մէջ:

Ժողովուրդը կը հեռանար ու կը ձգէր սեփական տուները, հողերը՝ ազատելու հալածանքէն թուրքին, որ անխտիր անգթօրէն կը ջարդէր փոքրերը, մեծերէն առաջ: Գետինները շատ մարդիկ կային. ան չէր հասկնար որ անոնք մեռած էին: Իր մանուկ խելքը չէր հասկցած թէ ինչպէս թուրքին սուրի հարուածը պզտիկ եղբայրը խլեց իր գիրկէն, մէկ կողմ շարտելով անոր մարմինը, ու գլուխը՝ ուրիշ կողմ: Ան բերաւ ու միացուց զանոնք եւ անոնց փաթթուելով քնացաւ բոլոր գիշեր, կարծելով որ եղբայրը կը քնանայ: Առտու երբ արթնցաւ արհնլուայ, մարդիկ եկան եւ դժուարութեամբ առին ու թաղեցին դիակը: Ան օրերով պոռացած ու լացած է «եղբայրս կ'ուզեմ. հիմա հայրս, մայրս, եղբայրս տուն կու գան մեզի կը փնտռեն»:

Ան տարիներով կը յիշէր ու լալով կը պատմէր բոլորին. տարիներ ետք շատերուն նման ինք ալ թերթերուն տուաւ իր կորսնցուցած եղբոր, մօր, հօր, ազգականներուն անունները այն յոյսով որ կը գտնէ զանոնք: Մինչեւ կեանքին վերջին օրը աչքը մնաց տան դուռին՝ յոյսով որ տեսնէ անոնցմէ մէկը, գոնէ մէկ հոգին:

1952ին գտեր էր մայրը, գացեր էր քովը եւ տեսնուեալ հետը: Մայր ու աղջիկ շատ բաներ խօսեալ են, չեն կշտացած իրարմէ: Մայրը բաւական ծերացած էր ու ան պատմեր էր աղջկան իր կեանքը, թէ վերադարձեր էր տուն եւ չգտնելով զաւակները՝ կարծեր էր որ մեռած են: Օրերով փողոցները անօթի անտէր մինակ մնացեր էր, հանդիպեր էր չերքէզ երիտասարդի մը որ պահեր էր զինք իր ընտանիքին տան մէջ: Երթալիք տեղ մը չունենալուն համար, անոնք առաջարկեր են ամուսնացնել իրենց տղուն հետ, իսկ ինք՝ քանի որ դուրսը դժոխք էր ու կը վախնար, կը նախընտրէ այդ բարի ընտանիքին անդամ ըլլալ քան թէ յանձնուիլ թուրքին:

...Մեծմայրիկս երբ ձիւնի նման հրեշտակի դէմք ունեցող մօրը ձեռքերը բռներ է, յիշեր է անցեալի, մանկութեան օրերը... վերադարձը շատ դժուար եղեր է անոնց համար.

մայրը ուզեր է որ զաւակը քովը մնայ ու ըսեր է. «հիմա որ քեզ տեսայ աղջիկս, պիտի չկրնամ ապրիլ ու մօտ օրէն կը մեռնիմ, քանի որ հիմա բաժանումը անելի դժուար է, կարծես սիրտս առիր հետդ կը տանիս ու առանց սրտի մարդ ի՞նչպէս ապրի»: Այդպէս ալ եղեր է. մեծմայրիկին վերադարձէն միքանի շաբաթ ետք մօրը մահուան լուրը առեր է:

Մեծմայրիկը քաջ, հայրենասէր, ազգասէր կին մըն էր: Տարիներ ետք ջարդէն Լիբանան բերեր են ջարդուած հայերուն ոսկորները: Մեծմայրիկը միքանի հայ կիներու հետ մաքրեր է այդ ոսկորները. ան կը պատմէ եղեր թէ որքան ազդուելով մաքրած է այդ ոսկորները՝ լալով եւ ցաւելով իր ազգին սեւ ճակատագիրին վրայ: Ան մաքրած ատեն հարց կու տայ եղեր ինքիրեն թէ արդեօք իր հօր կամ եղբայրներուն ոսկորները կը գտնուի՞ն անոնց մէջ:

Մեծմայրիկը շատ կը քաջալերէ եղեր որ թոռները հայերէն կարդան ու սորվին. մօրս ձեռքը թերթ տալով կը խնդրէ որ բարձրաձայն կարդայ ու հպարտանալով կ'ըսէ եղեր. «թոռնիկս հայերէն կը կարդայ»: Երբ հայերէն թղթիկ գտնէր մը գրուած՝ կ'առնէր նոյնիսկ եթէ ցեխոտ, թրջուած ըլլար. կը մաքրէր, կը չորցնէր ու կը պահէր մասունքի պէս. «յարգը գիտցէք ձեր լեզուին ու ազգին» կ'ըսէ եղեր ան:

Այսօր ան մեր մէջ չէ. միացաւ իր ծնողքին ու եղբայրներուն, գնաց ուրիշ աշխարհ, ուր ամէն բան անելի գեղեցիկ է ու արդար, խաղաղ է ու հանդարտ, չարը գոյութիւն չունի, ամէն բան բարի է ու մաքուր:

Անոր հոգին հանգիստ է եւ ուրախ այդ գեղեցիկ աշխարհին մէջ, բայց միտքն ու սիրտը մնացին հոս՝ հայ ժողովուրդին եւ մեր իրաւունքներուն պահանջատիրութեան պայքարին հետ: Անոր շունչը, ձայնը, խօսքերը մնացին նոր սերունդին հետ, որ պիտի ժառանգէ եկող սերունդներուն ալ՝ մնալու յաւիտեան հաւատարիմ անոնց հոգիներուն:



ՈՒՐՖԱՅԻ ՊԱՍՄԱՃԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԳԱՂԹԸ ԴԷՊՈՒ ԼԻԲԱՆԱՆ

Ասատուր Պասմաճեան

Ուրֆա, Ուռհա, կամ Եդեսիա հիմնադրած է Սէմի որդիներէն Նեբրովդը: Հայր հոն առաջին անգամ մուտք գործած է Ք.ա. 80-55ին՝ Մեծն Տիգրան Բ.ի ժամանակ: Ուրֆայի մէջ Սուրբ Մեսրոպ Մաշտոց հայոց այբուբենին գիտը ըրաւ 405ին:

Ուրֆայի շրջակայ գիւղերու անուններն են՝ Կարմուճ, Հարրան կամ Խարրան, Այն Արուս եւ Պերեճիք: Ուրֆայի ասանդական ճաշերէն են՝ *պորանին*, *լըզլըզուն քիւֆթէն*, *սեմսէքը*, *Ուրֆայի քեպասալը* եւ *կորկոյր ապուրը*: Ուրֆայի երկրորդ մեծ ինքնապաշտպանութիւնը սկսաւ 29 Սեպտեմբեր 1915ին:

Ես չորրորդ սերունդն եմ Պասմաճեան ընտանիքին: Մեծօրս ծնողքը ուրֆացի էին: Հոն ծնած, մեծցած եւ ամուսնացած: Կը կոչուէին Հապիպ եւ Ովսաննա Պասմաճեաններ: Ունէին չորս զաւակ՝ երկու մանչ եւ երկու աղջիկ: Պասմաճեանները ընտանեօք եւ եղբայրներով բուրդ եւ լաթ կը ներկէին, անոր համար ալ *պասմաճի* կոչուած են, որ յետոյ փոփոխութեան ենթարկուած է եւ դարձած Պասմաճեան: Անոնք իրենց արտադրած ապրանքը գիւղերը կը տանէին ծախելու: Բարեկեցիկ կեանք մը կ'ապրէին: Ունէին պարտէզներ, կը հնձէին Հալէպի պիստակ եւ նուջ: Մեծօրս հայրը պատերազմին զինուորութեան գացած է, արեւմտեան ճակատ՝ յոյներուն դէմ պատերազմելու. հոն պաշտպանական խրամատներ փորած է եւ տաժանակիր աշխատանք տարած:

Ջարդերուն՝ խուժանը կը յարձակի եւ թալան կ'ըլլայ Ուրֆայի մէջ: Շուկաներէն անակնկալի եկած հայերէն ոմանք

կը փախչին ու կ'ազատին, իսկ ուրիշներ կը սպաննուին, հայերու տուներ եւ խանութներ հրոյ ճարակ կ'ըլլան: Միքանի օր վերջ, երբ կը հանդարտին դէպքերը, շատ մը մարդիկ մէջտեղ կ'ելլեն իրենց ունեցուածքին նայելու կամ նորոգելու եւ կը գտնեն զոհեր ասդին անդին:

Մեծհայրս քեռի մը ունեցած է Գէորգ անունով, որ սափրիչութեամբ կը զբաղէր: Անոր խանութը գոց եւ ներսէն կղպուած ըլլալով, դուռը կը կոտրեն եւ ի'նչ տեսնեն: Գէորգը վախէն անձնասպան եղած է սուր ածելիով, աթոռին վրայ նստած վիճակի մէջ:

Շատ չանցած ժողովուրդը կը սկսի գաղթել: Մեծօրս մայրը իր զաւակներով դէպի Ճեզիրէ անապատային շրջանները կ'անցնի: Ճամփու ընթացքին, երկու զաւակներ կը կորսնցնէ անօթութենէ եւ հիւանդութենէ: Կը մնայ մէկ տղայ եւ կրտսեր աղջիկը: Կը հասնին Ճարապլուս քաղաքը, որ սուրիական տարածք մըն է: Հոն աղջիկը կենդանիի աղտերուն մէջէն գարի կը հաւաքէ եւ կ'ուտէ առանց որ մայրը գիտնայ: Զուր չըլլալուն պատճառով փորը կը կարծրանայ եւ կը մեռնի: Իսկ տղան միքանի տարի վերջ, 11 տարեկանին, Եփրատ գետը ընկերներով լողացած ատեն ջուրը կը տանի, ուրիշ մանչ մըն ալ հետը եւ հետքը չի գտնուիր:

Տարիներ կ'անցնին. Հապիպը պատերազմի ճակատէն կը փախչի եւ ոտքով կը ճամփորդէ լեռներ եւ ձորեր: Կը փնտռէ իր ընտանիքը եւ զաւակները: Հրաշքով կարծես կը գտնէ Ովսաննան՝ դաշտի մը մէջ աշխատած ատենը: Այսպէս իրարու կը միանան վերստին եւ կը սկսին չարչարանքով նոր ընտանիք մը կազմել եւ կ'ունենան երկու տղայ եւ երկու աղջիկ: Հապիպը շատ չ'ապրիր: Սրտի ցաւէն կը մահանայ՝ ձգելով չորս որբեր: Շատ թշուառ վիճակ մը կ'ունենան մինչեւ որ տղաքը կը մեծնան, կը զինուորագրուին ֆրանսական բանակին (1943-1946) եւ բանակին հետ 1946ին կը փոխադրուին Լիբանան, Ռիաքի շրջանը: Ատկէ վերջ մեծհայրս կը հաստատուի Պուրճ Համուտ 1947ին:

Եթէ ես այսօր պապերուս ծննդավայրը ապրէի, նախ կը զարգացնէի իմ քաղաքս ամէն կողմերէ: Կը խրատէի քաղաքի զաւակներուն, որ փորձեն բարձր ուսում ստանալ եւ հասնիլ լաւ դիրքերու: Կը մտածէի իմ քաղաքս մեծցնել, քաջալերելով ամուսնացած զոյգերուն բերել շատ թիւով զաւակներ: Կը նուիրէի իմ բանակիս զինամթերք եւ դիւանագէտ մարդիկ, որպէսզի կարենան պաշտպանել իմ քաղաքս եւ ամբողջ երկիրս:

Հիմա որ արդէն 100 տարի եղած է Հայոց Յեղասպանութեան, իմ կարծիքով, ոչ մէկ բան պէտք է փոխուի մեր նպատակներէն եւ հաւատքէն: Ճիշդ է, որ մենք ուրիշի տիրապետութեան տակ եղած ենք, բայց արդէն ժամը հասած է, որ այլեւս զօրանանք եւ բազմանանք: Մենք եղած ենք նաեւ առաջին քրիստոնեայ ժողովուրդը եւ իրաւունքներ պաշտպանող ժողովուրդ:

Եկէ՛ք մեր ձեռքերը երկարենք իրարու եւ դառնանք մէկ ուժ, յիշենք եւ պահանջենք մեր արդար իրաւունքը ցեղասպան թուրքէն:



ՏԱՍՆԱՊԵՏԸ

Լիանա Պարսունեան

Հայու ընտանիք կա՛յ որուն արմատները կապուած չըլլան Պատմական Հայաստանին կամ Կիլիկիոյ...: Չկա՛յ: Մեր ընտանիքն ալ ի՛ր պատմութիւնը ունի:

1915ին, ինչ որ մեծհայրը՝ այնթապցի Յովհաննէս Պարսունեանը, թրքական բանակի մէջ տասնապետ եղած է եւ հարիւրապետի մը քով ծառայած: Հարիւրապետը Պոլիսէն հեռագիր մը կը ստանայ, ուր կ'ըսուի. «պէտք է ոչնչացնել բանակի հայ զինուորները»: Հարիւրապետը կը կանչէ Յովհաննէսը եւ անոր կ'առաջարկէ իսլամանալ, որպէսզի ապրի: Տասնապետը կը հաւաքէ հայ զինուորները եւ կը բացատրէ եղածը: Երկար մտածելէ ետք, անոնք կ'որոշեն իսլամանալ՝ իրենց կեանքը փրկելու համար: Հարիւրապետը զինուորներուն կրօնափոխութեան մասին հեռագրով տեղեակ կը պահէ ղեկավարները: Բայց Պոլիսէն հեռագիր մը կը հասնի: Յովհաննէս գաղտնօրէն կը կարդայ հեռագիրը, ուր ըսուած էր, թէ հայերուն կրօնափոխութիւնը ոչինչ կը փոխէ. զանոնք բոլորը պէտք է գնդակահարել:

Նոյն գիշեր, ինչ որ մեծհայրը հարիւրապետին տարազը հագնելով՝ անոր ձին կը նստի ու կը փախչի: Զօրանոցին պահակները չեն կեցներ զինք՝ կարծելով, թէ հարիւրապետն է: Յովհաննէս կը հասնի Հալէպ, ուր շատ գաղթական հայեր կային: Հոն կը հանդիպի իր հեռաւոր ազգականներէն Մարի Ոսպիկեանին, որ ապագային իր կինը կը դառնայ:

Հօրս մեծհայրն ու մեծմայրը՝ Յովհաննէս եւ Մարի Պարսունեանները, կը հաստատուին Դամասկոս: Անոնք հինգ զաւակ կ'ունենան՝ Ալիս (1922), Յակոբ (1924), Համբարձում (1925), Վերժին (1932) եւ Ճորճ (1936): 1960ին, Յակոբ Պարսունեան կ'ամուսնանայ Իզապէլ Նաճարեանի

հետ (1936): Կ'ունենան երկու մանջ՝ Յովհաննէս (1961) եւ Սարգիս (1964) եւ մէկ աղջիկ՝ Մարգրիտ (1973): 1987ին Յովհաննէս իր ծնողքին հետ կը փոխադրուի Պէյրութ, ապա 1999ին կ'ամուսնանայ Քարոլին Պարսումեանին հետ, եւ կ'ունենան երկու դուստր՝ Լիանա (2000) եւ Գարին (2004):

Ասիկա տասնեակ հազարաւոր պատմութիւններէն մէկն է միայն, այն ալ ոչ-ամբողջական: Կը կարծեմ, որ ուշացած ենք: Եթէ ամէն հայ ընտանիք մանրամասն գրի առնէ իր ընտանիքի հետ կապուած բոլոր դէպքերը, տասնեակ հազարաւոր էջեր կրնան գրուիլ եւ շատ նոր փաստեր կրնան բացայայտուիլ: Մենք իրաւունք չունինք անփոյթ ըլլալու եւ մոռնալու մեր անցեալը: Եթէ մենք մոռնանք, ապա ի՞նչ կրնանք ակնկալել մեզմէ ետք եկող սերունդէն:

Պատմութեան շղթային օղակները պէտք է ամուր կապենք իրարու: Ունեցած ենք թագաւորութիւն, հայրենասէր ու ազգասէր ղեկավարներ, հայրենիքին նուիրուած քաջ ու անվեհեր հերոսներ...: Այս բոլորը մենք կը սորվինք, որպէսզի գիտնանք, թէ ո՛վ ենք մենք, ի՞նչ արիւն կը հոսի մեր երակներուն մէջ, նաեւ որպէսզի հասկնանք, որ մեր արժանի տեղը ունինք աշխարհի շատ ու շատ ժողովուրդներու կողքին:

Այս տարի Եղեռնի հարիւրամեակն է: Այս փաստը աշխարհի բոլոր հայերը պէտք է սթափութեան հրաւիրէ: Մենք պէտք է աւելի կազմակերպուած ըլլանք, քիչ խօսինք, շատ գործենք, իրարու լսենք, իրարու յարգենք, մէկս միւսին օգնենք...: Թէեւ տակաւին դպրոցական աշակերտներ ենք, սակայն մենք ալ ընելիք ունինք: Մենք պէտք է լաւ սորվինք. այնքան լաւ, որ յաջողութեամբ բարձրագոյն ուսման տիրանանք եւ լաւ մասնագէտներ դառնանք: Յաջողած մարդը իր ազգին հարստութիւնը կրնայ դառնալ, եւ այդպիսով վրէժը լուծել վայրենի թուրքէն:

ՄԵՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Կարոտ Պէլեան



Տաքուկ նստասենեակիս մէջ նստած, մինչ իմ թուղթերս ու գրիչս կը պատրաստէի, մեծհայրս կը փորձէր անցեալը ներկայ բերել, վերստին ապրիլ այդ ահաւոր ցաւերը: Շունչ մը առնելով սկսաւ պատմել. «Մեծհայրս 1908ին կ'աշխատէր իբր ծխախոտի վաճառական: Հայրս՝ Թորոսը, սկսած էր ծխել: Մեծհայրս կը զայրանայ ու կը վիճաբանի հօրս հետ՝ ծխելուն համար: Կոհիւր այնքան կը բարդանայ, որ հայրս տունը կը լքէ»:

Մեծհայրս աչքերը բանալով կը շարունակէ. «տունը լքելէ ետք, ան գործ կը գտնէ իբրեւ կառապան, կը սկսի տեղէ-տեղ մեծահարուստներ փոխադրել: Շատ պատմութիւններ կը պատմէր հայրս իր գործին մասին: Այդ պատմութիւններէն ամէնէն հետաքրքրականը հետեւեալն է.- օր մը հայրս եւ իր բարեկամները կը թափառէին գիշերով՝ մութ երկինքի տակ: Անգիտակցաբար կը մտնեն ռուսական սահմաններէն ներս: Ռուս զինուորներ կը բանտարկեն զիրենք՝ կասկածելով, թէ անոնք լրտեսներ են կամ ահաբեկիչներ: Հինգ օր ետք ազատ կ'արձակուին բանտէն ու կը վերադառնան հայրենիք՝ Տիգրանակերտ: Ա՛խ, Տիգրանակերտ, եւ ի՛նչ տեսնէ...»:

Ու տխուր զգացում մը կը պատէ մեծհօրս դէմքը: Նորէն երկար շունչ մը կ'առնէ, ու կը շարունակէ. «Տիգրանակերտը ճանչցուած էր իր բարգաւաճութեամբ: Իսկ հիմա ւաւերակ դարձած է... Թափուած արիւնն ու քրտինքը կորսուած են մնացեալ բեկորներուն մէջ: Հայրս շուրջի ւաւերակները տեսնելով՝ ապշած կը վերադառնայ տուն: Կը տեսնէ իր թուրք դրացին, որ կը պատմէ հայ ժողովուրդի տեղահանման ու ջարդին մասին: Մինչ հայրս կ'ողբար ու կը տառապէր, թուրք դրացին զինք կը մատնէ զինուորներուն՝ ըսելով, թէ տակաւին

հայ մը կը գտնուի գաւառին մէջ: Թուրք զինուորները արագօրէն կը հասնին եւ հայրս առնելով կը միացնեն աքսորի կարաւանին: Հայերը շուարած էին, բայց գիտէին, թէ այդ ճանապարհը զիրենք մահ կ'առաջնորդէ»:

Վայրկեան մը քար լռութիւն կը տիրէ սենեակին մէջ: Կարծես մահուան ահաւոր շուքը կրկին կ'այցելէ: Մեծհայրս կը շարունակէ պատմել. «մարդ մը կու գայ ու հայրս կը հանէ շարքէն: Այդ մարդը իր վարպետն էր, որ զինք շատ կը սիրէր: Ան կ'ազատէ հայրս մահէն, կը տանի իր տունը, կառք մը կ'ապահովէ՝ երկրէն հեռանալու: Հայրս դէպի Հալէպ ճամփուն վրայ անգամ մը եւս կը հանդիպի թուրք եաթաղանին: Թուրք զինուորները զինք կը նետեն գերեզմանոցի բաց հողերէն մէկուն մէջ: Ժողովուրդը իր աղերսանքի կանչերը լսելով՝ օգնութեան կը հասնի: Հայրս կրկին ճամփայ կ'ելլէ ու վերջապէս կը հասնի Հալէպ»:

Մեծհայրս կը ժպտի: Արեւը կրկին կը ծագի. «հոն էր, ուր հայրս իր կեանքը կը շարունակէ. կ'ամուսնանայ եւ կ'ունենայ հինգ զաւակ: Ապա կը հաստատուի Լիբանան»:

Վերջակէտ մը դնելով իր պատմութեան, յոգնած արտայայտութեամբ մը կ'ըսէ. «կեանքը տարբեր է հիմա...»:

Այժմ սեւ օրերը հեռացած են մեզմէ: Անցեալին թափած արիւնը արդէն տուած է նոր ծիւեր, սակայն ռիսն ու վրէժը միշտ կը զարնեն մեր դռները: Ուրեմն ուրախանանք, սակայն չմոռնանք: Հանգստանանք, սակայն պահանջենք: Մենք հա՛յ ենք: Ա՛յս է մեր կեանքը:



ՊԱՂՉԷ-ՀԱԼԷՊ-ԼԻԲԱՆԱՆ

Սարին Պերպերեան

1915ին, Կիլիկիոյ Ամանոս քաղաքի գիւղերէն՝ Պաղչէի մէջ, կ'ապրէր մօրս մեծօր գերդաստանը: Ընտանիքը կը բաղկանար հինգ անդամներէ՝ հայրը, մայրը, 14 տարեկան եղբայրը, 8 տարեկան քոյրը՝ Վարդին, եւ ինքը՝ 2 տարեկան: Հայրը կը զբաղէր ոսկերչութեամբ: Այն ատեն Օսմանեան Կայսրութիւնը արդէն իսկ որոշած էր հայերը տեղահան ընել, ջարդել եւ միայն մէկ հայու դիակը պահել թանգարանին մէջ: Եւ այսպիսով սկսան գործադրել իրենց ծրագիրը:

Կարգը հասած էր Պաղչէ գիւղին: Թուրքերը ներս խուժելով, ամէն ինչ քարուքանդ կ'ընեն եւ կը հաւաքեն գիւղի բոլոր տղամարդիկը, ամէն տարիքի, բացի փոքրերէն: Բայց անոնց ալ կը սպանեն, որպէսզի հայութիւնը չշարունակուի: Մօրս մեծմօրը մայրը լսելով այս լուրը՝ մանուկին աղջկայ հագուստ կը հագցնէ: Բայց յոյս չկար հայրը եւ մեծ եղբայրը ազատելու: Դժբախտաբար թուրքերը կը տանին զիրենք:

Ուրեմն, անկարող կիներն ու աղջիկները կը ստիպուին քալել: Երկար եւ տաժանելի չարչարանքներէ անցնելով, մայրը անընդհատ ութ տարեկան Վարդիին երեսը եւ հագուստները ցեխ կ'ընէր, որպէսզի թուրքերը գեղեցկութիւնը չտեսնեն ու չյափշտակեն զայն: Իսկ մանուկը՝ մօրս մեծհայրը, կը մնայ մօրը գիրկը: Եւ որպէսզի անօթի չմնայ, մայրը կուրծքէն կաթ կու տար անոր: Ընթացքին, մայրը կը սկսի ուժաթափ դառնալ: Յանկարծ կը զգայ, որ Վարդին կորսնցուցած է: Այսպիսով կը մնան մայրը եւ մանուկը: Քանի մը անգամ մայրը քալած ատենը ուժաթափ գետին կ'իյնայ, բայց նորէն մանուկը գիրկը առնելով կը շարունակէ քալել: Վերջին անգամ, այլեւս մայրը չի կրնար

ոտքի ելլել: Մանուկը երկար ժամանակ կը մնայ մօրը քով, լալով եւ շարժելով զայն, որ վերստին քալէ: Բայց ան արդէն մահացած էր: Հակառակ որ փոքրիկը երկու կամ երեք տարեկան էր, այս պատկերը կը մնայ իր յիշողութեան մէջ, ամբողջ կեանքի ընթացքին:

Փոքրիկը կը ստիպուի մինակը քալել այդ ամբոխին հետ, անտէր ու անտիրական: Կը հասնին Տէր Զօրի անապատները: Արդէն ժողովուրդին մեծամասնութիւնը սպաննուած էր: Կը հասնին ֆրանսացիներ եւ կը փորձեն ողջերը հաւաքել: Երբ կարգը կու գայ մօրս մեծօրը, կը հարցնեն անոր, թէ ի՛նչ է անունը: Ան չի կրնար պատասխանել: Ֆրանսացիները կը տանին զայն որբանոց, հոն անունը կը դնեն՝ Ժաքոպ-Եագոպ:

Ժաքոպ կը մնայ որբանոց մինչեւ 16 տարեկան: Յետոյ իրեն գործ կը գտնեն Հալէպի շոգեկառքի կայարանին մէջ: Քանի մը տարի աշխատելէ ետք, օր մը, տարիքոտ կին մը կը հարցնէ իր ո՛վ ըլլալը: Ժաքոպ՝ չի շեղել իր ընտանիքին անդամները, չի կրնար պատասխանել: Բայց կը բացատրէ անոր, թէ ինք ջարդէն ազատած է: Մինչ այդ, այս կինը լաւ կը ճանչնար Ժաքոպին ընտանիքը: Գաղթի ժամանակ, երբ Ժաքոպին քոյրը կորսուած էր, այս տարիքոտ կինը հոգ տարած էր անոր եւ ամուսնացուցած էր զայն: Այս կինը Վարդիին լուր կու տայ, թէ ան կայարանը հանդիպած է երիտասարդի մը, որ շատ կը նմանէր հօրը: Քոյրը չկարենալով համբերել կայարան կ'այցելէ եւ լաւ մը կը քննէ Ժաքոպը: Տեսնելով նմանութիւնը Ժաքոպին եւ իր հօր միջեւ, կը համարձակի հարցնել Ժաքոպին, թէ արդեօք կոնակին ձախ կողմը սեւ նշան մը ունի՞: Ժաքոպ զարմանքով «այո» կը պատասխանէ:

Այսպիսով Ժաքոպ եւ Վարդի՝ քոյր ու եղբայր կը վերամիանան 14 տարիներ ետք: Իրարու կը սկսին պատմել իրենց պատմութիւնները: Այն ատեն, Ժաքոպ կ'իմանայ իր բուն անունը՝ Յովհաննէս Գոյումճեան: Հետեւաբար, ջարդին

պատճառով փոխուած է մեծօրս եւ մեծմօրս մականունը եւ Գոյումճեանի փոխարէն Եագուպ եղած է:

Յովհաննէս կ'ամուսնանայ Հալէպի մէջ եւ կ'ունենայ 4 զաւակ, որոնցմէ կրտսեր տղան իմ մեծհայրս է: Յովհաննէսի զաւակները կը մեծնան Հալէպի մէջ: 1967ին մեծհայրս կը փոխադրուի Լիբանան, աւելի լաւ ապագայ կազմելու յոյսով: Եւ այժմ կը գտնուին լիբանան:



ԲԱԼՈՒԷՆ ԼԻԲԱՆԱՆ

Վերոնիքա Պոզոյեան

Կեանքի պատմութեան շրջանին պայքարող եւ չընկրկող ժողովուրդ եղած ենք, յաջորդները մեր պապերուն՝ տարածուած ենք աշխարհի չորս ծագերը:

...Ինչպէ՛ս հասանք Լիբանան:

1910ի շրջանին, Բալուի մէջ հօրենական մեծմօրս հայրը՝ Սեդրակ Պոզոյեան, երկաթի վաճառական էր, եօթը եղբայրներով, հարուստ դիրքով, տէրը՝ մեծ հողամասի, կ'ապրէր խաղաղ իր կնոջը՝ Խանըմին հետ, որ Խարբերդի Լաչինեան ընտանիքի աղջիկ էր: Անոնք ունեցան չորս զաւակ՝ Ֆիլոմինա, Թագուհի, Սահակ եւ Մարիամ: Խանըմը կը հոգար տան գործերուն եւ պզտիկներուն կը նայէր:

Ջարդի շրջանին, Սեդրակ աղան կը քաշուի Բալուի բերդը, զինուած: Թուրք-հայ դաւաճան մը մատնելով տեղը, թուրքերը կը պաշարեն բերդը. Սեդրակ կը դիմադրէ երեսուն օր, բայց կը մահանայ: Նոյն ժամանակ, Խանըմը իր չորս փոքրերով կը յաջողի փախչիլ. զաւակները կը դնէ որբանոց, ապահովութեան համար, բայց միսիոնարները Ֆիլոմինան կը դրկեն Ֆրանսա, մինչ Մարիամ հիւանդանոցին մէջ կը մահանայ: Խանըմը իմանալով իր ամուսինին եւ աղջկան մահը, իրենց մարմինները կը թաղէ պարտէզին մէջ, պահելով նաեւ իրենց հարստութիւնները:

Խանըմ միսիոնարներուն օգնութեամբ, Սահակը եւ Թագուհին կը դրկէ Լիբանան: Տէր Զօրի մէջ, գերմանացի զինուոր մը կը հանի Խանըմին գեղեցիկ ծայնը, եւ կ'օգնէ անոր անցնելու Եփրատ գետէն դէպի Հալէպ, ուրկէ կ'անցնի Պէյրութ: Պէյրութի մէջ, Խանըմը կը փնտռէ իր զաւակները որբանոցներուն մէջ: Կը գտնէ զանոնք, բայց Թագուհին կը խնդրէ որ մնայ՝ իր ուսումը շարունակելու: Թագուհին իր

ուսումը կը շարունակէ եւ կը դառնայ բժշկուիի: Սահակ սափրիչ աշխատեցաւ եւ հոգ տարաւ մօրը: Ան հանդիպեցաւ մեծմօրս՝ Վերոնիքային (ատանացի) եւ ամուսնացան, ունեցան հինգ զաւակ՝ Ֆիլորա, Անօ, Մարիամ, հայրս՝ Սեդրակ եւ Պօղոս: Անոնք հաստատուեցան Պէյրութ, սակայն Պէյրութի կոիւնտրուն պատճառով անցան Զալքա: Աւելի ետք, Սեդրակ ամուսնացաւ մօրս՝ Արփիին հետ (ատանացի), ունեցան եղբայրս՝ Սահակը եւ զիս:

Ներկայիս հայրս ժամագործ կ'աշխատի: Հօրս ընտանիքին անդամները կը գտնուին աշխարհի զանազան տեղերը՝ Ֆրանսա, Ամերիկա եւ Հայաստան:

Խանըմը բնաւ չէ մոռցած իր մօրենական հողը եւ յիշատակները պահելով, պատմած էր ու այդպիսով ես հիմա կը ներկայացնեմ մեր հօրենական պատմութիւնը: Մինչեւ հիմա շարունակած ենք պահել մեր մականունը՝ Պոզոյեան:

Եթէ ես հիմա իմ պապենական հողիս վրայ ըլլայի, կը ջանայի պահել մեր կալուածները եւ վերանորոգել զանոնք:



ԱՐԳԱՐ ԳԱՐԱՏԱՆԱՅԵԱՆԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ռիթա Պոյաճեան

Հօրս մեծհայրը եւ մեծմայրը՝ Արգար եւ Սաթենիկ Գարատանայեան, ծնած են Տէորթ Եոլ: Նոր ամուսնացած՝ սկսած է հայերուն ջարդը թուրքերուն կողմէ: Մեծմայրը տարիքով շատ փոքր էր՝ 15 տարեկան, մեծհայրն ալ ֆիտայի էր: Քանի մը անգամ թուրքերը առեւանգած են զինք, սակայն ան փախած է եւ վերադարձած: Բայց ան վերջին անգամ կ'երթայ եւ ետ չի դառնար: Սաթենիկ ստիպուած իր ծնողքին հետ անապատներուն մէջ անօթի, ծարալ՝ շաբաթներով կը գաղթէ Սուրիա, ապա՝ Լիբանան, կը դրուի Ջահլէի որբանոցը:

Ետքը հայ մարդ մը՝ Գրիգոր, կ'այցելէ որբանոցը, շատ կը հաւնի Սաթենիկը եւ կ'առաջարկէ ամուսնանալ Սաթենիկին հետ: Անոնք կ'ամուսնանան, տղայ զաւակ մը կ'ունենան:

Տարի մը ետք ամուսինը թերթ կարդացած ատեն ծանուցում մը կը կարդայ, թէ Արգար Գարատանայեան անունով հայ մը կը փնտռէ իր տիկինը՝ Սաթենիկ Գարատանայեանը: Ան լուր կու տայ իր տիկնոջ Սաթենիկին, որ թէ՛ կ'ուրախանայ, թէ՛ կը վախնայ: Կը խնդրէ իր ամուսինէն որ արտօնէ զինք վերադառնալու Արգարին, վախնալով որ Արգար վնաս հասցնէ իրենց. ան շատ կը սիրէր իր նախկին ամուսինը: Ան կը վերադառնայ Արգարին, անոնք դարձեալ կը միանան եւ կ'ունենան երեք աղջիկ:

Տարիներ ետք, Սաթենիկին տղան Ժողէֆը կը փնտռէ մայրը. ամիսներ տեւած փնտռուքէ ետք կը գտնէ զինք: Սաթենիկ շատ կը վախնայ ըսելու ամուսինին, որ տղան հիւր պիտի գայ իրենց մօտ, բայց Արգար մեծ ուրախութեամբ կ'ընդունի, որովհետեւ ան տղայ զաւակ չունէր եւ Ժողէֆը կ'ընդունի որպէս իր հարազատ զաւակը:



ԸՆՏԱՆԻՔՍ ՄԱՐԱՇԻ ՄԷՋ

Էլի Սարաֆեան

Ընտանիքս (հօրս կողմէ), ասկէ հարիւր տարի առաջ կ'ապրէր Կիլիկիոյ Մարաշ շրջանին մէջ: Շրջանը ջրառատ էր եւ այդ պատճառով ալ կը կոչուէր՝ «քառասուն աղբիւրի քաղաք»:

Մեծօրս հայրը՝ Սեդրակ Սարաֆեանը, եօթը տարեկան էր 1915ին, երբ գաղթը սկսաւ: Բայց նախքան գաղթը սկսիլը, ընտանիքիս առաջին զոհերը եղած էին իմ մեծօրս հօր երկու քեռիները, որոնք ուսուցիչ էին եւ կը պաշտօնավարէին Հալէպի Գողէճին մէջ: Անոնք արձակուրդի եկած էին Մարաշ, ուր կացինահար եղած են: Ոմանք կ'ըսէին, թէ գողեր գողութիւն ընելու նպատակով կը սպաննեն զիրենք, բայց դրամապանակները իրենց գրպաններուն մէջ կը մնային:

Տեղահանութեան ընթացքին հայրն ու մայրը հազիւ հասած Սուրիոյ Նաւա կոչուած գիւղը՝ յոգնութենէն կը մահանան: Անոր քոյրը, որ տեղահանութեան ընթացքին 11 տարեկան էր, իր անզաւակ հօրեղբօրը ու անոր կնոջ հետ գաղթի կ'ելլէ: Ճամփան զայն կ'առեւանգեն ու կը տանին: Ան ալ կը սեպուի զոհ մը, որովհետեւ տարիներ ետք՝ 1930ականներուն, երեւան կ'ելլէ, որ ան թուրք աշիրաթապետի մը կողմէ առեւանգուած էր եւ անոր կինը դառնալով զաւակներ ունեցած էր: Իրեն միշտ կ'ըսէին, թէ աշխարհի վրայ հայութիւն չէ մնացած:

Օր մըն ալ Լիբանան հաստատուած մեծօրս լուր կու գայ, թէ իր քոյրը կ'ապրի Ուրֆայի մէջ, իր ամուսնոյն հետ: Նամակագրութիւնով, կը կարողանան համոզել թուրք ամուսինը, որ իր կինը Լիբանան դրկէ, որպէսզի իր ընտանիքին կարօտը յագեցնէ: Թուրքը կ'ընդունի եւ կը դրկէ Լիբանան, բայց առանց զաւակներուն:

Երբ ան Լիբանան կը հասնի, այլևս ետ չի վերադառնար ու անգամ մըն ալ չի տեսներ իր զաւակները:

Մեր ընտանիքը տուած է հինգ զոհ: Հետաքրքրական բաժինը այն է, որ մենք ունինք թուրք ազգականներ, որոնք բարեբախտաբար չենք ճանչնար:

Մարաշ, մեծօրս հօր ընտանիքը նպարավաճառութեամբ կը զբաղէր: Բայց մեծօրս հայրը աշխատած է որպէս ձուլագործ իր քեռայրին հետ: Ներկայիս ընտանիքիս ասպարէզը նոյնն է՝ ձուլագործութիւն:

Ուրիշ ժառանգութիւն մըն ալ կայ ընտանիքիս մէջ՝ մեր անունները: Այսպէս, մեծօրս մեծօր անունը Էլի էր ու իր զաւակին անունը՝ Սեդրակ: Մեծօրս անունը՝ Էլի, հօրս անունը՝ Սեդրակ, ու իմ անունս՝ Էլի:

Մեր մականունը Սարաֆեան է: Բայց Մարաշի մէջ *Ղեւլտէր* կ'ըսէին, որ թրքերէնով կը նշանակէ գանձապահ: Յետագային *Ղեւլտէրը* կը դառնայ «Սարաֆեան»:

Դժբախտաբար, մեծօրս հայրը երեխայ ըլլալուն, չէ կրցած մեզի մեր պապենական հողերէն յիշատակ մը բերել:

1956ին ընտանիքս Պէյրութի մէջ հաստատուած է Նոր Թրատ շրջանը, ու մենք տակաւին կը շարունակենք ապրիլ այդ նոյն տան մէջ, ուր պապերս ապրած են: Բարեբախտաբար, գերդաստանիս բոլոր անդամները կը գտնուին Լիբանան, եւ մենք իրարու հետ միշտ կապի մէջ ենք:

Շատ կը մտածեմ ապագային այցելել այն հողերը, ուր իմ պապերս արին, քրտինք ու արցունք թափած են: Կ'ուզեմ տեսնել այն բոլոր գեղեցիկ տեսարանները, զորս հիմա թուրքը կը վայելէ:

Պիտի պատմեմ նաեւ մեծօրս հօր բառերով արտասանուած դրուագ մը, որ գրի առնուած է Սամուէլ Կարապետեանին կողմէ: Ունինք նաեւ անոր արձանագրուած ձայնը. «1915 թուին սկսան հայութիւնը Մարաշէն աքսորել: Բազմաթիւ հայեր, առաջին անգամ լուսաւորչականներ, տեղահան եղան: Այդ ժամանակ եօթը տարեկան էի: Շատ լաւ

կը յիշեմ, թէ ինչպէս մամաս, պապաս, ամէնքս մէկ՝ ութ հոգի, սկսանք քալելու եւ հասանք Էրքենազ: Էրքենազը գետ մըն էր: Այնտեղ պառկեցանք: Յաջորդ օրը ելանք ու նորէն սկսանք քալել դէպի Աղսու: Այն ալ նոյնպէս գետ մըն է, բայց քիչ մը աւելի մեծ: Քանի մը օրեր ետք հասանք Այնթապ: Այնթապի մէջ մեզի դրին Աւետարանական եկեղեցիի մը մէջ, ուր քանի մը օրեր մնացինք, ապա մեզ փոխադրեցին Քիլիս»:



ԱՆԽԻՂՃ ...ՊՈՌԱ՛

Անժելինա Սարգիսեան

«Անխիղճ...Պոռա՛»՝ հայրը ըսաւ իր պզտիկ Անահիտին.. 'Անխիղճ, ..պոռաց մայրս երբ հայրս՝ մեր աչքին առջեւ սպաննեցին»... արցունքը աչքին կախուած,

Յակորը շարունակեց պատմել... «հազիւ մայրս կրցաւ թուրքին ճանկերէն եւ եղբայրս Մելքոնն ալ պահուրտիլ... մնացի մինակ... ես ինը տարեկան մանուկ՝ կարծես մահուանս ժամը հասած էր»:

Յակորը ակռաները սեղմելով շարունակեց. «ու՛ր երթամ, ի՞նչ ընեմ, չեմ ուզեր մեկնիլ, Տէր Յիսուս օգնէ՛ ինծի... յանկարծ վառարանը տեսայ՝ այդ վառարանը որ երբ Սասնոյ բարձր լեռներուն վրայ ձիւնը տեղար... մայրս մեզ պաղէն պաշտպանելու համար կը գործածէր ... բայց այս անգամ ես պիտի գործածեմ այդ վառարանը... բայց ոչ, թէ պաղէն պաշտպանուելու ...այլ թուրքէն»։ Անահիտը գիրկը առնելով շարունակեց. «ստիպուեցայ մօտ մէկ օր մնալ այդ փոքր վառարանին մէջ ... փառք Աստուծոյ, կրցայ փախչիլ այդ գազաններէն...

«Անխիղճ» պոռաց մայրս... եւ այդ էր անոր վերջին բառը: Թուրքերը տարին զինք եւ հայրս սպաննեցին, իսկ եղբայրս՝ Մելքոնը 12 տարեկան տղան, իմ մեծ եւ միակ եղբայրս կորսնցուցի ...:- Խոր շունչ մը առնելով շարունակեց.- որբ մնացի... պէտք էր երթայի եղբայրս փնտռելու... քանի մը վայրկեան յետոյ պզտիկ պայուսակ մը ուսիս առնելով ճամփայ ելայ ... քալեցի, քալեցի, հասայ Տիգրանակերտ արդէն մուրը կոխած էր... ճամփաները ջուրի տեղ արին կը հոսէր. ես՝ անօթի, քունոտ, ծառի մը տակ քնացայ,- ձեռքը մօրուքին վրայ դնելով շարունակեց,- վարժուած էի ամէն օր մօրս ձայնին վրայ արթննալ ...սակայն արթնցայ կոշտ ձայնի

մը վրայ. այդ նոյն գազաններն էին ու ես հեռուէն լսեցի ու տեսայ գանոնք... շտապով վազեցի, կրցայ փախչիլ,- բայց յանկարծ ժպիտ մը գծուեցաւ Յակոբի երեսին վրայ,- այդքան վազելէ ետք տեսայ ծեր կին մը. նախ վախցայ անկէ, սակայն երբ հետս հայերէն խօսեցաւ՝ հանգստացայ, եւ իր հետ մնացի: Ես եւ ինքը երկար թափառումէ ետք հասանք Սուրիա: Անիկա ինծի խոստացաւ որ եղբայրս պիտի գտնենք: Մէկ տարի Սուրիա մնացինք ես եւ կինը, վրաններու տակ. փնտռեցի եւ վերջապէս եօթերորդ ամիսը գտայ եղբայրս...»:

Անահիտը ըսաւ. «Ամմօ Մելքոնին մասի՞ն կը խօսիս»:

- Այո, աղջիկս,- պատասխանեց Յակոբը,- ես եւ եղբայրս շատ չարչարուեցանք ու աշխատելու սկսանք: Եղբայրս կ'աշխատէր ինչ որ կը պահանջուէր իրմէ... սակայն մայրս չգտանք, միայն յիշեցինք իր վերջին խօսքը՝ «Անխի՛ղճ... Պոռա՛»:

Յակոբը մեր նկարները դիտելով շարունակեց. «եղայ քսան տարեկան: Ծեռ մայրիկը մահացած էր արդէն. առիթը ունեցայ Լիբանան ճամփորդելու՝ աշխատելու համար... եղբայրս ամուսնացած էր արդէն: Գացի Լիբանան ու հոն որբանոցին մէջ ծանօթացայ մօրդ՝ Մարինա Կիրակոսեանին...

- Հայրիկ, քու մականունդ պէտք չէ՞ Յակոբ Ղազարեան ըլլայ,- միջամտեց Անահիտը:

- Ճիշդ ես,- տխուր ժպիտով մը պատասխանեց,- Ղազարեան էի, սակայն ստիպուեցայ «եան»ը հանել եւ ըլլալ Յակոբ Ղազար ...:

- Յետոյ ի՞նչ եղաւ հայրիկ,- Անահիտը հարցուց:

- Յետոյ, ունեցայ եօթը պզտիկ՝ դուն, Հրաչը, Ղազարը, Դաւիթը, Հրանդը, Վերժինը, Սիրունը...:

- Իսկ քու մայրդ գտա՞ր,- Անահիտը տխրօրէն հարցուց:

- Ոչ, չգտանք...:



ԻՆՉ Է ՄԱԿԱՆՈՒՆԴ ԵՂԲԱՅՐ

Ռիթա Սարգիսեան

Անկին մը նստած մինակ կը գրեմ. կը գրեմ թուրքին վայրագութիւններուն մասին: Անոր տուած անմարդկային չարչարանքներուն մասին: Կը պատմեմ իմ անբաժան բարեկամիս՝ գրիչիս եւ այս ճերմակ թուղթին կը փոխանցեմ 100 տարուայ պատմութիւն, 100 տարուայ չարչարանք, 100 տարուայ փաստ: Այս պատմութիւնը որ պիտի պատմեմ հեքիաթ չէ, ոչ ալ անձանօթի մը կեանքը. ան իմ մեծօր պատմութիւնն է:

Արդեօք իմ նամակս պիտի հասնի՞ թշնամիին: Չեմ կարծեր ... սակայն պիտի գրեմ, քանի կրնայ ըլլալ հոգեկան հանգիստ զգամ երբ արտայայտեմ իմ ցաւս այս թուղթին վրայ: Չեմ ուզեր յիշել այդ վայրկեանները երբ մօրմէս լսեցի խեղճ Ստեփանին պատմութիւնը, սակայն կ'ուզեմ ձեզի ալ պատմել որպէսզի միասին ապրինք այդ վարկեանները:

...Գիշեր էր երբ լսուեցան զէնքի ձայներ ու կրակոցներ: Թուրքերը կարծէք մրջիւններու պէս խումբով կու գային որպէսզի ճաշ առնեն եւ այդ ճաշն ալ մենք էինք՝ հայերս: Դուռը զարնուեցաւ. Ստեփանին մայրը բացաւ դուռը: Բոլորն ալ քնացած էին: Հրահանգուեցաւ որ բոլորն ալ դուրս ելլեն տունէն: Ստեփան, քոյրը, մայրը եւ հայրը ստիպուած դուրս ելան: Մերկացուցին իր քոյրն ու մայրը: Երբ Ստեփանը այս տեսաւ՝ սարսափեցաւ: Բոլորն ալ փորձեցին փախուստ տալ, սակայն միայն Ստեփան կրցաւ ծառ մը բարձրանալ եւ հոն մնալ: Ան ամէն բան կը դիտէր, բայց՝ անշշուկ. սխալ շարժում մը՝ եւ կ'իյնար ու կ'անցնէր թշնամիին ձեռքը: Ստեփան կարծէք թուրքին գործած վայրագութիւններուն դէմ փաստ մըն էր: Ան վերէն տեսաւ իր ընտանիքին, իր դրացիներուն եւ բոլոր գիւղացիներուն ջարդը: Կրնամ ըսել որ աշխարհի

ամենէն գէշ պատկերներէն մէկն է տեսնել քու հարազատներուդ ջարդը քու աչքերովդ: Այստեղ՝ փոքրիկներու լացուկոծը այնտեղ՝ հայ կիներու աղաչանքը: Ի՞նչ կրնար ընել խեղճ Ստեփան՝ միայն ու միայն սպասելէն զատ: Ան կը պատմէ թէ բոլոր կիները մերկ-մերկ պարեցուցած էին, յղի կիները մորթած էին իրենց դեռ լոյս չտեսած փոքրիկներուն հետ: Ինչ պատմեմ որ պատմեմ...

Թուրքերը գիւղը պարպելէ ետք, այսինքն 2-3 օր ետք, Ստեփան կրցաւ ծառէն իջնել եւ հասնիլ մինչեւ Եփրատ գետ:

Ան բաւական լողալէ ետք ուզեց քիչ մը հանգիստ ընել: Ինք գիւղէն շատ հեռացած էր: Նստաւ տունի մը դրան առջեւ եւ քունի անցաւ: Երբ արթնցաւ՝ տեսաւ որ շրջապատուած է միքանի մարդոցմով: Ուրեմն այս ընտանիքը որուն դրան առջեւ քնացած էր Ստեփան՝ զինք ներս առած էր: Սկսան Ստեփանին հարցումներ հարցնել թէ ինչպէս ինք հոս հասած էր: Ան լալով պատմած էր դէպքերը: Այս ընտանիքը տեսնելով խեղճ Ստեփանին վիճակը կ'ուզէ որդեգրել զինք: Ստեփան կրեց այդ ընտանիքին մականունը՝ Գրիգորեան: Ան մեծցաւ, ամուսնացաւ եւ զաւակներ ունեցաւ: Ան իր զաւակներուն լալով կը պատմէր իր կեանքը, իսկ վերջին շրջանին սկսած էր կուրնալ: Ստեփանին զաւակներէն մէկը ամուսնացաւ եւ աշխարհ եկաւ մայրս եւ ատկէ ետք՝ ես:

Այս իմ ընտանիքիս պատմութիւնն է որ մայրս պատմած է ինծի: Մօրս պատմած է իր հայրը՝ Աւետիսը, իսկ Աւետիսին ալ՝ Ստեփանը: Եւ անշուշտ ես ալ ապագային պիտի պատմեմ իմ զաւակներուս, որպէսզի չկորսնցնենք մեր պատմութիւնը, արմատները եւ ինքնութիւնը:

Այս ընտանիքիս պատմութիւնը կ'ըսէ թէ ես ո՛վ եմ, որո՞ւ զաւակն եմ: Ես զաւակն եմ՝ հայրենիքիս, զաւակն եմ մէկուկէս միլիոն նահատակներուն եւ վերջապէս զաւակն եմ, որ իր պատմութեան տէր պիտի կանգնի, պիտի չմոռնայ իր հարազատներուն հերոսութիւնները եւ անոր հիման վրայ պիտի ըլլայ կեանքի տէր անձ մը: Դատ մը ունինք, ես այդ

դատը պաշտպանողը պիտի ըլլամ մինչեւ որ բոլորս հասնինք մեր նպատակին:

Ի վերջոյ կ'ուզեմ ըսել թէ մենք բոլորս պէտք է կեդրոնանանք հատուցման աշխատանքին եւ Արեւմտահայաստանին, համշէնահայերուն եւ պոլսահայերուն վրայ, որպէսզի միասնաբար պահանջենք մեր Մասիսը եւ մեր մէկուկէս միլիոն սրբացած նահատակներուն արինը եւ նաեւ փոխադրենք բոլոր նահատակներուն աճիւնները ամբողջական եւ միացեալ Հայաստան:



ՏԱԺԱՆԱԳԻՆ ՃԱՄՓԱՆ

Սարգիս Սարգիսեան

Օսմանեան իշխանութեան ծրագիրն էր իր սահմաններուն մէջ ապրող ամբողջ քրիստոնեայ բնակչութեան բնաջնջումը: Պատերազմը առժամաբար ազատ ձգած էր օսմանեան կառավարութեան այն հակակշռէն, որքան ալ թեթեւ ըլլար անիկա, զոր Եւրոպան կը յաջողէր բանեցնել իր վրայ:

Օրէ օր երկինքը սկսած էր ամպոտիլ, արեւը իր ամէն օրուան զուարթութեամբ չէր ծագեր Հայաստանի վրայ, այլ կը նմանէր այն մօր որ կ'արտասուէր ինք իր մէջ, իր զակին համար: Ամպերը գարնանային այդ ջերմ օդին իրարու կը զարնուէին եւ այդ որոտումին ծայնը կարծես բան մը ըսել կ'ուզէր հայութեան, սակայն ոչ ոք չէր հասկնար այդ բանը: Եւ հասաւ այն օրը որ արեւն իսկ երես դարձուց Հայաստանէն: Այդ պահուն էր որ Թուրքիոյ մէջ հնչեցուցին պատերազմի փողը ...

Այդ տաժանելի օրը, 1915 Ապրիլ 24ի Կիրակին էր: Առաւօտեան արեւի ճառագայթներուն տակ մեզ տունէն դուրս հանելով միացուցին խումբ մը հայրենակիցներու, որոնց թիւը առաւել քան մէկ ու կէս միլիոն հոգի կը հաշուէր: Անոնք կը զարնէին, կը հայիոյէին, կը տանջէին մեզ, կը թքնէին մեր վրայ: Այս ամբողջ արարքները կատարողը թուրք բարբարոս կոչեցեալն էր: Կը քալէինք բոպիկ ոտքերով, գրեթէ մերկ մարմիններով եւ կը փորձէինք հասկնալ այս բոլոր արարքներուն պատճառը: Ի վերջոյ Թալէաթ ինք արտայայտուեցաւ ըսելով՝ «Հայկական Հարցը լուծելու միակ միջոցը հայոց բնաջնջումն է»:

Չորս կողմէն կը լսուէին մանկական ճիչեր, մայրական ախ ու վախեր եւ տարեցներու անէծքներ: Անցան ժամեր եւ մենք

հասանք գիւղ մը, անոնք կախաղաններ շինելով կախաղան հանեցին այն հայ երիտասարդները, որոնք կը մերժէին անոնց կամքը կատարել: Կին մը կար, որ կ'աղաղակէր ըսելով՝ «զիս կախաղան հանեցէք զաւկիս փոխարէն». ան իր պատասխանը ստացաւ սուրի հարուածով մը:

Այդ գիւղին մէջ հայերը զոհ տուին առաւել քան 50 այր տարեցներ եւ երիտասարդներ եւ մէկ կին: Թուրք բարբարոսները իրենց չար զգացումէն մաս մը յագեցուցած ըլլալով՝ հրամայեցին, որ ճամփան շարունակենք: Ճամփու ընթացքին տեսայ ինչպէս թուրք զինուոր մը մօր մը ձեռքէն զաւակը առնելով սուրէ անցուց. աչքերս երկինք բարձրացնելով միտքէս կ'ըսէի. «արդեօք աշխարհի պատմութեան մէջ եղա՞ծ է, կամ տեղի պիտի ունենա՞յ այսպիսի տառապանք մը, որ դժոխքի մէջ իսկ գոյութիւն չունի»: Մենք կը քալէինք դիակներու վրայէն, որոնք նահատակուած էին թուրք բարբարոսներուն կողմէ: Իւրաքանչիւր նահատակի դէմքին վրայ կը տեսնէինք ժպիտ մը, որ կը խորհրդանշէր հայ ազգի հպարտութիւնը՝ թուրք բարբարոսներուն կատարած արարքներուն դէմ:

Անցան օրեր. մենք մնացած էինք առանց ջուրի եւ կ'երակուրի: Հասանք Սուրիա եւ այդտեղ տեսանք գետ մը որուն անունը Եփրատ էր: Այդտեղ էր որ հայը ուզեց իր ծարաւը յագեցնել, սակայն թուրքը սուրէ անցուց մաս մը այդ հայերէն եւ գետը վերափոխուեցաւ արեան:

Մենք այդ գիշեր փորձեցինք փախուստ տալ այդ անասնական տանջանքներէն, սակայն չյաջողեցանք: Առաւօտ դարձեալ սկսանք քալել եւ ի վերջոյ հասանք Տէր-Չօր քաղաքը: Մենք կը յուսայինք թէ այդտեղ պիտի գտնենք հանգիստ: Հետզհետէ հասանք կեանքով լեցուն գիւղեր եւ այդտեղի բազմութեան մէջ մտնելով, մաս մը յաջողեցան փախուստ տալ:

Ես ալ:

Ճամփու ընթացքին, երբ կը վազէի յանկարծ գետին
ինկայ եւ աչքերս փակեցի...: Կարծես տարիներ ետք աչքս
բացած՝ ինքզինքս գտայ անկողինի մը մէջ: Շփոթած՝
անկողինէն դուրս գալով սենեակէն դուրս ելայ: ...կը գտնուէի
արաբ ընտանիքի մը տան մէջ. տանտէրը ինծի մօտենալով
ըսաւ, որ ինքզինքս ապահով զգամ: Ան ինծի պատմեց թէ երբ
գետին ինկած եմ թուրք բարբարոսները զիս
վերածերբակալելու կը պատրաստուէին, իսկ ինք ինծի տէր
կանգնած է, ապա իր տան մէջ ապաստան տուած: Ան
պատմելը աւարտելէ ետք կը փորձէր ինծի ստիպել որ իր քով
մնամ, սակայն անոր շնորհակալութիւն յայտնելով հեռացայ:

Անցան այդ տառապալից օրերը եւ հետզհետէ արեւը
դարձեալ ծագեցաւ Հայաստանին վրայ եւ դարձեալ
լուսաւորեց հայութեան սիրտը: Սակայն հայը երբեք չմոռցաւ
իրեն դէմ կատարուած Յեղասպանութիւնը:

Հայուն նշանաբանը պէտք է ըլլայ այն, որ Մեծի Տանն
Կիլիկիոյ Կաթողիկոսը դրուաւ. «Յիշել, Յիշեցնել եւ
Պահանջել»:



ՊԱՊԵՆԱԿԱՆ ԱԻԱՆԴՆԵՐ

Սթեֆանի Սերայտարեան

Ասկէ հարիւր տարի առաջ, Սերայտարեան ընտանիքը կը բնակէր Թուրքիոյ Մարաշ քաղաքը: Մարաշի յատկանիշերն են ձեռագործութիւնը, պաղպաղակը, պղինձի գործը...

Երբ բոլոր հայերը Սուրբ Աստուածածին եկեղեցիին մէջ ապաստանած էին ջարդէն պաշտպանուելու, մտածելով թէ թուրքերը չեն յարձակիր, թուրքերը եկեղեցի մտնելով սկսած են քարիւղ թափել եւ մորթել բոլոր հայերը որ կը դիմադրէին, կամ կը փորձէին ազատիլ եկեղեցիէն, ապա կրակ տալով փախած են...: Միայն տասը հոգի կրցած էր ազատիլ այդ եկեղեցիէն՝ փորելով պատը, մինչ հարիւրներով մարդ աչրելով կը մահանան հոն:

Հօրս մեծհայրն էր Մովսէս, որ տասնչորս տարեկանին կրցած է այս դժուարութիւններէն ազատիլ եւ ահաւասիկ ինքն է մեր արմատը... Մովսէս Սերայտարեան ծնած է 1901ին եւ ամուսնացած է 1921ին, Մարիամի հետ, որ ծնած է 1904ին:

Անոնք 1922ին Մարաշի մէջ ունեցած են մանչ զաւակ՝ Ստեփանը, որ իմ մեծհայրս է: Մովսէս 1923ին, ընտանիքին հետ Սուրիոյ Հալէպ քաղաքը կը գաղթէ, ապա Լիբանան կը հաստատուի եւ կ'ունենայ Ստեփանէն զատ երեք զաւակ՝ երկու մանչ եւ մէկ աղջիկ. Յարութիւն որ ծնած է 1928ին, Գոհար՝ 1930ին եւ Մանիէլ՝ 1939ին: Մովսէս նշանաւոր մսավաճառ էր Թուրքիոյ մէջ եւ Լիբանան գալով մսավաճառի եւ խորովածի խանութ բացաւ...:

1940ին երբ Մովսէս խանութը կ'աշխատէր թուրքեր եկան ողի առնելու իրմէ, բայց ան զգալով թուրքերուն նպատակը, մսավաճառի դանակը առնելով այդ թուրք աւագակին գլուխը կտրեց եւ Այնճար ապաստանեցաւ: Բայց 1951ին, սրտի

կաթուածէն՝ երիտասարդ մահացաւ: Միայն Մանիէլի տղան Վիգէնը նոյն ասպարէզով կը զբաղի եւ ներկայիս ան միակ եւ առաջին անձն է որ խառն ամուսնութիւն կատարեց ուքրանացիի մը հետ, մօտաւորապէս հինգ տարի առաջ: Մինչեւ օրս հօրաքոյրս՝ Ովսաննան, կը կատարէ Մարաշի ձեռագործը եւ մեզի կը սորվեցնէ, որպէսզի չմոռնանք մեր պապենական ծննդավայրին կարեւոր ամանդները եւ խորթ չդառնան անոնք:

1923ին ընտանիքս հաստատուեցաւ Պուրճ Համուտ. մինչեւ օրս կը բնակինք հոն, բայց հօրս մեծօր նոյն տունը չենք բնակիր: Մովսէս Նոր Մարաշ կը բնակէր, բայց երբ Ստեփան մեծհայրս ամուսնացաւ, ան Թրատ թաղը հաստատուեցաւ. մենք այդ տան մէջ կը բնակինք:

Դժբախտաբար ընտանիքիս անդամները հոս չեն ապրիր: Ստեփանը որ ամուսնացած է Ազնիւ Չեքմէեանի հետ, ունեցած է վեց զաւակ՝ Մովսէս (ծն. 1950) մահացած է 1989ին սրտի կաթուածէն, Ովսաննա (ծն. 1953) Լիբանան կ'ապրի եւ հայ աւետարանական եկեղեցիի տիկնանցի անդամ է, Յակոբ (ծն. 1955) կ'ապրի Քուէյթի մէջ, Կարապետ՝ հայրս (ծն. 1958) կ'ապրի Լիբանան, Գէորգ (ծն. 1966), կ'ապրի Ամերիկա եւ հայկական ակումբի մէջ է, Մարիա (ծն. 1971), կ'ապրի Լիբանան: Յարութիւն որ ամուսնացած է Վարդիի հետ, մահացած է 2008ին, զաւակ չունի: Գոհարը հինգ զաւակ ունի՝ Անդրանիկ, Ռոզին, Մայտա, Շահէ, Սեդա: Անդրանիկը մահացած է, իսկ Շահէն կ'ապրի Ֆրանսա, Մայտան կ'ապրի Քուէյթ: Մանիէլը ամուսնացած է Նազելիի հետ, մահացած է 2005ին եւ ունի չորս մանչ զաւակ՝ Ռաֆֆի, Մովսէս, Արա եւ Վիգէն: Միայն Մովսէսը Ամերիկա կ'ապրի...: Գրեթէ ամէն անձ որ Լիբանան չ'ապրիր չի զբաղիր հայկական հարցերով...

Եթէ ես պապերուս ծննդավայրը ըլլայի կ'ուզէի եւ կը փորձէի զարգացնել, փոփոխութիւններ ընել երկրին մէջ ցոյց տալու թուրքին՝ հայութեան ուժն ու խելացութիւնը:



ԵՐԿՈՒ ՈՐԲԵՐՈՒՆ
ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ
(ՊՕՂՈՍ ԵՒ ՆՈՒԱՐԴ
ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆՆԵՐՈՒ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ)

Նարոտ Սերուժեան

Մօրենական կողմէ՝ մեծմօրս մայրը՝ Աղանի Վարժապետեան-Սնապեան, իսկ մեծմօրս հայրը՝ Պօղոս Վարժապետեան, ծնած 1902ին, Արաբկիր: Հօր անուն՝ Յարութիւն, մօր անուն՝ Աղանի: Ներսէս պատրիարք Վարժապետեանի տոհմէն:

Պօղոս Վարժապետեան 12 տարեկան պատանի էր, երբ կ'աւարտէ դպրոցը. հայրը կ'որոշէ զինք Խարբերդի Գոլէճը դրկել, բայց դժբախտաբար տեղահանութիւնը կը սկսի:

Իսելահաս ըլլալով, ան ամէն ինչ կը յիշէ: 1915ին իր գերդաստանը՝ 24 հոգի, տարագրութեան կ'ենթարկուի: Պօղոսի հայրն ու երկու հօրեղբայրները կօշկակար եղած են ու անկախ իրենց արհեստէն, Արաբկիրի գիւղերէն մէկուն մէջ ունեցած են 300է աւելի մեղուի փեթակ: Պօղոսի հօրեղբօր որդիները՝ Շահէն եւ Ապահ Վարժապետեաններ, 1913ին գաղթած են Միացեալ Նահանգներ, Ֆիլատելֆիա: Անոնք միակ ազգականները եղան, զորս Պօղոս վերագտաւ 1968ին, երբ այցելեցին Լիբանան:

Տարագրութեան ժամանակ, երբ կը հասնին Եփրատի մօտ, Պօղոսի մայրն ու անոր կեսուրը կը քաջալերեն որ նետուի ջուրը եւ լողալով անցնի դիմացի ափը: Պօղոս լաւ լուրդող էր. կը նետուի ջուրը, թուրք զինուորներ կը կրակեն անոր ուղղութեամբ, սակայն ապարդիւն, ան կը յաջողի փրկուիլ եւ անցնիլ միւս կողմ:

Երբ ջուրէն կ'ելլէ, դիմացը կը ցցուի թուրք մը, որ անդրադառնալով անոր ինքնութեան, կը փորձէ դաշունահարել զայն: Քիւրտ բէկ մը վրայ կը հասնի, թուրքը կը փախչի, իսկ Պօղոսը՝ կուրծքէն վիրաւորուած (սպին կար կուրծքին վրայ) կ'ապաստանի քիւրտ բէկին տունը: Բէկը, որ արու զաւակ չունէր, կ'որդեգրէ զինք եւ երկու տարի շարունակ կը պահէ իր տունը, մանաւանդ որ Պօղոս լաւ թրքերէն եւ քրտերէն գիտէր:



Պօղոս եւ Նուարդ, Հալէպ 1932-33

Երբ Պօղոս քիչ մը կը մեծնայ, քիւրտ բէկը կ'որոշէ ամուսնացնել զայն իր դստեր հետ, ուստի Պօղոս կ'որոշէ փախչիլ, մանաւանդ որ ձի ալ ունէր: Օր մը ան գիշերով կը փախչի տունէն եւ կը հասնի իր գիւղը՝ Արաբկիր:

Կը գտնէ իր հօրենական տունը, որ քարուքանդ եղած էր. կը նստի փլատակներուն վրայ եւ յուզումէն կը սկսի հայրենասիրական երգեր երգել: Այս լսելով, թուրք զինուորներ կը ձերբակալեն զինք իբրեւ

կասկածելի յեղափոխական՝ *կոմիտասպաշի* ու կը նետեն բանտ:

Մէկուկէս տարի Խարբերդի բանտը մնալէ ետք, 1918ին, Հայաստանի անկախացման առիթով, ուրիշ բանտարկեալներու նման, զինք ալ ազատ կ'արձակեն: Ան 16 տարեկան էր, կը վերադառնայ Արաբկիր:

Մեծմօրս մայրը՝ Նուարդ Էժտահարեան (որդեգրուած մականունը՝ Մուրտիկեան), ծնած է 1909ին, Էրզրումի Ձիթող գիւղը. մօր անուն՝ Սեփորա:

4-5 տարեկան էր փոքրիկ Նուարդը, երբ թուրքերը տեղահան կ'ընեն իրենց գիւղը եւ կը քշեն դէպի Արաբկիր, անկէ ալ՝ Տէր Զօր: Շատ փոքր ըլլալուն՝ կը յիշէ միայն որ ունեցած է իրմէ պզտիկ քոյր մը եւ եղբայր մը: Մայրը Արաբկիրի որբանոց կը տանի Նուարդը, պատուիրելով որ հոն սպասէ, մինչեւ իր վերադարձը: Եղբայրը եւ քոյրը մօրը ետեւէն կու լան. ճարահատ՝ մայրը իր հետ կը տանի զանոնք:

Երեք ամիս որբանոց մնալէ ետք, Մարիցա Մուրտիկեան անունով մեծահարուստ կին մը կու գայ եւ 300 որբերուն մէջէն կ'որդեգրէ Նուարդը: Մարիցան այն քիչ անձերէն եղած է որ տեղահանութեան չէ ենթարկուած, սակայն ամուսինը սպաննուած է թուրքերուն կողմէ: Եղած են շատ հարուստ. զբաղած են պղնձագործութեամբ: Իրենց շքեղ առանձնատունը կառուցուած է աղբիւրի մը մօտ, ուր թուրք զինուորներ կու գան եւ խնճոյքներ կը սարքեն: Այդ պատճառով ալ Մարիցային 'հանգիստ' ձգած են:

Պօղոս Արաբկիր կու գայ եւ Մուրտիկեաններուն դրացի ըլլալով, կը ծանօթանայ Նուարդին, եւ այնուհետեւ միշտ միասին կ'ըլլան:

Պօղոս եւ Նուարդ կը սիրահարին եւ կ'ամուսնանան: Պօղոս՝ 21 տարեկան է, իսկ Նուարդ՝ 14: Հարսանիքին առիթով, Մարիցան ոսկիէ թելերով հիւսել կու տայ Նուարդին մագերը:

Սակայն, վեց ամիս ետք, լուր կու գայ, որ Պօղոս պէտք է զինուորագրուի: Մարիցան Պօղոսը փախցնել կու տայ Հալէպ (ուր զարմիկ մը ունէր): 13 օր կը տեւէ ճամփորդութիւնը: Գիշերը կը քալեն, ցերեկը կը պահուրտին կամ կը քնանան:

Երբ Հալէպ կը հասնին, Պօղոս կը նկարուի եւ նկարը՝ իբր փաստ ապահով հասնելուն, կը դրկէ Արաբկիր՝ զինք

առաջնորդող մարդուն հետ, որպեսզի այս վերջինը ստանայ խոստացուած 14 կարմիր ոսկիները...

Հալէպի մէջ Պօղոս կ'աշխատի շինարարութեան գործով: Լուր կը ղրկէ Մարիցային, որ ինք հանգիստ է, եւ կ'աշխատի, կրնայ Նուարդը ղրկել Հալէպ:



Ձեռագործ ոսկեայ խաչ, Արաբկիր: Մեծ Եղեռնէն առաջ, Մարիցա Մուրտիկեանի սեփականութիւնը: Մուրտիկեան գայն փոխանցած է իր որդեգիր դստեր՝ Նուարդին: Նուարդ փոխանցած է Աղանիին. Աղանի՝ իր ասագ դստեր՝ Կարինէին: Այսպէս, այս խաչը սերունդէ սերունդ պիտի փոխանցուի ընտանիքի ասագ դստեր՝ պայմանաւ որ ան հայու հարս ըլլայ

- Կ'երթաս Հալէպ, հոն խեղճ կեանք կ'ունենաս,- կ'ըսէ Մարիցան Նուարդին,- չեմ ուզեր աղքատի կեանք ապրիս: Եւ այսպէս ինը երկար տարիներ կ'անցնին... Օր մըն ալ, Պօղոս, ճարահատ, լուր կը ղրկէ, որ եթէ Նուարդը չգայ Հալէպ, ինք պիտի ամուսնանայ ուրիշի հետ: Ստիպուած,

Մարիցան կը յօժարի... Եւ վերջապէս ինը տարի ետք, Պօղոսն ու Նուարդը կը վերամիանան: Հալէպի մէջ հարսանեկան հագուստով նկար մը կը նկարուին, այդ տարիներու միակ յիշատակը, ենթադրաբար 1932-33 թուակիր:

Կը ծնի իրենց առջինեկը՝ Աղանի (Պօղոսի մօր անունով), որ չորս տարեկանին պիտի մահանար զօրաւոր ջերմութենէ: 1935-36ին, Պօղոսին կ'առաջարկուի նոր գործ մը՝ Լիբանանի մէջ կառուցուող Ելեկտրակայանի մը համար: Վերջնականապէս կը փոխադրուին Լիբանան, կը հաստատուին Էշրեֆիէ:

Աւելի ուշ անոնք կը բախտաւորուին չորս զաւակներով՝ Յարութիւն (Պօղոսի հօր անունով), Յովհաննէս, Աղանի (մեծմայրս) եւ Շուշան: Այս չորս երեխաները չեն ունեցած ո՛չ հօրաքոյր, ո՛չ մօրաքոյր, ո՛չ հօրեղբայր, ո՛չ քեռի եւ ոչ մէկ ուրիշ զարմիկ:

Իրենցմով շարունակուեցաւ ընտանիքը:

Փոքր յուշ մը:

Երբ Պօղոս փոքր տղայ էր, օր մը, հօրը հետ ճամփան քալած ժամանակ կը հանդիպին թուրք փաշայի մը: Հայերը պէտք էր խոնարհէին թուրք փաշաներուն առջեւ. օրէնքը այդ կը պահանջէր: Պօղոս, օրէնքէն անտեղեակ (մանուկ ըլլալուն), չէ խոնարհած փաշային առջեւ. այս վերջինը այնպիսի ապտակ մը իջեցուցած է անոր երեսին, որ ան ոխ պահած է անոր դէմ: Տարիներ ետք, օր մըն ալ հանդիպած է այս նոյն փաշային, որ այգիի մը մէջ, ծառի մը տակ կը քնանար: Շրջապատը լաւ մը զննելէ ետք, խոշոր քար մը առնելով, գլխուն նետած է եւ տեղն ու տեղը սպաննած զայն:



ԵՂԱՅ ԿԱՏԱՐԵԱԼ ՈՐԲ

Սեակ Սիմոնեան

24 Ապրիլը ժամանակակից հայոց պատմության էջերուն անցած լոկ հայու ճակատագիրը խորհրդանշող թուական մը չէ, ոչ ալ միայն մոմով կամ ծաղիկով մը մեր զոհերուն յիշատակը ոգեկոչելու օր: 24 Ապրիլը Սփիւռքի ծննդեան օրն է եւ գոյապայքարի թուականը: Մեր արդար իրաւունքներուն աննահանջ պահանջատիրութեան խորհրդանիշն է: Ան մեր՝ ամբողջ հայութեան արդար դատն է՝ հայկական գրաւեալ հողերուն, Յեղասպանութեան զոհերուն ու մեր դարաւոր մշակութային ժառանգութեանց կորուստին դիմաց:

«Աչքերովս տեսայ պատմութեան ամէնամեծ ոճիրը, զոր անկարող է նկարագրել լեզուն կամ գրիչը: Զարհուրելին, զոր անկարող են մոռացութեան ենթարկել անցնող 99 տարիները,- սկսաւ պատմել մեծհայրս:- Ամրան սկիզբը մայրս, քոյրս, եւ ես քնացած էինք մեր տան տանիքը: Լուսաբացին, զգացինք, որ մէկը՝ «եալլա քախ» ըսելով կը զարնէր մեզի: Մեր աչքերը բացինք, որ թուրք զինուոր մըն է: Լսած էինք, որ տեղահան պիտի ընեն մեզ: Մենք՝ գիւղին ծայրի բնակիչները - շուրջ վաթսուն հոգի էինք - պատրաստուեցանք, կղպեցինք մեր դռները, առինք ինչ դրամ որ ունէինք եւ նոյն ոստիկանին ու քիւրտի մը հետ, որ մինչեւ ծունկը երկարող Օսմանեան սուր մը կախած էր մէջքին, ելանք արքոր, դէպի ողջ մահ:

Քալեցինք դէպի արեւմուտք, անցանք երկու կողմերը ցանքերով լեցուն ուղիներէ: Խումբին մէջ տարիքով ամէնէն մեծ տղան ես էի: Շարունակ կը հետեւէի. մարդկութենէ, այլեւ բարոյական ըմբռնումէ ալ զուրկ էի: Առաջին օրը, քիւրտը մէկ օրուան դեռ քողածածկ հարսը առաւ տարաւ ցանքերուն մէջ:

Հարսը վերադարձաւ բզկտուած հագուստներով: Շատ չանցած՝ տարաւ ուրիշ մը: Կէս ժամ ետք ինք եկաւ, աղջիկը չեկաւ: Մայրս, որ անվախ ու համարձակ էր, քիւրտին ըսաւ՝ «տեսնեմ սուրդ»: Քիւրտը հանեց սուրը պատեանէն. տեսանք արիւնը կը կաթէր անկէ, գազանը սուրը մխրճած էր աղջկան: Բոլորը լացին, իսկ մայրս նախատեց զայն:

Բաւական քալելէ երբ, թուրք ոստիկանը իջաւ իր ձիէն, նստաւ գետին, բացաւ թաշկինակը եւ ըսաւ. «ով որ դրամ ունի, թող բերէ հո՛ւս դնէ, որովետեւ ճամփան կը կողոպտեն ձեզ»: ... Քալեցինք եւ հասանք աջին գտնուող ձոր մը. թուրքը իջաւ ձիէն եւ հրահանգեց բոլորին իջնել ձոր, գիտցանք որ հոն պիտի մորթեն մեզ: Խուճը սկսաւ իջնել, մենք վերջիններն էինք. մեր կարգը չեկած, թուրք ոստիկան մը հեւիհեւ եկաւ եւ բան մը փսփսաց զինուորին: Իսկոյն զինուորը վեր կանչեց բոլորը եւ շարունակեցինք մեր ճամփան: Այդ վայրկեանին հրաշք համարեցինք ոստիկանին ժամանելը. եթէ ուշանար՝ ջարդուած էինք:

Նոյն իրիկունը հասանք Պաքըրմատէն գիւղաքաղաքը: Ելանք մեծ շէնքի մը տանիքը եւ հոն անօթի գիշերեցինք: Առաւօտուն քշուեցանք հարաւ: Բաւական քալելէ ետք հասանք Տիարպեքի պարիսպով քաղաքը, ուր երկարահասակ տաճիկ կին մը, շարքին ետեւէն քալած ժամանակ, գրկեց ու փախցուց քոյրս՝ Սարան: Ես սկսայ լալ ու կանչել: Մայրս արցունքոտ աչքերով, նայուածքը ետին ուղղած՝ «ձգէ՛ թող տանի, թերեւս ապրի, արդէն մեզ հիմա գետը պիտի նետեն», ըսաւ: Շարունակեցինք քալել, բայց քրոջս կորուստը տառապանք կը պատճառէր մեզի:

Հասանք գետեզերք մը, մայրս կարծեց, որ հոն պիտի խեղդեն մեզ, բայց անվնաս անցանք կամուրջը եւ սկսանք քալել դէպի դժոխք, դէպի անապատները: Անօթութիւնը ու ծարաւը սարսափելի էին, ջուրի պահանջը կը սպաննէր մեզ, «միրաժ»ներ կը տեսնէինք. կիները կը վազէին կարծելով, որ

իսկապէս ջուր տեսած են, բայց... յուսախաբութիւնը կը կրկնապատկէր ծարաւն ու տառապանքը:

Ծայր աստիճան մաշած հասանք Հալէպ, մուտքին բժիշկ մը քննեց մեզ, ոմանց կեցուց աջ, ոմանց՝ ձախ կեցողները, ինչպէս ես ու մայրս, հիւանդներէն էինք: Մեզ՝ տասնհինգ հոգի, ձգեցին մեծ վրանի մը տակ անօթի ու ծարաւ:

Երկրորդ օրը հօրեղբօրս աղջիկը, որուն քոյրն ու եղբայրը մորթած էին, մեզի բերաւ երեք հատիկ խաղող, որ մուրացած էր մեզի համար: Երկար անօթունենէն ու ծարաւէն ետք երեք հատիկ խաղողը արցունքով կերանք: Անկէ ետք մեզ զետեղեցին Սալիպէի փողոցի դիմացը լքուած մեծ դուռով բակի մը մէջ, ուր ամէն իրիկուն երկու-երեք մարդ կու գար, մեծ կաթսայով ոսպ կամ ձաւար կ'եփէր եւ իւրաքանչիւրիս կու տար օրը մէկ կամ երկու շերտփ: Այդ բակը եւ կաթսային առթած մուրը պատին վրայ երկար ատեն մնացին իբրեւ վկայութիւն:

Քիչ մը առողջանալէ ետք, մեր խումբը բաժնեցին երկուքի՝ մէկ մասը դէպի Իրաք քշեցին, միւսը՝ Համա, Հոմա: Հօրեղբօրս ընտանիքը քշուեցաւ Համա, իսկ մենք՝ Իրաք, անշուշտ դէպի անապատները, ուր կային թէ՛ գնչուները, թէ՛ վրանաբնակ արաբները: Բայց միակ անօթիները եւ սովէն տառապողները մենք էինք: Հետզհետէ մեր առողջական վիճակը վատ կը դառնար:

Օր մը, երբ նստած էինք վրաններէն քիչ մը հեռու, մայրս ինծի հարցուց՝ «տա՛մ քեզի այդ արաբներուն, գնչուներուն»: Բաւական մտածելէ ետք՝ «այո» պատասխանեցի: Մայրս ձեռքէս բռնեց եւ տարաւ առաջին վրանը, ուր հեռու տեղէ վաճառական մը եկած էր եւ առետուր կ'ընէր վրանաբնակ գնչուին հետ: Մայրս ձեւերով հասկցուց մարդուն: Վաճառականը ըսաւ. «ես հետս կը տանիմ տղան»: Միւսն ալ ըսաւ. «ես ալ կ'ինը կ'առնեմ»: Ես, որ կեանքիս մէջ արաբերէն բառ չէի լսած հրաշքով հասկցայ, թէ ինչ կ'ըսեն երկուքը:

Մօրս բացատրեցի՝ մայրս ընդունեց: Վաճառականը զիս դրաւ իշուն վրայ եւ բաժնուեցայ մօրմէս:

Եղայ կատարեալ որբ:

Հասանք արաբական վրանները: Մարդուն կինը անկին մը տրամադրեց, որ քնանամ: Չկրցայ քնանալ. մօրս կարօտը կը տանջէր զիս, թէեւ դեռ օր մը չէր անցած մեր բաժանումին, բայց ես զինք յիշելով անդադար կու լայի: Լսեցի, որ մարդուն կինը կ'ըսէ «*էլուլայտ համպիպքի*»: Հասկցայ ինչ կ'ըսէ եւ փորձեցի զսպել լացս: Յաջորդ օրը կինը զիս անօթի դրկեց արածելու իր հօտը. հինգ-վեց օր ետք, առաւօտ մը, հօտը պակաս գտնելով վռնտեց զիս:

Սկսայ առանձին քալել դէպի բարձունքները: Յանկարծ հիւսիսային բարձունքին վրայ նկատեցի գունաւոր հագած կիներու հսկայ խումբ մը, որ կը քալէր դէպի բարձրաւանդակը: Անոնց հագուստներու գոյներէն զգացի, որ հայեր են. ուզեցի միանալ իրենց: Սկսայ քալել այդ ուղղութեամբ, մինչ այդ վրաններու բնակիչ երկու կիներ, որոնք իրենց գլուխներուն վրայ առարկայ շալկած կու գային ամբոխին կողմէն՝ «Հասան, ո՛ւր կ'երթաս, հոն մի՛ երթար, հիմա այդ բոլորը պիտի մորթեն», ըսին ինծի: Ես չջարունակեցի ճամփաս, միայն հեռուէն հետեւեցայ անոնց, մինչեւ որ բարձրաւանդակին միւս կողմը իջան:

Իրիկունը թուրք ոստիկան մը եկաւ, այդ կիներուն վրանը մտաւ: Ես պահուրտեցայ վրանին ետեւ եւ սկսայ մտիկ ընել: Ոստիկանը արաբին ըսաւ. «հաւաքեցէ՛ք ձեր մարդիկը, առէ՛ք ինչ որ ունիք սպանող իրեր եւ եկէ՛ք: Այսօր այս խոզերը, զորս նստեցուցեր ենք Եփրատ գետի եզերքը, պիտի ջարդենք»: Մարդը առարկեց, թէ տղամարդիկ գրեթէ դուրսն են այդ ժամուն, բայց ով որ ներկայ էր հաւաքեց եւ գնաց ոստիկանին հետ, ես վախէս տեղէս չջարժեցայ:

Իրիկունը մարդը վերադարձաւ եւ պատմեց կիներուն, թէ այդ «խոզերը» երկու հագարէն աւելի հայ կիներ ու փոքրիկներ են, զորս ոստիկանները գնդակահարեր են,

ապա հրամայած են շրջիլ անոնց միջեւ, եւ ով որ ողջ է, քարով գլուխը ճզմել, մինչեւ որ բոլորը մեռնին, ապա կողոպտել անոնց ոսկիները՝ եթէ մնացած են:

Երկու-երեք օր ետք անտանելի հոտ մը տարածուեցաւ անապատին մէջ: Չկրցան հոտին դիմանալ: Կիները գացին եւ դիակները մերկացնելէ ետք նետեցին Եփրատ գետը: Ես մարդու մը հետ գետեզերքի վարի կողմերը կ'աշխատէի, յանկարծ տեսանք ճերմակ, ուռած ու մերկ մարմիններ ջուրին վրայ իրարու զարնուելէն ու հրելէն յամրընթաց կ'ուղղուէին հոսանքն ի վար: Անոնք այնքան շատ էին, որ գետին արագահոսութեան արգելք կը հանդիսանային: Շատեր ջուրին երկու կողմերը «կախուելով» ուրիշներուն ճամփայ կու տային, ուրիշները ոլորապտոյտ ջուրին մէջ իրարու կը փաթթուէին, սակայն բոլորը լուռ կը նայէին դէպի երկինք: Զարհուրելի՛ էր, զարհուրելի՛: Չկրցայ զսպել ինքզինքս, կը փակէի աչքերս, բայց անօգուտ, անոնք կը յամառէին գետեզերքը կախուած մնալ, եւ կարծես յիշեցնել, թէ ես ալ նոյն ճակատագիրին պիտի ենթարկուէի, եթէ հրաշքով մը այդ երկու կիները զիս կանչած չըլլային:

Անցաւ քանի մը օր: Գետեզերքը կախուած դիակներուն հոտը կը շարունակէր հասնիլ վրաններուն: Արաբները ստիպուեցան ձգել շրջանը ու հեռանալ. ես ալ քալեցի իրենց հետ: Յաջորդ օրերուն մէկը վռնտեց միսը ընդունեց զիս: Վերջապէս վրանէ վրան թափառելէ ետք, մնացի Սալէի Համմատէին քով հինգ-վեց տարի:

Օր մը ցորեն գնելու համար անցանք Տիգրիս գետը եւ գացինք Զախու կոչուած գիւղը, որուն բնակիչները քըլտենի էին: Ուղտը նստեցուցինք թաղապետին դրան առջեւ: Արաբը ելաւ թաղապետին քով, ես մնացի ուղտին հետ: Օգոստոս ամիսն էր, բոլոր փոքրերը գունաւոր կը հագնէին, մինչ արաբներուն քով աչքերս սեւէն զատ ոչինչ կը տեսնէին: Երբ զմայլած կը նայէի չորս կողմս, որ քրիստոնէութիւն կը բուրէր,

նկատեցի՝ մարդ մը կը քննէր զիս. վախ մը զգացի: Մարդը ինծի նայելով ելաւ թաղապետին քով:

Արաբը իջաւ, բեռցուցինք ցորենը եւ գացինք ջաղացք՝ ցորենը աղալու: Երկու հոգի մեր ետեւէն հասան, բռնեցին զիս եւ հարցուցին, թէ քրիստոնեա՞յ եմ: «Ո՛չ, ես մահմետական եմ, անունս ալ Հասան է»՝ ըսի վախով: Անոնցմէ մէկը չհաւատաց եւ թեւէս քաշելով տարաւ թաղապետին:

Արաբը հասաւ մեր ետեւէն եւ թաղապետին ըսաւ, թէ իր տղան եմ: Իսկ ան ըսաւ. «Մուսուլի կողմերը կին մը կայ, որ կ'ըսէ, թէ իր տղան ձեր կողմերը կորսնցուցած է, եւ այս տղան կապուտաչեայ ու ճերմակամորթ է. հայ ըլլալու է, եթէ կնոջ չէ՝ եկէ՛ք, ե՛տ առէ՛ք, տարէ՛ք»:

Հասկցայ, որ այդ մարդը որ ինծի կը նայէր, թաղապետին ըսած է, որ արաբներուն հետ քրիստոնեայ մը կայ, ազատեցէք զայն: Ուր որ ետք արաբները եկան, որ տանին զիս, թաղապետը ըսաւ. «Լուր դրկած եմ կնոջ, որ գայ, սպասե՛նք»: Արաբները սպասեցին: Երկու օր ետք կին մը եկաւ եւ լալով փաթթուեցաւ ինծի: Ըսաւ, թէ իր տղան եմ: Արաբները հարցուցին ինծի, թէ ճի՞շդ է: «Այո՛», ըսի, թէ եւ գիտէի, որ մայրս չէր. ինք ալ գիտէր անշուշտ, բայց կարեւորը ազատիլն էր:

Հայ կնոջ հետ գացի Մուսուլ: Ան կ'աշխատէր դեղագործի մը տունը: Զիս դրկեցին «Մայթամ էլ-պապա էլ-խամէս էլ-հալէր ֆիլ Մուսուլ» որբանոցը, ուր աշխատեցայ եւ վարդապետական ուսում ստացայ: Քանի մը տարի ետք, 1925ին զիս դրկեցին Լիբանանի Շարֆէ անունով վանքը, մասնագիտանալու արաբերէն լեզուին եւ այլ լեզուներու մէջ, անունս ալ Աֆրամ դրին:

Լիբանանի մէջ երկար փնտռուիքէ ետք, իմացայ, որ հօրեղբօրս աղջիկը ողջ է Համայի մէջ. գտայ հասցէն, նամակցեցայ եւ իրմէ իմացայ, թէ մայրս դարձած է երկիր՝

Տըպնէ: Հոն ալ դրկեցի նամակ, որուն իբրեւ պատասխան ստացայ մօրս ողջութեան լուրը: Ուրախութենէս լացի:

...1930ին, երբ Մուսուլ վերադարձանք ձեռնադրուելու համար, մեծ անակնկալ էր հայու մը հետ ընտանիք կազմելս: Չձեռնադրուեցայ, միացայ մօրս, ապա ուսուցուցութեան պաշտօն վարեցի 42 տարի: Սակայն ո՛չ պաշտօնը, ո՛չ տիտղոսները եւ ոչ ալ հանգիստ կեանքը կրցան մոռցնել տարիներու տառապանքն ու թշուառութիւնը, զոր կրեցի հայ ու քրիստոնեայ ըլլալու անմեղ յանցանքիս պատճառով: Ոչ ալ կրցան յիշողութենէս ու աչքերէս ջնջել այն ահաւոր տեսարանը, որուն ականատես եղայ եւ զոր յաճախ արցունքներովս կ'օծեմ՝ անեղծ պահելու զայն համայն մարդկութեան անարդարութեան ծածկող փոշիէն»:



ԸՆՏԱՆԻՔԻՍ ՅԱԽԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ժան-Փիլեռ Սիսլեան

Մեծմօրս (մօրենական) հայրը Յակոբ Մարգար Սաչմաճեան, ծնած էր Գարաման 1878ին: Ընտանիքը բաղկացած էր ութ եղբայրներէ եւ քրոջմէ, զինագործ, երկաթագործ եւ աշխուժ վաճառական: Ունէին գորգի վաճառատուն, որ հրկիզուած է Յեղասպանութեան ժամանակ. ունեցած էր նաեւ շէնքեր. 1915ին երբ հայերը կը տեղահանուէին, իրեն լուր կը հասնի եւ կը թելադրեն որ փախչի: Ինք իր վերջին շինած շէնքը յանձն կ'առնէր այդ վայրկեանին. ան բանալիները ձեռքը՝ փախուստ կու տայ դէպի Զիլիֆքէ... կը կորսնցնէ իր կինը եւ զաւակը՝ Պետրոս, որ շատ խելացի եղած էր:

Սաչմաճեան մականունը ստացած են քանի որ կը զբաղէին նաեւ զինագործութեամբ եւ դանակներ սրելով: Թուրքերը Յակոբին եօթ եղբայրներուն սրել կու տան դանակներ եւ այդ դանակներով զիրենք կը մորթեն: Դժբախտաբար Յակոբը բան մը չի կրնար ընել, բայց դրամի ուժով կը փախչի եւ կը հասնի Զիլիֆքէ, յետոյ Կիպրոս, ետքը՝ Լիբանան. կ'ամուսնանայ Հռիփսիմէ Մըղոսեան անունով զիլիֆքեցիի մը հետ:

Զիլիֆքէն ջարդ չէ տեսած քանի որ *քայմաքամը* խղճամիտ ըլլալով կ'արգիլէ իրենց սպանդը, սակայն հայերուն կ'ըսէ որ ձգեն քաղաքը քանի ինք աւելի օգտակար չէր կրնար ըլլալ. ժողովուրդը նաւերով կը հասնի Կիպրոս: Շատերը հոն կը հաստատուին, իսկ Յակոբ իր նոր ընտանիքով կը նախընտրէ Լիբանան գալ. կը հաստատուին Քարանթինայի մէջ: Հռիփսիմէն կ'ունենայ զոյգ զաւակ, սակայն կը մահանան. տարիներ անց կինը կը հիանդանայ ու կը մահանայ:

Հռիփսիմէենք եղած են չորս քոյր եւ երեք եղբայր՝ Հռիփսիմէ, Թրֆանտա, Սարա, Եղիսաբէթ, Յովհաննէս, Յակոբ եւ Հրանդ: Յակոբ իր երկրորդ կինը կորսնցնելէ ետք կ'ամուսնանայ իր քենեկալին՝ Եղիսաբէթին (ծն. 1907), որ մօրս մեծմայրը եղած էր, կ'ունենայ երկու զաւակ՝ Պետրոս (1930) ու Մարիամ (1938): Քարանթինայի մէջ Յակոբ կը բանայ նպարավաճառի խանութ: Շատ իւրայատուկ անձնատրոութիւն մը ըլլալով մինչեւ այսօր մարդիկ կը յիշեն իր խօսքերը, օրինակ երիտասարդներուն կ'ըսէր. «ձեզի 10000 լ.ո. կու տամ, ձեր երիտասարդութիւնը ինձի տուէք»: Բնաւ չէր գոցեր իր խանութը բացի Վարդանանցին եւ Ապրիլ 24ին: Ան կը մահանայ 1961ին: 1963ին Եղիսաբէթը կը մահանայ. մահէն միքանի ամիս առաջ Մարիամ մեծմայրս Մուրատ Աստուրեանին հետ կ'ամուսնանայ: Դժբախտաբար Պետրոս տղան արկածով կը մահանայ երիտասարդ հասակին, 1971ին: Մարիամ կ'ունենայ երեք զաւակ՝ Էլիզապէթ, Քարոլին եւ Յակոբ: Էլիզապէթը 1993ին կ'ամուսնանայ Տիգրան Սիւլեանին հետ եւ կ'ունենայ երկու մանչ զաւակներ՝ Ժան-Փիլէո (Յովհաննէս-Պետրոս) եւ Յակոբ-Սեւակ:

Մուրատ Աստուրեանի գերդաստանին (մօրս հայրը) արմատները նետուած են Ամանոս (Հասան Պէյ): Մուրատին հայրը՝ Աւետիս-Աստուրը, Կաւուր գիւղին մէջ կ'ապրէր. գիւղը բաղկացած էր Աստուրեան գերդաստանէն: Աւետիսին հօր անունը Յովհաննէս էր. իրենց ընտանիքը բաղկացած էր հինգ քոյրէ եւ երկու եղբայրներէ՝ Մարիամ, Թամամ, Զարմոն, Խաթուն, Աւետիս, Տիգրանուհի եւ Տիգրան:

Այնքան շատ հունձք ունէին, որ եթէ տաս տարի ուտէին չէր վերջանար: Յովհաննէսը *հարմանը*՝ դաշտը կ'աշխատէր: Օր մը երկու ճամփորդներ կու գան ծխախոտ կը նետեն *հարմանը* ու դաշտը կ'այրի: Յովհաննէսը ջաղացքի մէջ կ'աշխատի եւ շահը տէրոջը հետ կը կիսուին: Օր մը նաւակով գետակը անցնելու եւ ջաղացք երթալու ատեն, թիւրք մը հետերնին կը նստի նաւակը: Նաւակին տէրը կը գանգատի

Եւ կացինով նաւակին զարկած ժամանակ Յովհաննէսին ոտքը կը կտրէ: Յովհաննէս կը մնայ ջաղացքը, վիրաւոր վիճակի մէջ. 35 օր ետք կ'իմանան պատահածը ու տուն կը փոխադրեն զինք, բայց հինգ օր ետք ան կը մահանայ: Միքանի տարի ետք քոյրը կ'ամուսնանայ եւ իրեն քովը կը տանի. բրինձի դաշտի մէջ կ'աշխատէին եւ վրանի տակ կը մնային, քոյրը աշխատած ժամանակ կը ծննդաբերէ: Մինչայդ մայրը երկրորդ անգամ կ'ամուսնանայ եւ խորթ հայրը Մարաշի գերմանական Պէթ Շալոմ որբանոցը կը տանի, հոն իր թիւը կ'ըլլայ 279: Իր մականունը չիմանալով կը հարցնեն թէ հայրը ինչով կը զբաղէր. «կօշկակար», կ'ըսէ՝ եւ կ'արձանագրեն Քէօշկերեան:

Ատանան ջարդի կ'ենթարկուի. զիրենք կը տանին ջաղացք մը, քանի այդ ժամանակ մօրը քովն էր Ատանա: Զարդին խորթ հայրը կը սպաննուի, մայրը երրորդ անգամ կ'ամուսնանայ հասանալէյցի նպարավաճառի մը հետ:

1914ին *սեֆերպերիք* կը սկսի եւ քրոջ՝ Խաթունին քով կ'երթայ Հալէպ: Բոլոր ժողովուրդը կը ձգէ Ամանոսը ու քալելով ճամփայ կ'իյնան: Ետքը ծնողքը ետ կը վերադառնայ, սակայն Տիգրանը Հալէպ կը մնայ ու դրամ կը վճարեն որպէսզի բերեն, բայց իզուր: Ինքը շոգեկառքի տակ կը մնայ ու մէկ ամիս հիւանդանոց կը մնայ, երբ քոմայէն կ'արթննայ, բժիշկը կ'ըսէ. «գերեզմանէն ելար. ձեռքդ որ կտրուած էր՝ անանկ կարեցի, քանի որ պիտի մեռնէիր»:

Վերստին տարագրութիւն. բոլորը կը մորթեն. ընտանիքը Վրենշեհի կ'երթայ: Տիգրանը Ապտըլրահիմ անունով մէկու մը կու տան որ հոգ տանի անոր խանութին: Ինք իմանալով որ բոլոր հարազատները, նաեւ մայրը կը սպաննուին՝ կը հիւանդանայ կրկին, եօթանասուն օր հիւանդանոց կը մնայ:

Աւետիսը կը լաւանայ ու տարագրութեան ճամփան կը հետեւի Հալէպ յետոյ՝ Տիարպեքիր: 1918ին Թալաթ փաշայի հրամանով զինուորութեան կ'առնեն զինք: Նոյն թուականին գերմանացիները կը փախչին. Աւետիսը եւ երկու հոգի

կ'երթան Տերսիմ, յետոյ Հալէպ: Միքանի ամիս ետք Կիլիկիա կը վերադառնան: Տէօրթ Եոլ կը հասնին ու «կեցցէ՛ Կիլիկիա» կը պոռան: Հոն թէ՛ թուրք եւ թէ՛ հայ կոռուղ կամաւորները նոյն տեղը կ'ապրին: Նիքուլա անունով յոյնի մը քով կ'աշխատի, բայց դրամը կը կորսնցնէ Ատանայի մէջ: 1920ին հասանալէցիները ետ կը վերադառնան:

Աւետիսը լաւ դրամ կը շահէր Ատանայի մէջ, սակայն Թամամ քոյրը Հասան Պէյ կու գայ եւ ինքը գործը ձգելով իրենց կը միանայ: Նոր տարին Ամանոս կ'անցընեն: Տաս ամիս ետք թիւրքերը երեք հայ վաճառական կը մորթեն ու ժողովուրդը կը վախնայ: Պետրոս աղան զէնք կը բաժնէ ժողովուրդին, բոլոր գիւղերուն մէջ, հինգ ամիս ետք ֆրանսացիները կը քաշուին: Ֆրանսական բանակին մէջ հայ բժիշկը կը խրատէ որ ձգեն գիւղը: Կ'երթան Թոփրախիսան, յետոյ՝ Տէօրթ Եոլ. հայերը կը քաշուին մինչեւ Իսքենտարուն: 1924 Մարտ 10ին Աւետիս կը զինուորագրուի ֆրանսական բանակին. իրեն զէնք սեղմել կը սորվեցնեն եւ «bien» կ'ըսեն:

Ետքը Հալէպ կ'երթայ եղբայրը փնտոելու համար, յետոյ՝ Լիբանան ուր կ'ըսուի թէ եղբայրը Ֆրանսա գացած է:

Կ'ամուսնանայ 1929ին ատանացի Ալթուն Իշտախեանին հետ եւ կ'ունենան տասներկու տղայ զաւակներ, որոնցմէ երեքը կը մեռնին. առաջին մանչ զաւակը տաք ջուր կը թափի վրան. այդ պատահարէն ետք կ'ապաշխարէ, ու բոլոր Քարանթինան Սուրբ Գիրք կը գարողէ:

Իր զաւակներն են.- Մկրտիչ (մահացած 2014), Մուրատ (մեծհայրս), Յովհաննէս, Լուիֆիկ, Պօղոս (մահացած 2009), Հայրապետ (մահացած 2010), Յարութ, Յովսէփ, եւ Մետրոպ:

Աւետիսը ֆրանսացիներուն քով կ'աշխատի իբրեւ հաշուապահ: Կը բախտաւորուի 34 թոռներով՝ 17 տղայ ու 17 աղջիկ, կը տեսնէ իրանանեան պատերազմը: Կը կորսնցնէ կինը՝ Ալթունը, 1988ին: Խոր ծերութեան մէջ, 92 տարեկանին կը մեռնի շրջապատուած զաւակներով հարսերով, թոռներով ու ծոռներով:



ՄԵԾՄՕՐԱ ԱՆՈՒՆԸ

Մարիա Տաղևան

Ամէն անգամ որ Ապրիլ ամիսը իր գաղջ արեւը կը սփռէ մեր երկինքին վրայ՝ հայերը կը մտնեն, յիշելով սարսուռը ջարդերուն, իսկ ես կը յիշեմ մեր տան մէջ ապրող մօրս

մեծմայրիկը:

Ան այնքան լուռ կը նստէր, որ նոյնիսկ չէինք զգար իր ներկայութիւնը: Նուրբ ու պարզ կին մըն էր, մաքուր ու կոկիկ հագուածքով: Ան վարպետ դերձակուհի եղած էր, բազմաթիւ երիտասարդուհիներու կարուծելու սորվեցուցած: Հակառակ իր բարի բնատրութեան, դաժան զէյթունցի մարդու մը կինը եղած էր: Շատ կը սիրէի ես Այշէ Նենէս, սակայն կը զարմանայի որ անոր անունը հայկական անուն չէր, բայց երբեք չէի համարձակեր հարցնել այս նիւթին մասին: Ան ունէր շատ հին ու փոքր տուփ մը. միքանի անգամ փորձեցի գիտնալ թէ ի՞նչ կար այդ տուփին մէջ, սակայն ծախողեցայ, որովհետեւ կղպուած էր: Ոչ ոք գիտէր թէ ուր պահած էր այդ տուփին բանալին:

Գիշեր մը, երբ տնեցիները քնացած էին՝ որոշեցի գտնել բանալին: Երկար փնտռութէ ետք վերջապէս գտայ բանալին: Ձեռքերս կը դողային, սիրտս արագ կը տրոփէր, հարցեր կու տայի ինքզինքիս թէ ի՞նչ կրնար ըլլալ այդ փոքր տուփին մէջ, սակայն չէի յաջողեր գտնել պատասխան մը: Եւ ահա տուփը շալկած սենեակիս մէջ ծայր մը, ամենայն հետաքրքրութեամբ բացի այդ տուփը եւ տեսայ միքանի լուսանկարներ եւ մեծմօրս անձնաթուղթը: Նախ դիտեցի լուսանկարները. ի՞նչ գեղեցիկ էր մեծմայրս, ապա ձեռքս առի իր անձնաթուղթը: Անունը Արշալոյս էր, բայց ինչու՞ Այշէ կը կանչենք: Յանկարծ փսփսուք մը լսեցի. ուշադրութեամբ տուփը դրի իր տեղը: Մտքիս մէջ հազարաւոր հարցերով:

Այլէ Նենէ եւ ինչու՞ ոչ՝ Արշալոյս Նենէ:

Զկրցայ քնանալ այդ գիշեր: Յաջորդ առաւօտ մօտեցայ Այլէ Նենէիս: Նստեցայ իր կողքին եւ քիչ մը վախով, բայց ինքնավստահօրէն կանչեցի զինք Արշալոյս Նենէ: Երբ ան լսեց Արշալոյս անունը՝ սկսաւ դողալ, աչքերը լեցուեցան եւ յուզուեցաւ: Նախ ներողութիւն խնդրեցի իրմէ, որովհետեւ ըրածս շատ մեծ սխալ մըն էր, սակայն ան բռնեց իմ ձեռքս եւ սկսաւ պատմել պատահածը. «Անունս Արշալոյս էր թոռնիկս, բայց Արշալոյսը ինծի կրնար մահուան տանիլ: Գիշերով մը միքանի թուրք զինուորներ հայրս ձերբակալեցին եւ տարին: Մնացինք ես եւ մայրս: Հազի ութ տարեկան էի: Զարմացած, վախցած դուրս վազեցինք եւ ժողովուրդին հետ սկսանք քալել բայց չէինք գիտեր ուր պիտի տանէր այդ ճամփան:

Ճամփան թուրք զինուորները սկսան հաւաքել հայ աղջիկները. զիս ալ առին: Սկսան հարցնել մեր անունները. մայրս վախէն՝ Այլէ կոչեց զիս, որովհետեւ Այլէ թրքական անուն էր: Այդ օրէն անունս մնաց Այլէ: Այդ անունիս պատճառով փրկուեցայ մահէն: Շատ չարչարուեցանք, տառապեցանք մինչեւ որ հասանք Լիբանան»:

Անհաւատալի դէպք մըն էր պատահածը ինծի համար: Երբ զարմացած կը լսէի մեծմայրս, արցունքներս արդէն կ'իջնէին, իսկ հոգիս կը զգար մեծմօրս ապրածը: Պահ մը ինքզինքիս հարց տուի. արդեօք քանի՞ հազարաւոր հայ աղջիկներ փրկուեցան անունի մը միջոցով: Համբուրեցի մեծմօրս ձեռքը, դրի իմ սրտիս վրայ եւ իրեն խօսք տուի՝ եթէ աշխարհի վրայ նոյնիսկ մէկ հայ մնայ՝ ան Հայոց Եղեռնը պիտի չմոռնայ: Ես պիտի պայքարիմ մեծմայրիկ, ու պիտի պահանջեմ բոլոր հայերուն իրաւունքը:



ԱՊՐԷՔ ԵՐԵՒԱՆԷՔ, ԲԱՅՑ ՄԵՉ ՊԷՍ ՉԱՊՐԷՔ

Նուարդ Տեմիրճեան

Սիրելի ընթերցող, յուզումով եւ ցաւագին սրտով քեզի կը պատմեմ իմ ընտանիքիս պատմութիւնը:

1910ին աշխարհ եկաւ մօրս մեծհայրը: Կարապետի եւ Վարդանուշի վեցերորդ մանչ զաւակն էր ան եւ կը կրէր Մինաս անունը: Վարդանուշ՝ քահանայի աղջիկ էր:

Մինաս երբ հինգ տարեկան եղաւ հայոց ջարդը կը սկսի: Կարապետ իր ընտանիքը ուզած է քաղաքէն հեռացնել: Իր երկու եղբայրները՝ Գէորգն ու Սարգիսը, ձգելով ճամփայ կ'ելլէ: Գաղթին՝ Վարդանուշ կը հիւանդանայ եւ կը մահանայ. Կարապետ իր վեց զաւակներով կը շարունակէ ճամփան, կ'ենթարկուին թուրք յարձակումի, Մինաս կը կորսնցնէ հայրը եւ եղբայրները, կը մնայ առանձին: Քիւրտ ընտանիք մը զինք կ'առնէ:

Մեծհայրս կը մեծնայ քիւրտ ընտանիքին մէջ: Ան երբեք չի մոռնար իր մայրենի լեզուն, որովհետեւ նոյն թաղին մէջ հայ կին մը կ'ապրէր իր երեք աղջիկներով՝ Լուսին, Մաքրուհի եւ Ազատուհի, որոնց հետ Մինաս յաճախ կը խաղար: Տարիներ կ'անցին ու մեծհայրս գեղեցիկ երիտասարդ մը կ'ըլլայ եւ ամուսնութեան տարիքին կը հասնի: Չինք կ'ամուսնացնեն Լուսինին հետ 1940ին:

Կը փոխադրուին Հալէպ եւ կը հաստատուին Հէօլլիկ: Մեծհայրս կը սկսի աշխատիլ պետական ջուրի ընկերութեան մէջ: Մինաս կ'ունենայ երեք զաւակ. երկու աղջիկ՝ Մարի եւ Վարդուհի ու մէկ մանչ՝ Կարապետ:

Մեծհայրս իր զաւակներուն անունները կը կոչէ իր հօր ու մօր անունով: Տարիներ շարունակ կը փնտռէ իր ընտանիքը, բայց անօգուտ:

1970ին կը գտնէ հասցէն իր հօրեղբայրներուն, որոնք տակաւին կ'ապրէին Թուրքիա: Ան իր տիկնոջ հետ շոգեկառքով Հալէպէն Թուրքիա կը ճամփորդէ իր հօրեղբայրները տեսնելու: Անոնք կը միանան իրարու մեծ կարօտով: Հօրեղբայրներն ալ կորսնցուցած էին իրենց հայրն ու մայրը եւ ապրած էին օտար ընտանիքներու հետ: Անոնց մականունը փոփոխութեան ենթարկուած էր թրքական պետութեան կողմէ, Տատիկեանը եղած էր Տաւաճի: Հօրեղբայրները ամուսնացած էին հայ աղջիկներու հետ ու արհեստով ոսկերիչ էին:

Մինաս եւ իր տիկինը մեծ ուրախութեամբ կը վերադառնան Հալէպ եւ իրենց հարազատներուն հետ կապ կը պահեն նամակով եւ նկարներով: Հօրեղբօրս զաւակներուն մեծ մասը ներկայիս կ'ապրի Քանատա եւ Ամերիկա, մաս մըն ալ կը մնայ Թուրքիա, իրենց մօր եւ թոռներուն հետ: Մայրս յաճախ կը հեռաձայնէ իրենց: Հօրեղբօր տղան Հրանդ Տինքի լաւագոյն ընկերներէն եղած է:

1976ին Մինաս կ'ամուսնացնէ իր տղան՝ Կարապետը (մեծհայրս), Թագուիի անունով աղջկայ մը հետ եւ կ'ունենան երեք զաւակ՝ Մինաս, Միլտա եւ Լուսին՝ մայրս: Մեծհայրս արհեստով ոսկերիչ էր:

Մեր տան մէջ պապենական նկարներ ունինք Թուրքիայէն եկած, բայց չեմ կրնար ցոյց տալ, որովհետեւ ես ալ կը կրեմ մեծ պապերու ճակատագիրը: Հալէպ քաղաքէն եկած եմ հոս՝ Լիբանան. բոլոր յիշատկներս՝ հարազատներս, դպրոցս, տունս ձգած եմ հոն: Շատ լաւ կը զգամ ու կ'ապրիմ պապերու պատմութիւնը: Տարիներ ետք իմ թոռներս ալ պիտի պատմեն ձեզի իմ պատմութիւնս՝ ծննդավայրէս հեռու անցուցած տխուր օրերս: Աստուծմէ կը խնդրեմ, որ իմ թոռներս այսպիսի ճակատագիր չունենան: Անոնք ապրին երջանիկ եւ ուրախ՝ իրենց մայրենի հողին վրայ: Ինչպէս

Թումանեան կ'ըսէ՝ «ապրէ՛ք երեխէք, բայց մեզ պէս
չապրէ՛ք»:

Շնորհակալութիւն կը յայտնեմ Հայկազեան
Համալսարանի Հայագիտական խմբակին, որ մեզի այս
առիթը ընծայեց դա՛րձեալ յիշելու եւ երբեք չմոռնալու մեր
անցեալը՝ մեր ընտանիքին պատմութիւնը: Նաեւ
շնորհակալութիւն՝ Սահակեան դպրոցին տնօրէնութեան եւ
ուսուցչական կազմին: Մնաք մի՛շտ պայքարով եւ
յաղթանակով:



ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ

Արմէն Տէր Պետրոսեան

1915... Սեւ տարիներ են մեր ազգի տոմարին մէջ... Անմոռանալի... Զարդի հետ կապուած պատմութիւնները տեսակաւոր են: Ամէն հայու սրտին մէջ կայ իր նախնիներուն հետ կապուած յուզիչ դէպք մը, զոր լսած է իր ծնողներէն:

Մեծօրս ծնողքը զէյթունցի էին: Հայրը՝ քաջ զէյթունցի մը, օձերու որսորդ, ընդդիմադիր, արի ռազմիկ եւ կամաւոր զինուոր մը: Երբ մեծմայրս առանձին կը մնայ, կ'որոշէ իր անչափահաս երկու զաւակները իշուն վրայ դնել եւ աքսորի ճամփան բռնել: Աննկարագրելի դժուարութիւններու հանդիպելէ ետք կը հասնի սահման: Հոն կը լսէ, թէ թուրք զինուորները անցնելու առիթ կու տան միայն անոնց, որոնք ամբողջ ընտանիքով են: Այսինքն՝ այր մարդոց ներկայութիւնը հարկաւոր էր: Թուրքերը մտածելով, որ բացակաները կամաւոր զինուորներ կրնային ըլլալ՝ անոնց ընտանիքները մահուան կ'ենթարկէին:

Մեծմայրս բաւական մէկ կողմ քաշուած կենալէ ետք, փախուստի ճամփայ մը կը փորձէ գտնել: Պէտք է, որ ամէն միջոցի դիմէր, բայց ինչպէ՞ս: Յանկարծ կը նկատէ կառք մը, որ կեցած էր սահմանին վրայ, եւ ընտանիքին հայրը թուրք զինուորը ոսկեդրամով կը կաշառէր, որպէսզի կառքով սահմանին միւս կողմը անցնին: Մեծմայրս առանց վարանելու՝ իր էշն ու պզտիկները առնելով կը քալէ կառքին ճիշդ կողքով: Երբ զինուորը ամուսնոյն մասին կը հարցնէ, մեծ մայրս կը պատասխանէ, թէ ինք կառապանին երկրորդ կինն է: Ոսկի լիրաներով շլացած զինուորը, առանց մանրամասնութիւններ պրպտելու՝ անցնելու հրաման կու տայ: Ապուշ զինուորը երբեք չի մտածեր, թէ հայ մարդը չի

կրնար երկու կին ունենալ: Ահա այս ձեռով մայրն ու երեխաները կը շարունակեն ճամփան եւ կը փրկուին թուրք եաթաղանէն: Աքսորի ամէնադաժան պայմաններուն մէջ կը հասնին Հալէպ:

Մեծմայրս երկու տարի Հալէպի մէջ կ'աշխատի եւ կը սպասէ ամուսնոյն վերադարձին, բայց ի զու՛ր: Կը շարունակէ ճամփան դէպի Լիբանան, ուր իր ազգականները կ'ապրէին: Անոնց միանալով՝ կ'աշխատի ու կը պայքարի կեանքին ու փոքրիկներուն սիրոյն: Քաջ ամուսինը մնալով Թուրքիա կը շարունակէ պատերազմիլ թուրքին դէմ իր ընկերներով: Շատեր կը մահանան, շատեր կը կորսուին, իսկ ինք Աստուծոյ կամքով եւ իր սրամտութեամբ, միշտ հագուստները արիւնոտ վիճակի մէջ ձգելով, մեռելներուն հետ փաթթուելով, գիշերները հետերնին պառկելով, փախուստ կու տայ վտանգներէն: Եւ վերջապէս եօթը տարիներ ետք կը հասնի Հալէպ՝ փնտռելու համար իր ընտանիքը: Ապա կ'անցնի Լիբանան, ուր երկար փնտռութիւններէ ետք կը գտնէ կինն ու զուակները, որոնք զինք մեռած կը կարծէին:

Հայոց ջարդը անմոռանալի է մեզի համար: Նոյնիսկ եթէ դարեր անցնին, մենք պիտի չդադրինք պայքարելէ, մինչեւ որ վերագրաւենք մեր ազգին սեփական հողերը, եւ ապրինք թուրքերէն հեռու՝ ազատ ու անկախ պայմաններու մէջ:



ԱՆԻԾԵԱԼ ՕՐԸ

Սելին Տէր Փիլիպոսեան

«Ոչ ոք կրնայ մոռնալ այդ օրը, այդ ճակատագրական սեւ օրը, երբ ջարդուեցան ասելի քան մէկուկէս միլիոն հայեր գազան Թուրքիոյ ձեռքով»: Այսպէս սկսաւ պատմել իօրս ազգականներէն մէկը՝ Միհրանը: Բոլորս նստած զինք մտիկ կ'ընէինք:

Ան շարունակեց. «Զարդին լուրը հասաւ՝ թուրքերը չհասած: Շատեր վախէն իսլամացան եւ ուրիշներ փորձեցին փախչիլ, իսկ մենք եւ մեզի պէս շատ ընտանիքներ դուրս դրուեցանք մեր տուներէն: Հայրս զինուոր էր եւ արդէն հեռացած էր մեզմէ: Իսկ ես, մայրս ու եղբայրներս բաժնուեցանք իրարմէ: Թուրք աղա մը երեխաներ գերի հաւաքելով տարաւ, որպէսզի աշխատին իր արտերուն մէջ: Ես ալ այդ երեխաներէն մէկն էի, սակայն եղբայրներս հետս չէին: Աղային արտերը գացած ատեննիս ճամփան տեսանք ջարդին հետքերը: Դիակներ տեսանք ճամփուն աջ ու ձախ կողմերը: Գլուխները զատ, մարմինները զատ: Անդին, թուրք զինուորները ձերբակալուած կիներու մազերէն քաշելով գետին կը հրէին: Շատ գէշ տեսարաններ տեսնելէ ետք հասանք աղային արտը: Աղան ինծի ոչխարներ յանձնեց, որպէսզի զանոնք արածեմ: Ոչխարները առնելով կը հեռանայի եւ կ'երթայի այն ճամփաները, ուրկէ անցանք սոված ու անօթի: Հոն կը փնտռէի մայրս, եղբայրներս ու ընկերներս, բայց ափսոս մէկը չգտայ: Օր մըն ալ, երբ նորէն հոն էի, ծեր մարդ մը տեսայ, որ ծունկի եկած կու լար ու կը պոռար: Մօտեցայ իրեն եւ տեսայ ձեռքերուն մէջ պզտիկ մը: Ըսաւ ինծի. «Թոռնիկս մեռեր է. նայի՛ր, այս ալ աղջիկս է»: Իրեն պատմեցի իմ պատմութիւնը:

Ան տեղ մը բացատրելով ինձի ըսաւ. «գնա՛, կրնայ ըլլալ հոն կը գտնես զանոնք»: Ոչխարներս քովը ձգելով հեռացայ եւ հասայ մարդուն ըսած տեղը: Հոն գտայ անգին եղբայրս՝ Ռուբէնը պատռուած հագուստներով, սեւցած երեսով: Հարցուցի մօրս եւ պզտիկ եղբօրս մասին: Զիս կուրծքին սեղմելով ըսաւ. «պէտք է փախչինք, գնա՛ եւ մեծ ծառին քով զիս սպասէ՛»:

Մութը կոխած էր երբ ան եկաւ եւ զիս առնելով սկսանք վազել ու հեռացանք: Չորս օր քալեցինք եւ հասանք Սուրիոյ սահմանը: Հոն մտնելով հաւաքուեցանք մեզի նման ուրիշ երեխաներու հետ: Վերջը մեզ տարին որբանոց մը, ուր մնացինք: Մեծցանք, աշխատեցանք եւ ընտանիք կազմեցինք: Սակայն երբեք հայրս, մայրս ու եղբայրներս չտեսանք: Յետոյ լսեցինք, թէ հայրս պատերազմի ժամանակ նահատակուեր է, իսկ մայրս ու պզտիկ եղբայրս թուրք գազաններու ձեռքերով մեռած ու նահատակուած էին»:



ՄԵՍԻԱ

Ռազմիկ Տերունեան

Իմ մեծնօրս հօրը անունն էր Մեսիա Տէր Մկրտիչեան: Ան ծնած է Կեսարիոյ արեւելքը գտնուող Էքրէկ գիւղը: Կ'ըսուի թէ այս գիւղը նախապէս Ագարակ կը կոչուէր: Տէր Մկրտիչեանները բազմանդամ ընտանիք մըն էին եւ նահապետական կեանք կ'ապրէին: Անոնց ընտանիքին



Մեսիա Տէր Մկրտիչեան
1930ականներուն

մեծին անունը Յովսէփ էր. իրեն Օվսափ կը կոչէին: Թուրքերը այս ընտանիքը կը կոչէին *քեշիշ շուղաղը*՝ քահանայի ընտանիք, որովհետեւ անպայման քահանայ մը կ'ըլլար ընտանիքին մէջ: Տէր Մկրտիչեանները ունէին լայն տարածութեամբ արօտավայրեր եւ բազմաթիւ հողագործներ:

Մեծնայրս կը պատմէ, որ իր հայրն ու եղբայրները միշտ ձի նստած՝ հողագործներուն աշխատանքները կը հսկէին: Յաճախ, օրեր կը տեւէր անոնց վերադարձը:

Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին, ընտանիքին բարեկամ թուրք մը տեղեակ կը պահէ Օվսափը, որ հայերուն գէշ բաներ պիտի պատահին, եւ կը յանձնարարէ որ զաւակները փախցնէ Էքրէկէն: Օվսափ լուրջի չ'առնէր այս թելադրութիւնը: Թուրք բարեկամը կը կրկնէ իր

յանձնարարութիւնը, ըսելով որ իր խիղճը հանգիստ էր: Օվսափ իր զաւակներէն Մեսիան եւ ուրիշ մը եւ թոռնիկներէն մաս մը կ'ուղարկէ Միացեալ Նահանգներ: Մեսիան աշխատանքի կը լծուի մեծ գործարանի մը մէջ:

Կը սկսի հայոց ջարդը, որուն զոհ կը դառնայ նաեւ Էքրէկ գիւղը: Տէր Մկրտիչեանները կը կորսնցնեն իրենց ընտանիքէն շատեր: Մեսիային քահանայ եղբայրը՝ Կարապետը, որուն կղերական անունն էր Տէր Մկրտիչ, կը գլխատուի, կը սպաննուին նաեւ Մեսիային երեք զաւակները:



Հայկանուշ եւ իր երէց
զաւակը՝ Մանուկ

1918ի գինադադարին, Մեսիային եղբայրը՝ Յովհաննէս, Միացեալ Նահանգներէն Ատանա կու գայ, փնտռելու համար իր հարազատները: Հոն կը տեղեկանայ իրենց գիւղի ջարդին մասին, եւ կ'ամուսնանայ թալասցի կնոջ մը հետ, ապա լուր կը դրկէ եղբորը, որ գայ եւ ինք ալ իր հերթին ամուսնանայ հայ աղջկայ մը հետ: Մեսիա կու գայ Ատանա եւ կ'ամուսնանայ մեծմօրս մօր՝ Հայկանուշին հետ: Հայկանուշ բնիկ տրապիզոնցի է, փոքր տարիքէն որդեգրուած է թուրք ընտանիքի մը կողմէ: Այս ընտանիքը Հայկանուշը շատ կը

սիրէ եւ կը նշանէ իրեց եղբորորդիին հետ: Սակայն, հայ կամաւորներ կը փախցնեն Հայկանուշը: Ասատուր անունով հայ կամաւոր մը կ'ամուսնանայ անոր հետ եւ ան կը յղանայ: Ասատուր կ'երթայ Մարաշ քաղաք կրուելու, բայց չի վերադառնար: Ճիշդ այս ատեն է, որ Մեսիան Հայկանուշը կը գտնէ այդ վիճակին մէջ, կ'ամուսնանայ անոր հետ եւ կ'ունենան աղջիկ զաւակ մը Ատանայի մէջ ու կը կոչեն Նուէր:

Տեղի կ'ունենայ երկրորդ տեղահանութիւնը: Մեսիան իր ընտանիքին եւ կեսարացի ընտանիքներու հետ կը փոխադրուի Լիբանան, Ճիւնիի մօտիկ Սարպա շրջանը, ուր կը ծնին մնացեալ զաւակները. անոնցմէ մէկը իմ մեծմայրս՝ Մարին: Կարճ ժամանակ ետք, Մեսիան կը փոխադրուի Անթիլիասի Կաթողիկոսարանին կից խրճիթ մը:

Իրենց ամբողջ կեանքի ընթացքին, Հայկանուշ եւ Մեսիա աշխատած են վանքին մէջ:

Էքրէկ ներկայիս կը կոչուի *Քէօփրի Պաշը*: Վերջերս հայրս գտաւ Էքրէկի գերեզմանատունէն կարգ մը նկարներ, ուր կան խաչքարեր:



ԱՀԱ ՀՈՍ ՀԱՍԱՆՔ

Վարդինէ Տոնապետեան

Աթոռ մը առնելով նստայ մեծօրս հայրիկին առջեւ: Ան ուժաբափ եղած է երկար տարիներու աշխատանքէն եւ չարչարանքներէն: Աչքերը դժուարաւ բաց, կ'երկննար անշարժ կարծես՝ կէս-մեռած: Անոր արտաքին վիճակը երբ տեսնես՝ կը մեղքնաս, սակայն ան տակաւին հայրենասիրութեան հոգին ունէր, հայու ոգիով կ'ապրի. հայը միշտ անմեղքանալի է ու պիտի մնայ հզօր մինչեւ վերջ:

Խոր մտածումներու մէջ ինկած անոր աչքերուն նայելով՝ կը յիշեմ երբ ինծի կը պատմէր թէ ինչպէս ջարդէն ազատած էր. իր ամէն մէկ խօսքին մէջ, ամէն մէկ բառին մէջ արդէն յայտնի էր իր ցաւը, ապրած ողբը, իր եղբօր եւ ընտանիքին կարօտը:

Կը յիշեմ իր պատմութեան առաջին բառերը, երբ ըսաւ՝ «առաւօտ մըն էր, երբ մեծօրս՝ Յակոբին, հետ ինչպէս ամէն արեւածագին, փուռը բացած հաց կը պատրաստէինք: Յանկարծ փոքրիկ տղայ մը հագիւ քու տարիքէդ, դէպի փռապանը վազեց շնչասպառ: Հազիւ շունչ առած, փոքրիկը սկսաւ պատմել թէ ինչպէս փախած էր թուրքերուն ձեռքէն. անոր քիւրտ ըլլալուն պատճառով կ'ուզէին զինք մեռցնել: Մենք այդ ժամանակին քիչ մը քրտերէն կը հասկնայինք: Յակոբը բարեսիրտ ըլլալով, մեր մօտ պահեց այս փոքրիկ տղան՝ Մուհամմէտը: Պահ մը ետք արդէն, թուրք զինուորները հասած էին մեր մօտ. շփոթ վիճակի մը մէջ նայեցան իրենց շուրջ՝ մինչ մենք մեր գործը կը շարունակէինք: Մեր հետ խօսելէն եւ իրենց հարցումները վերջացնելէն ետք, զինուորները որոշում մը առին ըսելով թէ երեք գործաւոր շատ է մէկ փուռի մէջ, եւ ըսին թէ մեզմէ մէկը իրենց հետ պիտի դառնայ: Դժբախտաբար այդ մէկը մեծ

եղբայրս եղաւ, բարեսիրտ Յակոբը: Վստահաբար այս դէպքէն ետք գործատեղը չմնացի: Տուն վերադարձայ մեծհայրդ, իր քոյրը եւ մայրը Սուրիա դրկեցի, որպէսզի այս փորձանքին մէջ չմնան: Տարիներ անցան ...ես ալ փոխադրուեցայ Սուրիոյ հողը, անունս փոխելով Պաազոյի: Առանց յուսահատելու կը փորձէի գտնել իմ ընտանիքս:

Իսենթ մը եղած էի. մօրուքս երկարած՝ միս-ոսկոր եղած.... նիհարցած, իրաւ քիւրտերու կը նմանէի: Օրեր անցան եւ ամիսներ՝ մինչեւ իսկ տարի մը եւ ի վերջոյ նպատակիս հասնելով գտայ զիրենք:

Ուրախութիւնս անբացատրելի էր: Դարձեալ միանալով եւ մէկ ընտանիք ըլլալով, հաստատուեցանք Սուրիոյ Քամըշլիի գիւղերէն մէկուն մէջ: Մեզի «Մամա Պաազօ» կը կանչէին որ քրտերէնով ըսել է՝ «Պաազոյին տունը»: Ժամանակի ընթացքին Պաազօն Պաղտօ տարձաւ եւ արդէն իսկ տեղեակ ես դուն աղջիկս, ինչ եղաւ ... եւ ահա՛ հոս հասանք»:



ԵՍ ԿԸ ՊԱՏԿԱՆԻՄ ՉՈՐՐՈՐԴ ՍԵՐՈՒՆԴԻ ՀԱՅԵՐՈՒՆ

Արէն Տոներեան

Շատ դժուար պիտի ըլլայ գրել Տօներեան եւ Թահմիզեան ընտանիքներուն մասին, որոնք միւս հայերուն պէս աքսորուած են Արեւմտեան Հայաստանէն, 1915 թուականի տեղահանութեան ժամանակ:

Ես տասնվեց տարեկան եմ, պահ մը կը մտածեմ իմ նախնիներու դաժան ճակատագրին մասին, եւ հարց կու տամ թէ ինչ պիտի ըլլար եթէ մենք տակաւին ապրէինք մեր մայր հողին վրայ: Կարծեմ շատ տարբեր պէտք է ըլլար:

Ես կը պատկանիմ չորրորդ սերունդի հայերուն որոնք կը բնակին Լիբանանի մէջ: Մեծօրս ծնողները (օրս կողմէ) եկած են Պուրսայէն, իսկ մեծմօրս պարագաները՝ Ատանայէն: Հօրենական մեծհայրս քիչ մը կը յիշեմ, իսկ մեծմայրս տակաւին կ'ապրի եւ կը պատմէ մեզի այն ինչ որ ինքը լսած է հայկական ջարդի մասին իր ծնողներէն:

Մեծմօրս հայրը՝ Թովմասը, թրքական բանակի զինուոր եղած է, իսկ իր ընտանիքը տեղահանուած եւ հասած են Պէյրութ: Թէ՛ օրս, թէ՛ մօրս մեծհայրերուն եւ մեծմայրերուն դժբախտ պատմութիւնները ինծի համար շատ աներեւակայելի են:

Մեծմայրս կը պատմէ որ մօրս մեծմայրը՝ Էսաթունը, ամուսնացած էր, երկու տղայ եւ մէկ աղջիկ ունէր: Ամուսինը եւ մեծ տղան զինուոր էին թրքական բանակին մէջ եւ պատերազմի ժամանակ կը զոհուին: Իսկ իրենք տեղահանութեան կը պատրաստուին առանց իմանալու թէ ու՛ր պիտի երթան: Իր թուրք դրացին, որուն հայրը հայ էր, կ'ուզէ օգնել իրենց եւ տասներեք տարեկան աղջիկը կը վերցնէ իր մօտ, խոստանալով որ յետոյ կը յանձնէ իր մօրը:

Սակայն պարագաները այնպես կը բերեն որ իրարու չեն հանդիպիր եւ Խաթունը կը կորսնցնէ իր աղջիկը եւ կը փախչի իր փոքր տղուն հետ ու կը գիշերէ գիւղի մը մէջ: Թուրքերը կը մտնեն այդ գիւղը. Խաթուն կը փորձէ փոքրիկին հետ պահուիլ ծխնելոյզին մէջ, սակայն թուրքերը կը գտնեն երախան եւ կը սպաննեն: Խաթունը կ'ուզէ երախային գերեզմանը երթալ որ աղօթէ, սակայն գերեզմանը դատարկ կը գտնէ...:

Խաթուն կ'անցնի Դամասկոս եւ կը պսակուի մօրս մեծօր՝ Համբարձումին հետ: Իսկ աղջիկն ալ որ դրացիին քովը մնացած էր, թուրք զինուորները կը գտնեն զինք եւ կը խոշտանգեն:

Ես ինձի կը փորձեմ դնել այդ դժբախտ փոքրիկներուն տեղը, որոնք ջուրի եւ հացի կարօտ էին աքսորի ճանապարհին: Այո, ես ինձի կը համարեմ ժառանգորդը այդ մէկուկէս միլիոն հայերուն, որոնք անխղճօրէն ջարդուեցան Արեւմտեան Հայաստանի տարբեր քաղաքներուն եւ գիւղերուն մէջ, իսկ մնացեալները՝ աքսորի ճամփուն:

Միշտ կը յիշեմ թէ ինչպէս չարչարանքներու ենթարկուած են իմ նախնիներս եւ անոնցմէ շատեր այսօր ներկայ չեն, բայց ականատես եղած են օսմանեան թուրքերու եւ պաշիպոզուք ենիչերիներու դաժան խոշտանգումներուն: Շատ պարզ է. մարդ արարածը երբ ողջ չէ, դժուար կ'ըլլայ պատմել այդ եղելութեան մասին: Տարբեր տեսակի չարչարանքներ կը կիրարկուէին հայ մանուկներու եւ կանանց վրայ: Տղամարդիկ գրեթէ գոյութիւն չունէին: Անոնք բանակ ուղարկուած էին եւ կամ ալ սպաննուած: Իսկ մնացեալը կամ ծերեր էին եւ կամ ալ կանայք ու մանուկներ, որոնք դիմադրելու ուժը չունէին եւ անօթի ու ծարաւ կը մահանային ճամփան: Հազիւ փոքր տոկոսը կը հասնէր տեղ, այդ ալ ճամփան կ'ենթարկուին կողոպուտի, խոշտանգումներու եւ նոյնիսկ՝ բռնաբարութեան:

Հօրս մեծմօր մայրը պատմած է թէ ինչպէս իր աղջիկը սովին չդիմանալով եւ իրենց գտած չորցած սեւ հացերը չուտելով կը նիհարնայ ու կը մահանայ մեծմօրս մօր գիրկը:

Կ'ուզեմ պատմել նաեւ մօրս ընտանիքի մասին: Մօրս կողմէ մեծհայրս չեմ ճանչնար, սակայն մեծմայրս մինչեւ հիմա մեր հետն է: Անոնց ալ ընտանիքը շատ չարչարուելէ ետք կը հասնի Դամասկոս եւ յետոյ Պէյրութ: Մեծհայրս ծնած է Մարաշ. փոքր տարիքին, տեղահանութեան ժամանակ զիրենք կը բերեն Դամասկոս: Նոյն ճատակագիրը ունեցած է նաեւ մեծմայրս, որ Հաճըն քաղաքէն աքսորուելով կը հասնի նոյնպէս Դամասկոսի Պապ Թումայի շրջանը: Ինծի համար դժուար պիտի ըլլար խօսիլ մեծմօրս մասին, որովհետեւ ան շատ դժբախտ եղած է նոյնիսկ ամուսնութենէն ետք: Քառասուն տարեկանին կորսնցուցած է իր ամուսինը՝ մեծհայրս: Անոնք ունեցած են չորս զաւակներ, որոնք փոքր տարիքէն մնացած են առանց հօր: Մայրս ութը տարեկան էր երբ իր հայրը կը կորսնցնէ. շատ քիչ կը յիշէ զինք: Կրնայ ըլլալ այս է հայու ճակատագիրը, որ կը հալածէ զինք:

Ամէն հայորդի յատուկ պատմութիւն մը ունի, որ զինք կը զանազանէ միւսներէն: Սակայն բոլոր հայերը ունեցած են նոյն դժբախտ ճակատագիրը, այդուհանդերձ կրցած են գոյատեւել եւ այսօր հպարտութեամբ կրնանք ըսել որ անոնք հասած են բոլոր ազգերուն գնահատանքին:



ԻՄ ԸՆՏԱՆԻՔՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Սագո Փիսկիվեան

Մեծօրս հայրը եղած է Սեբաստիոյ Կեմերէկ Գիւղին միակ բժիշկը: Յատկապէս որպէս բեկաբուժ, ան բուժած է իրեն դիմողը, առանց խտրութեան՝ հայ թէ թուրք:

Կ'արժէ յիշել հետեւեալ դէպքը. օր մը գիւղի շէյխին կնոջ կոնքը տեղէն կ'ելլէ. շէյխը մեծօրս հօրմէն կը խնդրէ կնոջը բուժել՝ առանց կնկան դպչելու: Իսլամական կրօնքի օրէնքով կարելի չէ որ օտար տղամարդ մը դպչի կնոջ մը, նոյնիսկ՝ բուժելու նպատակով: Մեծօրս հայրը ճարը կը գտնէ հետեւեալ ձեւով.- կը պահանջէ իրեն մատաղ ձի մը բերեն, եւ անոր երկու օր սոված կը ձգէ: Երրորդ օրը շէյխին կնկան նստեցնել կու տայ մատաղաձիին, անոր ոտքերը կապել կու տայ ձիուն փորին տակը, կը սկսի գարի ու յարդ կերցնել ձիին, ապա առատ ջուր կը խմցնէ: Ձիին փորը կը սկսի ուռիլ ու իր բնական տեղը կը հրէ կնոջ կոնքը: Այսպէս, մեծօրս հայրը կը յաջողի այդ կինը բուժել առանց դպչելու:

Մեծօրս հայրը ունեցած է անձնական համեստ տուն մը, որուն դիմացը հսկայ, շատ գեղեցիկ յասմիկի ծառ մը կար: Ան յարգուած էր բոլորէն: Ճիշդ է որ սպաննած են իր քոյրն ու երկու եղբայրները, բայց խնայած են իր կինն ու զաւակները: Ան օգնած է հայ ֆետայիներուն, իրենց հասցնելով ճաշ ու փամփուշտ: Ագտաղի գիրքին մէջ յիշուած է իր անունը:

1917ին ձիակառքով, քանի մը թուրքերու օգնութեամբ կը յաջողի փախչիլ Սեբաստիայէն Լիբանան: Հաստատուած է Պուրճ Համուտի շրջանը եւ շարունակած իր գործը, իբրեւ բեկաբուժ: Նոյն գործը ժառանգած է իր տղուն՝ Եղիա Փիսկիվեանին, որ իր կարգին ծառայած է հայ ժողովուրդին եւ 25 տարի ՀՄԸՄի ֆուֆպոլի խումբի բեկաբուժը եղած է:



ԵՐԱՆԻՐ

Անժելա Քեշիշեան

Յովհաննէս Փարթամեան՝ իօրս մօրենական մեծհայրը եւ մեծմայրը՝ Մէյրի Փարթամեան, կ'ապրէին Մարաշ, անձնական տնակի մը մէջ, շրջապատուած պարտէզով, իրենց երեք տարեկան միակ աղջկան հետ: Երբ ջարդը սկսաւ, անոնք աքսորի ճամփան բռնեցին: Մեծմայրը յղի էր. ճամփան կիները շրջապատեցին զինք եւ հոն ծննդաբերեց մանչ զաւակը: Այդ վիճակին մէջ պզտիկները շալկելով սկսան քալել ձիւնին մէջ, սակայն բաւական վերջ փոքրերը սառեցան եւ մեռան, զանոնք զետեղեցին ձիւնին վրայ եւ շարունակեցին իրենց ճամփան հասնելով Լիբանան:

Մարաշ, ան կը զբաղէր պղինձի գործով, իսկ Լիբանան պղինձ եւ ածուխ կը ծախէր: Դժբախտաբար պղինձի գործը մէկը չէ շարունակած զաւակներէն: Որեւէ մէկն ալ զաւակներէն, թոռնիկներէն խառն ամուսնութիւն չէ կնքած. թոռնիկին աղջիկը Աւստրալիոյ մէջ իտալացի տղու հետ ամուսնացած է: Միակ յիշատակներ որ պահպանուած են՝ դդումով ճաշը եւ Մարաշի ձեռագործներէն միքանին են:

Անոնք քեմիէն ետք հաստատուեցան Նոր Մարաշ, ուր հիմա իրենց թոռնիկները կը բնակին: Սակայն, իրենք եւ իրենց զաւակները մահացած են, միայն մէկ աղջիկը մնացած է եւ թոռնիկներէն ալ մէկ աղջիկը որ հաստատուած է Աւստրալիա:

Հօրս իօրենական մեծհայրը՝ Թորոս Քեշիշեան եւ մեծմայրը Անժէլ Մահրամաճեան. մեծմօր ծնողքը կ'ապրէին Ատանա, բաւական գեղեցիկ տան մը մէջ, նորէն շրջապատուած պարտէզով, որովհետեւ մեծմօր հայրը տուներու յանձնառու էր եւ բաւական ալ լաւ՝ վիճակով, սակայն տեղահանութեան՝ անոնք ինկան աքսորի ճամփան.

մեծմայրը եւ ծնողքը եւ մեծմօր եղբայրը, սկսան իրենց ոսկիները կոճակներու մէջ զետեղել եւ կարել իրենց հագուստներուն վրայ, ինչպէս նաեւ պղինձէ սափորներու տակը զետեղեցին եւ ետ պղինձով ծածկեցին, սակայն դժբախտաբար ինկան աքսորի ճամփան:

Ելան նաւ մը եւ հասան Յունաստան. կառավարութիւնը բոլորը չընդունեց. հոնկէ հասան Լիբանան եւ զետեղուեցան քեմփերը, ետքը՝ Թրատ: Մեծմայրը բաւական ետք, այդ ոսկիները գործածելով հասաւ ֆրէրներու դպրոցը եւ մինչեւ հինգերորդ յաճախելէն ետք ամուսնացաւ մեծօրս հետ, որ Քուլա խմիչքները կը շինէր: Անոնք ունեցան չորս զաւակներ, սակայն ապրեցան միայն տասը տարի ամուսնացած եւ մահացան, ձգելով չորս զաւակները որբ: Ստիպուած մեծմայրը յոյն դեսպանին քով տան գործերով զբաղուեցաւ շուրջ երեսուն տարի՝ մինչեւ իր զաւակներուն ամուսնանալը՝ եւ բոլորն ալ հայ: Հիմա միայն մէկ խառն ամուսնութիւն եղած է. ի՞նչ որս ի՞նչ արար լիբանանցիի հետ ամուսնացած է: Սակայն մենք մեր ամուսնութիւնները, ճաշերը պահած ենք, ինչպէս հին նկարները:

Կ'ապրինք մեծօրս տան մէջ, որ մահացած է. հայրս մէկհատիկ է: Ազգականներ ունի Աւստրալիա: Ամերիկա, հօրեղբօր զաւակները եւ թոռնիկները օտար ամուսնութիւններ կնքած են, իսկ Քանատա ինքնաբեր զաւակները եւ թոռնիկները բոլորն ալ հայ ամուսնութիւններ կնքած են, ոմանք Հայ Դատի հարցին մէջ են:

Ես այսօր եթէ Մարաշ կամ Ատանա ապրէի, իմ ինքնաբեր ամուսնութիւններուն պապենական հողերուն վրայ, պիտի ուզէի այդ գեղեցիկ տուններուն մէջ ապրիլ պարտէզներով շրջապատուած, մաքուր օդ, ջինջ աղբիւրով, պիտի շէնցնէիք մեր հայերէն երգերով ու պարերով:

Երանի՛:



ՍԱՍՈՒՆՑԻ ԽՈՏԵՏԱՆԸ

Նարոտ Քեչէպաշեան

Սասունցի Խոտետանը ծնած է Սասուն, մօտաւորապէս 1885ին:

Բարձրահասակ, գեղադէմ, կանաչ աչքերով երիտասարդ մը՝ Խոտետանը այնքան հրապուրիչ էր դէմքով եւ հագուածքով որ հայ եւ քիւրտ աղջիկները իրենց տան պատուհանէն, վարագոյրի ետեւէն կը սպասէին եւ կը դիտէին զինք:

Խոտետանի հայրը եւ հօրեղբայրները եղած են հարուստ: Անոնք կը զբաղէին վաճառականութեամբ՝ Սասունէն Հալէպ ալիւր եւ ցորեն վաճառելով: Անոնք Հալէպի մէջ ունէին մեծ փուռ մը, միաժամանակ, Սասնոյ լեռները ֆետայական շարժումներու կը մասնակցէին:

Խոտետան մասնակցած է շատ մը կռիւներու Գէորգ Չաուշի, Սերոբ Աղբիւրի կողքին, եւ որովհետեւ ինք իբր բեկաբուժ ճանչցուած էր, կը հասնէր լեռներու վրայ մնացող հայ ֆետայիներու օգնութեան: Ան բոլորը կը բուժէր առանց խտրութիւն դնելու հայու եւ քիւրտի միջեւ:

Կը սկսի Սասնոյ ապստամբութիւնը եւ կը յաջորդեն հայերու անվերջ ջարդերը: Ամբողջ գիւղը կը բարձրանայ լեռները: Այս շրջանին, Խոտետան կ'ամուսնանայ եւ կ'ունենայ երեք զաւակ՝ Գէորգ, Սեդրակ եւ Սերոբ: Սակայն քիւրտերը չեն ձգեր որ Խոտետանը իր ընտանիքով բարձրանայ լեռները եւ զինք կը պահեն գիւղի աղային տունը իբր բժիշկ: Քիւրտերը հայերու հետ միասին շատ երջանիկ կ'ապրէին մինչեւ 1915:

Քիւրտ աղան իր զակին պէս Խոտետանը տունը կը պահէ: Խոտետանը այնքան կը վստահէր այդ քիւրտ աղային որ շաբաթներով կը բացակայէր տունէն՝ հոն ձգելով իր զաւակները ու կինը: Սակայն օր մը քիւրտ մը կը մատնէ

թուրքերուն թէ աղան տունը հայ ընտանիք մը կը պահէ: Թուրք զինուորները օգտուելով աղային բացակայութենէն, կը յարձակին քիւրտ աղայի տան վրայ եւ կը ձերբակալեն Խոտետանը, վայրագութեամբ եւ անգթութեամբ, Խոտետանի աչքին առջեւ կը մորթեն իր ամբողջ ընտանիքը: Վրայ կը հասնի քիւրտ աղան, կը պոռայ, կը կանչէ սակայն ուշ էր:

Զինուորները Խոտետանը կը բանտարկեն պարզապէս որովհետեւ կրնային օր մը բժիշկի կարիքը ունենալ: Տարիներ կը մնայ բանտը մինչեւ որ քիւրտ աղան մեծ գումար մը յատկացնելով կ'ազատէ զինք: Բանտէն արձակուելէ ետք, Խոտետան կը բարձրանայ սարերը եւ կ'ապրի խոտ ուտելով, մինչեւ որ հօրեղբայրը Հալէպէն քիւրտ բարեկամ մը կը դրկէ Սասուն որպէսզի Խոտետանը փնտռէ: Քիւրտ բարեկամին ոսկի կը խոստանան եթէ կարենայ Խոտետանը գտնել եւ համոզել որ Հալէպ վերադառնայ: Տարիներ փնտռելէ ետք, լեռներուն վրայ ան խենթի կերպարանքով մարդ մը կը տեսնէ, մազերը եւ մօրուքը երկար եւ հագուստը պատռուած: Շատ դժուար կ'ըլլայ զիրար ճանչնալը: Քիւրտին համար ալ աւելի դժուար կ'ըլլայ զայն համոզել որ Հալէպ վերադառնայ, որովհետեւ ան երդում ըրած էր լեռներէն չիջնել: Շաբաթներ ետքը Խոտետան կը համոզուի: Վերադարձին Խոտետանի մազերը մօրուքը կը կտրեն ու կը կոկեն եւ քիւրտին հետ միասին Հալէպ կը հասնին:



ԳԵՐԴԱՍՏԱՆՍ

Բիւրեղ Քէօշկերեան

Ըստ ամենադիտման, մեր գերդաստանի ծագումը Վանէն է: Իմ պապերս Կիլիկիա հաստատուած են դարեր առաջ, բայց ճիշդ թուականը գիտցող չկայ: Իսկ Վանէն գաղթելու պատճառը. այնտեղ քրտական ցեղախումբերէն մէկուն հետ ընդհարում տեղի ունեցած է, որուն պատճառով մեծ թիւով մարդիկ զոհուած են, ապա իմ պապերս լքելով Վանը եկած ու տեղաւորուած են Ամանոսեան Լեռնաշղթան:

Իմ պապերուս գիւղը կը գտնուի Ատանայի Վիլայէթի *Կեաուր Տաղը* (անհաւատներու լեռ) կոչուող լեռան բարձունքներէն Տիւտիլ կոչուող գագաթին տակը: Գիւղին անունն է Ղոյախ կամ Ղոնախ, այսինքն՝ դնենք, կամ հանգրուանինք: Մեր մեծերը կը պատմեն, որ կարաւանը երբ հասեր է հոն՝ հարցուցեր են, այս վայրին անունը ի՞նչ դնենք, թրքերէնով՝ «նէ՛ր ղոյախ» եւ որոշեր՝ Ղոնախ-Ղոյախ: Անունը հասեր է մեզի Ղոյախ, իսկ հայերէն կը կոչէին Դնիկ, որ կը նշանակէ հանգրուան դնենք:

Պապերուս գիւղը ծմեռը շատ խստաշունչ է, իսկ ամառը եւ գարնան՝ զով: Հարուստ է ջրվէժներով եւ գետերով. մինչեւ օրս զբօսաշրջային քարտէսին վրայ յայտնի է տաք հանքային բուժիչ աղբիւրներով, խիտ անտառներով եւ կենդանական հարուստ աշխարհով: Գիւղէն հարաւ կ'իյնայ Խառնի գիւղը՝ Հարունիէ, իսկ գաւառը կը կոչուի Օսմանիէ:

Մեր գերդաստանի իրական մականունն է Ղազարեան: Կը վերագրուի մեր Ղազար նահապետին. Ղազարոս անունը գերդաստանին մէջ ամէնատարածուած անունը եղած է: Վերջին Ղազարը հայրիկիս մեծհայրն էր, որ մահացաւ ութ տարի առաջ: Մեր գերդաստանին մէջ շատ տարածուած էին նաեւ Խաչատուր, Սամուէլ, Յակոբ եւ Յովհաննէս անունները:

Սամուելը կը կոչուէր Սամիէլ, Խաչատուրը՝ Խաչատիր եւ Յովհաննէսը՝ Հաննէս:

Մեր լեռնաշխարհին մէջ Ղազարները կոշտ, կարծր, լեռնային կլիմային նմանող խիստ, բայց հողը սիրող, ընտանի անասուններ պահող, բարի սիրտ ունեցող մարդիկ եղած են: Ղազարեաններու մեր ճիւղը ճանչցուած է որպէս քեհիաներ, այսինքն ագարակի տնօրէն, որ պատուաբեր պաշտօն եւ կոչում մըն էր գիւղական շրջանակներուն մէջ:

Կը պատմեն որ Յովհաննէս քեհիան՝ մեծօրս հօրեղբայրը, թուրք հարկահաւաքներու հետ ընդհարման ժամանակ կը վիրաւորուի, իր զինակիցները կը զոհուին: Ան ինքզինք մահացած կը ձեւացնէ. թուրք զինուորներ գետինը փռուած մարդը ոտքով կը մխտեն, սակայն քեհիան ձայն չի հաներ. կարծելով որ մահացած է՝ կը ձգեն կ'երթան:

Յովհաննէս քեհիան վիրաւոր վիճակով երեք օր յետոյ կը հասնի Ատանա եւ դիմելով ծանօթ բժիշկի մը կը բուժուի եւ կը վերադառնայ լեռները՝ կազմելով նոր պատժիչ խումբ մը:

Այս դէպքը պատճառ կը դառնայ որ Ղազարեաններուն եւ կառավարութեան միջեւ լարուածութիւնը սաստկանայ:

1915ին ամբողջ գիւղը բռնի կը պարպուի: Ըստ հայրիկիս հօրաքրոջ՝ Աղանիին, տեղահանութեան ժամանակ կը սպաննուի իր մեծ հօրեղբայրը՝ Խաչատուր, եւ անոր դիակը կ'իյնայ մեծհայրիկիս հօր՝ Սամիէլին առջեւը. մեռելին աչքերը հանելով կը դնեն Սամիէլին ձեռքերուն մէջ: Սամիէլի ընտանիքէն ոչ մէկը կը հասնի Լիբանան:

Լիբանանի մէջ մեր մականունը կը փոխուի կը դառնայ Քէօշկէրեանի: Սամիէլ մեծհայրիկը իր գերդաստանէն վերապրած միքանի ընտանիքներով կը հաստատուի Պէյրութի մուտքին Քարանթինա կոչուող տարածքը: Անոնք կը շինեն մէկական թիթեղեայ խրճիթներ եւ կը փորձեն աշխատանքով սփոփել իրենց վէրքերը: Սամիէլ մեծհայրիկը աշխատանքի կ'անցնի որպէս աղիւս շինող, շաղախ խառնող՝ հաճընցի Ահարոն Շիրտըմեանին մօտ:

Օր մը կը հանդիպի Պուրսայէն Հեղինէ Յակոբեանին, որ գաղթի ճանապարհին կորսնցուցած էր ծնողքը եւ երկու եղբայրները. ան առանձին էր, որբանոց կ'ապրէր: Գերդաստանի մեծերը կը յորդորեն զինք որ ամուսնանայ այս խելօք աղջկան հետ եւ *սըթըր* ըլլայ: Գերդաստանի նահապետը *Ղոճա Տեղան* կը կազմակերպէ պսակը:

Սամիէլ եւ Հեղինէ կ'ունենան երեք որդի եւ երկու դուստր՝ Ղազարոս (որուն անունը պարտադիր էր՝ պահպանելու նահապետին անունը), Աւետիս, Յակոբ (որ իմ մեծհայրիկս էր եւ իր անունը կը ստանար Սամիէլի եղբորմէն), Աղանի (Սամիէլի մահացած քրոջ անունը) եւ Ովսաննա (տարագրութեան ճամփան Սամիէլի կորսնցուցած քոյրը):

Մեծհայրիկս՝ Յակոբ կ'ամուսնանայ Մարի Գարատանայեանին հետ, կ'ունենայ երեք զաւակ՝ Ալեքսան, Ովսաննա եւ Թալին: Ալեքսան՝ իմ հայրիկս է, ծնած է Պէյրութ: Ան պատմեց թէ Սամիէլ պապը մահացած է 1967ին հիւանդութեան պատճառով, իսկ Հեղինէ տատը սպաննուած է 1978ին Պէյրութի մէջ աւազակներու ձեռքով:

Հայրիկս եւ մայրիկս կը ծանօթանան Խորհրդային Հայաստանի մէջ ուսանող եղած ժամանակ, կ'ամուսնանան 1997ին Հալէպի մէջ, կը հաստատուին Լիբանան: Այստեղ կը ծնի եղբայրս՝ Յակոբ (որ մեծհայրիկիս անունը կը կրէ), այս տողերու հեղինակ Բիւրեղ (ես) եւ փոքրիկ քոյրիկս՝ Ծովակ:

Մեր տունը փոքրիկ Հայաստան է. կը խօսինք հայերէն, կը կարդանք հայերէն, կը մտահոգուինք հայկական հարցերով... Այդպիսով յանձնառու կը մնանք մեր դատին եւ պահանջատիրութեան:

Այս տարի Հայոց Յեղասպանութեան 100ամեակն է, սակայն ես կը կարծեմ որ սովորական տարի մըն է՝ այնքան ժամանակ որ չեն հատուցուած մեր կորուստները: Կրնան շատ տարիներ անցնիլ, բայց մենք պիտի չթուլնանք, այլ աւելի պիտի սաստկացնենք մեր պայքարը մինչեւ մեր իրաւունքներու վերադարձը եւ մեր դատին արդար լուծումը:



ԿՈՒՋԷԼԻ ԴԱԺԱՆ ԿԵԱՆՔԸ ՍԻՍԻ ՊԱՐՊՈՒՄԷՆ ԵՏՔ

Շաղիկ Քիպարեան

Բաւական պրպտումներէ ետք գտայ այս պատմութիւնը: Անիկա մեծմօրս մօրաքրոջ՝ Կուզէլին կեանքն է ջարդի եւ տեղահանութեան շրջանին:

Կուզէլ եւ անոր ամուսինը՝ Յակոբ, Սիս քաղաքէն եղած են: Ամուսնութենէն հինգ տարի ետք Կուզէլ յի կը մնայ: Յղութեան վերջին շրջանին մունետիկները կը յայտարարեն թաղ առ թաղ, որ միքանի ժամէն պարպեն բոլոր Սիսը: Կուզէլ եւ Յակոբ պզտիկին քանի մը կտոր հագնելիք, թուզի անուշ, նիշէ են. կ'առնեն եւ սիսեցիներուն հետ ճամպայ կ'ելլեն: Մէկ օր քալելէ ետք Կուզէլը կը յոգնի եւ կ'անհանգստանայ: Ուժասպառ ծառի մը տակ կը նստի: Յոգնութենէն ծննդաբերութեան ցաւերը կու գան: Իսեղճ Յակոբ վազելով կ'երթայ փնտռելու իրենց ծանօթ մանկաբարձուհի Ասմինը: Ասմինը կը մերժէ գալ, քանի զաւակը կորսնցուցած էր եւ անոր հետքը կը փնտռէր: Յակոբ կը համոզէ Ասմինը ըսելով, որ «հիմա մունետիկի մը աղջկանդ անունը կու տանք եւ այդպիսով կը գտնենք զայն»:

Կուզէլ կը ծննդաբերէ աղջիկ զաւակ մը՝ Մարի: Ձիերուն ոտքերուն փոսիկներուն մէջ լեցուած անձրեւի ջուրով պզտիկը կը լոզցնեն: Իսեղճ մայրը այս յոգնութեան եւ նեղութեան մէջ կաթ չ'ունենար, կտորի մը մէջ թուզի անուշէն կը դնէ եւ պզտիկին բերանը կու տայ, որպէսզի չլայ: Միքանի ժամ ետք կը շարունակեն քալել խումբին հետ: Որոշ ժամանակ ետք թուրք զինուորները կու գան եւ բոլոր տղամարդիկը կը տանին: Կուզէլ կը լսէ ժողովուրդէն, որ եթէ նամակ գրեն, որ Յակոբի մայրը շատ հիւանդ է՝ Յակոբ կրնայ ետ գալ: Այսպէս ալ կ'ըլլայ. Գրիգոր անունով անձ մը (որուն

գործը նամակ գրել էր) կը գրէ նամակը եւ Յակոբ այս պատրուակով կը վերադառնայ ընտանիքին: Բաւական տառապանքներէ ետք կը հասնին Դամասկոս: Հինգ տարի անուշ կ'եփեն եւ կը ծախեն ապրուստ ապահովելու համար: Անկէ ետք կը փոխադրուին Լիբանան, որոշ շրջան մը կը մնան Քարանթինայի շրջանը եւ ետքը կը հաստատուին Սիս թաղամասը:

Մարին մեծցած, ամուսնացած, զաւակներու եւ թոռներու տէր ալ եղած է:



ՍԵՒ ԷՋ ՄԸ

Մինաս Օղլուբեան

Պատմութիւնը որ պիտի պատմեմ ձեզի, իմ հօրմէս լսած իրականութիւն մըն է, պատմուած՝ իր մեծմօրմէն. արիւնոտ եւ չարչարանքի սեւ էջ մը հաճընցի հերոս

ժողովուրդէն:

Հօրս մեծմայրը կը կոչուէր Արեգնազ, ունէր երկու փոքր տղայ՝ Միհրան եւ Մանուկ եւ կը բնակէր համեստ բնակարանի մը մէջ: Հաճնոյ հերոսական պայքարի վերջին օրերն էին, թուրքերը սկսած էին մտնել Հաճնոյ թաղերը եւ կոտորել ու այրել ամէն ինչ: Արեգնազ մեծմօրս ամուսինը՝ Մինասը, կ'ըսէ. «հիմա կու գամ, տեսնեմ ժողովուրդը ո՛ր կողմ կ'երթայ ու կու գամ ձեզի ալ կը տանիմ»: Բայց անգամ մըն ալ չի վերադառնար: Այդ միջոցին մեծմայրս կ'ըսէ իր փոքրիկներուն. «տեսնեմ տունին ետեւի պարտէզը՝ եթէ մէկը չկայ, կու գամ ձեզի հետ կը փախչինք պարտէզին մէջէն»: Երբ պարտէզի կողմ կ'ելլէ յանկարծ միւս սենեակէն կը լսէ ձայնը պզտիկներուն, որոնք կը պոռային «մամա՛, թուրքերը կը տանին մեզի»:

Մեծմայրս չի վեռադարնար փոքրիկներուն քովը, այլ կը հեռանայ պարտէզներուն մէջէն դէպի Սուրբ Գէորգ եկեղեցին, ուր կը տեսնէ թէ իրեն պէս կիներ եւ աղջիկներ՝ շարուած շարք-շարք, իսկ ժամկոչը կը կրակէր իր գէնքովը. մէկ փամփուշտ՝ ամէն մէկ տասին: Մեծմայրս վախնալով մահէն՝ ամէն անգամ կարգը կը փոխէր եւ կը հեռանար շարքէն՝ մնալով առանձին եւ ողջ բոլորին մահէն վերջ: Տեսնելով որ թուրքերը սկսած են եկեղեցին այրել, խորանին ետեւէն ուրիշ միքանի կիներու հետ դուռէ մը կը հեռանան եկեղեցիէն ու կ'իջնեն ձորը, կ'անցնին անտառէն ու կը հասնին գետի մը ափը: Մեծմայրս վախէն ու անօթութենէն կը

մարի... կ'արթննայ մերկ վիճակի մը մէջ, ոտքի կ'ելլէ, կը շարունակէ ճամփան: Երկար քալելէ ետք կը լսէ ձիու մը ձայնը եւ մերկ վիճակով կը պահուըտի ծառի մը ետեւը: Թուրք ձիաւոր մը կու գայ, ճիշդ իր առջեւ կանգ կ'առնէ: Մեծմայրս իր աչքին ծայրէն կը փորձէ նայիլ թէ ի՛նչ կը պատահի, կը տեսնէ թէ ձիաւորը իր ձիուն նստեցուցած է երկու հայ աղջիկներ, անոնցմէ մեծը ձիէն վար իջեցնելով կը զարնէ, կը չարչարէ ապա կը բռնաբարէ ու կը մեռցնէ, յետոյ ձիուն վրայ հեծնելով եւ միւս աղջիկը իր ետեւը նստեցնելով կը շարունակէ ճամփան: Մեծմայրս տեսնելով զինուորին հեռանալը, մահացած աղջիկին հագուստները կը հանէ, արինի հետքը կը լուայ գետին ջուրով ու թաց-թաց կը հագնի եւ ճամփան կը շարունակէ դէպի Քիւրտիստան: Հոն քիւրտերը զինք կ'ընդունին եւ կ'ամուսնացնեն Յակոբին հետ ու կ'ունենայ հինգ զաւակներ՝ Մանուկ, Միհրան, Մինաս, Տիգրանուհի եւ Մայրենի:

Մեծմայրս իր կեանքը կ'ապրի երկար տարիներ հաճընցիի հոգիով, հաճընցիի սովորութիւններով, եւ իր մահուան մինչեւ վերջին օրը կը խօսէր Հաճընի բարբառով:



ԻՄ ԸՆՏԱՆԻՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ռիթա Ֆերմանեան

Ես՝ Ռիթա Ֆերմանեան, ծոռն եմ Նշան Ֆերմանեանի եւ Սմբատ Պապիկեանի:

Շատ քիչ տեղեկութիւն ունիմ մօրս ընտանիքէն դժբախտաբար, հետեւաբար պիտի պատմեմ միայն հօրս ընտանիքին մասին:

Մեծօրս ընտանիքը եղած է Տիգրանակերտի Հայնի գիւղէն: Անոնք եղած են շատ հարուստ: Կը զբաղէին կօշիկի վաճառականութեամբ: Տիգրանակերտը նշանաւոր էր իր Սուրբ Կիրակոս Եկեղեցիով, որ ունէր եօթը խորաններ: Քաղաքը նշանաւոր էր նաեւ իր ձմերուկով՝ որ չափազանց մեծ կ'ըլլար: Պապուկիս անունը Նշան էր: Ունէր չորս եղբայր՝ Լուսֆիկ, Խորեն, Գարեգին եւ Շուքրի որ ֆետայի էր, եւ երկու քոյր՝ Փայլածու եւ Շամիր:

Զարդի եւ տեղահանութեան հրահանգները լսելով, Նշան պապուկիս ընտանիքը քիւրտերուն դրամ տալով, հասած է Ռաս Էլ Այն: Հոն, անոնք զբաղած են հողագործութեամբ եւ վաճառականութեամբ: Պապուկս հոն շինած է հայկական եկեղեցի, Խորենը՝ հայկական դպրոց:

Ընտանիքս կը կրէ Ֆերմանեան ազգանունը, որովհետեւ մեծ հայրերս կարդացած են սուլթանին *ֆարամանները*:

Տիգրանակերտէն մեր ընտանիքին մէջ պահպանուած է երկու ճաշատեսակ՝ *ղաւրման* եւ *քպէյպէթը*:

1950ականներուն, մեծհայրս՝ Միհրանը առանձին եկած է Լիբանան, ապա գացած՝ Հալէպ, ամուսնացած մեծմօրս հետ: Լիբանանի մէջ ան կարճ ժամանակ մը բնակած է Պուրճ Համուտի Կիլիկիա շրջանը:

Մեծմօրս ընտանիքը եղած է Մալաթիայէն: Մեծմօրս մեծհայրը՝ Փառէն Պապիկեանը, եղած է Մալաթիայի

Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի հերթապահը: Ան եղած է ֆետայի: Օր մը, ֆետայիները որոշեր են յարձակիլ թրքական զօրանոցի մը վրայ: Գիշերը, որպէս նշան, եկեղեցւոյ զանգը պիտի հնչեցնէին, որպէսզի ֆետայիները հաւաքուէին: Սակայն, տէրհայրը դաւաճաներ է ֆետայիներուն եւ լուրը հասեր է թուրքերուն, որոնք եկեր եւ ձերբակալեր են ֆետայիները: Յիսուսի պէս խաչեր են Փառէնը եւ Մալաթիայի ֆետայիներէն խումբ մը: Իսկ Փառէնին տղուն՝ Սմբատին ոտքերը կապած են շղթաներով, որոնց ցաւը ցմահ տանջած է խեղճ հայդուկը:

1915ի ջարդի ընթացքին, քիւրտ մը կ'ուզէ իր զաւակը հօրս մեծմօր՝ Պայծառին հետ ամուսնացնել: Բարեբախտաբար, այս վերջինը կը յաջողի ինքզինքը խենթ ձեւացնել եւ ազատիլ այդ անգութներուն ձեռքէն, եւ իր քրոջ ու ամուսնոյն հետ հասնիլ Հալէպ:

Այսօր, գերդաստանիս մեծամասնութիւնը սփռուած է Սփիւռքի չորս կողմերը՝ Քանատա, Ամերիկա, Հալէպ, Ֆրանսա, Ֆինլանտա: Անոնք կը զբաղին հայկական հարցերով:

Գերդաստանիս մէջ միայն մօրեղբայրս է որ ամուսնացած է օտարի մը հետ՝ Ֆինլանտայի մէջ:

Երնէ՛կ... Երնէ՛կ ապրէի պապերուս ծննդավայրը, ըլլայի տիգրանակերտցի, մալաթիացի, ատանացի... կարելոր չէ. ըլլայի հայաստանցի՝: Ունենայի ազատ, անկախ, եւ միացեալ հայրենիք, ըլլայի գիւղացի, հա՛յ գիւղացի: Ըլլայի հողամշակի զաւակ, ունենայի հայ դրացիներ: Երնէկ ըլլայի «Սասնայ սիրուն աղջիկ», զարգացնէի ի՛մ հայրենիքս, վազէի Մասիսի լանջին, ապրէի պապերուս պէս հայ գիւղացիի առողջ կեանք: Ուտէի Տիգրանակերտի մեծ ձմերուկ...:

Ա՛յ թուրք, ինչու՞ զրկեցիր մեզ մեր հայրենիքէն:

Լիբանահայ Դպրոցներու Աշակերտութեան Յղուած Նամակ-Ուղեցոյցը

Հայկազեան Համալսարան

Հայագիտական
Ուսանողներու
Խմբակցութիւն

ԻՄ ԸՆՏԱՆԻՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Սիրելի հայ աշակերտ, Հայոց դէմ գործուած Յեղասպանութեան 100ամեակի ձեռնարկներուն շարքին, Հայկազեան Համալսարանի Հայագիտական ուսանողներս, Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի աջակցութեամբ եւ 100ամեակի Լիբանանի Կեդրոնական Մարմնին հետ համախորհուրդ ծրագրած ենք կազմակերպել «Իմ ընտանիքիս պատմութիւնը» վերնագրով շարադրանք-պատումի ձեռնարկը՝ լիբանահայ աշակերտութեան մասնակցութեամբ: Ասիկա մաս կը կազմէ քու ընտանեկան պատումիդ՝ oral history:

Ինչի՞ մասին գրել

Արդ, կը թելադրենք որ պրպտես (հօրենական կամ մօրենական) ընտանիքիդ անցեալի պատմութիւնը եւ գրես այդ մասին, նկատի առնելով հետեւեալները.-

- Ո՞ր կը բնակէր քու ընտանիքդ ասկէ հարիւր տարի առաջ եւ ի՞նչ էին այդ բնակավայրին յատկանիշերը.
- Ի՞նչպէս, քանի՞ հոգիով, ու՞ր գաղթեց ընտանիքդ, ո՞ր քաղաքները/գիւղերը հաստատուեցաւ ան, ընտանիքէդ ովքե՞ր գոհուեցան.
- Ի՞նչ գործով կը զբաղէին ընտանիքիդ անդամները, ինչո՞վ նշանաւոր էին. կրնա՞ս դրուագ մը գրել քու ընտանիքիդ ծննդավայրի կեանքէն.

- Հիմա ինչո՞վ կը զբաղի ծնողքդ. արդե՞օք ընտանիքիդ անցեալի եւ ներկայի աշխատանքային ասպարէզը (գործը) նոյնն է.
- Արդե՞օք ընտանիքիդ ազգանունը փոփոխութեան ենթարկուեցաւ. եթէ այո՝ պատմէ՛ ուր, երբ, ինչպէս.
- Ներկայիս ընտանիքիդ մէջ խառն ամուսնութիւն կնքուա՞ծ է, ե՞րբ եղաւ առաջին խառն ամուսնութիւնը ընտանիքիդ մէջ.
- Ընտանիքիդ պապենական ծննդավայրէն որեւէ աւանդ պահպանուա՞ծ է ձեր տունին մէջ. նկար մը, իր մը, ասեղնագործ մը, քիլիմ մը, գորգ մը, կամ որեւէ այլ բան, պատում մը, ճաշատեսակ մը՝ գրէ՛ այդ մասին.
- Ե՞րբ հաստատուեցաւ ընտանիքդ Լիբանան, հիմա ու՞ր կը բնակիք, Լիբանան հաստատուելէ ետք նոյն տունը կը բնակիք, թէ՞ տեղափոխուած էք. պատմէ՛ այս մասին.
- Ընտանիքիդ բոլոր անդամները հո՞ւս կը բնակին, թէ՞ գերդաստանիդ շատ անդամներ կը գտնուին տարբեր երկիրներ. ու՞ր են անոնք եւ ի՞նչ կ'ընեն, կը զբաղի՞ն հայկական հարցերով.
- Պատմէ՛՜ այսօր, եթէ դուն քու պապերուդ ծննդավայրը ապրէիր, ի՞նչ պիտի ուզէիր ընել եւ ըլլալ:

Ընտրէ՛ վերոնշեալ նիւթերէն մին կամ միքանին

Սիրելի հայ աշակերտ,

Կրնաս վերոնշեալ հարցումներէն որեւէ մէկուն (կամ միքանին, կամ բոլորին) մասին ծաւալել շարադրութիւնդ: Կրնաս նաեւ քու ընտանեկան անցեալիդ վերաբերող այլ նիւթի մը շուրջ զարգացնել քու պատմութիւնդ, կամ՝ խօսիլ մեծօրդ կամ մեծմօրդ կեանքին մասին, թէ ինչպէ՛ս ան իր կեանքը շահած է, եւ պահպանած է իր ընտանիքը: Կամ ալ կրնաս զատել նկար մը կամ որեւէ իր մը, առարկայ մը, որ անցեալէն հասած է քեզի՝ նախնիներէդ ու անոր հիման վրայ պատմութիւնդ շարադրել:

Կրնաս նաեւ գրել քու անունիդ մասին՝ եթէ քու անունդ քու մեծօրդ/մեծմօրդ անունն է, կամ անոր մէկ տարբերակը: Կամ կրնաս գրել դէպքի մը մասին, որուն շնորհիւ ձեր

ընտանիքը փրկուած է Յեղասպանութենէն, կրնաս շնորհակալական նամակ մը գրել այդ անձանօթ բարերարին, որ փրկած է Եղեռնի օրերուն մահուան ծայրը հասած քու ընտանիքիդ անդամը:

Ի՞նչ պիտի ըլլան այս պատումները

Շարադրութիւններէն 100 նմուշներ Ապրիլ 2015ին, պիտի հրատարակուին առանձին գիրքով՝ հեղինակներուն անունով ու նկարով:

Գիրքէն օրինակներ պիտի տրամադրուին աշակերտութեան եւ թարգմանուելով պիտի բաժնուին օտարներու:

Բոլոր շարադրութիւնները պիտի դրուին այս առթիւ յառաջացած կայքէջին վրայ, Ապրիլ 2015ին:

Շարադրութիւնները աւելի ետք պիտի դրկուին Ծիծեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան Թանգարան:

Մասնակցութեան պայմաններ

Շարադրութեան կրնան մասնակցիլ 9րդէն մինչեւ 12րդ դասարանի բոլոր հայ աշակերտները, կամ այդ տարիքի հայ պատանի-պատանուիները:

Շարադրութեան կրնան մասնակցիլ նաեւ աշակերտներ որոնց միայն մայրը կամ հայրը հայ է:

Շարադրութիւնը կրնայ գրուիլ նախընտրաբար հայերէն, այլապէս՝ որեւէ լեզուով:

Ձեզի կրնան օգնել ձեր ծնողքները, հարազատները, դրացիները:

Շարադրութիւնը կրնայ ընդգրկել նկար, կամ որեւէ այլ փաստաթուղթ:

Շարադրութիւնը պէտք է ըլլայ նուազագոյնը 500 բառ եւ առաւելագոյնը՝ 2000 բառ:

Շարադրութիւնը պէտք է յանձնուի մինչեւ 15 Յունուար 2015: Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել HUSAS@haigazian.edu.lb , կամ հեռաձայնել՝ 01349230 ext. 205:

Content of the Book

On the occasion of the 100th anniversary of the Armenian Genocide the Haigazian University Society of Armenian Studies (HUSAS) embarked on a book project.

They called upon the 9th to 12th grade students of the Armenian Schools in Lebanon to research and write about their family history. With no limitations of any sort the students were challenged to write about their family life in the decades preceding the Genocide, the perilous years their families faced during the Genocide, and the aftermath.

HUSAS members visited the schools, where they showed a documentary film on the topic, distributed road-map leaflets to the students and asked the support of the school administration and teachers. Both the administration and the Armenian teaching staff of the schools welcomed the idea. They encouraged their students to write and explained the advantages of such an undertaking.

Soon the compositions started flowing in from all the Lebanese Armenian schools. HUSAS members selected 100 compositions, slightly edited the texts, and asked for photos from the authors.

This book is the compilation of those one hundred school children's compositions, which tell the stories of decimation and survival of 100 Armenian families who faced the Genocide.

الكتاب في سطور ...

بمناسبة مرور مئة سنة على الإبادة الأرمنية تنادت مجموعة من طلاب "جامعة هايكازيان" ممن يتخصّصون في حقل الدراسات الأرمنية لتنفيذ مشروع جمع ما بقي عالقاً في ذاكرة الأحفاد (أو الجيل الرابع) عن المذابح الأرمنية وعن معاناة عائلاتهم في فترة الحرب العالمية الأولى.

شهادات سيردها كتاب يصدر في المناسبة عن جُلجُلّة طردهم من ديارهم وسوّقهم إلى الصحراء في ما سيُعرف لاحقاً بمسيرة الموت والمسؤولة عنها الدولة العثمانية وعلى رأسها كبار أعضاء "حزب الأتّحاد والترقيّ".

ذاكرة لن تؤرّخ أو تقتصر فقط على سرد أحداث المذابح، إنّما ستتطرّق إلى فصل مهم نادراً ما تناولته الكتب والمراجع: نتحدث عن استضافة أهالي المنطقة العرب قوافل الأرمن وحماتهم ومساعدتهم. ومن بعدها عن مساهمة الجماعة الأرمنية التي التجأت إلى هذه الأرض في بناء دول المشرق العربي وتطويره.

وقد زارت مجموعة الطلاب هذه كل المدارس الأرمنية في لبنان عارضة لمشروع الكتاب و متمنية على تلامذة الصفوف الثانوية أن يجمعوا كلّ ما توفر لديهم من وثائق وخصوصاً شهادات أفراد عائلاتهم عن ذكرى المجازر والحقبة التي تلتها.

بالمناسبة رحّبت إدارات المدارس هذه وأساتذتها بالمشروع وقد أخذت على عاتقها موضوع تشجيع تلامذة مؤسّساتها التعليميّة على البدء بجمع الوثائق والشهادات. وأنتت أيضاً على طلاب "جامعة هايكازيان" وحثّتهم على متابعة المشروع إلى الآخر بما فيه إصدار الكتاب. بعد فترة وجيزة بدأت الوثائق والشهادات تنهال على طلاب "هايكازيان". وقام هؤلاء عندها باختيار مئة "وثيقة" ستُشكّل مادة هذا الكتاب سواء العائد منها إلى المجازر أو إلى الحقبة التي تلت، وتولّوا تحريرها وإعادة صياغتها لغوياً عند الحاجة بغية إصدارها.

هذا الكتاب إذاً هو شهادة معاصرة للأجيال الأرمنيّة المتلاحقة عن ذاكرة الإبادة الأرمنيّة وعن يوميّات نوحهم منها ونجاح اندماجهم في أرض المشرق.

ՀԱՅԿԱՋԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏԱՆ ԳՐԱՅԱՆԿ

- 1) *Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community*. Edited by Aida Boudjikianian, Beirut 2009, 35\$.
 - 2) Alfred de Zayas, J.D., Dr. Phil. *The Genocide Against the Armenians 1915-1923 And the Relevance of the 1948 Genocide Convention*, Beirut February 2010, 10\$ (սպառած):
 - 3) *Towards Golgotha: The Memoirs of Hagop Arsenian, A Genocide Survivor*, translated and annotated by Arda Arsenian Ekmekji, Beirut 2011, 30\$ (սպառած).
 - 4) هرانت دينك, امتان قريبتان... جاران بعيدان
translated into Arabic by Dr. Alexan Keshishian, Beirut 2012, 160 էջ, 10\$:
 - 5) Հաճնոյ Հերոսամարտի 90ամեակի Գիտաժողովի Նիւթեր եւ Վաւերագրեր Ու Լուսանկարներ, կազմեց եւ խմբագրեց Դոկտ. Անդրանիկ Տազէսեան, Պէյրութ 2013, 228 էջ, 10\$:
 - 6) *Լիբանանահայ Գիրքը 1894-2012. Մարտնագիտական Ցանկ*, աշխատասիրեցին Դոկտ. Անդրանիկ Տազէսեան եւ Դոկտ. Արմէն Իւրնէշլեան, Պէյրութ 2013, 20\$:
 - 7) Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԳ./Haigazian *Armenological Review*, Vol. 33, 2013, 566 էջ, 20\$:
 - 8) Dr. Zaven Messerlian, *Armenian Participation in the Lebanese Legislative Elections 1934-2009*, Beirut 2014, 25\$.
 - 9) Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԴ./Haigazian *Armenological Review*, Vol. 34, 2014, 656 էջ, 20\$:
 - 10) Հայկազեան Համալսարան. Հայ Տպագրութեան 500-Ամեակի Ձեռնարկներ. 5 Մայիս 2012-22 Մարտ 2013, Պէյրութ, 2014, 104 էջ:
 - 11) Հայկական Անդրասիանային Տարածականութիւնը եւ Արդի Հաղորդակցական Միջոցները, Գիտաժողովի Նիւթեր, (15-17 Մայիս 2013), խմբ. Անդրանիկ Տազէսեան, Հրատ. Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն, Հայկական Սփիւռք Ա., Պէյրութ 2014, 246 էջ, 10\$:
- (12) د. نورا أريسيان, 100 عام على الإبادة الأرمنية: 100 شهادة عربية (بمناسبة الذكرى المئوية للإبادة الأرمنية), HAIGAZIAN UNIVERSITY PRESS, Beirut 2015, 10\$:

- 13) Dr. Vahram L. Shemmassian, *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History 1919-1939*, Beirut 2015, գին՝ 50 եւ 60\$.
- 14) Հարիրամեակ Հայոց Յեղասպանութեան. Հետեանքներ եւ Յառաջադրանքներ, Գիտաժողովի Նիւթեր (31 Յունուար-1 Փետրուար 2015)/*Armenian Genocide Centennial: Addressing the Implications. Proceedings of the Conference (January 31-February 1, 2015)*, Կազմ. եւ խմբ.՝ Անդրանիկ Տազէսեան/Compiled and edited by Antranik Dakessian, 240 էջ, 10\$:
- 15) *Towards Golgotha: The Memoirs of Hagop Arsenian, A Genocide Survivor*, translated and annotated by Arda Arsenian Ekmekji, 2nd ed., Beirut 2015, 30\$.
- 16) Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԵ./*Haigazian Armenological Review*, Vol. 35, 2015, 944 էջ, 20\$:
- 17) Անդրանիկ Տազէսեան, *Լիբանանի Հայօճախը. Գիրք Ա., Համարկումին Խաչուղիները (1920-2005)*, 2015, 174 էջ, 10\$:
- 18) Յակոբ Ա. Եագուպեան, *Քննադատական Մտածողութիւնը Լիբանանահայ Վարժարաններու Մէջ*, 2016, 158 էջ:
- 19) *Իմ Ընտանիքիս Պատմութիւնը*, կազմ.՝ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւն, խմբ.՝ Ա. Տազէսեան, 2016, 296 էջ:

Տպագրութիւն
Տպագրութեան յանձնուած
Տպաքանակ

53 dots, Dar El Kotob, s.a.l.
17 Մարտ 2016
1000

Կողքի լուսանկար

Սեւակ Ասլանեան,
Studio Vatche